

ԱՐՏԵՄ ԵՂԻՇԵԻ ՍԱՐԳՍԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՀԱՅ
ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հատոր Բ

Երևան-Լոս-Անջելես - 2019
Պարմա-Պրինտ

ՀՏԴ 81

ԳՄԴ 81

Ս 259

Սոյն հատորը լոյս կը տեսնէ մեկենասութեամբ տօքթ. և տիկին Յակոբ և Լուդովիկա Այնթապլեաններու:

Խմբագիր՝ Բ.Գ.Պ. Ռ. Թոխմախեան

Սարգսեան Արտեմ Եղիշեի

Ս 259 Ընդհանուր եւ հայ լեզուաբանութիւն /Ա.Ե. Սարգսեան.-

Եր.: Պարմա-Պրինտ, 2019.

Հատոր Բ.-304էջ:

«Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը» աշխատութիւնը հայ լեզուաբանութեան մէջ առաջին փորձն է դասական գրաբարի կառուցուածքը տիպաբանական քննութեան ենթարկելու ուղղութեամբ:

Գիրքը կը պարունակէ նաեւ «Արեւմտահայերէնի հնչաբանութիւն» աշխատութիւնը, ինչպէս նաեւ Մ.Աբեղեանի եւ Հ.Աճառեանի գիտական սկզբունքներու քննութեանը նուիրուած յօդուածները:

ՀՏԴ 81

ԳՄԴ 81

ISBN 978-9939-9184-7-1

© Պարմա-Պրինտ, 2019

**ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ**

Վերջին ժամանակներս լեզուաբանական տիպաբանության նկատմամբ եղած հետաքրքրությունը նշանակալիորեն մեծացել է: Երևան են եկել բազմաթիվ հետազոտություններ, որոնցում լուրջ փորձեր են արուել մշակելու և ճշտելու տիպաբանության սկզբունքներն ու խնդիրները¹:

Անժխտելի է, որ նախքան աշխարհի լեզուների համընդհանուր տիպաբանական բնութագրմանն անցնելը անհրաժեշտ է ունենալ այդ լեզուներից և լեզուախմբերից իւրաքանչիւրի ամբողջական նկարագիրը: Քննութեան առաջին փուլում, անշուշտ, կարելի է սահմանափակուել ինչպէս միայն մէկ լեզուով, այնպէս էլ նրա այս կամ այն մակարդակով (միայն հնչույթային, միայն շարահիւսական և այլն):

Այդ առումով էլ, բնականաբար, առաջանում է նաև հայոց լեզուի տիպաբանական քննութեան անհրաժեշտութիւնը: Պէտք է նշել, որ ցայսօր եղած կառուցուածքային տիպաբանական հետազոտութիւններում հայոց լեզուի տուեալների օգտագործումը խիստ անբաւարար է, որ պայմանաւորուած է ինչպէս տուեալ

¹ **Вяч.Вс. Иванов**, *Топология и сравнительно-историческое языкознание*, ВЯ, 1958, № 5, **Б.А. Успенский**, *Структурная типология языков*, М., 1965, **Э.А. Макаев**, *Сравнительная, сопоставительная и типологическая грамматика*, ВЯ, 1964, № 1, նոյնի՝ *Отбор констант для построения типологической грамматики германских языков*, сб. «Структурно-типологические исследования современных германских языков», **Ю.В. Рождественский**, *Топология слова*, М., 1969, նաև՝ «Новое в лингвистике», (М., 1969) ժողովածուի 3-րդ հատորում տպագրուած նիւթերը:

հետազոտողների հայերենի վատ իմացութեամբ², այնպէս էլ հայոց լեզուի բուն տիպաբանական քննութեան բացակայութեամբ:

Ներկայ ուսումնասիրութեան մէջ առաջին անգամ տիպաբանական քննութեան առարկայ է դարձել դասական գրաբարը՝ հայ գրական լեզուի հին վիճակը իր բոլոր մակարդակներով (հնչույթային, ձևույթային, շարահիւսական):

Վերլուծութեան ընթացքում հեղինակի կողմից կիրառուած են հետևյալ սկզբունքները: Նախ պարզուում են դասական գրաբարի կառուցուածքային գծերն ու փոխհարաբերութիւնները ինքնին: Պէտք է ասել, որ եթէ հին հայերենի հնչույթային մակարդակի կառուցուածքային քննութեան արդի վիճակը կարելի է բաւարար համարել, ապա ձևաբանական և յատկապէս շարահիւսական մակարդակների կառուցուածքային քննութիւն մինչև այժմ չի կատարուել: Այդ պատճառով էլ, բնականաբար, նախապէս պարզուում են դասական գրաբարի կառուցուածքային գծերը: Այնուհետև վերջիններս զուգադրութեան են ենթարկուում երկու կարգի լեզուների (հին ու նոր) համապատասխան երեւոյթների հետ: Հին լեզուներից ընտրուել են ինչպէս ցեղակից, այնպէս էլ ոչ ցեղակից լեզուներ: Նոր լեզուների հետ զուգադրութեան ժամանակ համակարգային համեմատութիւն է կատարուում նաև ժամանակակից հայոց լեզուի արևելահայ գրական տարբերակի համաժամանակեայ կտրուածքի հետ: Վերջին դեպքում միննույն լեզուի երկու համաժամանակեայ կտրուածքների կառուցուածքային–տիպաբանական քննութիւնը կարևորութիւն

² **Дж. Гринберг**, *Квантитативный подход к морфологической типологии языков*, НЛ, вып. 3, 1963.

է ստանում ընդհանրապէս լեզուների կառուցուածքային տիպի փոփոխութեան մէջ ընդհանուր ուղղուածութեան բացայայտման խնդրի տեսակէտից: Վերջապէս, աշխատութեան մէջ բոլոր դէպքերում նախ զուգադրում են կառուցուածքային գծերը և ապա միայն՝ նրանց վիճակագրական արդիւնքները:

ԿԱՌՈՒՅՈՒՄԾՔԱՅԻՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Տիպաբանութեան պատմութիւնը կարելի է որոշակիօրէն բաժանել երկու շրջանի՝ աւանդական և կառուցուածքային:

Մեր քննութեան նպատակից դուրս համարելով աւանդական տիպաբանութեան պատմութեան շարադրումը³, համառոտակի կանգ առնենք կառուցուածքային տիպաբանութեան հիմնական սկզբունքների վրա:

Տիպաբանական հետազոտութիւնների ներկայ փուլը, որ կրում է կառուցուածքային տիպաբանութիւն անւանումը, արմատապէս տարբերում է աւանդական ձևաբանական տիպաբանութիւնից թէ՛ քննութեան առարկայի ծաւալի, թէ՛ հետապնդած նպատակի տեսակէտից: Այսպէս, եթէ աւանդական տիպաբանութիւնը կարելի է որակել որպէս դասակարգողական (նրա գործը ձևաբանական կառուցուածքի, այն էլ վերջինիս միայն մէկ միաւորի՝ բառի վրա հիմնուած գերազանցապէս եռաստիճան՝

³ Աւանդական ձևաբանական տիպաբանութեան պատմութիւնը մանրամասնօրէն տրուած է ինչպէս **Թ. Շարաձենիձեի** «Классификация языков и их принципы» աշխատութեան մէջ, այնպէս էլ՝ «Новое в лингвистике»-ի 3-րդ հատորում:

թեքական, կցական, անջատական, դասակարգման փորձի մեջ սահմանափակ թուով լեզուների բաշխումն էր), ապա կառուց-
ւածքային տիպաբանութեան գլխաւոր նպատակը համընդհա-
նուր քերականութեան կամ այդպիսի քերականութեան տեսութեան
ստեղծումն է: Ընդամին, եթէ պատմահամեմատական լեզ-
ուաբանութիւնը ուսումնասիրում է լեզուներն ըստ ցեղակցութեան,
ապա տիպաբանութիւնը զբաղում է լեզուների զուգա-
դրութեամբ անկախ ցեղակցութիւնից, ելակէտային դրոյթ ունե-
նալով այն, որ քննութեան ենթակայ լեզուների թիւն անսահմա-
նափակ է⁴:

Ի տարբերութիւն ձևաբանական տիպաբանութեան, որը
պատմա-համեմատական լեզուաբանութեան որոշ սահմանա-
փակութիւնների (միայն առանձին ծագումնաբանական խմբերի
ուսումնասիրութեամբ բաւարարուելը) վերացման նպատակն
ունենալով այն՝ վերջինիս կցորդն էր, կառուցուածքային տիպա-
բանութիւնը վերածուել է լեզուաբանութեան միանգամայն
ինքնուրոյն բնագաւառի: Աւանդական և կառուցուածքային
տիպաբանութիւնների առանցքային տարբերութիւնը առաջին
հերթին այն է, որ վերջինս լեզուն դիտում է որպէս
համակարգային երևոյթ, տիպաբանական բնութագրման
ընթացքում կիրարկութեան մեջ դնելով նորագոյն մի շարք
քանակական մեթոդներ: Կառուցուածքային տիպաբանութիւնը
հաւասար ուշադրութիւն է դարձնում լեզուի բոլոր մակար-

⁴ Նկատի է առնուում, որ կան բազմաթիւ անյայտ կամ նորայայտ և դեռևս
չուսումնասիրուած լեզուներ: Բացի դրանից տիպաբանական քննու-
թեան առարկայ կարող են դառնալ բարբառները, ենթաբարբառները և
այլն:

դակներին թե՛ հնչույթային, թե՛ ձևաբանական և թե՛ շարահիս-
սական: Անհրաժեշտ է նշել, որ տիպաբանութեան մեջ ստեղծ-
ուած նոր որակը պայմանաւորուած է ոչ այնքան քննութեան
առարկայի ծաւալի ընդարձակմամբ, որքան ամէնից առաջ
ընդհանուր լեզուաբանութեան մեջ կատարուած էական տեղա-
շարժով, քանի որ լեզուի որպէս ամբողջական կառուցուածքի
ըմբռնումը անխուսափելիօրէն հանգեցրել է տիպաբանութեան
ելակետային դրոյթների արմատական վերանայմանը:

Արդի տիպաբանութեան խնդիրն է, լեզուների տիպաբանա-
կան դասակարգմանը զուգընթաց, լեզուաբանական լրիւ (բոլոր
լեզուներին յատուկ) և մասնակի (ոչ բոլոր լեզուներին յատուկ)
ընդհանրոյթների (ունիւերսալիաների) բացայայտումը, «էտալոն»
լեզուների ստեղծումն ու քննութիւնը և այլն: Այստեղից էլ, բնա-
կանաբար, կառուցուածքային տիպաբանական քննութեան ար-
դիւնքները էական նշանակութիւն են ստանում լեզվաբանական
ընդհանուր տեսութեան ստեղծման, օտար լեզուների ուսուցման,
նորայայտ լեզուների վերծանութեան, մեքենական թարգմանու-
թեան, ոճի ուսումնասիրութեան բնագաւառներում:

Փոխարինելով ձևաբանական տիպաբանութեանը՝ կառուց-
ուածքայինը հենց սկզբից աւանդական տիպաբանութեան մի
շարք դրոյթների վերանայման և ճշտման պահանջ զգաց:

Ամէնից առաջ քննադատութեան ենթարկուեց ձևաբանա-
կան տիպաբանութեան՝ թեքական-կցական-անջատական պար-
զագոյն բանաձևով կատարուող դասակարգմամբ բաւարարուելը:
Մատնանշուեց, որ այնքան էլ հեշտ չէ որոշել՝ տուեալ լեզուն
թեքական է, թէ կցական, եթէ նրան բնորոշ են և՛ թեքման, և՛
կցման երևոյթներ, որ միայն յիշեալ լեզուատիպերի առանձնաց-

մամբ հնարաւոր չէ բազմակողմանիօրէն արտացոլել տարբեր լեզուների ձևաբանական կառուցուածքների բնորոշ գծերը: Այս էր պատճառը, որ հետագայում աւելի շատ լեզուներ քննութեան առարկայ դարձնելով՝ հետազոտողները (Միստելի, Ֆինկ) ստիպուած եղան աւելացնել ձևաբանական տիպերի թիւը:

Կառուցուածքային տիպաբանութեան բոլոր ներկայացուցիչները, ինչպէս իր ժամանակին Է. Սեպիրը, անհրաժեշտ են համարում ոչ թէ մէկ, այլ միաժամանակ մի քանի յատկանիշների հաշուառումը լեզուի տիպը որոշելիս: Այստեղ արդէն բաց է մնում այն հարցը, թէ քանի յատկանշով կարելի է (պէտք է) բաւարարուել այս կամ այն լեզուի տիպը որոշելիս, և բացի այդ՝ յատկանիշները ո՛ր մակարդակներից և ի՛նչ յաջորդականութեամբ պէտք է ընտրուեն:

Կառուցուածքային տիպաբանութիւնը գերծ է ձևաբանական տիպաբանութեան «գնահատողական» արատաւոր գծից, որով թոյլ էր տրւում լեզուների խտրականութիւն (թեքական լեզուները գերադասւում էին ոչ թեքականներին):

Արդի տիպաբանութիւնը զբաղւում է լեզուների կառուցուածքային տիպերի և դրանց փոփոխութեան մէջ օրինաչափութիւնների բացայայտմամբ, որի իրագործման համար կարելի է սահմանափակուել ինչպէս մէկ լեզուի տարբեր փուլերի կամ միայն ցեղակից լեզուների, այնպէս էլ ոչ ցեղակից լեզուների տիպաբանական քննութեամբ: Այս դէպքում պէտք է տարբերել տիպաբանութիւն լայն առումով կամ մակրոտիպոլոգիա և տիպաբանութիւն նեղ առումով կամ միկրոտիպոլոգիա⁵:

⁵ **В. Скаличка**, *К вопросу о типологии*, ВЯ, 1966, № 4.

Անժխտելի է, որ լեզուների տիպաբանական դասակարգման յաջողութիւնը յատկապէս պայմանաւորուած է դասակարգման հիմքում դրուած յատկանիշների յաջող ընտրութեամբ, քննութեան ընթացքում կիրառուած մեթոդներով և այլն: Տիպաբանական ուսումնասիրութեան մեթոդների կապակցութեամբ անհրաժեշտ է նշել, որ սկզբունքօրէն սխալ է այն թեզը, թէ իբր գուգադրական քննութեանը յատուկ է դեղուկտիւ, իսկ տիպաբանականին՝ ինդուկտիւ մեթոդը⁶: Հարցի դրական լուծումը հնարաւոր չէ գտնել նշուած մեթոդների հակադրութեան ճանապարհով, քանի որ թէ՛ ինդուկցիայի, թէ՛ դեդուկցիայի առկայութիւնն անհրաժեշտ է կառուցուածքային տիպաբանութեան համար⁷:

Գրաբարի կառուցուածքային-տիպաբանական քննութեան ժամանակ անհրաժեշտ է հաշուի առնել հետևեալ հիմնական սկզբունքները.

1. Վերլուծութիւնը պէտք է ունենայ համակարգային բնոյթ, քանի որ լեզուական առանձին իրակութիւնների պատահական գուգադիպումները ըստ էութեան տիպաբանօրէն չեն կարող բնորոշել տուեալ լեզուամակարդակները, առաւել ևս՝ լեզուները:

2. Զուգադրուող լեզուների տիպաբանական բնութագրի ամբողջականութեան համար չպէտք է բաւարարուել լեզուական միայն մէկ մակարդակի քննութեամբ, անհրաժեշտ է ուշադրութեան առնել բոլոր մակարդակները հաւասարապէս:

3. Զուգադրութիւնը պէտք է կատարել ըստ առանձին մակարդակների: Իւրաքանչիւր մակարդակի քննութիւնից ստացած

⁶ К. Майтинская, *Местоимения в языках разных систем*, М., 1969, стр. 12.

⁷ Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերէնի հոլովման համակարգը*, Ե., 1967, էջ 21:

արդիւնքները անհրաժեշտ է ըստ հնարաւորին հաշուի առնել յաջորդ մակարդակի վերլուծութեան ժամանակ: Այսպէս՝ հնչոյթային մակարդակից ստացած տվեալները կարելի է օգտագործել ձևոյթային մակարդակում (օրինակ, հնչոյթների քանակի կապը ձևոյթների երկարութեան հետ):

4. Անհրաժեշտ է պահպանել քննութեան միապլանայնութիւնը: Զուգադրութեան ժամանակ բովանդակութեան և արտայայտութեան պլանների երևոյթները չպէտք է շփոթել իրար հետ, որովհետև լեզուատարբերի հարաբերութիւնների միապլանային համադրութեան դէպքում է միայն իրապէս ի յայտ բերում լեզուների համասեռութիւնը կամ գուգաձևութիւնը (իզոմորֆիզմ):

5. Համաժամանակեայ կտրուածքով կատարուող վերլուծութիւնների դէպքում (հատոյթաւորում և այլն) անցում, չպէտք է կատարել տարածամանակեայ կտրուածքին: Քանի որ տարբեր կտրուածքների վերլուծութիւնից ստացած արդիւնքների համադրութիւնը ճիշտ եզրահանգման չի կարող բերել, պահանջւում է հատոյթաւորումը կատարել միասնական ընդհանուր կտրուածքով:

6. Անհրաժեշտ է համեմատութիւն անցկացնել ոչ միայն ցեղակից, այլև ոչ ցեղակից լեզուների միջև, որովհետև, եթէ ցեղակից լեզուների տիպաբանական ընդհանրութեան փաստը կարելի է ինքնըստինքեան բնական համարել՝ կապուած ընդհանուր հիմքից առաջանալու հետ, ապա ոչ ցեղակից լեզուների կառուցուածքային ընդհանրութիւնները կարևոր նշանակութիւն ունեն ընդհանուր և տարածքային լեզվաբանութեան մի շարք խնդիրներ լուսաբանելու առումներով:

7. Տիպաբանական ընդհանրությունը պետք է տարբերել ծագումնաբանական ընդհանրությունից: Մի կողմից՝ տիպաբանութեան համար ցեղակցությունը վճռական նշանակություն չունի, միւս կողմից՝ ծագումնաբանական ընդհանրությունը դեռևս անպայմանօրէն տիպաբանական ընդհանրություն չի կանխադրում: Այսպէս՝ եթէ ծագումնաբանօրէն հայերէնի *տ*-ն հին հունարենի *τ*-ի հետ է համընկնում, ապա տիպաբանօրէն այն նույնական է հին հունարենի *տ*-ին: Տիպաբանօրէն նույնական կոչւում են միայն այնպիսի լեզուական երևոյթները, որոնք տուեալ համակարգերում ունեն նույնական գործառնություն:

8. Անհրաժեշտ է տարբերել հարացուցային տիպաբանությունը շարակարգայինից, տիպաբանություն ըստ տեքստի և ըստ համակարգի, քանակական և որակական, տիպաբանություն և այլն: Ընդսմին, դրանք ոչ թե հակադրւում են միմեանց, այլ լրացնում: Շատ դէպքերում պետք է պարզել ոչ միայն այն, թե ի՛նչ կայ տուեալ լեզւում, այլև՝ ինչից ի՛նչքան կայ: Քանակական հաշւումների ժամանակ նախ պետք է որոշել տուեալ լեզուների անփոփոխակները կառուցուածքային բնորոշ կաղապարները, դրանցից իւրաքանչիւրի տեսակարար կշիռը, և նոր միայն կատարել գուգադրություն: Բոլոր դէպքերում քանակական վերլուծությունը հետապնդում է մէկ նպատակ՝ որակի բացայայտում:

9. Տարբեր լեզուների քննութեան ենթակայ տեքստերը արտալեզուական բնոյթով պետք է լինեն համասեռ, այսինքն՝ վերաբերեն նույն թեմատիկային, ժանրին կամ ոճին: Անժխտելի է, որ փիլիսոփայական երկի քանակական վերլուծութեան արդիւնքները զգալիօրէն կը տարբերուեն գեղարուեստական կամ պատմական երկի վերլուծութեան արդիւնքներից: Գրական

մշակման ենթարկուած միևնոյն լեզուի տարբեր ժանրերի քանակական վերլուծութեան ցուցանիշների տարբերութիւնը շատ աւելի մեծ է, քան տարբեր, բայց գրական մշակման չենթարկուած լեզուներինը: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է գուգադրել համասեռ տեքստերի արդիւնքները:

10. Տիպաբանական դասակարգման ժամանակ պէտք է հաշուի առնել էական ցուցիչ և մշտապէս հենուել դրանց վրայ: Պատահականօրէն ընտրուած ցուցիչների թուի աւելացումը կամ կրճատումը, ըստ էութեան, ոչ թէ նոր որակ կարող է առաջացնել, այլ միայն մեծացնել կամ փոքրացնել ուսումնասիրութեան ծաւալը: Այդ տեսակէտից տեղին է նշել, որ ձևաբանական տիպաբանութեան համար ամերիկացի լեզուաբան Ջ. Գրինբերգի առաջարկած քանակական մեթոդի տասը ցուցիչների վերաբերեալ եղած քննադատութիւնը հաճախ արդարացի չէ, որովհետև այդ քննադատութեան մեջ հիմնականում խօսուում է ցուցիչների թվի սակաւութեան մասին և զանց է առնուում այն հարցը, թէ որքանով են այդ ցուցիչները ի յայտ բերում լեզուական ընդհանրոյթներ:

11. Տեքստերի ծաւալը պէտք է լինի ընտրանքի ծաւալի բաւարար սահմաններում: Այս առումով Ջ. Գրինբերգի կողմից ընդունուած տեքստերի ծաւալը ենթակայ է քննադատութեան, քանի որ հարիւր բառանոց նիւթով իրականում հաճախ հնարաւոր չէ պարզել առկայ լեզուական առնչութիւնները: Այսպէս 200 հնչոյթ պարունակող տեքստում որոշ հնչոյթներ կարող են ոչ մի անգամ հանդես չգալ, տեղիք տալով թիւր եզրակացութիւններին: Ուստի բնագրերի ընտրութեան դէպքում

պետք է հաշուի առնել ընտրանքի ծաւալի չափի և հարաբերական սխալի մեծութիւնները*:

ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ի տարբերություն ավանդական տիպաբանության, որը **ձևաբանական** լինելով, բնականաբար, հնչոյթային համակարգի քննությամբ չէր զբաղվում, արդի տիպաբանությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում նաև հնչոյթային կառուցվածքին: Կառուցվածքային-տիպաբանական մեթոդը այժմ հաջողությամբ կիրառվում է ինչպես բնականաբար հնչոյթաբանության, այնպես էլ մասնավորապես պատմական հնչոյթաբանության բնագավառում: Տարբեր լեզուների հնչոյթային մակարդակի ուսումնասիրության ժամանակ տիպաբանական մեթոդի կիրառությունը հնարավորություն է ընձեռում ամբողջական և ավելի հստակ պատկերացում կազմելու լեզուների կառուցվածքային տիպերի և նրանց փոխհարաբերության մասին:

Յուրաքանչյուր լեզվի, այդ թվում նաև դասական գրաբարի, տիպաբանական քննությանը անհրաժեշտաբար պետք է նախորդի այդ լեզվի համապատասխան մակարդակների կառուցվածքային վերլուծությունը: Այդ հարցում դասական գրաբարի հնչոյթային համակարգի ուսումնասիրության արդի վիճակը կարելի է բավարար համարել, քանի որ կառուցվածքային մե-

* Ներածութիւնը տպագրուում է աւանդական ուղղագրութեամբ:

թողներով նրա առաջին ուսումնասիրությունն արդեն կատարված է⁸:

Տիպաբանական մեթոդով հնչույթային մակարդակի բնութագրության մեջ վերջին ժամանակներս խստիվ կերպով տարբերում են ա) համակարգի տիպաբանություն և բ) տեքստի տիպաբանություն: Ընդամին, լեզվական միավորների հարաբերությունների հարացուցային և շարակարգային տիպերը ոչ միայն հակադրվում են իրար⁹, այլև «լեզվի և խոսքի փոխհարաբերության ոչ ճիշտ ըմբռնման դեպքում սովորաբար հարացույցը հատկացնում են լեզվին, շարակարգը՝ խոսքին»¹⁰: Այսպիսով, միանգամայն անտեսվում է վերջիններիս փոխներթափանցումը, որը, ինչպես նշել է Գ. Ջահուկյանը, այդ և նմանօրինակ դասակարգումների արմատական թերությունն է:

Ներկա աշխատանքում հնչույթային համակարգի տիպաբանական բնութագիրը տրվում է հետևյալ կերպ, նախ պարզվում են դասական գրաբարի հնչույթային կառուցվածքի միավորներն ու դրանց ներքին փոխհարաբերություններն ինքնին որպես ներփակ համակարգ: Այնուհետև գրաբարի հնչույթային համակարգը զուգադրվում է ինչպես ցեղակից և ոչ ցեղակից մի շարք լեզուների, այնպես էլ հատկապես ժամանակակից հայոց լեզվի հնչույթային համակարգի հետ՝ համապատասխան միավորների

⁸ Է. Աղայան, *Գրաբարի քերականություն*, հ. 1-ին, Ե., 1964:

⁹ И.Н.Топорова, *Типология филогических систем языков банту*, авт. канд. дисс., М., 1968.

¹⁰ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 101:

վիճակագրությամբ ստացված քանակային արժեքների համեմատությամբ:

Դասական գրաբարի հնչույթային համակարգի ձայնավորական ոլորտն ընդգրկում է վեց հնչույթ՝ **ա, ե, ռ, ը, ի, ու**, որոնց քանակային տարբերակումը (երկար և կարճ ձայնավորներ) բացառված է:

Դասական գրաբարի հնչույթային համակարգը հարուստ է երկբարբառներով և եռաբարբառներով: Երկբարբառներից հինգը իջնող կամ թուլացող են՝ **այ, աւ, եւ, իւ, ոյ**, մյուսները բարձրացող կամ ուժգնացող՝ **եա, ուա, ուե, աի, ուո**: Գրաբարի եռաբարբառներն են՝ **եաւ, եայ, ուայ, ուաւ, ուոյ, ուէ**, որոնք բոլորն էլ բարձրացող-իջնող են:

Ինչպես ամբողջ հնչույթային համակարգի, այնպես էլ ձայնավորական ոլորտի նկարագրությունը կարելի է կատարել տարբերակիչ հատկանիշների հակադրության միջոցով: Կարող է հարց առաջանալ, թե ձեռքի տակ փորձառական որևէ տվյալ չունենալով, ինչպես կարելի է այս կամ այն տարբերակիչ հատկանիշը վերագրել գրաբարի հնչույթներին կամ բացառել նրանցից: Այդ կապակցությամբ հիշեցնենք, որ «հատկանիշների վերագրումը գրաբարի հնչույթներին, բնականորեն, որոշ չափով ենթադրական է, թեև այժմյան «ընդհանուր հայկական» արտասանությունը որոշ բան տալիս է, իհարկե»¹¹: Նման ձևով կազմվել են բազմաթիվ հին ու մեռած լեզուների հնչույթաբանական հակադրությունների տախտակներ:

¹¹ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 199:

Տարբերակիչ հատկանիշների տախտակները կարող են լինել ընդհանուր կամ գլխավոր և մասնակի կախված այն բանից, թե տախտակի մեջ ներառած է համակարգն ամբողջությամբ, թե՞ նրա այս կամ այն ոլորտը միայն:

Դասական գրաբարի վեց ձայնավոր հնչույթի բնութագրման համար երեք տարբերակիչ հատկանիշ բավական է¹²: Մի կողմ թողնելով ձայնավորություն-բաղաձայնություն հակադրությունը, քանի որ այն ընդհանուր է տվյալ ոլորտի բոլոր վեց միավորների համար և, հետևապես, տարբերակիչ հատկանիշ չի կարող լինել, եղ. Աղայանի՝ գրաբարի ձայնավորներին հատկացրած չորս տարբերակիչ հատկանիշներից մնում են երեքը, 1. Թավություն-անոսություն, 2. Բեմոլ տոնայնություն-հասարակ տոնայնություն և 3. Բարձր տոնայնություն-ցածր տոնայնություն:

Նշված հակադրություններից միայն մեկն է, որ դատարկ վանդակներ չունի, այսինքն՝ ընդգրկում է ամբողջ համակարգն առանց մնացորդի, դա թավություն-անոսություն հակադրությունն է: Այդ հատկանիշով հակադրվում են ետին, հետևաբար և թավ, **ա**, **ե** ձայնավորները առաջնային և անոս **ո**, **ու**, **ը**, **ի**-ին: **Ո**, **ու** ձայնավորները բեմոլ տոնայնությամբ հակադրվում են **ի**, **ե** ձայնավորներին, որոնք ունեն հասարակ տոնայնություն: **Ա** և **ը** հնչույթների համար այդ հակադրությունը էական չէ:

¹² Անշուշտ, եթե տարբերակիչ հատկանիշները ենթակա են տնտեսված և խիստ համակարգային ընտրության: Թե լեզվական քանի միավորին քանի տարբերակիչ հատկանիշ կբավարարի, կարելի է որոշել հետևյալ բանաձևերով՝ $U_{\max}=2^n$ և $U_{\min}=2^{n-1}+1$ – տե՛ս **Г.Б.Джаукян, О соотношении лингвистических единиц и признаков их описания, Тезисы докладов 15-й научно-методической сессии**, М.-Ер., 1967, էջ 11-15:

Բարձր տոնայնություն-ցածր տոնայնություն հակադրությունը էդ. Աղայանի աղյուսակում տրված է հետևյալ կերպ, ա-ն անտարբեր է այդ հակադրության նկատմամբ, իսկ **ո, ու**-ն ցածր տոնայնությամբ հակադրվում են **ե, ի**-ին, որոնք ունեն բարձր տոնայնություն: Հայտնի է, որ «ետին շարքի ձայնավորները համեմատաբար ավելի ցածր տոնայնություն ունեն, իսկ առաջնային շարքի ձայնավորները համեմատաբար բարձր»¹³:

Դասական գրաբարի ձայնավորական ոլորտի հնչույթային հակադրությունները ստորև տալիս ենք աղյուսակով:

Աղյուսակ 1

Տարբերակիչ հատկանիշ	Ա	Ո	Ու	Ե	Ի	Ը
Թավություն-անտարություն	+	-	-	+	-	-
Բեմոլ տոնայնություն-հասարակ տոնայնություն	0	+	+	-	-	0
Բարձր տոնայնություն-ցածր տոնայնություն	0	-	-	+	+	0

Դասական գրաբարի բաղաձայնական ոլորտը բաղկացած է 29 հնչույթից, որից ինը պայթականներ են՝ **բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ**, վեցը կիսաշփականներ՝ **ջ, ճ, չ, ձ, ծ, ց**, յոթը շփականներ՝ **գ, ս, ժ, շ, խ, հ, վ**, մնացածները՝ ձայնորդներ՝ **դ, լ, մ, ն, ր, ո, որոնք** հանդես են գալիս միայն բաղաձայնական արժեքով: **Յ, լ**-ը, կախված դիրքային առանձնահատկություններից, հանդես են գալիս որպես **ի** և **ու** հակադրության անդամներ:

¹³ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 197:

Ձայնավորների համար կազմած աղյուսակի ձևով կարելի էր տալ նաև, ձայնորդների և բաղաձայնների տարբերակիչ հատկանիշների տախտակներն առանձին-առանձին, սակայն ավելի կարևոր է դասական գրաբարի հնչությային համակարգի հատկանիշների ամբողջական միասնական տախտակը, որը և տրվում է № 2 աղյուսակում:

1. **Ձայնավորություն-բաղաձայնություն** հակադրությունը հատուկ է գրեթե բոլոր հնչույթներին: Դասական գրաբարի հնչությային համակարգը բնորոշվում է ամենից առաջ բաղաձայնություն՝ ոչ բաղաձայնություն տարբերակիչ հատկանիշ ունեցող հնչույթների գերակշռությամբ ոչ բաղաձայնություն-ձայնավորություն հակադրություն ունեցող հնչույթների նկատմամբ: Ձայնավորները և ոչ բաղաձայնները միասին վերցրած ամբողջ հնչությային համակարգի մեկ երրորդից չեն անցնում:

2. **Ձայնեղություն-խլություն** հակադրությունը գրաբարի համակարգի գործուն հատկանիշներից է, որով **բ, գ, դ, ձ, զ, զ, ժ**-ն հակադրվում են **պ, տ, կ, փ, ք, թ, ծ, ճ, ց, չ, ս, շ** հնչույթներին:

3. Եթե ձայնեղություն-խլություն հակադրությունը հատուկ է գրաբարի 19 հնչույթի, ապա **անընդհատականություն-ընդհատականություն** հակադրությունը՝ 23 հնչույթի (այս հակադրությունը հատուկ չէ **ծ, ճ, ց, չ, ձ, շ** բաղաձայններին):

4. **Կիսաշփականություն-ոչ կիսաշփականություն** հակադրությունը հատուկ է 13 հնչույթի: Այս հատկանշով **տ, դ, թ, ս, գ, շ, ժ**-ն հակադրվում են **ծ, ճ, ց, չ, ձ, շ** հնչույթներին:

5. **Թավություն-անոսրություն** հակադրությունը ավելի շատ հնչույթների է հատուկ: Այդ հատկանիշով մյուսներին հակադրվում են **կ, գ, ք, ճ, չ, շ, ժ, խ, դ**, ինչպես նաև **ա, ե** հնչույթները:

6. Հակառակ դրան, **բարձր տոնայնություն-ցածր տոնայնություն** հակադրությունից դուրս են մնում ա, ե ձայնավորները, որոնք անտարբեր են այդ հատկանիշի նկատմամբ:

7. Դասական գրաբարի հնչույթային համակարգում ձայնեղություն-խլություն հակադրությունից բացի էական տարբերակիչ հատկանիշ է նաև **շնշեղություն-ոչ շնշեղություն** հակադրությունը, որով **փ, թ, ք, ց, չ**-ն հակադրվում են **պ, տ, կ, ծ, ճ** հընչույթներին:

8. **Ռնգայնություն-ոչ ռնգայնություն** հատկանշով **մ, ն**-ն հակադրվում են **բ, գ, դ** հնչույթներին:

Նկատի ունենալով հայերենի բաղաձայնական համակարգում միաժամանակ մի քանի հակադրության խաչաձև հանդես գալը (օրինակ, պայթականության և շփականության հատկանիշների միաձուլումը ձայնեղություն-խլություն հակադրությանը), Ջահուկյանը նշել է, որ գրաբարի բաղաձայնների համար «չի կարելի հաստատել հակադրությունների հետևողական սուբորդինատիվ համակարգ»¹⁴:

Հայերենի բաղաձայնների դասակարգման առաջին կարևոր հակադրությունը, ըստ Գ. Ջահուկյանի, հակադրությունն է ըստ շփականության և հպականության, որ տրվում է հետևյալ սխեմայով.

շփականներ-----կիսաշփականներ
պայթականներ

¹⁴ **Г.Б. Джаукян**, Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967, стр. 74.

Բաղաձայնների դասակարգման երկրորդ հիմքը ձայնեղություն-խլություն հակադրությունն է.

Ձայնեղներ----- պարզ խուլեր

շնչեղ խուլեր

Դասական գրաբարի հնչույթային համակարգի և ժամանակակից հայոց լեզվի* համապատասխան մակարդակի զուգահրությունից պարզվում է.

Աղյուսակ 2

	պ	բ	փ	տ	գ	թ	զ	ք	ծ	ճ	ց	շ	ձ	ջ
Ձայնավորություն- բաղաձայնություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թավություն- անոսություն	-	-	-	-	-	-	+	+	-	+	-	+	-	+
Բարձր տոնայնու- թյուն-ցածր տոնայնություն	+	+	+	-	-	-	+	+	-	-	-	-	-	-
Անընդհատականու- թյուն-ընդհատակա- նություն	-	-	-	-	-	-	-	-	0	0	0	0	0	0
Ձայնեղություն- խլություն	-	+	-	-	+	-	+	-	-	-	-	-	+	+
Շնչեղություն-ոչ շնչեղություն	-	0	+	-	0	+	0	+	-	-	+	+	0	0
Ռնգայնություն-ոչ ռնգայնություն	0	-	0	0	-	0	0	0	0	0	0	0	0	0

* Այստեղ և այսուհետև նկատի է առնվում արդի հայերենի արևելահայ գրական տարբերակը:

շարունակություն

ս	զ	շ	խ	հ	լ	ղ	ր	ռ	մ	ն	ի	ու	ա	ո	ե	ը
–	–	–	–	–	–	–	–	–	–	–	+	+	+	+	+	+
–	–	+	+	+	–	–	+	0	0	–	–	–	+	+	+	–
–	–	–	–	+	+	–	–	–	–	+	–	+	0	–	+	0
+	+	+	+	+	+	+	+	+	–	–	–	+	0	0	0	0
–	+	–	+	–	0	0	+	0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	0	0	0	0	+	+	0	0	0	0	0	0

1. Ձայնավորական ոլորտում՝ ա) գրաբարյան **աւ** երկբար-
բառի դիմաց հայերենում առկա է պարզ օ ձայնավորը, բ) գրա-
բարյան երկբարբառները (բնականաբար՝ նաև եռաբարբառները)
վերածվել են ձայնավոր+յ կամ յ+ձայնավոր կապակցության՝ որոշ
փոփոխությունների ենթարկվելով (օր.՝ **լոյս–լույս, ձիւն–ձյուն** և
այլն): Նշանակում է դասական գրաբարի հնչույթային համա-
կարգի մեկ միավորը (երկբարբառը) արդի հայերենում դարձել է
երկուսը: Այս փաստը հանդես է գալիս հատկապես հնչավիճա-
կագրության ժամանակ, երբ, նաև դրանով պայմանավորված,
միննույն բովանդակության արտահայտությունը գրաբարում
ավելի սեղմ է, քան աշխարհաբարում:

2. Բաղաձայնական ոլորտում ա) շփական հնչույթների
գրաբարյան **ս-շ-խ-հ** շղթայածն հակադրության շարքում ավելա-
ցել է մի նոր հնչույթ և հակադրության փունջը ժամանակակից
հայոց լեզվում ստացել է հետևյալ տեսքը՝ **Ֆ-ս-շ-խ-հ**, բ) ի
տարբերություն գրաբարյան **յ, լ** ձայնորդների, որոնք դիրքից
կախված կարող են հանդես գալ որպես **ի-յ** և **վ-լ-ու**, արդի հայե-

րենում բոլոր ձայնորդները միայն բաղաձայնական արժեք ունեն:

Դասական գրաբարի հնչույթային համակարգի՝ հնդեվրոպականի հետ կատարած համեմատությունից կարելի է նշել, որ բոլոր լեզուներում ձայնավորները և ոչ բաղաձայնները միասին վերցրած ամբողջ հնչույթային համակարգի մեկ երրորդից չեն անցնում: Հետևաբար, այդ ընդհանրույթ է:

Ի տարբերություն այլ լեզուների, որոնք կարող են ունենալ ինչպես բարձրացող, իջնող, այնպես էլ բարձրացող-իջնող եռաբարբառներ, դասական գրաբարին հատուկ է միայն եռաբարբառների վերջին տիպը (այսինքն՝ վանկարաբը միշտ ձայնորդների միջև է դրվում):

Համապատասխան ոլորտում հայերենի առանձնահատուկ գիծն է **ը** հնչույթի առկայությունը, ձայնավորների քանակային (երկար և կարճ ձայնավորներ) չտարբերակվածությունը:

Դասական գրաբարի բաղաձայնական ենթահամակարգի տարբերություններից են.

1. Գրաբարի ձայնորդների մի մասը (**յ, լ**) դեռևս մնում է ձայնավորական ենթահամակարգի մեջ:

2. Ձայնորդների ենթահամակարգում նշելի է **ր** և **ռ** տարբեր հնչույթների առկայությունը:

3. Գրաբարը հարուստ է շփական բաղաձայններով:

4. Հայերենում, ինչպես նաև վրացերենում, առկա է բաղաձայն հնչույթների մի ինքնուրույն կարգ՝ կիսաշփական (աֆրիկատ) հնչույթներ, որոնք շփականների և պայթականների միջև միջին դիրք են գրավում:

Դասական գրաբարի և հին գրական վրացերենի հնչույթային կառուցվածքների համեմատությունից պարզվում է, որ չնայած հայերենի և վրացերենի բաղաձայնական համակարգերը հաճախ զուգադրվում են որպես որոշակի ընդհանրություններ ունեցող համակարգեր, սակայն վերջիններիս միջև զգալի տարբերություններ կան: Դրանցից են 1. ձայնավորական ոլորտում՝ հայերենին հատուկ է Ը հնչույթը, 2. բաղաձայնական ոլորտում՝ վրացերենին հատուկ է գ հազագային հնչույթը, որ չկա հայերենում և, դրան հակառակ, երկու լ-երի առկայությունը հայերենում, որ բացակայում է վրացերենում:

Քանի որ հայերենի և վրացերենի համար (իրանական որոշ լեզուների զուգընթաց) ընդունում են, այսպես կոչված, կովկասյան տարածք, ապա պետք է ասել, որ հակառակ վրացերենի, որտեղ առաջին պլանի վրա ծեփականություն-ոչ ծեփականություն (абруптивность-неабруптивность) հակադրությունն է, հայերենում այն էական դեր չի խաղում:

Չի կարելի, անշուշտ, ժխտել, որ նշված լեզուները շատ ընդհանուր գծեր ունեն հատկապես շփական բաղաձայնների ոլորտում (բարդ կիսաշփականների առկայություն և այլն): Այնուամենայնիվ, ընդունելով հանդերձ կովկասյան տարածքի գոյությունը, պետք է նշել, որ ճիշտ չի լինի այդ ընդհանուր գծերը բացատրել կովկասյան լեզուների միակողմանի ազդեցությամբ, ինչպես վերջին ժամանակներս հաճախ արվում է¹⁵: Այսպես, եթե կովկասյան տարածքի համար տիպական է բաղաձայնների

¹⁵ **И.Н.Топорова**, *Индоевропейские языки*, Введение, ЯН СССР, М., 1965.

գերակշռությունը ձայնավորների նկատմամբ, ապա հայերենում վիճակը բոլորովին այլ է (հմմտ, վիճակագրական քննությունը):

Նկատի ունենալով, որ զուգադրության միջոցով տիպաբանությունը գործ ունի լեզվական ընդհանրությունների և առանձնահատկությունների բացահայտման հետ, պետք է ասել, որ բավական չէ նշել, թե այս լեզվում ինչպիսի հնչույթներ կան, որոնք բացակայում են մյուսում, կամ ընդհակառակը, այլ անհրաժեշտ է կայուն չափանիշներով զուգադրել յուրաքանչյուր լեզվական համակարգի հնչույթներն ըստ իրենց գործառական նույնության, այդ ձևով որոշելով դրանց ընդհանրության աստիճանը:

Լեզուների հնչույթային համակարգերի, ինչպես և մյուս բոլոր համակարգերի, ընդհանրության աստիճանն ու տարբերությունը հաստատելը կապված է մի շարք դժվարությունների հետ, որովհետև միևնույն հնչույթի երկու լեզուներում լինելու փաստը դեռևս ընդհանրության մասին չի վկայում: Ընդհանրության համար պետք է պահպանվի հարաբերությունների նույնությունը: Հնչույթային համակարգում դրա տակ պետք է հասկանալ տվյալ հնչույթի տվյալ համակարգի մյուս հնչույթների նկատմամբ ունեցած հնչույթաբանական հակադրությունների ընդհանրությունը:

Այսպես՝ հայտնի է, որ գործառական նույնություն չի կարող լինել եռաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող որևէ լեզվի **բ**-ի և երկաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող մեկ այլ լեզվի **բ**-ի միջև, որովհետև եթե տվյալ լեզվում **բ**-ն հակադրվում է, ասենք, միայն **պ**-ին կամ **փ**-ին, ապա մյուսում՝ **ն**՝ մեկին, և՛ մյուսին:

Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ իրականում հնարավոր չէ գտնել գոնե երկու լեզու, որոնց հնչույթային համակարգերը, հետևաբար և հնչույթային հարաբերությունները, փոխադարձաբար իրար ծածկեն, այսինքն լրիվ համընկնեն: Դրա համար էլ, պահպանելով քննության համակարգային բնույթը, պետք է զուգադրությունն, այնուամենայնիվ, կատարել հատվածային (ֆրագմենտալ) ձևով:

Քանի որ զուգադրվող լեզուների հնչույթային համակարգերը կարող են համընկնել մասամբ, բայց ոչ երբեք՝ ամբողջովին, անհրաժեշտություն է առաջանում ստեղծել մի այնպիսի մեթոդ, որի օգնությամբ հնարավոր լինի որոշակի արժեքներով սահմանել հնչույթային համակարգերի ընդհանրության և տարբերության աստիճանը:

Այդ առումով նպատակահարմար է կիրառել Տ. Միլևսկու առաջարկած մեթոդը, որը հիմնված է առաջնային և երկրորդային հակադրությունների հարաբերության վրա¹⁶:

Տ. Միլևսկին, կատարելով կովկասյան և ամերիկյան հարյուրից ավելի լեզուների հնչույթային համակարգերի տիպաբանական քննություն, նշում է, որ համակարգի հիմք հանդիսացող հնչույթների միջև եղած արտասահմանական տարբերությունները կարելի է բաժանել երկու տիպի՝ առաջնային և երկրորդային: Առաջնային հակադրություններն ա համարում է այնպիսիք, որոնք ավելի հեշտ են ի հայտ բերվում, առավել կարևոր են, և, ամենագլխավորը, առկա են բոլոր լեզուներում: Այդ է պատճառը,

¹⁶ **Т. Милевский**, *Предпосылки типологического языкознания*, сб. "Исследования по структурной типологии", М., 1963.

որ երեխայի խոսքի ձևավորման ընթացքում ամենից առաջ հաստատվում են առաջնային հակադրությունները՝ ստանձնելով բառերի տարբերակման գործառնություն: Բացի դրանից, այդ հակադրությունները պահպանվում են նաև անհատի լեզվում ախտաբանական երևույթների առաջացման դեպքում:

Լեզուների հնչույթային համակարգում առաջին և ակնառու հակադրությունը ձայնավորների և բաղաձայնների միջև է: Բազմաթիվ լեզուների ուսումնասիրությամբ հաստատված է, որ լեզվի ձայնավորական ոլորտը բաղկացած է առնվազն երեք հնչույթից (հմմտ, նաև արանտա, արագիներեն): Սովորաբար դրանք են՝ առաջնալեզվային վերին բարձրացման **Ի**-ն, ետնալեզվային **Ու**-ն և լայն **Ա**-ն: Բոլոր լեզուներում այդ ձայնավորների միջև եղած հակադրությունները հնչույթային արժեք ունեն: Պայթական բաղաձայնների համակարգը ամենուրեք ընդգրկում է առնվազն երեք հնչույթ՝ շրթնային **պ**, առաջնալեզվային **տ** և ետնալեզվային **կ**: Սրանց միջև առկա հակադրությունները ևս առաջնային են:

Այսպիսով, առաջնային հակադրությունների համակարգը բոլոր լեզուների համար բաղկացած է տասը հնչույթից: Դրանք են՝ **ա, ի, ու** ձայնավորները, **պ, տ, կ, լ, մ, ն, ր, ս** բաղաձայնները:

Ինչպես տեսնում ենք, Տ. Միլևսկու առաջնային հակադրությունների համակարգում ձայնավորները կազմում են 30 տոկոս, բաղաձայնները՝ 70 տոկոս:

Բոլոր լեզուների հնչույթային համակարգերը հիմնվում են ահա այդ տասը հակադրությունների վրա, որոնք համեմատության ընդհանուր հիմքն են: Սրանցից բացի ամեն մի լեզվում գոյություն ունեն տվյալ հնչույթային համակարգին հատուկ

հակադրություններ, ուստի վերջիններս տիպաբանական գուգադրության նյութ են հանդիսանում¹⁷: Այս դեպքում ելակետային դրույթ է այն, որ հնչույթային համակարգերում երկրորդային հակադրությունները առաջնայինների համեմատությամբ սովորաբար ավելի մեծ թիվ են կազմում:

Պարզելով դասական գրաբարի առաջնային և երկրորդային տարրերի արժեքները, վերջիններս կարելի է գուգադրել հին ու նոր մի շարք լեզուների հետ (տես աղյուսակ 3):

Աղյուսակում բերված լեզուների հնչույթային համակարգերը բաղկացած են ինչպես առաջնային, որ հատուկ է բոլոր լեզուներին, այնպես էլ երկրորդային տարրերից: Առաջնային և երկրորդային տարրերի հարաբերությունը դասական գրաբարի համապատասխան համակարգում հավասար է 10:23 (արդի հայերենի համար 10:24): Այդ նշանակում է, որ դասական գրաբարի հնչույթային համակարգում երկրորդային տարրերը, ինչպես սանսկրիտում, հին գրական վրացերենում և ֆրանսերենում, կազմում են 69,7 տոկոս, որը 4,7 տոկոսով ցածր է լեհերենի համապատասխան արժեքից:

¹⁷ T. Milewski, *Comparaison de systéms phonologies des langues caucasiennes et américaines*, "Lingua Poznaniensis". № 54, 1955.

Աղյուսակ 3

Հնչույթներ	Առաջ- նային տարբե- րակ		Դասական գրաբար			Մանսկրիտ			Հին հունարեն		
	թիվը	%-ը	առաջն. տարր. թիվը	առաջն. տարր. %-ը	երկր. տարր. %-ը	առաջն. տարր. թիվը	առաջն. տարր. %-ը	երկր. տարր. %-ը	առաջն. տարր. թիվը	առաջն. տարր. %-ը	երկր. տարր. %-ը
Ջայնավոր- ներ	3	30	6	18,2	-11,8	5	15,2	-14,8	5	20,8	-9,2
Ռնգային բաղաձայն- ներ	2	20	2	6,0	-14,0	2	6,0	-14,0	2	8,3	-11,7
Նայեր	1	10	3	9,1	-0,9	2	6,0	-4,0	2	8,3	-11,7
Շփական- ներ	1	10	7	21,2	+11,2	4	12,1	+2,1	6	25,0	+15,0
Կիսաշփա- կաններ	–	–	6	18,2	+18,2	4	12,1	12,1	–	–	–
Պայթական- ներ	3	30	9	27,3	-2,7	16	48,5	+18,5	9	38,0	+8,0
Ընդամենը՝ բաղաձայն- ներ	7	70	27	81,8	+11,8	28	84,8	+14,8	19	83,3	+13,3
Ընդամենը՝ հնչույթներ	10	–	33	–	69,7 (23)	33	–	69,7 (23)	24	–	58,3 (14)

Շարունակություն

Հին վրացերեն				Արդի հայերեն			Լեհերեն			Ֆրանսերեն		
	առաջն. տարր. թիվը	առաջն. տարր. %-ը	երկր. տարր. %-ը	առաջն. տարր. թիվը	առաջն. տարր. %-ը	երկր. տարր. %-ը	առաջն. տարր. թիվը	առաջն. տարր. %-ը	երկր. տարր. %-ը	առաջն. տարր. թիվը	առաջն. տարր. %-ը	երկր. տարր. %-ը
1	5	15,2	-14,8	6	17,6	-12,4	6	15,4	-14,6	15	45,6	+15,6
2	2	6,0	-14,0	2	5,0	-14,1	4	10,2	-9,8	3	9,1	-10,9
3	2	6,0	-4,0	3	8,8	-1,2	2	5,1	-4,9	2	6,0	-4,0
4	7	21,3	+11,3	8	23,5	-13,5	11	28,2	-18,2	7	21,2	+11,2
5	6	18,2	+18,2	6	17,6	-17,6	6	15,3	15,3	–	–	–
6	11	33,3	+3,3	9	26,5	-3,5	10	25,8	-4,2	6	18,2	-11,8
7	28	84,8	+14,8 69,7	19	82,4	-12,4	33	34,6	14,6 74,4	18	56,5	-13,5 69,7
8	33	–	(23)	34	–	(24)	39	–	(29)	33	–	(23)

Եթե առաջնային տարրերի մեջ մտնող ձայնավորները երեքն են և կազմում են համապատասխան ոլորտի 30 տոկոսը, ապա դասական գրաբարի ձայնավորական ոլորտն ամբողջությամբ բաղկացած է վեց հնչույթից, որ կազմում է ընդհանուր համակարգի 18,2 տոկոսը: Դրանից հետևում է, որ առաջնային և երկրորդային տարրերի հարաբերությունը դասական գրաբարի համար –11,8 տոկոս է, այն դեպքում, երբ մինևույն հարաբերությունը հին գրական վրացերենում կազմում է –14,8 տոկոս:

Բերված թվային տվյալների զուգադրությունից պարզվում է, որ ձայնավորական ոլորտում երկրորդային տարրերով ամե-

նահարուստ համակարգը ֆրանսերենին է (+15,5), աղքատը հին գրական վրացերենին և սանսկրիտին (-14,1): Մոտավորապես միջին դիրք են գրավում դասական գրաբարը (-11,8) և արդի հայերենը (-12,4), որոնք ունեն թվային ավելի մեծ արժեք, քան լեհերենը (-14,6): Պետք է ասել, որ բաղաձայնական ոլորտի երկրորդային և առաջնային տարրերի հարաբերությունը իր թվային արժեքներով, բնականաբար, կստանա ձայնավորական ոլորտի համապատասխան հարաբերությանը հակառակ մեծություն: Ըստ այդմ, դասական գրաբարը և արդի հայերենը դարձյալ միջին դիրք են գրավում (համապատասխանաբար՝ -11,8 և -12,4 տոկոս) բաղաձայնական հարուստ համակարգ ունեցող սանսկրիտի և վրացերենի (+14,3 տոկոս) և այդ առումով համեմատաբար աղքատ ֆրանսերենի (-15,5 տոկոս) միջև:

Ըստ հնչույթային համակարգի առաջնային և երկրորդային տարրերի հարաբերությամբ ստացած արժեքների, աշխարհի լեզուները դասակարգվում են երկու խմբի՝ ձայնավորական և բաղաձայնական: Ձայնավորական տիպին կպատկանեն այն բոլոր համակարգերը, որոնց երկրորդային ձայնավորների տոկոսը զրոյից բարձր է, իսկ բաղաձայնական տիպին՝ այն լեզուները, որոնց երկրորդային բաղաձայնների տոկոսը բարձր է զրոյից: Դասական գրաբարը, արդի հայերենը, հին գրական վրացերենը և լեհերենը կմտնեն մեկ խմբի մեջ (բաղաձայնական խումբ), իսկ ֆրանսերենը, օրինակ, ձայնավորական խմբի մեջ: Պետք է նշել, որ ժամանակակից հայոց լեզվի համեմատությամբ դասական գրաբարն ավելի մոտ է ձայնավորական խմբին:

Զնայած վերոհիշյալ սկզբունքներով Տ. Միլևսկին տիպաբանական գուգադրություն է կատարել հարավամերիկյան և կով-

կայսյան բազմաթիվ լեզուների միջև, սակայն պետք է նշել, որ կիրառված մեթոդով, իրոք, միայն անմենաընդհանուր երևույթները կարող են վեր հանվել:

Լեզուների հնչույթային համակարգերի ընդհանրությունների և առանձնահատկությունների ավելի խորը բացահայտման համար, ինչպես նշվել է, պետք է հիմնվել միայն հավասարաթեք հնչույթների վրա: Որպես հավասարաթեք հնչույթների լուսաբանություն, Ս. Միլևսկին բերել է հայերենի և հունարենի հնչույթների հետևյալ օրինակը, $t:d$ և $t:th$ հնչույթների հնչույթային հակադրությունները հավասարաթեք են, որտեղ որպես աննշանակիր (немаркированный) միավոր հանդես է գալիս t -ն, որն առաջին դեպքում կազմում է խուլ-ձայնեղ հակադրությունը, երկրորդ դեպքում՝ ոչ շնչեղ-շնչեղ հակադրությունը: Ուրեմն, հայերենի **տ, դ, թ** հնչույթները հավասարաթեք են հունարենի t, d, th -ին: Չնայած այդ հնչույթների հավասարաթեքությանը, այնուամենայնիվ, սրանք նույնական չեն, որովհետև հայերենի հնչույթները, բացի հունարենի հնչույթների հետ ունեցած նույնական հակադրություններից, հանդես են գալիս նաև տարբեր հակադրությունների մեջ՝ $t:c$ և $th:c$: Վերջիններս բացակայում են հունարենում, քանի որ c և c հնչույթները հունարենի համակարգում բացառված են¹⁸:

¹⁸ **Т.Милевский**, նշվ. աշխ., էջ 11: Ս. Միլևսկին առաջարկել է հնչույթային համակարգի ընդհանրության աստիճանը հավասարաթեք հնչույթների միջոցով որոշելու հետևյալ բանաձևը՝ $a-b/a+b=x$, որտեղ a -ն երկու լեզուների հավասարաթեք հնչույթների գումարն է, b -ն ոչ հավասարաթեք հնչույթների գումարը, իսկ x -ը՝ համակարգերի նմանության աստիճանը: Նշված մեթոդը, ինչպես նկատել է ինքը՝ հեղինակը, գործնա-

Հնչույթային համակարգերի միջև եղած ընդհանրություններն ու առանձնահատկությունները ավելի խորը բացահայտելու համար գլխավորապես պետք է հիմնվել տարբերակիչ հատկանիշների վրա:

Տարբեր լեզուների հնչույթային համակարգերի վիճակագրական քննությունը վերջերս ավելի ու ավելի մեծ ուշադրության է արժանանում¹⁹, որը պայմանավորված է այդ բնագավառում որոշակի լեզվական օրինաչափությունների բացահայտմամբ:

Հայ լեզվաբանությանը հնչույթային վիճակագրության երեք փորձ արդեն հայտնի է (Հ. Աճառյան, Է. Աղայան և Մ. Մելքումյան): Եթե Հ. Աճառյանը և Է. Աղայանը վիճակագրական քննության են ենթարկել գրաբարը (Աճառյանը՝ նաև աշխարհաբարը), ապա Մ. Մելքումյանը՝ միայն ժամանակակից հայոց լեզվի հնչույթային համակարգը²⁰:

Մեր վիճակագրական քննությունը մի կողմից՝ տարբերվում է Հ. Աճառյանի վիճակագրությունից հնչույթաբանության զարգացման հետևանքով հնչույթային միավորների հաշվառման սկզբունքների մեջ տեղի ունեցած էական փոփոխություններով,

կանում կիրառելը կապված է մի շարք անհարմարությունների հետ և, բացի դրանից, միշտ չէ, որ հստակ արդյունքների է հասցնում: Բանաձևը մենք չենք կիրառում հաշվի առնելով հիշյալ հանգամանքները:

¹⁹ **P. Guiraud**, *Problèmes et méthodes de la statistique linguistique*, Paris, 1960.

²⁰ **Է. Աղայան**, նշվ. աշխ., էջ 269, ինչպես նաև **М.Р. Мелкумян**, *Исходные данные и статистико-комбинаторные выделения парадигмы первого морфологического типа в армянском языке*, сб. "Статистико — комбинаторное моделирование языков", М, 1965, էջ 123 և հատկապես՝ **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն*, Ներածություն, Երևան, 1955:

մյուս կողմից՝ կատարված լինելով մաթեմատիկական վիճակագրությամբ թույլատրելի ընտրանքի ծավալի քանակի սահմաններում, տարբերվում է Աճառյանի և Աղայանի վիճակագրության քննության փորձերից իր հետապնդած նպատակով: Այսպես, եթե Աճառյանին հետաքրքրում էր գրաբարի (ավելի ճիշտ՝ դասական գրաբարի, որովհետև ընտրանքը կատարված է միայն այդ շրջանից) և աշխարհաբարի ներդաշնակության աստիճանը, իսկ Աղայանին՝ գրաբարի հնչույթային վիճակագրության իրական պատկերը, ապա սույն քննությունը տիպաբանական նպատակ է հետապնդում՝ տիպաբանական բնութագրման ենթարկել հին գրական հայերենի դասական շրջանի հնչույթային համակարգը (որոշ առումով Աճառյանի փորձը ևս կարելի է տիպաբանական համարել): Ընդամին վերը նշված երկու փորձից մեր մոտեցումը տարբերվում է ոչ միայն նրանով, թե ինչքան պետք է լինի ընտրանքի ծավալը, այլև՝ ինչպիսին պետք է լինի ընտրանքը²¹:

Քանի որ սույն աշխատանքը նվիրված է դասական հայերենի համաժամանակյա կտրվածքով տիպաբանական բնութագրին, ուստի մենք չենք անդրադառնա գրաբարի ետդասական և միջին հայերենին անմիջապես նախորդած շրջաններին²²:

²¹ **Բ.Ղազարյան**, *Հաճախականության բառարանի յուրահատուկ կողմերը*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, № 9:

²² Գրաբարի բոլոր շրջանների ձայնավորների և բաղաձայնների գործառական բեռնվածության, այսինքն՝ հնչույթների հաճախականության համար տե՛ս **Ա.Սարգսյան**, *Գրաբարի հնչույթային համակարգի տիպաբանական բնութագրման հարցի շուրջը*, «Երիտասարդ գիտաշխատող», 1987, № 6:

«Գրաբարի համար, - գրում է Հր. Աճառյանը,-քննությանս առարկա է եղել հայ լեզվի հնագույն վիճակը, այն, որ երևան է գալիս մեսրոպյան շրջանի առաջին թարգմանիչների գրիչների տակ՝ իր ամենից մաքուր, ամենից ավելի բնիկ ու անխառն ձևի մեջ»²³: Ըստ այդմ էլ նա վիճակագրական քննությունից դուրս է թողել Ղազար Փարպեցուն, Եղիշեին, Խորենացուն, Մամբրեին և համեմատաբար ուշ շրջանի մեր մյուս մատենագիրներին: Ինչպես ինքն է ասում, բոլորովին մի կողմ է դրել «հունաբան հեղինակների շինած հունաբան հայերենը, ունիթոոների հնարած լատինաբան հայերենը»²⁴:

Հ. Աճառյանը եթե մի կողմից ճիշտ է վարվել՝ խուսափելով քննության ենթակա հատվածների մեջ գործածված հատուկ անուններից, ապա, մյուս կողմից, մեզ թվում է, տեղին չէ նրա այն մտահոգությունը, որ կարող են նվազ լինեն միևնույն բառերի կրկնությունները, որովհետև առանձնապես խոսակցական լեզվի մեջ այդպիսիք միշտ էլ անխուսափելի են: Ավելին, կրկնությունները համեմատաբար քիչ են հենց գրավոր լեզվի մեջ: Բացի դրանից, տարբեր ոճերի տեքստերի քննությունը հնարավորություն կտա պարզելու այն հարցը, թե հնչույթների վիճակագրական արդյունքների վրա ինչպիսի ազդեցություն կարող են թողնել ընտրած տեքստերի ոճական առանձնահատկությունները: Ի տարբերություն Աճառյանի, որը ոչ մի հատված չի վերցրել Կորյունից, Ագաթանգեղոսից, Բուզանդից, ինչպես նաև Հին կտակարանից, Աղայանը իր վիճակագրական փորձի մեջ

²³ Հ.Աճառյան, *Լիակատար քերականություն*, Ներածություն, Ե., 1955:

²⁴ Հ.Աճառյան, նույն տեղում:

ներառել է նաև հատվածներ Ագաթանգեղոսից, Փավստոս Բուզանդից, ժողովրդական բանահյուսությունից և այլն:

Հնչույթների վիճակագրական վերլուծության ժամանակ բոլոր դեպքերում հիմք ենք ընդունել հնչույթը և ոչ թե տառը, չնայած ընդունում ենք, որ գրաբարի դասական շրջանի գրությունն ու արտասանությունը համարյա նույնական են: Այնուամենայնիվ, այդ խնդրում որոշ դժվարություններ են առաջանում, այսպես, մենք առաջիմ որոշ դեպքերում հաստատապես չգիտենք, թե ինչպես է հնչվել այս կամ այն բառը գրաբարում, թեպետ, ինչպես նշել է Էդ. Աղայանը, մեր ժամանակակից արտասանությունը որոշ հիմք տալիս է այդ բառերի ճիշտ արտասանության համար:

Անշուշտ, կարելի է ընտրել քննության մեկ այլ, ավելի ճիշտ ուղի՝ հաշվել տառերը կամ գրությունները, ինչպես արվում է երբեմն լեզվաբանության մեջ ինչ-ինչ կիրառական նպատակներով²⁵: Լեզվաբանության համար տառերի հաշվառումը լուրջ արժեք չի ներկայացնում, և դեռևս Հ. Աճառյանն իր «Հայերենի ներդաշնակության աստիճանը թվաբանական հաշվով»²⁶ հոդվածում ընդունում է ոչ թե տառերը, այլ ձայները (=հնչույթները) միայն նկատի առնելու սկզբունքը:

Հր. Աճառյանի և Էդ. Աղայանի վիճակագրական սկզբունքների միջև որոշ տարբերություն կա: Այսպես՝ Աճառյանը առ-

²⁵ **В.Н.Топоров**, *Материалы для дистрибуции графем в письменной форме русского языка*, сб. «Структурная типология языков», М., 1967.

²⁶ «Ոստան» ամսաթերթ, 1912, № 6, էջ 272-288: Արտատպված է մասնակի շտկումներով Լիակատար քերականության «Ներածություն» հատորում, էջ 258:

բոլոր դեպքերում երկբարբառ է համարում, ուստի և հաշվում մեկ հնչույթ, մինչդեռ Աղայանը միայն փակ վանկում է այն դիտում երկբարբառ, իսկ բաց վանկի դեպքում համարում է ձայնավորի և բաղաձայնի կապակցություն, այսինքն՝ երկու հնչույթ:

Դասական գրաբարի հնչույթների գործառական բեռնվածության իրական պատկերը ստանալու համար քննության ենք ենթարկել հետևյալ տեքստերը.

1. Երգ երգոց, գլուխ Ա
2. Աւետարան ըստ Մատթէոսի, գլուխ ԺԲ
3. Աւետարան ըստ Մարկոսի, գլուխ Բ
4. Աւետարան ըստ Ղուկասու, գլուխ ԺԸ
5. Աւետարան ըստ Յովհաննու, գլուխ ԺԵ
6. Եզնիկ, գիրք 2, գլուխ Ա

7. Կորին, Վասն որոյ առեալ երանելոյն... մինչև՝ եւ անդէն ի նմին (ներառյալ):

Վերլուծության արդյունքները տրվում են № 4 աղյուսակում:

Աղյուսակից կարելի է եզրակացնել, որ գրաբարի ամենաբարձր հաճախականություն ունեցող հնչույթը **Ա**-ն է՝ 1779/15000 (11,860%): Գործառական բեռնվածության տեսակետից երկրորդ տեղում **Ն**-ն է՝ 1286/15000 (8,573%): **Ն**-ն շատ է ստացվել ոչ միայն մեր վերցրած տեքստերում, այլև Աճառյանի և Աղայանի քննած տեքստերում: Հետևաբար, **Ն**-ի բարձր հաճախականությունը պատահական երևույթ չէ:

Համեմատաբար հաճախ են գործածվում նաև **ե**, **ի**, **ը** ձայնավորները, **մ**, **ր** ձայնորդները և այլն:

Երկբարբառների հաճախականությունը առավել ցածրն է. բոլոր երկբարբառները միասին վերցրած ավելի քիչ տոկոս են

կազմում, քան, ասենք, միայն ք-ն: Դա պայմանավորված չէ մեր տեքստերի ոճական առանձնահատկություններով, քանի որ նույն պատկերն է նաև Աղայանի վերցրած տեքստերում: Այդ պատճառով էլ, չնայած մեր ընտրանքում ընդամենը յոթ երկրաբառ կա, այնուամենայնիվ, մեր և Աղայանի տվյալների միջև եղած տարբերությունները աննշան են՝ -0,027 և 0,003:

Ընդհանրապես էական շեղումները հիմնականում մեկ տոկոսի սահմաններում են: Այդպիսի մի քանի դեպք է եղել, այն էլ միայն բարձր հաճախականություն ունեցող հնչույթներին հատուկ: Մնացած բոլոր դեպքերում շեղումը մեկ տոկոսից ցածր է ստացվել: Այդ արդեն խոսում է այն մասին, որ, իրոք, լեզուն ունի հնչույթային գործառական բեռնվածության կայուն պատկեր, որը հատուկ է իրեն՝ զարգացման տվյալ փուլում:

Աղյուսակ № 5-ում տրվում է դասական գրաբարի հնչույթների ցուցակը ըստ նվազող հաճախականության: Ինչպես երևում է աղյուսակից, մեր և Է. Աղայանի վիճակագրած հնչույթների ըստ նվազող հաճախականության կարգահամարները (բառ) տաարանգամ համընկնում են՝ մնացած դեպքերում առանձնապես էական շեղումներ չտալով:

Բաղաձայնական համակարգում երկու դեպքում էլ 14 տոկոս կազմում են ձայնեղները, 19 տոկոս՝ խուլերը: Այդ առումով հետաքրքիր է պարզել, թե Պ. Գիրոյի և Գ. Յիպֆի կողմից հնդեվրոպական 16 լեզուների և հունգարերենի վերլուծության վրա հիմնված վիճակագրության եզրակացությունները²⁷ հաստատվո՞ւմ են արդյոք նաև հայերենի,

²⁷ P. Guiraud, նշվ. աշխ., էջ 97-125:

մասնավորապես՝ գրաբարի տվյալներով, թե ոչ: Ըստ նրանց, հնդեվրոպական լեզուների քննությունից կարելի է եզրակացնել, որ առհասարակ նշված լեզուներում խուլ բաղաձայնների հարաբերությունը ձայնեղներին ստանում է 7:3 արժեքը: Որ տեքստերում խուլերն ավելի հաճախական են, քան ձայնեղները, ապացուցվում է նաև գրաբարի տվյալներով՝ 19 տոկոս խուլեր և միայն 14 տոկոս ձայնեղներ: Որպես դասական գրաբարի կարևոր առանձնահատկություն հարկավոր է նշել, որ ի տարբերություն լատիներենի, որն առավել ևս աչքի է ընկնում խուլերի բացարձակ գերակշռությամբ, գրաբարը համեմատաբար ձայնեղատու է և 7:3 հարաբերության փոխարեն վերջինիս համար ծայրահեղ դեպքում հարկավոր է 6:4 հարաբերությունը նշել:

Ինչպես հնդեվրոպական 16 լեզուներում, դասական գրաբարում ևս **կ**-ն ավելի հաճախական է (1,913), քան **գ**-ն (0,833), **տ**-ն ունի ավելի մեծ արժեք (2,320), քան **դ**-ն (1,713), սակայն **պ**-ն ավելի փոքր տոկոս է կազմում՝ 0,833 (ըստ Է. Ադայանի՝ 0,949), քան **բ**-ն՝ 1,053 (ըստ Է. Ադայանի՝ 1,058): Կարելի է կարծել, որ առանձին հնչույթների միջին տոկոսային ցուցիչները (հատկապես գրաբարի **պ**, **տ**, **կ**-ի համար) միջինից ցածր են ստացվում, որովհետև բացի պարզ խուլերից, հնչույթային համակարգում առկա են նաև շնչեղ խուլերը՝ **փ**, **թ**, **ք**: Այսպես՝ դասական գրաբարում **կ**-ն կազմում է ամբողջ հնչույթային համակարգի 2 տոկոսը, եթե հաշվի առնենք նաև **ֆ**-ն (1,9 տոկոս), ապա երկուսի արժեքների գումարը կհասնի միջինին:

Այդպիսով, հենց հնչույթային համակարգի յուրաքանչյուր ոլորտում ինչ-որ չափով գոյություն ունի որոշակի համամասնական բաշխվածություն. եթե տվյալ ոլորտի հնչույթներից մեկը

միջինից ցածր հաճախականություն է ստանում, ապա միննույն ոլորտի մյուս հնչույթներին կամ նրանցից որևէ մեկին միջինից բարձր հաճախականություն ունենալու հնարավորություն է ընձեռվում:

Գրաբարի տվյալները խոսում են հոգուտ այն լեզվաբանական ընդհանրության, որ **այ, տ, կ** հնչույթները ոչ միայն հատուկ են բոլոր լեզուներին, այլև հնչավիճակագրության ժամանակ ամենուրեք բարձր հաճախականություն ունեն:

Հետաքրքիր է պարզել, թե վիճակագրությամբ ստացված արժեքների ինչպիսի փոխհարաբերություն կա մի կողմից՝ դասական գրաբարի և սանսկրիտի, որպես հին լեզվի, և մյուս կողմից, դասական գրաբարի և ժամանակակից հայոց լեզվի միջև: Այդ պարզելու համար վիճակագրության է ենթարկվել (հին հնդկերեն լեզվով) Դանդինի «Կավյադարշա» տրակտատից մի հատված²⁸: Սանսկրիտի և գրաբարի տվյալների համեմատությունը տրվում է № 6 աղյուսակում:

Դասական գրաբարի և սանսկրիտի համապատասխան արժեքների զուգադրությունից պարզվում է.

ա) Ինչպես և պետք էր սպասել, չնայած հայերենի **Ա**-ն ամենահաճախական հնչույթն է, սանսկրիտի **Ա**-ն կրկնակի հաճախական է (գրաբարի 11,86 տոկոսի դիմաց 26,24 տոկոս): Սանսկրիտում **Ա**-ի հաճախականությունը այնքան մեծ է, որ գրային համակարգում մեծ մասամբ **Ա**-ն հատուկ նշելու անհրաժեշտությունը չի զգացվում:

²⁸ Հատվածը տրված է **Վ.Իվանովի** և **Վ.Ն.Տոպորովի** «Санскрит» (М., 1960) գրքի 130-րդ էջում:

բ) Երկու լեզուներում էլ **Ի, Ու** ձայնավորների, երկբարբառների, **ռ, լ, ս, հ, ջ, կ, գ, բ, փ, թ** հնչույթների համապատասխան արժեքների տարբերությունը մեկ տոկոսի սահմաններից չի անցնում: Նշանակում է, գրաբարի և սանսկրիտի հնչույթների հաճախականությունը օժտված է ընդհանուր գծերով, որոնք դրսևորում են նշված լեզուների համասեռությունը:

գ) Էական շեղումներ են տվել **Ե, Ո** ձայնավորները, **ն, մ, պ, տ** բաղաձայնները: Առաջին զույգի սանսկրիտի արժեքները ցածր են ստացվել (գրաբարի 8,37 տոկոսի դիմաց 1,97 տոկոս և 4,23-ի դիմաց՝ 1,57 տոկոս): Այդ կարելի է բացատրել վերը նշված համամասնությամբ:

դ) Մնացած դեպքերում բարձր հաճախականությունը բացատրվում է տվյալ հնչույթների համեմատաբար մեծ թվով կապակցությունների մեջ հանդես գալու հնարավորությամբ: Այդպիսի հնչույթներից են **մ**-ն և **ն**-ն:

Որոշելու համար, թե հայոց լեզվի երկու վիճակներից (դասական գրաբար և արդի հայերեն) որն է նվազ ավելուրդային կամ սեղմ, պետք է քննության առնել միևնույն բովանդակության արտահայտությունը գրաբար և աշխարհաբար: Դա պարզելու համար վիճակագրական քննության է ենթարկվել Կորյունից մի հատված (սկսած «Մաշտոց էր անունն այն մարդոյ»-ից) գրաբար և աշխարհաբար թարգմանությամբ (արդյունքները № 7 աղյուսակում):

Աղյուսակ 4

Հըն- չույթ	Երգ երգոց		Աւետարան ըստ Մատթէոսի		Աւետարան ըստ Մարկոսի		Աւետարան ըստ Դու- կասի		Աւետարան ըստ Յովհան- նու		Եզնիկ		Կորին		Ընդամենը	
	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ա	146	0,641	475	12,431	254	11,072	412	13,770	160	8,501	172	11,443	160	14,084	1779	11,860
Ե	105	7,653	301	7,877	213	9,285	250	8,355	197	10,467	123	8,183	66	58,09	1255	8,366
Ի	105	7,653	254	6,647	157	6,843	195	6,517	140	7,438	95	6,320	55	4,841	1001	6,673
Ը	83	6,049	221	5,783	118	5,143	135	4,512	95	5,047	76	5,056	59	5,193	787	5,246
Ո	59	4,300	166	4,344	109	4,751	110	3,676	61	3,241	78	5,189	51	4,489	634	4,226
ՈԻ	24	1,749	65	1,701	52	2,266	61	2,038	29	1,540	31	2,061	27	2,376	289	1,926
Է	6	0,437	37	0,968	22	0,959	32	1,069	38	2,019	15	0,998	16	1,408	166	1,106
Եա	14	1,020	25	0,654	24	1,046	23	0,768	20	1,115	13	0,864	22	1,936	142	0,946
Եաւ	–	–	1	0,226	–	–	1	0,033	1	0,053	–	–	–	–	3	0,020
աւ	13	0,947	16	0,418	3	0,130	7	0,270	9	0,478	6	0,399	8	0,704	62	0,413
իւ	10	0,728	17	0,444	9	0,392	17	0,568	8	0,425	5	0,332	10	0,880	76	0,506
ոյ	2	0,145	8	0,209	6	0,261	4	0,133	6	0,318	–	–	2	0,176	28	0,186
այ	12	0,874	53	1,387	24	1,046	39	1,303	30	1,594	15	0,998	5	0,440	178	1,186
ուի	–	–	1	0,026	–	–	1	0,033	4	0,212	–	–	1	0,088	7	0,046
ուա	2	0,145	2	0,052	3	0,130	12	0,401	2	0,106	12	0,798	2	0,176	35	0,233
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
ուոյ	–	–	2	0,052	–	–	2	0,066	–	–	–	–	1	0,088	5	0,033
ուո	1	0,072	2	0,052	1	0,043	1	0,033	–	–	–	–	2	0,176	7	0,046

mt	–	–	–	–	–	–	–	–	1	0,053	–	–	1	0,088	2	0,013
ḥw	–	–	4	0,104	2	0,087	–	–	–	–	–	–	–	–	6	0,040
ḥwy	–	–	1	0,026	–	–	–	–	–	–	–	–	–	–	1	0,006
j	31	0,259	138	3,611	75	3,269	116	3,877	77	4,622	61	4,058	28	2,464	526	3,506
ʿf	40	2,915	120	3,140	62	2,702	115	3,843	54	2,869	60	3,992	35	3,080	486	3,240
ʿi	130	9,475	336	8,793	212	9,241	255	8,522	115	6,110	132	8,782	106	9,321	1286	8,573
p	95	6,924	254	6,647	138	6,015	175	5,848	120	6,376	131	8,715	80	7,042	993	6,620
q	39	2,842	134	3,506	99	4,315	111	3,709	46	2,444	59	3,925	36	3,169	524	3,493
l	10	0,728	41	1,073	52	2,266	41	1,370	28	1,487	27	1,796	26	2,288	225	1,500
ḥ	19	1,384	40	1,046	26	1,133	30	1,002	14	0,743	5	0,332	15	1,320	148	0,993
n	3	0,218	19	0,497	18	0,784	36	1,203	15	0,797	24	1,596	5	0,440	120	0,800
p	15	1,093	52	1,360	24	1,046	20	0,668	23	1,222	5	0,332	19	1,662	158	1,053
q	20	1,457	36	0,942	14	0,600	18	0,681	12	0,304	12	0,298	12	1,232	125	0,833
ḥ	28	2,040	83	2,172	40	1,743	37	1,236	19	1,009	30	1,996	20	1,760	257	1,713
wy	8	0,583	32	0,837	21	0,915	29	0,635	26	1,381	2	0,133	17	1,496	125	0,833
l	30	2,168	64	1,674	39	1,900	76	2,540	27	1,434	19	1,264	32	2,866	287	1,913
un	24	1,749	94	2,460	54	2,353	81	2,707	49	2,603	29	2,929	17	1,496	348	2,320
Δ	10	0,728	22	0,575	8	0,348	20	0,668	27	1,434	2	0,133	3	0,264	92	0,613
g	3	0,218	10	0,261	5	0,217	2	0,066	6	0,318	7	0,466	5	0,440	38	0,253
δ	7	0,510	19	0,497	10	0,435	28	0,935	12	0,637	8	0,532	10	0,880	94	0,626
l	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Δ	2	0,145	4	0,104	4	0,174	3	0,100	3	0,159	–	–	2	0,176	18	0,120
ḥ	8	0,583	9	0,235	11	0,479	4	0,133	1	0,053	1	0,066	1	0,088	35	0,233

p	47	3,425	68	1,779	48	2,092	47	1,570	49	2,603	15	0,998	23	2,024	297	1,980
ɸ	7	0,510	45	1,177	35	1,089	30	1,002	23	1,222	17	1,131	11	0,968	168	1,120
g	49	3,571	120	3,140	58	2,528	90	3,008	70	3,719	43	2,860	23	2,024	453	3,020
ʒ	5	0,364	39	1,020	31	1,351	32	1,069	28	1,487	19	1,264	4	0,352	158	1,053
q	39	2,822	98	2,564	48	2,092	80	2,673	87	4,622	57	3,792	17	1,320	424	2,826
đ	–	–	21	0,549	6	0,261	12	0,401	4	0,212	4	0,266	5	0,440	52	0,346
u	76	5,539	165	4,318	109	4,751	169	5,648	91	4,835	50	3,326	56	5,193	719	4,793
ʔ	5	0,364	30	0,785	14	0,610	9	0,300	11	0,584	9	0,598	10	0,880	88	0,586
ɬ	6	0,437	27	0,706	7	0,305	11	0,367	15	0,797	8	0,532	5	0,440	79	0,526
h	34	2,478	50	1,308	29	1,624	23	0,768	29	1,540	26	1,729	22	1,936	213	1,420
	1372		3821		2294		2992		1882		1503		1136		15000	

Աղյուսակ 5

	Մեր տվյալները		Է. Աղայանի տվյալները	
	Հնչույթ	%-ը	Հնչույթ	%-ը
1	Ա	11,860	Ա	13,465
2	ն	8,573	ն	10,454
3	Ե	8,366	ը	6,642
4	Ի	6,673	Ի	6,367
5	ը	6,620	Ե	6,094
6	Ը	5,246	Ը	5,692
7	u	4,793	վ	3,631
8	Ո	4,226	Ո	3,393
9	յ	3,506	զ	2,975
10	վ	3,493	Ս	2,975
11	Մ	3,240	տ	2,864
12	Տ	3,020	ս	2,700
13	զ	2,826	Տ	2,700
14	Տ	2,320	կ	2,427
15	ք	1,980	Է	2,244
16	Ու	1,926	Հ	2,208
17	Կ	1,913	Ու	2,116
18	դ	1,713	Յ	2,043
19	Լ	1,500	զ	1,624
20	հ	1,420	ք	1,524
21	այ	1,186	Է	1,405
22	թ	1,120	դ	1,350
23	Է	1,106	Հ	1,168
24	բ	1,053	բ	1,058
25	Չ	1,053	եա	1,058

26	դ	0,993	ս	0,949
27	էա	0,946	զ	0,949
28	գ	0,833	ռ	0,877
29	ս	0,833	շ	0,767
30	ռ	0,800	շ	0,712
31	ծ	0,626	իւ	0,712
32	ձ	0,613	իւ	0,712
33	շ	0,586	այ	0,657
34	իւ	0,526	ջ	0,620
35	իւ	0,506	ծ	0,456
36	աւ	0,413	այ	0,456
37	Ժ	0,346	ոյ	0,436
38	ջ	0,253	փ	0,420
39	փ	0,233	ձ	0,365
40	ուա	0,233	Ժ	0,237
41	ոյ	0,186	ճ	0,182
42	ճ	0,120	ուա	0,164
43	ուո	0,046	ուո	0,073
44	ուի	0,046	ուի	0,055
45	ուոյ	0,033	ուոյ	0,036

Աղյուսակից երևում է, որ գրաբարը և աշխարհաբարը հնչյութային գործառական բեռնվածության գրեթե նայն պատկերն են ներկայացնում: Այդուհանդերձ, նշված լեզվավիճակների միջև կա զգալի տարբերություն:

Ամենից առաջ, երկբարբառների վերացմամբ արդի հայերենում ձայնավորների հաճախականության համապատասխան բոլոր արժեքները մեծացել են. նույն պատճառով բարձրացել է նաև յ-ի հաճախականությունը:

Աղյուսակ 6

Հնչույթ	Թիվը	%-ը	Հայերենի տվյալները	Տարբերությունը
a	200	26,24	11,86	-14,38
i (y)	90	11,81	10,18	-1,63
u (v)	42	5,51	5,42	-0,09
e	15	1,97	8,37	-6,40
o	12	1,57	4,23	-2,66
ai	7	0,91	1,19	-0,28
au	7	0,91	0,41	-0,50
r(r)	54	7,09	7,42	-0,33
l(l)	8	1,05	1,50	-0,45
n	35	4,59	8,57	-3,98
m	48	6,31	3,24	-3,07
s	29	3,81	4,79	-0,20
ś	6	0,79	0,59	-0,20
ş	11	1,44	0,35	-1,09
h	20	2,62	1,42	-1,20
c	2	0,26	1,05	-0,79
ch	1	0,13	–	-0,13
j	7	0,91	0,25	-0,66
kh	–	–	–	–
	22	2,91	1,91	-1,00
k	1	0,13	1,98	-1,85
kh	12	1,57	0,83	-0,74
gh	–	–	–	–
h	–	–	–	–
t	–	–	–	–
d	4	0,53	–	-0,53
dh	1	0,13	–	-0,13
t	54	7,09	2,32	-4,77
th	6	0,79	1,12	-0,33
d	26	3,42	1,71	-1,71
dh	5	0,65	–	-0,65
p	26	3,42	0,83	-2,59
b	3	0,38	1,05	-0,66
ph	–	–	0,23	-0,23
bh	8	1,05	–	1,05

Եթե գրաբարից վերցրած հատվածում եղել է ընդամենը 658 հնչույթ, ապա նույն տեքստի աշխարհաբար թարգմանությունը ունի 777 հնչույթ: Այսինքն՝ միևնույն հատվածի գրաբարը ավելի քիչ հնչույթ է պարունակում, քան աշխարհաբարը²⁹: Սրանում ոչ մի զարմանալի բան չկա, որովհետև եթե գրաբարում կային երկբարբառներ, որոնք միայն մեկ միավոր էին, ապա ժամանակակից հայոց լեզվում նրանց մի մասը վերածվել է երկու միավորի: Պետք է նշել, որ Հ. Աճառյանը վերոհիշյալ վիճակագրական քննությամբ հակառակ իր սպասածի, միանգամայն այլ տվյալներ է ստացել, աշխարհաբարը ավելի սեղմ է ստացվել, քան գրաբարը, որ, ինչպես երևում է, պետք է բացատրել ընտրած հատվածի ոճական առանձնահատկություններով: Քանի որ գրաբարյան երկբարբառների տեսակարար կշիռը փոքր է, արդի հայերենի շեղումը այնքան էլ մեծ չի ստացվել: Դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ աշխարհաբարում, ի տարբերություն գրաբարի, մի շարք բայածանցներ դուրս են ընկել, նախդիրները աղվել են և այլն:

Լեզվաբանության մեջ հետևյալ միտքն է հայտնվել, որ լեզվական համակարգի մեջ բաղաձայնների (կամ ձայնավորների) թիվը հակադարձ համեմատական է տեքստում նրանց ունեցած հաճախականությանը: Այսինքն՝ որքան համակարգը հարուստ է բաղաձայններով (կամ ձայնավորներով), այնքան ա-

²⁹ Նույնպիսի արդյունք է ստացվել, օրինակ, Մ. Խորենացու «Հայոց պատմության» Գ գլխի վիճակագրությունից: Նախորդ հատվածից մոտ 4 անգամ մեծ տույն ընտրանքի գրաբարը դարձյալ սեղմ է ստացվել. գրաբարի 2324 հնչույթի դիմաց աշխարհաբարն ունի 2543 հնչույթ:

Կ Ո Ր Յ ՈՒ Ն				
	Գրաբար		Աշխարհաբար	
Հնչույթ	թիվը	%	թիվը	%
Ա	112	17,021	139	17,889
Ե	24	3,571	56	7,207
Ի	20	3,039	38	4,890
Ը	18	2,735	23	2,960
Ո	20	3,039	26	3,346
Ու	20	3,039	34	4,376
Է	4	0,608	9	1,158
աւ	2	0,304	–	–
իւ	4	0,608	–	–
ոյ	1	0,152	–	–
այ	5	0,760	–	–
ուա	3	0,456	–	–
եա	10	1,520	–	–
ուե	1	0,152	–	–
ուո	1	0,152	–	–
ուոյ	1	0,152	–	–
իայ	1	0,152	–	–
յ	13	1,974	23	2,960
ւ	24	3,571	31	3,988
ն	74	11,246	76	9,781
ր	51	7,751	66	8,894
վ	24	3,799	36	4,633
լ	21	3,191	16	2,060
ղ	7	1,065	5	0,644
ռ	8	1,216	7	0,901
բ	4	0,608	4	0,505
գ	9	1,368	9	1,158
դ	10	1,520	15	1,931
պ	6	0,910	4	0,505
կ	28	4,255	25	3,218

տ	18	2,735	25	3,218
ձ	2	0,304	2	0,287
ջ	2	0,304	3	0,386
ծ	6	0,910	8	1,030
ճ	—	—	—	—
փ	3	0,456	2	0,128
ք	3	0,456	8	1,030
թ	13	1,974	13	1,673
ց	23	3,495	17	2,188
չ	2	0,304	1	0,128
զ	8	1,216	5	0,644
ժ	2	0,304	1	0,128
ւ	20	3,039	14	1,802
շ	8	1,216	10	1,299
խ	7	1,065	7	0,901
հ	14	2,128	20	2,574
	658		777	

վելի քիչ են դրանք հանդես գալիս տեքստում, և ընդհակառակը: Այդ կապակցությամբ կարելի է բերել գերմաներենի օրինակը, որտեղ եթե համակարգում 52,6 տոկոսը բաղաձայններ են, ապա տեքստում բաղաձայնները կազմում են ընդամենը 61,7 տոկոս: Հակառակ երևույթն է իտալերենում՝ համակարգում բաղաձայնները 82,5 տոկոս են, մինչդեռ տեքստում՝ հազիվ միայն 52 տոկոս:

Դասական գրաբարի հնչույթային համակարգի 18,2 տոկոսը ձայնավորներ են, 81,8 տոկոսը բաղաձայններ, մինչդեռ տեքստում 44 տոկոսը ձայնավորներ են և երկբարբառներ, իսկ 56 տոկոսը բաղաձայններ (այսինքն՝ 100 հնչույթից 44-ը ձայնավոր է կամ երկբարբառ, իսկ 56-ը՝ բաղաձայն):

Դասական գրաբարի և այլ լեզուների ձայնավորների և բաղաձայնների հաճախականության տոկոսային հարաբերությունը տրվում է № 8 աղյուսակում:

Այսպիսով, լեզվի զարգացման ամեն մի որոշակի շրջանում հստակորեն գոյություն ունի ձայնավորների և բաղաձայնների գործառական բեռնվածության որոշակի համամասնություն: Առանձին բնագրերի ոճական առանձնահատկությունները շատ փոքր ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր արդյունքների վրա, իսկ առավել հաճախ հանդես եկող հնչույթների տեսակարար կշռի վրա ընդհանրապես չեն կարող ազդել³⁰:

Հետևաբար, Ա. Իսաչենկոյի այն թերահավատությունը, թե իբր լեզուների տիպաբանական բնութագրման համար հնչույթների հաճախականության մեթոդի կիրառումն անօգուտ է, իրականում ճիշտ չէ: Հնչույթների հաճախականությունը գործառական բեռնվածությունը հաշվի առնելու դեպքում հնարավոր է տիպաբանական օբյեկտիվ բնութագրման ենթարկել աշխարհի լեզուների հնչույթային համակարգերը:

Աղյուսակ 8

	Ձայնավոր	Բաղաձայն
Ֆիններեն	51	49
Հին հնդկերեն	49	51
Իտալերեն	47	53
Հին հունարեն	46	54
Լատիներեն	45	55

³⁰ **Н.С. Трубецкой**, Основы фонологии, М., 1960. Ն. Տրուբեցկոյը հնչույթների հաճախականության հաշվառման համար պիտանի է համարում ամեն մի տեքստ, բացառությամբ պոեզիայի և հատուկ միտումով գրված արձակի:

Գրաբար	44	56
Հունգարերեն	41	59
Ֆրանսերեն	41	59
Աշխարհաբար	41	59
Հին գոթերեն	41	59
Գերմաներեն	38	62
Չեխերեն	37	63

Ինչպես կարելի է տեսնել № 8 աղյուսակից, գրաբարը միջին դիրք է գրավում հին հունարենի, լատիներենի և հին հնդկերենի միջև: Նա ավելի հարուստ է ձայնավորներով, քան հին գոթերենը, և ձայնավորների ու բաղաձայնների գրեթե նույն հարաբերությունն ունի, ինչ որ լատիներենը:

Աղյուսակ 9-ում տրվում է դասական գրաբարի հնչույթային կապակցությունների³¹ բաշխումը վանկի սահմաններում: Աղյուսակի ուղղահայաց շարքում դրվում են կապակցության նախորդող միավորները, իսկ հորիզոնական շարքում՝ հաջորդող. + նշանը նշանակում է տվյալ կապակցության առկայությունը, – նշանը՝ բացասումը: Այն դեպքում, երբ տվյալ կապակցությունն առկա է, բայց ոչ բառասկզբում, + նշանը առնվում է փակագծերի մեջ (+):

Ինչպես կարելի է տեսնել հնչույթային կապակցությունների բաշխման աղյուսակից, դասական գրաբարի հնչույթային համակարգում 22 (ձայնավոր+ձայնավոր) տիպի երկհնչույթ կապակ-

³¹ Կապակցությունը պետք է տարբերել հաջորդականությունից, երբ մեկ հնչույթ պարզապես հաջորդում է մյուսին: Ներկա դեպքում նկատի է առնվում ոչ թե հաջորդականությունը, այլ կապակցությունը:

ցությունները բոլոր դիրքերում բացառված են: Հաշվի առնելով այդ սահմանափակումը պետք է նշել, որ ձայնավորները բոլոր դիրքերում չէ, որ կարող են հանդես գալ:

Բառասկզբում ձայնավորների դիրքային սահմանափակում չկա, այսինքն դասական գրաբարում բառը կարող է սկսվել վեց ձայնավոր հնչույթներից յուրաքանչյուրով, առանց բացառության (օր.՝ **աստ, ինչ, երթ, ընտանիք, ոգի, ուղիղ**): Այդ դեպքում, եթե բառը կամ վանկը մենահնչույթ չէ, ապա նրան պետք է հաջորդի միմիայն բաղաձայն՝ **ԶԲ**:

Որպես **ԶԲ** կապակցության երկրորդ բաղադրիչ կարող են հանդես գալ բոլոր բաղաձայնները, բացառությամբ **ձ-ի**. **ձ-ով** կապակցությունների մեջ **ձ-ն** սովորաբար նախորդում է ձայնավորներին, այլ դեպքում **ձ-ն** հանդես է գալիս որպես կամ **աւ** երկբարբառի (**աւձ—օձ**), կամ ձայնորդների (**ը, ն**) շրջապատի միավոր՝ **վարձ, տանձ** և այլն: Պետք է նշել նաև, որ ի տարբերության որոշ կապակցությունների, որոնք բարձր հաճախականություն ունեն, կան կապակցություններ (օր.՝ **Ժ-ով** կապակցությունները), որոնք սահմանափակ թվով օրինակներում են հանդես՝ գալիս (օր.՝ **իժ**):

Բառասկզբում բացառված են բարձրացող կամ ուժգնացող երկբարբառները (**եա, ուա, ուի, ուե, ուո**), ինչպես նաև՝ **եայ, ուե, ուաւ, ուայ, ուոյ** եռաբարբառները, որոնք բոլորն էլ բարձրացող-իջնող են: Ընդհակառակը, բառասկզբում կարող են լինել միայն իջնող (թուլացող) երկբարբառներ (**աւր, այր, եւթն, իւր, ոյր, եգ**):

Դասական գրաբարում **ԲԲ** կապակցություն բառասկզբում բացառված է³²: Այսինքն՝ եթե բառասկզբում առկա է բաղաձայն,

³² Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 252:

նրան անպայմանորեն հաջորդում է ձայնավոր: Ընդամին, **ԲԶ** կապակցության մեջ որպես առաջին բաղադրիչ բոլոր բաղաձայնները չէ, որ կարող են հանդես գալ: Այսպես **բ** հնչույթը բացառված է բառասկզբում (բացի **բոպե-ից**), դրա հետ կապված նշենք նաև, որ բառամիջում **ն-ից** առաջ ևս **բ** հնչույթը բացառված է, ինչպես որ **ռ-ն** բացառված է **մ-ից** առաջ (տարբեր վանկերում՝ **ռու-ի** սղմամբ կան **րն** հաջորդականության դեպքեր՝ **գարնան**):

Գրաբարում երկու բաղաձայնների կապակցությունը (**ԲԲ**) հիմնականում հանդիպում է բառավերջում (հատկապես միավանկ բառերում՝ **հարթ, վարք** և այլն): Այսպիսի կապակցությունների հնարավոր տիպերն են.

1. Չայնավոր + բաղաձայն (**վերք, խորթ**), **դ+մ (հողմ)**, **ր+ մ (թարմ)**:

2. Շփական + բաղաձայն (այդ թվում նաև **մ** ձայնորդ՝ **ազդ, կազմ**):

3. Պայթական + **ք (ռստք)**:

Եթե գրաբարում երկու պայթականով կապակցության երկրորդ բաղադրիչը անպայման պետք է լինի **ք**, ապա արդի հայերենում առկա են նաև այլ տիպի կապակցություններ՝ **կ+տ (օր.՝ ակտ, տակտ)** և այլն:

Դասական գրաբարի բառավերջի համար բացառված են հետևյալ կապակցությունները.

1. Պայթական+բաղաձայն (բացառությամբ **ք-ի**), այդ թվում նաև՝ պայթական + ձայնորդ (**իբր, կռճ**):

2. Շփական+ ձայնորդ (բացառությամբ **մ-ի**)՝ **խաշըն, վասըն**:

Եթե բառավերջում գրային ձևով հանդիպում են միևնույն բաղաձայնները կամ ձայնորդները, ապա դրանք ներկայացնում

են **ը** գաղտնավանկով կազմված **ԲԶԲ** եռահնչույթ կապակցություն (տարբր, ինըն):

Ըստ Է. Աղայանի, գրաբարում կան բառավերջի եռահնչույթ **ԶԲԲ** տիպի կապակցությունների բաղաձայնական բաղադրիչների հետևյալ շարքերը.

1. Շփական+բաղաձայն կամ **մ՝ զգ, գդ, զմ, սխ, սխ, սպ, ստ, սք, շխ, շդ, շկ, շմ, շտ, շք, խտ, խք**: Ընդամենը 16 կապակցություն:

2. Զայնորդ+բաղաձայն **և դ** կամ **ր+ մ՝ րբ, րգ, րդ, րթ, րժ, րխ, րծ, րկ, րհ, րձ, րճ, րմ, րշ, րպ, րջ, րս, րտ, րց, րփ, րք, դբ, դդ, դգ, դթ, դծ, դկ, դձ, դճ, դմ, դշ, դպ, դց, դփ, դք, նգ, նթ, նծ, նկ, նձ, նց, նտ, նջ, նք, նճ, լխ, լտ, լփ, լք, մպ, մբ, մս, մք**: Ընդամենը 54 կապակցություն:

ԶԲԲԲ կապակցության վերջին բաղադրիչը պարտադիր կերպով, **ք** է՝ **արտք**, ինչպես նաև **ԲԶԲԲԲ**-ի մեջ՝ **պարտք**:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ դասական գրաբարում, ի տարբերություն արդի հայերենի, բառավերջում երկու պայթական (բացառությամբ պայթական + **ք**) չեն կարող հաջորդել իրար: Ընդհակառակը, թե՛ գրաբարում և թե՛ ժամանակակից հայոց լեզվում տարածված են ձայնորդ (հատկապես՝ **ք**)+ պայթական կապակցությունները: Քառահնչույթ վանկերը հիմնականում այդպիսին են (**դարձ, կարգ, հարց, վարք, մարդ** և այլն):

Դասական գրաբարի եռահնչույթ կապակցությունների միջուկային կաղապարն է **ԲԶԲ**: Նշված կաղապարի հնարավոր ոչ բոլոր կապակցություններն են իրացվում: Այսպես՝ բառասկզբում, ինչպես նշել է Է. Աղայանը, **բբգ, բբխ, բբկ, բբձ, բբհ, բբշ** և այլ կապակցություններ բացառված են:

Չնայած տեսականորեն դասական գրաբարի համար պետք է ընդունել բաղաձայն+ը+բաղաձայն 841 հնարավոր կապակցություն (29.29), սակայն, հաշվի առնելով, որ **ը**-ն բառակցում բացառված է, մնում է 312-ը: Այդ հնարավոր կապակցությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ իրացվում է միայն մոտավորապես 33,8 տոկոսը:

Դասական գրաբարի բառավերջի վերաբերյալ անհրաժեշտ է նշել այն կանոնը, որ բառը ձայնավորով ավարտվելու դեպքում յ- է հնչվում: Գրաբարում **ե**, **ը** ձայնավորներով չի կարող վերջանալ ոչ մի բազմական կառուցում: **Ը**-ն չի կարող հանդիպել բառավերջում ընդհանրապես, **ո** ձայնավորով չի կարող վերջանալ բառի ուղիղ ձևը: Թեքված ձևերից բառավերջում **ո** կարող է լինել **դու** դերանվան սեռական հոլովաձևում (**քո**), ինչպես նաև պատճառականների եզակի հրամայականում (**հասո՛ւ, փախո՛ւ**):

Քիչ ավելի շատ է **ա**-ով վերջացող բառերի քանակը (**սա, դա, նա, ապա, ահա, իմա, Շաղիտա**): Դրան հակառակ, բառավերջում չի բացառվում ի և է ձայնավորների առկայությունը: Որպես ընդհանուր կանոն պետք է նշել, որ սովորաբար բառավերջում հանդես են գալիս բաղաձայն կամ ձայնորդ:

Հաշվի առնելով վանկի կառուցվածքի մեջ մտնող հնչույթների առավելագույն քանակը, նրանց դիրքն ու պարտադրականությունը, դասական գրաբարի հնչույթային կառուցվածքի լիակազմակարգը³³ կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝ (C+)(V(((C+)+C)+C):

³³ Կադապարի մասին տե՛ս **Գ.Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը**, էջ 115:

Ինչպես պարզվել է նախորդ քննությունից, լիակադապարի նմուշ կարելի է ստանալ քառատարր $(C+)V(((C+)+C)$ մասնակադապարին ավելացնելով **p` պարտ+p, կուրծ+p** և այլն:

Ստորև տրվում են բառի կազմում դասական գրաբարի վանկերի կապակցության հիմնական կանոնները.

1. Գրաբարում բացակայում են CRC (վանկարար ձայնորդով) կապակցությունները:

2. CCV տիպի վանկերը բառասկզբի համար բացառված են:

3. Եռահնչույթ CCV, VCC տիպի կապակցությամբ հիմնականում կազմվում են միավանկ բառեր (**ինչ, տեք, ընդ** և այլն):

4. Բառի մեջ նախորդ վանկի ձայնավորից հաջորդ վանկի ձայնավորը կախում չունի, այսինքն ձայնավորների ներդաշնակություն չկա:

5. Բառի մեջ վանկերի առավելագույն քանակը տասնմեկ է:

6. Երկհնչույթ վանկին անմիջապես կարող է հաջորդել նույնական երկհնչույթ վանկ (**սա-սա-նել, տա-տա-նել**):

7. Բոլոր դիրքերում (թե՛ բառասկիզբ, թե՛ բառամեջ, թե՛ բառավերջ) բացառվում է մենահնչույթ վանկին մենահնչույթ վանկի հաջորդելը:

8. Բառավերջում մենահնչույթ վանկը բացառված է:

9. Միևնույն բառում երկու քառահնչույթ վանկ իրար չեն կարող հաջորդել:

10. Քառահնչույթ վանկը կարող է ինքնուրույն բառ կազմել, եթե բաղաձայնական ոլորտում առկա է ձայնորդ:

11. Քառահնչույթ վանկը հանդիպում է առավելապես բառավերջում:

12. Հնգահնչույթ վանկ ընդհանրապես կարող է կազմվել միայն վերջադիր ք-ով (**պարտք, կործք, նեարդ** և այլն):

13. CV տիպը գրեթե բացառված է բառավերջում պայմանավորված ձայնավորների բառավերջում ունեցած թույլ դիրքով:

Մի քանի խոսք հնդեվրոպական լեզվամիության համար Ն. Տրուբեցկոյի տված վեց հատկանիշներից³⁴ հնչույթաբանությանը վերաբերող երկու հատկանիշի մասին: Դրանցից մեկի համաձայն՝ հնդեվրոպական լեզուներում բառասկզբում բաղաձայնների նույնպիսի հարուստ կապակցություններ են առկա, ինչպես բառամիջում և բառավերջում: Եթե հնդեվրոպական մյուս լեզուներին նշված հատկանիշը բնորոշ է, ապա մասնավորապես դասական գրաբարի համար այն հատկանշական չէ: Դասական գրաբարում բաղաձայնական կապակցությունները բառասկզբում ընդհանրապես բացակայում են, սակայն եթե նշված հատկանիշով գրաբարն, իրոք առանձնացվում է հնդեվրոպական այլ լեզուներից, ապա կառուցվածքային մյուս հատկանիշի ձայնավորների ներդաշնակության (սինհարմոնիզմի) բացակայությունը հատուկ է նաև հայերենին:

Եթե համեմատենք դասական գրաբարի և սանսկրիտի հնչույթային համակարգերի, ինչպես նաև վերջիններիս տեքստային իրացման ընդհանուր պատկերը, ապա կարելի է նշել հետևյալ ընդհանուր գծերը.

1. Երկու դեպքում էլ համակարգի տվյալները չեն հակասում տեքստի տվյալներին: Այսպես՝ ռնգային **մ, ն** հնչույթների

³⁴ **Н.С. Трубецкой, Мысли об индоевропейской проблеме, ВЯ, 1958, № 1.**

հակադրությունը գործում է ոչ միայն հարացույցում, այլև շարակարգում, եթե մ-ն գերազանցապես կապակցվում է շրթնայինների հետ՝ **մպ, մք**, ապա ն-ն, ընդհակառակը, ատամնայինների հետ՝ **նտ, նդ**³⁵:

2. Չնայած երկու լեզուների բաղաձայնական համակարգերը հարուստ են կիսաշփականներով, տեքստային մակարդակում թե՛ սանսկրիտը և թե՛ գրաբարը խուսափում են դժվարահունչ բաղաձայնների կուտակումից: Այդ պատճառով էլ նշված լեզուները չի կարելի համարել բաղաձայնական խճողված համակարգ ունեցող լեզուներ:

3. Հաճախական են այն հնչույթները, որոնք բաշխման համեմատաբար նվազ սահմանափակություն ունեն:

Հայտնի է, որ վանկը տարբեր լեզուներում միևնույն կառուցվածքը չունի: Այսպես՝ լեզուների մեծ մասում վանկարար են միայն ձայնավորները (օրինակ, գրաբարում), այլ լեզուներում (օրինակ, սանսկրիտում) վանկարար, արժեք ունեն նաև **դ, ը, լ, ր** ձայնորդները: Վանկարար տարրի նմանօրինակ տարբերությունները էական նշանակություն են ստանում տարբեր լեզուների կառուցվածքային ընդհանուր գծերը և տարբերությունները բացահայտելու, հետևաբար, կառուցվածքային տիպաբանության համար:

Դասական գրաբարի վանկի քննության կապակցությամբ բերելով Ա. Մեյեի կարծիքը, ըստ որի հին հայերենում և հին սլավոներենում եղել են միայն բաց վանկեր, Է. Ադայանը ճիշտ կերպով նշում է, որ դասական գրաբարն արդեն հիմնովին

³⁵ В.В. Иванов, В.Н. Топоров, նշվ. աշխ., էջ 58:

խախտել էր նախնական վիճակը: Այնպես որ, պարզելու համար, թե որ վանկատիպերն են գերակշռում դասական գրաբարում, անհրաժեշտ է դիմել վիճակագրությանը:

Վանկի տիպաբանական քննությանը նվիրված հոդվածներում վերջերս դրվում է ոչ թե հնչւյթների, այլ հնչւյթների խմբերի՝ որպես վերլուծության միավորների ընդունման պահանջը: Ընդ որում, հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. նախ՝ հնչւյթների կազմը անդամ ցեղակից լեզուներում դժվար համեմատելի է, և ապա՝ վանկի մեջ հնչւյթային կազմի հաշվառման դեպքում անհրաժեշտություն է առաջանում գործունենալ բազմաթիվ տիպարների հետ՝ (CVC, CCV, CCVC, CCVCCC, CVCCCC, CCCVCC, CCCVC, և այլն: Այնինչ հնչւյթային բլոկների ընդունման դեպքում գործ կունենանք հետևյալ չորս ընդհանրական տիպարների հետ՝ V, CV, VC, CVC: Եթե այդ պահանջի³⁶ հաշվառումը, իրոք, կարող է այլ լեզուների քննության ժամանակ գործը հեշտացնել, ապա հայերենի համար մի առանձին արժեք չունի, որովհետև վերջինիս հատուկ են սահմանափակ վանկատիպեր (այսպես՝ գրաբարի համար բացառված են CCVC, CCCVC, CCVCCC և այլ տիպեր), մյուս կողմից՝ ընդամենը ութ տիպ ունեցող դասական գրաբարի նկատմամբ նշված սկզբունքի կիրառումը լեզվի իրական պատկերը հստակորեն չի արտացոլի: Այդ պատճառով էլ, գերադասել ենք վերլու-

³⁶ **В.Я. Плоткин**, *Количественный проект фонетического моделирования словарных единиц в современных германских языках*, сб. «Структурно-типологическое описание современных германских языков», М., 1966, էջ 272:

ծության ժամանակ առանձնացնել հետևյալ տիպերը՝ V, VC, CV, CVC, VCC, CVCC, CVCCC, VCCC:

Տասնհինգ հազար հնչույթ պարունակող հատվածների վիճակագրությունը ըստ առանձին վանկատիպերի տրված է № 10 աղյուսակում:

Վանկի ուսումնասիրությունը մեծապես օգնում է բառի ներքին կառուցվածքը բացահայտելուն: Վ. Մայեր-Էպլերը և Պ. Մենցերատը բառերը բաժանում են դասերի՝ կախված բառի մեջ հնչույթների թվից (մենահնչույթ, երկհնչույթ բառեր և այլն), և տիպերի՝ կախված բառի մեջ վանկերի թվից (միավանկ, երկվանկ բառեր և այլն): Բոլոր բառերը տվյալ տիպի և դասի սահմաններում բաժանվում են ենթատիպերի կախված ձայնավորների և բաղաձայնների դասավորությունից. օրինակ, **ըստ, անդ, ունկ** բառերը վերաբերում են նույն տիպին (միավանկ), նույն դասին (եռահնչույթ) և նույն ենթատիպին (VCC), իսկ **ըստ** և **դից** բառերը, նույն տիպին և դասին պատկանելով հանդերձ, վերաբերում են տարբեր ենթատիպերի՝ VCC և CVC:

Այդ առումով կարելի է ասել, որ դասական գրաբարի համար ամենատարածվածը երկվանկ տիպն է՝ CV+CVC: Հայերենի նյութի հիման վրա այժմ պարզենք, թե ինչպիսի հարաբերություն կա վանկերի քանակի և հնչույթների թվի միջև:

Գերմանական լեզուների ուսումնասիրությամբ Պ. Մենցերատը և Վ. Մայեր-Էպլերը հանգել են այն եզրակացության, որ ինչքան բառը երկարում է, այնքան ավելի փոքրանում է հնչույթներ-վանկեր հարաբերության ցուցիչը: Այլ կերպ ասած, մեկ վանկին միջին հաշվով ավելի քիչ հնչույթ է ընկնում բազմավանկ բառերում: Ինչպիսի՞ն է վիճակը հայերենում: Այդ կապակցությո-

յամբ նախ պետք է պարզել, թե ինչն է առնվում որպես վերլուծության միավոր՝ խոսքի շղթան, թե բառը: Պ. Մենցերատը և Վ. Մայեր-Էպլերը քննության հիմք են ընդունել հնչույթային բառարանը³⁷: Այդ մոտեցումը իրավացիորեն քննադատել է Ի. Ռեզինը³⁸, և այժմ անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը: Դասական գրաբարում, և ընդհանրապես հայերենում, բազմահնչույթ վանկերը հիմնականում վերջադիր են: Դա բխում է գերազանցապես այն բանից, որ բառասկզբում բաղաձայնների կապակցությամբ վանկ չի կարող լինել, բնականաբար, բազմահնչույթ վանկերի հնարավորություններ են ստեղծվում բառավերջի համար:

Այդպիսով, դասական գրաբարի նյութի հիման վրա կարելի է ասել, որ մի կողմից՝ նշված իրողությանը հայերենի վրա չի տարածվում, որովհետև հայերենում առանց այն էլ բազմահնչույթ վանկերը սակավ են, մյուս կողմից՝ հայերենին բնորոշ է այն երևույթը, որ բառի երկարացմամբ, ընդհակառակն, եռահնչույթ վանկերի առկայության հնարավորություն է ստեղծվում:

Հետաքրքիր է պարզել նաև մեկ բառին միջին հաշվով ընկնող հնչույթների թիվը (տե՛ս աղյուսակ № 11:

Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել աղյուսակից:

Չնայած միավանկ սպասարկու բառերի, ետադաս գործածությամբ մի շարք դերանունների, եւ օժանդակ բայի միավանկ

³⁷ P. Menzerath and W. Meyer-Eppler, *Sprachtypologische unter saches*, «Studia linguistica», A. IV, № 1-2, 1950.

³⁸ И.И. Резвин, *О соотношении структурных и статистических методов в современной лингвистике*, сб. «Вопросы статистики речи», Изд. ЛГУ, 1958.

ձևերի, միավանկ շաղկապների առհասարակ անշեշտ, ինչպես նաև խոսքից դուրս միավանկ բառերի շեշտի տեսակետից չեզոք լինելուն³⁹, պետք է բնդունել դասական գրաբարի բառային սահմանները ցույց տվող որոշակի հատկանիշների կամ ազդանշանների գոյությունը:

Որպես բառի սահմանային ազդանշան, հայերենում ամենից առաջ հանդես է գալիս շեշտը: Հայերենում շեշտը կապված-շարժական է, քանի որ մի կողմից՝ այն դրվում է բառի վերջին վանկի վրա, մյուս կողմից՝ բառակազմական և բառաթեքական փոփոխությունների դեպքում տեղափոխվում է (շարժվում է) դեպի նոր վերջնավանկը: Այնպես որ, շեշտի առկայությունը բառի ավարտման ազդանշանն է: Դասական գրաբարի շեշտի հիմնական գործառությունը բառերի սահմանազատումն է միմյանցից: Դա ընդհանուր կանոն է, և միայն **ն, ր, դ** ձայնորդներով, **ք** հոգնակերտով, **ս, դ, ն** հոդերով սահմանափակ կապակցություններն են, որ ընդհանուր կանոնից շեղվում են (ինչպես բազմաթիվ լեզուներում, գրաբարում ևս բառային սահմանները միշտ չէ, որ հաստատուն և կանոնական արտահայտություն ունեն): Նույն երևույթն առկա է նաև որոշ կցական կամ հարադրավոր բարդություններում, որոնց առաջին բաղադրիչը, ինչպես նշել է Աղայանը, դերանուն է և շեշտն ընկնում է դերանվան վրա՝ **ա՛յսպէս, ա՛յսօր** և այլն: Ոչ վերջնականկային շեշտի օրինակներ

³⁹ Է.Աղայան, նշված աշխ., էջ 273:

Աղյուսակ 10

	Երգ երգոց		Աւետարան ըստ Մատ- թէոսի		Աւետարան ըստ Մար- կոսի		Աւետարան ըստ Լուկասոս		Աւետարան ըստ Յովհաննոս		Եզնիկ		Կորին		Ընդամենը	
Վանկերի տիպերը	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը
V	51	8,763	153	9,272	112	11,234	119	9,140	79	9,850	68	10,609	42	8,606	624	9,655
VC	81	13,918	249	15,082	153	15,346	204	15,668	147	18,329	126	19,657	40	8,197	1000	15,473
CV	201	34,536	598	36,222	347	34,804	478	36,713	231	28,803	186	29,017	222	45,492	2263	35,015
CVC	222	38,144	575	34,827	331	33,200	463	35,560	314	39,152	216	33,697	162	33,197	2283	35,324
VCC	10	1,718	34	2,053	20	2,006	12	0,922	14	1,746	17	2,652	8	1,639	115	1,779
CVCC	17	2,921	42	2,544	34	3,410	26	1,997	17	2,120	28	4,368	14	2,869	178	2,754
Ընդա- մենը	582	100%	1651	100%	997	100%	1302	100%	802	100%	641	100%	488	100%	6463	100%

են նաև՝ **հի՛նգերորդ, մի՛թէ, նա՛մանաւանդ** և այլն¹:

Հայերենում շեշտը իմաստագատիչ դեր չունի, ինչպես սլավոնական լեզուներում (օրինակ, ռուսերենում): Ճիշտ է, կարելի է նշել դեպքեր, որտեղ շեշտն այնուամենայնիվ այդպիսի դեր ունի (**նա՛ էր—նայէ՛ր, պատերա՛զմ էր—պատերազմէ՛ր** և այլն), բայց դրանք հազվագյուտ են:

Դասական գրաբարում քերականական շեշտը որոշ դեր կատարել է: Ուժեղ շեշտը կարող էր փոխել անգամ բառի խոսքի-մասային արժեքը՝ **լուր** գոյական և լո՛ւր հիւմ. եզ. 2-րդ դեմք:

Աղյուսակ 11

	Հնչույթ	Վանկ	Բառ
Երգ երգոց	1372	582	277
Մատթեոս	3821	1651	839
Մարկոս	2294	997	520
Ղուկաս	2292	1302	641
Յովհաննէս	1882	802	464
Եզնիկ	1503	641	346
Կորին	1136	488	184
Ընդամենը	15000	6463	327

1. Դասական գրաբարի մեկ վանկին միջին հաշվով ընկնում է երկու-երեք հնչույթ և դրանից ոչ ավելի: Դա համապատասխանում է իրականությանը, եթե հաշվի ենք առնում նաև այն, որ

¹ Մ.Աբեղյան, *Տաղաչափություն*: Ե., 1933:

դասական գրաբարի վանկի կառուցվածքի միջուկային կաղապարը ունի CV կամ CVC տեսքը:

2. Մեկ բառին միջին հաշվով ընկնում է երկու վանկ, հինգ հնչույթ: Այդ դեպքում բառի միջուկային կաղապարը կարելի է ներկայացնել որպես երկհնչույթ բաց և եռահնչույթ երկփակ վանկատիպերի հաջորդականություն:

Դասական գրաբարի խոսքի հատույթավորման ժամանակ բառային և վանկային սահմանները ոչ միշտ են համընկնում և, որ ավելի կարևոր է, դրանք իրարից կախված չեն: Այդտեղից էլ հարց է առաջանում, թե գրաբարյան բառի հնչույթային կառուցվածքից էլնելով հնարավո՞ր է որոշել բառային սահմանները, թե ոչ: Այսինքն՝ գրաբարի համար կարելի՞ է խոսել սահմանային ազդանշանների առկայության մասին: Այն, որ դասական հայերենում ևս, միջին հայերենի նման, երկար բարդությունները և հարադրությունները երկու շեշտ են ունեցել, կարելի է հավանական համարել, ընդունելով որ թույլ կամ երկրորդական շեշտը հատկացվել է բառասկզբի վանկին, հիմնական շեշտը, ընդհանուր կանոնի համաձայն, բառավերջի ձայնավորին:

Որպես բառի սահմանային ազդանշան գրաբարում հանդես են գալիս նաև **ս**, **դ**, **ն** հոդերը, հոգնակերտը և դադարը, որի կարողունակ հնարավորությունը հայերենի կառուցվածքային կարևոր հատկանիշներից է:

Հնչույթային, կառուցվածքի քննության վերջում անհրաժեշտ է պարզել դասական գրաբարի, այսպես կոչված, սեղմության կամ համառոտության աստիճանը՝ միննույն բովանդակության լեզվական արտահայտությունը տարբեր լեզուների համեմատությամբ ինչպիսի երկարություն ունի: Կարելի է վերցնել

Մատթեոսի ավետարանը, որի վանկավիճակագրական քննությունը մի շարք լեզուների համար կատարված է:

Ինչպես երևում է աղյուսակից², միննույն բովանդակության արտահայտման համար ամենաշատ (40 000) վանկ օգտագործված է ֆիններենում, ամենաքիչը (17 000)՝ չինարենում: Գրաբարը, գերմաներենը և շվեդերենը միջին դիրք են գրավում:

Աղյուսակ 12

Ֆիններեն	40500 վանկ
Հին Հունարեն	39000 »
Շվեդերեն	35000 »
Գրաբար	34000 »
Գերմաներեն	33000 »
Դանիերեն	32000 »
Անգլերեն	29000 »
Չինարեն	17000 »

Հետաքրքիր է նշել, որ չնայած մեքենական թարգմանության հանրահայտ այն դրույթին, ըստ որի յուրաքանչյուր թարգմանություն բնագրից ծավալուն է ստացվում, ներկա դեպքում հունարենից կատարված թարգմանությունները, բացառությամբ ֆիններենի, ավելի համառոտ են, քան բնագիրը: Թեև, ինչպես նկատել է Աճառյանը, եղած արդյունքներն այն պակասությունն ունեն, որ ի վիճակի չեն պարզելու, թե ընդհանուր առմամբ

² Տվյալները վերցված են հետևյալ աղբյուրից՝ **Հ.Աճառյան, Լիակատար քերականություն**, Ներածություն, էջ 312:

ինչքան հնչույթ է բաժին ընկնում վանկերի ընդհանուր թվին. «Ըստ այդմ, օրինակ՝ Հյ. **ու** և գերմաներեն **schlacht** միևնույն գծի վրա պիտի մնան, մինչդեռ առաջինը միայն մի ձայն է, երկրորդը՝ հինգ»³: Այդ առումով էլ, չնայած միևնույն բովանդակությունն ամենաշատ վանկերով արտահայտվել է ֆիններենում, պետք է կարծել, որ հնչույթների ընդհանուր թիվը ֆիններենում համեմատաբար քիչ է, որովհետև վերջինս հնչույթային կառուցվածքի այն առանձնահատկությունն ունի, ըստ որի հաճախական են մենահնչույթ և երկհնչույթ վանկերը:

Հաշվի առնելով դասական գրաբարի վանկի կառուցվածքի երկհնչույթ և եռահնչույթ հիմնական կադապարները և ստացված վիճակագրական տվյալները, կարելի է ասել, որ այդ խնդրում ևս դասական գրաբարը միջին դիրք է գրավում:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ի տարբերություն հնչույթային համակարգի, որի տիպաբանական քննությամբ սկսել են զբաղվել համեմատաբար վերջերս, ձևաբանական համակարգը տիպաբանական վերլուծության առարկա է դարձել դեռևս 19-րդ դարի առաջին քառորդից:

Թեև ավանդական տիպաբանությունը որակվում է որպես **ձևաբանական**, առանձին դեպքերում դասակարգման հիմքում դրված որոշ հատկանիշներ լեզվի ձևաբանական մակարդակի սահմաններից դուրս են: Ձևաբանական տիպաբանությունը հաճախ հենվում է այնպիսի հատկանիշների վրա, որոնք վերա-

³ Նույն տեղում:

բերում են ձևահնչոյթաբանությանը: Վերջապես, ըստ էության վերլուծական տիպը վերաբերում է բուն շարահյուսական մակարդակին:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է **ձևաբանական տիպաբանություն** եզրույթի կիրառության մեջ որոշ հստակություն մտցնել: Պետք է ընդունել ձևաբանական տիպաբանության երկու առում՝ ավանդական և մակարդակային:

Առաջին դեպքում ձևաբանական եզրույթը լեզվի միայն ձևաբանական մակարդակի հետ չէ, որ կապվում է⁴: **Ձևաբանական տիպաբանություն** ավանդական անվանումը ստեղծված լինելով կենսաբանության, կենդանաբանության, համապատասխան բաժինների համաբանությամբ, մի կողմից որոշ դեպքերում ներառում է նաև այլ մակարդակների միավորներ, մյուս կողմից՝ ի վիճակի չլինելով ձևաբանական մակարդակը քննել իր ամբողջության մեջ, բավարարվում է նրա մասնակի գծերը, հատկանիշները (միաչափ կառույցները) մատնանշելով:

Ավանդական ձևաբանական տիպաբանության թերություններից էր նաև այն, որ վերջինս որևէ լեզվի այս կամ այն տիպին (թեքական, կցական, և այլն) պատկանելու աստիճանը պարզելու հստակ չափանիշներ չուներ:

Մակարդակային առումով ձևաբանական տիպաբանություն եզրույթի տակ պետք է հասկանալ միայն և միայն ձևաբանա-

⁴ Հայտնի է, որ ձևաբանական տիպաբանության հիմնադրման ժամանակ լեզվի համապատասխան բաժինը կրում է ոչ թե «ձևաբանություն», այլ «ստուգաբանություն» (этимология) անվանումը:

կան մակարդակի տիպաբանական քննությունը: Այդ դեպքում վերլուծությունը կարելի է կատարել ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդների օգնությամբ:

Դասական գրաբարի ձևաբանական կառուցվածքի տիպաբանական քննությունը կատարվում է նույն սկզբունքներով, ինչ որ հնչույթային կառուցվածքի վերլուծությունը, այսինքն նախ պարզվում են համակարգային հարաբերություններն ինքնին և ապա միայն զուգադրվում հին և նոր (ցեղակից և ոչ ցեղակից) լեզուների (այդ թվում՝ հատկապես հայոց լեզվի արդի վիճակի) հետ:

Առաջին հարցը, որ բնականաբար ծագում է, այն է, թե ձևաբանական կառուցվածքի քննության ժամանակ ի՞նչը պետք է ընդունել որպես ելակետային միավոր՝ ձևո՞ւյթը, թե՞ բառը: Անհրաժեշտ է նշել, որ եթե հնչույթային համակարգում որպես լեզվական ելակետային միավոր հանդես էր գալիս հնչույթը, ապա տվյալ մակարդակում՝ հնչույթների այնպիսի կապակցությունը (թե՛ գրաբարի և թե՛ արդի հայերենի համար մենահնչույթ բառերը հազվագյուտ են), որ ունի նշանակություն: Այսինքն՝ նկատի են առնվում թե՛ բառերը և թե՛ մասնիկները: Սույն խնդրի առնչությամբ պետք է նշել նաև հետևյալը, ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության մեջ ընդունվում է, որ այնպիսի տիպաբանական քննության համար, որի ելակետային միավորը ձևույթն է, նպատակահարմար է հրաժարվել ձևաբանության և շարահյուսության ավանդական սահմանազատումից՝ կապված

բառի ընդհանրական սահմանման բացակայության հետ⁵: Մեր կարծիքով, այդպիսի մոտեցումը ճիշտ չէ, նախ՝ կարելի է (իմիջի-այլոց, հենց այդպես էլ վարվել է Ջ. Գրինբերգը)⁶ ինչպես ձևույթը, այնպես էլ բառը դիտել որպես ելակետային միավոր (այսինքն՝ մեկ այլ միավորից չսահմանվող, չբխող, նախապես տրված միավոր), և ապա՝ ձևաբանության և շարահյուսության չսահմանա-գատելը երկու միանգամայն տարբեր միավորները (նշանային և ստորոգելիական) միևնույն մակարդակի վրա դնելու վտանգն է ստեղծում, որը նման մոտեցման արմատական թերությունն է:

Ձևաբանական կառուցվածքի տիպաբանական քննության ժամանակ, մնալով մեկ բառի սահմաններում, պետք է պարզել, թե կառուցվածքային տիպերից որը ո՛ր ոլորտում է կիրառվում (հոլովման, խոնարհման) և այլն:

Դասական գրաբարի չթեքված բառի կառուցվածքային հիմնական միավորը արմատն է: Կարելի է ասել, որ արմատի առկայությունը բառի առկայության ցուցիչ է, սակայն բառի առկայությունը դեռևս արմատի առկայության պարտադիր ցուցիչ չէ, այսինքն՝ թվապես դրանք միշտ չէ, որ իրար ծածկում են (օրինակ, սպասարկու բառերը, կապերը, շաղկապները բառային միավորներ են, բայց արմատներ չեն): Բացի այդ, թեև գրաբարում միայն

⁵ **Б.А. Успенский**, նշվ. աշխ., էջ 54: Բ. Ուսպենսկին հիմնվում է Կ. Փայկի, Լ. Ելմսլևի և այլոց կարծիքների վրա –տե՛ս **K.L. Pike**, *A problem in morphology-syntax division*, **L. Hyelmslev**, *Principes de grammaire générale*.

⁶ **Дж. Гринберг**, նշվ. աշխ., էջ 60:

մենարմատ բառերի թիվը մոտ երկու հազար է⁷, բառերի և արմատների ընդհանուր թիվը չի համընկնում հատկապես այն պատճառով, որ հայոց լեզվի ձևաբանական մակարդակում մեծ դեր են խաղում բարդությունն ու ածանցումը, որը խոսում է գրաբարի ոչ վերլուծական լեզու լինելու մասին: Բարդության վերաբերյալ պետք է նշել, որ չնայած հայերենի համար սովորականը հոդակապով բարդությունն է, սակայն գրաբարի դասական շրջանի բազմաթիվ օրինակները (**բանասուտ, որպես, խեցբեկ, ակնկոք, ակնկալ** և այլն) ապացույց են այն բանի, որ հին հայերենում տարածված և գործուն է եղել նաև երկարմատ անհոդակապ (**RR**) բարդության տիպը, ընդ որում, հաճախ կարելի է հանդիպել նաև միևնույն բարդության զուգահեռ (և՛ հոդակապով, և՛ անհոդակապ) ձևերի՝ աղքատասիրութին-աղքատսիրութին, անձնատուր-անձնտուր, արևապաշտ-արևպաշտ և այլն: Եռարմատ տիպը նախորդի համեմատությամբ ցածր հաճախականություն ունի, իսկ քառարմատ բառատիպ գրեթե չի հանդիպում:

Դասական գրաբարի ավելի քան մեկ ձևությից բաղկացած բառի կառուցվածքը հետևյալ բնորոշ գծերն ունի.

1. Բառի մեջ ձևայինների սերտաճում (անժխտելի է, որ ձևայինն հատույթավորման խնդրում արդի հայերենը ավելի հստակ է ենթարկվում տրոհման, քան գրաբարը):

2. Մեկ բառի սահմաններում մեկից ավելի արմատների և ածանցների զուգորդման լայն հնարավորություններ, նախ-

⁷ Ճշգրիտ հաշվումներով հայերենի միայն միավանկ և «մեկուկես» վանկի բառերի ցուցակը պարունակում է 1935 բառ. հմտ. **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 313-333:

ածանցման նվազ հնարավորությունների փոխարեն հարուստ վերջածանցման առկայություն:

3. Բառավերջային խիստ կենտրոնացած շեշտի առկայություն:

Այս և նման մի քանի հատկանիշներից ելնելով, անհրաժեշտություն է առաջանում այնպիսի մի կառուցվածքային միավորի քննության, ինչպիսին է **բարդ բառը**: Քննության նպատակն է պարզել, թե ինչպես է կատարվում բարդացումը, ինչպիսի բաղադրիչներով և ինչպիսի տիպեր են հնարավոր և այլն:

Դասական գրաբարն ունի բարդության արտակարգ հարուստ միջոցներ ու հնարավորություններ: Դրանում կարելի է հեշտությամբ համոզվել Աստվածաշնչի հայերեն և այլ լեզուներով կատարված թարգմանությունների համեմատությունից: Մասնավորապես հին հայերենի և հին հունարենի զուգադրությունից պարզվում է, որ հունարենի բառակապակցությունների փոխարեն գրաբարը այդ նույն իմաստը հաճախ արտահայտում է մեկ բարդ բառով: Այսպիսով, կարելի է ասել, որ բարդությունը գրաբարի քերականության կառուցվածքի բնորոշ հատկանիշներից է:

Յուրաքանչյուր լեզվի ձևաբանական կառուցվածքի տիպաբանական բնութագրման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե ածանցման ինչպիսի հնարավորություններ են առկա տվյալ լեզվում, ածանցների ինչպիսի խմբեր են տարբերակվում (միայն վերջածանցներ, միայն նախածանցներ, և՛ նախածանցներ, և՛ վերջածանցներ և այլն): Ն. Տրուբեցկոյի վերոհիշյալ «Мысли об индоевропейской проблеме» աշխատանքից երևում է, որ հնդեվրոպական լեզուների կառուցվածքային վեց

կարևոր հատկանիշներից մեկը վերաբերում է ածանցմանը: Որպես չորրորդ հատկանիշ, Ն. Տրուբեցկոյը մատնանշում է բառի միայն արմատով չսկսվելու հնարավորությունը (այսինքն նախածանցման առկայությունը, հակառակ թուրքական լեզուների, որտեղ բառն անպայմանորեն սկսվում է արմատով): Անհրաժեշտ է սակայն նշել, որ նախածանցումը բնորոշ չէ դասական գրաբարին, մի քանի, այն էլ մի միայն ժխտական իմաստ արտահայտող նախածանցները, վկայում են, որ հին հայերենի ձևաբանական կառուցվածքի տեսակետից նախածանցման հատկանիշը էական չէ: Ընդհակառակը, որպես կառուցվածքային կարևոր գիծ պետք է ընդունել հարուստ վերջածանցման առկայությունը, մեկ բառում երկու, երեք և անգամ չորս ածանցի իրար հաջորդելու հնարավորությունը: Այդ առումով հետաքրքիր է պարզել դասական գրաբարի ածանցական զուգորդումների հնարավոր տիպերը, մեկ բառի սահմանում զուգորդվող ածանցների առավելագույն քանակն ու հաջորդականությունը:

Հաշվի առնելով մեկ բառի սահմանում զուգորդվող ածանցների քանակն ու դիրքը, կարելի է ասել, որ դասական գրաբարում արմատին ամենաշատը կարող է հաջորդել չորս ածանց: Քառածանց մասնակաղապարները հիմնականում հանդիպում են խոնարհման ոլորտում. օր.՝ **Ճանապարհ-որդ-եց-ուց-ան-եմ:**

Աղյուսակ № 13-ում տրվում են գրաբարյան ածանցների զուգորդման հիմնական տիպերը (աղյուսակի ուղղահայաց շարքում տրվում են նախորդող ածանցները, իսկ հորիզոնական շարքում՝ հաջորդողները):

Ինչպես կարելի է տեսնել, ամենաշատ կապակցություններ ունեն **-ութին, -աւոր, -ական** ածանցները: Մրանցից **-ութին**-ը

հանդես է գալիս միայն որպես գուգորդման վերջնային անդամ, այսինքն նրանից հետո այլ ածանց չի դրվում, մինչդեռ այն կարող է հաջորդել գրեթե բոլոր վերջածանցներին:

Աղյուսակ 13

1	ալան	աւոր	կտոր	դաւա	անգ	ակն	ան	աց	իւ	աւ	Ըւ	դիւթւ	ուկ	իկ	իչ	իկ	իստ	ոտ
2																		
ալան	●	+	—	—	—	—	+	+	—	—	—	+	—	—	—	+	—	—
աւոր	+	●	—	+	—	—	+	—	+	—	—	+	—	+	+	—	—	—
անակ	+	+	●	—	—	—	—	—	—	—	—	+	—	+	+	—	—	—
արան	+	+	—	●	—	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—
անի	+	—	—	—	●	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—
ակի	—	—	—	—	—	●	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—
ան	—	—	—	—	—	+	●	—	+	—	—	+	—	—	+	—	—	—
աց	+	—	—	—	—	—	—	●	—	+	+	+	+	+	—	—	—	+
ակ	+	+	—	+	+	—	+	—	●	—	—	+	—	+	+	—	—	—
ոյթ	+	+	—	—	—	—	+	+	—	●	—	+	—	—	—	—	—	—
ոյց	+	+	—	+	—	—	+	—	—	—	●	+	—	—	—	—	—	—
ութին	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	●	—	—	—	—	—	—
ուկ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	●	—	—	—	—	—
իկ	+	+	—	—	—	—	+	+	—	—	—	+	—	+	—	—	—	—
իչ	+	+	—	—	—	—	—	—	+	—	—	+	—	—	●	—	—	—
ին	+	+	—	—	—	—	—	—	—	—	—	+	—	—	—	●	—	—
իստ	—	—	—	+	—	—	+	+	—	—	—	+	—	—	—	—	●	—
ոտ	—	+	—	—	—	—	—	—	—	—	—	+	—	+	—	—	—	●

Դասական գրաբարի ածանցներն ըստ զուգորդման հաջորդականության կարելի է բաժանել երեք խմբի:

1. Ածանցներ, որոնք միայն նախորդում են այլ ածանցների, բայց ոչ երբեք հաջորդում, (-ական, -անչ, -իստ, -ոյթ, -ենի, -են, -ստան, -ուչ, -եղ, -նչ, -չ, և այլն): Սրանք գերազանցապես հանդես են գալիս արմատից անմիջապես հետո:

2. Ածանցներ, որոնք հավասարապես կարող են հանդես գալ որպես ածանցական զուգորդման և նախորդող (առաջնային), և հաջորդող (վերջնային) բաղադրիչ (-ական, -աւոր, -արան, -անի, -ակի, -իկ, -իչ, -ուն, -ելի, -որդ, -որ, -ուած, -ուկ և այլն): Պետք է նշել ածանցներից միայն -իկ-ն է, որ միևնույն զուգորդման մեջ կարող է կրկնվել՝ փոքր-իկ-իկ>փոքրկիկ: Բնականաբար, ինչպես նշվել է վերը, այս խմբի ածանցները չեն կարող հաջորդել -ութիւն և -աւոր ածանցներին:

Աղյուսակ 14

	Զուգորդվող միավորներ					օրինակներ
	A	a	b	c	Զուգորդման տիպեր	
1	+	–	–	–	A	բան
2	+	+	–	–	Aa	երև-ոյթ
3	+	–	+	–	Ab	բան-ական
4	+	–	–	+	Ac	երև-ութ-ական
5	+	+	+	–	Aab	երև-ութ-ական
6	+	+	+	+	Aac	երև-ութ-ութիւն
7	+	–	+	+	Abc	բան-ական-ութիւն
8	+	+	+	+	Aabc	երև-ութ-ական-ութիւն

3. Ածանցներ, որոնք հանդես են գալիս միայն որպես զուգորդման վերջնային բաղադրիչ: Այդպիսի ածանց է –ութիւն–ը, որը կարող է հաջորդել բոլոր կարգի ածանցներին:

Ածանցների առաջին խումբը նշանակելով *a* տառով, երկրորդ և երրորդ խմբերը համապատասխանաբար *b* և *c* տառերով, գրաբարյան ածանցների զուգորդման տիպերը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով (*A* տառը արմատի ցուցիչն է):

Թեև տիպաբանական զուգադրությունը վերջին ժամանակներս կատարվում է ըստ առանձին մակարդակների, բայց դա դեռևս չի նշանում, որ լեզվական մակարդակները փոխադարձաբար կախվածության մեջ չեն: Ընդհակառակը, մեկ մակարդակի քննությամբ արդեն որոշ եզրակացությունների կարելի է հանգել հաջորդ մակարդակի կառուցվածքի վերաբերյալ: Այսպես, եթե որևէ լեզվի հնչույթային կառուցվածքը հարուստ է (ասենք, բաղկացած է 40-70 հնչույթից), ապա պետք է ենթադրել, որ տվյալ լեզվի իմաստակիր նվազագույն միավորի՝ ձևույթի միջին երկարությունը փոքր կլինի: Վերջինս պայմանավորված է նրանով, որ ինչքան հնչույթները շատ են համակարգում, այնքան հարուստ են տարբերակիչ հատկանիշներով: Այդ կապակցությամբ կարելի է նշել տիպաբանական գրականության մեջ հիշատակված հետևյալ օրինակը, որտեղ որպես զուգադրության եզրեր վերցված են արանտա լեզուն և հայերենը⁸: Հնչույթային անհամեմատ աղքատ համակարգ ունեցող արանտա լեզվում **p** հնչույթն ունի ընդամենը երկու տարբերակիչ հատկանիշ. այն

⁸ **Т.Милевский**, նշվ. աշխ., էջ 18:

որպես բերանային հպական հակադրվում է ռնգային *m*-ին և որպես շրթնային հպական՝ առաջնալեզվային *t*-ին, այնինչ հայերենում *p*-ն, բացի վերոհիշյալ տարբերակիչ հատկանիշներից, օժտված է նաև լրացուցիչ երկու հատկանշով. այն խուլ *b*-ի և ոչ շնչեղ *ph*-ի համեմատությամբ:

Մի շարք լեզուների ուսումնասիրությամբ պարզվել է, որ սովորաբար ձևային միջին երկարությունը հակադարձ համեմատական է համակարգում եղած հնչույթների ընդհանուր թվին, այսինքն՝ ինչքան աղքատ լինի հնչույթային համակարգը, այնքան երկար կլինի տվյալ լեզվի ձևային միջին երկարությունը⁹:

Դատելով հնչույթային համակարգից (համեմատական հընչությառատությունից, հնչույթագուգորդման լայն հնարավորություններից)) պետք է կարծել, որ դասական գրաբարի ձևային միջին երկարությունը մոտավորապես հավասար կլինի երկուսից երեք հնչույթի: Ինչպես կարելի է համոզվել թեկուզ միայն ածանցման աղյուսակից, քառահնչույթ ձևայիններ (խոսքը մասնավորապես երկրորդական ձևայինների մասին է) գրաբարում հազվադեպ են: Թե՛ բառակազմական և թե՛ բառափոխական ձևայինները հիմնականում երկհնչույթ են (մասնավորապես հոլովման համակարգը աչքի է ընկնում մենահնչույթ ձևայինների առատությամբ, խոնարհմանը՝ երկհնչույթ և եռահնչույթ):

Ինչպես ձևայինների միջին երկարության, քանակի, այնպես էլ ընդհանրապես բառաբարդման բնագավառում դասական գրաբարի և մի շարք հին լեզուների (սանսկրիտ, հին վերին

⁹ **А.С. Ахманова, И.Л. Мельчук, Е.В.Падучева, О.М.Фрумкина, О точных методах исследования языка**, М., 1961, էջ 134, ինչպես նաև՝ **F. Hockett, A Course in modern linguistics**, New-York, 1958, էջ 93:

գերմաներեն, հին վրացերեն և այլն) համեմատությունից կարելի է նշել հետևյալ ընդհանրությունները.

1. Նշված լեզուներում բարդությունը բառակազմության հիմնական միջոցներից է: Բարդության ամենատարածված և գործուն տեսակը երկարմատ բարդ բառն է:

2. Հատկապես սանսկրիտին և հին հունարենին հատուկ արմատի կրկնության երևույթը առկա է նաև գրաբարում (խող-խող-ել, ար-ար-իմ):

3. Նախաձանցումը որպես բառակազմական միջոց համեմատաբար ուշ շրջանում է ձևավորվել ինչպես գրաբարում, այնպես էլ հին հնդկերենում¹⁰: Առհասարակ կարելի է նշել, որ նույն պատկերն է նաև մի շարք հին լեզուներում:

4. Այդ լեզուներում, ինչպես և հին վերին գերմաներենում, աձանցումը առաջնակարգ նշանակություն ունի հատկապես բայակազմության համար:

5. Չնայած ձևային միջին երկարությունը հավասար է երկու-երեք հնչույթի, գուգադրվող լեզուներում կան նաև քառահնչույթ ձևայիններ:

6. Հատկապես լատիներենում և գրաբարում առկա են այնպիսի բառային միավորներ, որոնց հատույթավորումը որոշ տարակարծությունների տեղիք է տալիս: Վերջինս պայմանավորված է այդ լեզուների թեքական բնույթով:

Հաշվի առնելով, որ բարդության խնդրում գրաբարն ավելի մոտ է գերմանական լեզուներին, հատկապես այդ լեզուների գուգադրությունից պարզվում է, որ ի տարբերություն հին վերին

¹⁰ В.В. Иванов, В.Н. Топоров, նշված աշխ., էջ 121:

գերմաներենի, որտեղ տիպականը բառի քառաձևությո՜ւ կադա-
պարն է (մեկ արմատ+երկու բառակազմական ածանց + վերջա-
վորություն), դասական գրաբարին հատուկ է եռաձևությո՜ւ բառա-
ձևը (արմատ + ածանց+վերջավորություն): Պետք է նշել, որ, ինչ-
պես հին վերին գերմաներենում, գրաբարում ևս հնգաձևությո՜ւ և
վեցաձևությո՜ւ բառաձևերը նախ համեմատաբար քիչ են և ապա
գերազանցապես հատուկ են բայերին¹¹:

Գրաբարի և ժամանակակից հայերենի զուգադրությունից
կարելի է բխեցնել հետևյալ ընդհանուր գծերը.

1. Հայոց լեզվի երկու վիճակներին էլ հատուկ է բարդութ-
յունը:

2. Թե՛ գրաբարը, թե՛ արդի հայերենը հարուստ են ինչպես
անվանական, այնպես էլ բայական ածանցներով:

3. Դասական գրաբարի ամենագործածական ածանցները
ժամանակակից հայերենում նույնպես ամենահաճախական ա-
ծանցներն են (հմմտ, -ական, -ակի, -ային, -ելի, -որդ և այլն):

Պետք է նշել, սակայն, որ մեկ բառում իրար հաջորդող
բառահարաբերական մասնիկների առավելագույն քանակը
դասական գրաբարում մեկով ավելի է (հմմտ. մատուցանեմ-
մատուցեմ): Ի տարբերություն գրաբարի դասական շրջանի,
արդի հայերենը հարուստ է նաև նախածանցմամբ:

Ձևային դասակարգման վերաբերյալ Տ. Միլևսկին գրում
է. «Ամեն մի լեզվում կա չորս տիպի ձևությո՜ւ՝ անվանական, ցու-

¹¹ Л.Р. Зиндер, Т.В. Строева, *Историческая морфология немецкого языка*,
Л., 1968, էջ 28:

ցական, թվական և քերականական»¹²: Հեշտ է նկատել, որ սույն դասակարգմամբ նշված խմբերը դրվում են միևնույն մակարդակի վրա, որովհետև քերականական ձևայինները հակադրվում են ոչ թե անվանական, ցուցական կամ թվական ձևայիններին առանձին-առանձին, այլ այդ բոլորին միասին վերցրած: Այսինքն դասակարգման մեջ թույլ է տրված տեսակի և ենթատեսակի (տիպի և ենթատիպի) շարքերի խախտում: Ինչպես տեսնում ենք, ձևայինների կամ բառերի այսպիսի դասակարգումը առնչվում է խոսքի մասերի անվանական դասդասման հետ:

Գրաբարի և վերոհիշյալ հին լեզուների խոսքի մասերի գուգադրությունից կարելի է նշել հետևյալ ընդհանրությունները.

1. Թեքվող խոսքի մասերից հատկապես քանակական թվականներն ու անձնական դերանուններն են աչքի ընկնում մենաձևայինությամբ և կամ երկու ձևայինների այնպիսի սերտաճումով, որ նրանց ձևային հատկությունները դժվարանում է: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ բավական սրամիտ դասակարգման մի պատկեր է առաջարկել Չ. Բազելը՝ հիմնված քերականական տարրերի միանշանակ հատկությունների և դասակարգման ժամանակ առաջացող դժվարությունների հաշվառման վրա¹³:

¹² Նույն տեղում, էջ 19:

¹³ **Bazell C.E.** *Linguistic typology. An inaugural lecture, L.*, Ըստ այդմ դասակարգման, առանձնացվում է լեզուների երեք տիպ. 1. Լեզուներ, որոնց տարրերը թեև դասակարգման են ենթարկվում համեմատաբար միանշանակ, սակայն նրանց հատկությունները կատարվում է տարբեր կերպ և որոշ տարակարծությունների տեղիք տալիս: 2. Լեզուներ, որոնց տարրերի հատկությունները կատարվում է միակերպ, սակայն վերջին-

2. Չթեքվող խոսքի մասերը՝ շաղկապները, նախդիրները, հիմնականում մենաձևույթ են: Այդ առումով չնայած հին հունարենի հոդերը թեքման ենթակա են, սակայն նրանց ևս հատուկ է մենաձևույթության հատկանիշը:

Ի տարբերություն հնդեվրոպական հին լեզուների, հայերենում ձևական հատկանիշներով դժվար է որոշել բառի խոսքի-մասային պատկանելությունը:

Նախքան բուն թեքման անցնելը, մի քանի խոսք գրաբարյան բառահիմքերի մասին: Դասական գրաբարի ձևավոր հիմքերը չորսն են.

1. Մաքուր հիմքի հետ համընկնող անփոփոխ հիմք (շեշտավոր աննշանակիր՝ դի՛ք-դի՛ց):

2. Շեշտազրկված հիմք՝ աշակե՛րտ-աշակերտի՛, ազա՛տ-ազատի՛ և այլն:

3. Հնչույթափոխված հիմք, որն իր հերթին երկու ենթատեսակ ունի՝ ա) առնմանական՝ ա՛յր-ա՛ռն-արա՛մբ, անո՛ւն-անուա՛ն-անուա՛մբ և այլն, բ) շեշտափոխական՝ սո՛ւրբ-ս(ը)րբո՛յ, սի՛րտ-ս(ը)րտի՛ և այլն:

Պետք է նշել, որ այս բոլոր հիմքերը առկա են նաև արդի հայերենում, ընդ որում, հայոց լեզվի երկու վիճակներում էլ

ներիս դասակարգումը կապված է դժվարությունների հետ: 3. Վերջապես լեզուներ, որոնց տարրերի թե՛ հատույթավորումը, թե՛ դասակարգումը տարակարծությունների տեղիք չի տալիս:

Առաջին խմբի մեջ կարելի է մտցնել լատիներենը, երկրորդի մեջ՝ վիետնամերենը, երրորդի մեջ՝ թուրքերենը: Գրաբարը, բնականաբար, կմտի նշված խմբերից, առաջինի մեջ:

սահմանափակ ընդգրկում ունի մաքուր հիմքին համընկնող անփոփոխ հիմքը (**գյուղացի՝-գյուղացի՝ք** օրինակը եզակի դեպքերից է):

Դասական գրաբարի թեքման մեջ գլխավոր դերը պատկանում է ներքին թեքմանը (հերթագայությանը) և մասնիկավորմանը: Նշված միջոցների կշիռն արդի հայերենում հակադարձ համեմատական է գրաբարում դրանց ունեցած կշռին: Այսպես՝ արդի հայերենում ըստ կարևորության նախ մասնիկավորումն է, ապա հերթագայությունը:

Դասական գրաբարի հոլովման համակարգին բնորոշ է հիմքի և վերջավորության սերտաճումը, խոնարհման համակարգին՝ ձևույթային ավելի հեշտ տրոհայնությունը, միանշանակ մասնիկների համեմատաբար թույլ ձուլումը: Որպես դասական գրաբարի թեքման (բառափոխության) ընդհանուր կանոն կարելի է նշել բառափոխական ձևույթների գերազանցապես ձայնավորային բնույթը (առանձնապես հոլովման հարացույցում):

Գրաբարում (ինչպես և ընդհանրապես հայերենում) բառավերջը քերականական համեմատաբար նշանակալից իրազեկում է կրում. հենց այդտեղ են կենտրոնացած թվի, հոլովի և այլ ցուցիչները: Բացի այդ, գրաբարն աչքի է ընկնում ձևույթների գործառական բեռնվածության համեմատաբար բարդ պատկերով:

Դասական գրաբարին բնորոշ է քերականական իմաստների արտահայտման մի քանի միջոցների միասնաբար հանդես գալը: Այսպես՝ սովորական է մասնիկավորման և հերթագայության համակցությունը, որտեղ նրանցից մեկը կարող է լրացուցիչ արժեք ստանալ. օր.՝ կո՛ղմն-կողմա՛ն-կողմա՛մբ:

Դասական գրաբարի և վերոհիշյալ հին լեզուների անվանական թեքման զուգադրությունից կարելի է նշել.

1. Հոլովման հարուստ համակարգի առկայությունը նշված լեզուներում:

2. Հոլովական ձևերի և հոլովական իմաստների միանշանակ և պարտադիր համապատասխանության բացակայությունը:

3. Անվանական և դերանվանական հոլովումների որոշակի տարբերակվածությունը վերջիններիս հատուկ տարարմատությամբ (սուպլետիվիզմով):

4. Ամենուրեք հոլովման տարբեր հիմքերի առկայությունը:

5. Բառավերջի ծանրաբեռնված լինելը քերականական իրազեկմամբ (գերմանական լեզուների, ինչպես նաև հունարենի դեպքում՝ որոշ վերապահությամբ):

Անհրաժեշտ է նշել, որ այդ լեզուները ոչ բոլոր կետերում են ի հայտ բերում ընդհանուր գծեր: Այս կամ այն կոնկրետ դեպքում նրանց միջև կարելի է որոշակի տիպաբանական ենթախմբեր առանձնացնել: Այսպես՝ թվականների զուգադրական քննության ժամանակ տարբեր լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները դրսևորվում են այն բանում, թե ինչպես է կատարվում հաշվումը՝ տասնյակներով, թե՞ քսանյակներով: Գրաբարը, հին սլավոներենը, հին հունարենը, լատիներենը, եթե հիմք ընդունենք տվյալ հատկանիշը, կմտնեն մեկ խմբի (տասնյակների խումբ) մեջ, իսկ հին վրացերենը, ֆրանսերենը և այլն՝ մյուս (քսանյակների խումբ):

Դասական գրաբարի և արդի հայերենի հոլովման համակարգերի զուգադրությունից մի կողմ թողնելով այն որոշակի ընդհանրությունները, որ, բնականաբար, առկա են հայոց լեզվի

երկու կտրվածքներում, կարելի է գալ հետևյալ եզրակացություններին.

1. Եզակի և հոգնակի թվերի հոլովական վերջավորությունները դասական գրաբարում տարբերակված են: Թեև նշվում է, որ -ք-ից տարբեր հոգնակերտ-հավաքական մասնիկներ ունեցող բառերի հոլովվելը եզականաձև և անեզական բառերի առկայությունը հիմք են ստեղծում վերջավորությունների միասնականացման համար, բայց դա դեռևս սկսվող գործընթաց է: Ժամանակակից հայոց լեզվին հատուկ է հոլովման եզակի և հոգնակի թվերում միևնույն հոլովանիշ թեքությունների կիրառությունը:

2. Դասական գրաբարում հոլովական վերջավորությունները գերազանցապես մենահնչույթ են, հակառակ արդի հայերենի, որտեղ տարածված են երկհնչույթ և եռահնչույթ վերջամասնիկները:

3. Թեև ինչպես արդի հայերենում, գրաբարում ևս հոլովական վերջամասնիկների հաջորդականության առավելագույն թիվը չորսն է (սրտ-ի-ւ-ք-ն), այնուամենայնիվ, գրաբարն աչքի է ընկնում հոլովական վերջամասնիկների գերազանցապես մենահնչույթայնությամբ, որով պայմանավորվում են հոլովական ձևերի որոշակի սեղմությունը և սերտաճումը: Այսպես՝ գրաբարյան **ցուք** (**ցուլ** բառի հոգնակի գործիական) ձևում առկա է երկու վերջամասնիկ՝ **ու** և **ք**, որոնք ընդամենը մեկ վանկ են կազմում, այնինչ ժամանակակից հայոց լեզվում ունենք երկու վերջամասնիկով թեքված ձև՝ ցուլ-եր-ով, որտեղ մեկ վանկ ավելի է և նկատելի է վերջամասնիկների թույլ կցումը: Այդ էլ այն դեպքում, երբ գրաբարում հենց գործիականն է, որ աչքի է ընկնում կցականությամբ:

4. Դասական գրաբարը հոլովական մասնիկների գծային դասավորության մեջ համեմատաբար ազատ է: Ընդամին, ի տարբերություն արդի հայերենի, որտեղ հոլովանիշ վերջամասնիկները որպես կանոն հաջորդում են թվանիշ վերջամասնիկներին (օր.՝ քաղաք-ներ-ից), գրաբարին հատուկ է վերջիններիս հակառակ հաջորդականությունը՝ հոլովանիշ թեքույթ + թվանիշ վերջամասնիկ (օր.՝ քաղաք-աւ-ք), բացի **մարդկան** տիպից (Aca), որտեղ թվակերտ վերջամասնիկը նախորդում է հոլովակերտ թեքույթին:

5. Գրաբարի և արդի հայերենի կառուցվածքային էական տարբերություններից է նաև այն, որ լինելով թեքական լեզու, գրաբարն աչքի է ընկնում մեկ թեքույթի միջոցով միաժամանակ մեկից ավելի քերականական իմաստների արտահայտությամբ: Այսպես գրաբարի հոլովման համար տիպական է հոլովի և թվի քերականական իմաստների մեկ թեքույթով արտահայտելը (օր.՝ դիք՝ դի-ց, որտեղ ց-ն միաժամանակ և՛ հոլովանիշ է, և՛ թվանիշ):

Հոլովական իմաստների արտահայտման ժամանակ դասական գրաբարում մեծ նշանակություն ունեն ներքին թեքման ձայնավորները:

Բառի մեջ ձևայինների թվի ավելացումը ինչ-որ չափով զգացնել է տալիս կցականություն, որովհետև յուրաքանչյուր կցվող նոր մասնիկ միայն մեկ քերականական իմաստ է արտահայտում: Այդ երևույթը հատուկ է ոչ միայն դասական գրաբարին, այլև հին լեզուներից շատերին (օրինակ, հին գերմաներենին):

Ի տարբերություն արդի հայերենի, գրաբարյան առկայացուցիչները ձևականորեն կարող են չտարբերակվել հոգնակիութ-

յան ցուցիչից (**ձի-ս**): Այդ դեպքում գործ ունենք համանունությ-
յան հետ:

Հայերենագիտության մեջ բազմիցս նշվել է գրաբարի թեքա-
կան բնույթը, սակայն որոշակի քանակական արժեքներով չի
պարզվել, թե ինչպիսի տոկոսային հարաբերություն կա, ասենք,
հոլովման համակարգի ներքին և արտաքին թեքման, մասնիկա-
վորման և այլ երևույթների միջև:

Դասական գրաբարի թեքման և մասնիկավորման աստի-
ճանը պարզելու ընթացքում մեր կողմից կիրառվել են հետևյալ
սկզբունքները.

1. Հաշվի առնելով դասական գրաբարի բարդ թեքական
բնույթը, այսինքն միևնույն հոլովական հարացույցի տարբեր
հոլովներում ինչպես թեքման զանազան տիպերի առկայությունը
(արմատի ձայնավորի հերթագայություն, հիմքի և հոլովական
թեքույթի «բախումից» առաջացած հնչույթափոխություն և այլն),
այնպես էլ թեքման և մասնիկավորման համակցված հանդես
գալը, վերջիններիս կարևոր գուգորդումները, հաշվարկվել են
առանձին -առանձին (հմմտ. աղյուսակ № 15):

2. Յուրաքանչյուր հոլով դիտվել է որպես մեկ միավոր (բնա-
կանաբար, ուղղականը որպես «ուղիղ» հոլով հաշվի մեջ չի
մտել):

3. Թեքականության և մասնիկավորման ավելի ստույգ
պատկերը ստանալու համար նպատակահարմար է գտնվել
եզակի և հոգնակի հոլովների տվյալներն իրարից առանձնացնել:

4. Այն դեպքում, երբ գործ ենք ունեցել երեք տիպի երևույթ-
ների հետ՝ ներքին թեքում, առնմանական հնչույթափոխություն,
մասնիկավորում (օր.՝ տուն՝ տ-ա-մ-բ), ներքին թեքում մասնիկա-

վորումից բացի, մեկ միավոր է համարվել նաև հիմքի և հոլովական վերջավորության «բախումից» առաջացած հնչույթափոխությունը:

Ինչպես երևում է № 15 աղյուսակից, մաքուր ներքին թեքում, առկա է միայն եզակի թվում, հոգնակի թվում ներքին թեքումը միշտ ուղեկցվում է այլ երևույթներով՝ մասնիկավորմամբ, առնմանական հնչույթափոխությամբ և այլն:

Աղյուսակ 15

Թեքման տիպեր	Թիվ	Եզակի		Հոգնակի	
		թիվը	%-ը	թիվը	%-ը
«Մաքուր» ներքին թեքում (արմատի ներսում հնչույթային հերթագայություն)՝ առանց մասնիկավորման (տուն-տան)		63	18,8	–	–
Ներքին թեքում+մասնիկավորում (արմատի ներսում հնչույթային հերթագայություն + մասնիկավորում) (քոյր-քերք)		101	30,1	145	47,2
Հիմքի և հոլովական վերջավորության «բախման» կետում առաջացած հնչյունափոխություն+ մասնիկավորում (տարի-տարւոջ)		76	22,9	47	15,3
Վերջադիր հոլովական մենահնչույթ թեքույթի հերթագայություն (դիք-դիս)		14	4,1	61	19,9
Մաքուր արտաքին թեքում (մասնիկավորում առանց հնչույթափոխության) (ջուր-ջուրը)		81	24,1	54	17,6

Աղյուսակի մեջ, ինչպես կարելի է նկատել, եզակի և հոգնակի հոլովաձևերը թվապես չեն համընկնում: Դա պայմանավորված է նրանով, որ հոլովման որոշ տիպեր ունեն միայն եզականաձև հոլովներ և ընդհակառակը, որոշ տիպեր էլ անհոգնական են:

Եզակի թվում ներքին թեքումը կազմում է 72, իսկ հոգնակի թվում՝ 63 տոկոս: Այսինքն՝ երկու դեպքում էլ գերակշռում է ներքին թեքումը (մասնիկավորումը սոսկ թեքմանն «ուղեկցող» երևույթ է): Պետք է նշել, որ հոգնակիի դեպքում զուտ ներքին թեքում (մասնիկավորմամբ չհամակցված) թեև չկա, բայց թեքակա-նության մասին է խոսում նաև միևնույն հոլովանիչ թեքույթի բազմիմաստությունը, մի բան, որ արդի հայերենի հոլովման հա-մակարգը ինչ-որ չափով կորցրել է:

Դասական գրաբարի հոլովման համակարգում տարբերակ-վում է քերականական իմաստների հետևյալ չորս կարգը՝ թվա-յին, հոլովական, որոշյալության և դասային, որոնք բնորոշվում են ինքնակայության և բնութագրականության խմբավորիչ հատ-կանիշներով:

Գրաբարում թվանիշ թեքույթները հանդես են գալիս բառա-վերջում: Ստորև տրվող աղյուսակում նշվում են դասական գրաբարի ձևավոր հիմքերի տիպերը:

1. Դասական գրաբարի և ժամանակակից հայերենի համար ընդհանուր է այն, որ երկուսն էլ A+c+d տիպը (այսինքն՝ հնչույ-թափոխությամբ և մասնիկավորմամբ ձևավոր հիմքի տիպը) չու-նեն:

2. Ի տարբերություն արդի հայերենի, որտեղ որպես ձևա-վոր հիմքերի կազմիչ հիմնականում հանդես է գալիս շեշտափո-խությունը (բացառությամբ **գյուղացիք** տիպի), դասական գրա-բարը գերազանցապես օգտվում է հնչույթափոխությունից (ան-շուշտ նաև՝ շեշտափոխական)՝ մանո՛ւկ-մանկո՛ւնք, գա՛ռն-գառնի՛նք, կի՛ն-կա-նա՛յք և այլն:

	Ձևավոր հիմքերի տիպեր	Ձևավոր հիմքերի կազմիչներ			Օրինակներ
		շեշտա- փոխ. (b)	հնչույթա- փոխ. (c)	մասնիկավ. (d)	
1	A	–	–	–	մարդ
2	A+b	+	–	–	մարդ-իկ
2	A+c	–	+	–	հար-ք
4	A+d	–	–	+	չկա
5	A+b+c	+	+	–	հարս-ուն-ք
6	A+b+d	+	–	+	քար-ին-ք
7	A+c+d	–	+	+	չկա
8	A+b+c+d	+	+	+	աղախն-այ-ք

3. Ի տարբերություն արդի հայերենի, որտեղ մաքուր հնչույթափոխությունը (առանց մասնիկավորման) բացառված է, գրաբարում առկա է նաև այդպիսի A+c տիպը (օր.՝ հայր-հարք):

4. Արդի հայերենում համեմատաբար տարածված A+b+c+d տիպը (օր.՝ **դ(ը)ռն-եր**) գրաբարում գործուն չէ: Սակավաթիվ օրինակներից է՝ աղախին՝ աղախն-այ-ք:

5. Գրաբարում հնչույթափոխությունը պայմանավորված է ձայնադարձով՝ (ը(ն)ին(ան՝ անձն-անձինք-անձանց), մինչդեռ ժամանակակից հայերենում հնչույթափոխությունը շեշտափոխական է՝ ի(ու)ը (կին-կանայք տիպը փաստորեն շեշտափոխական է, բայց եզակի օրինակով):

6. Ի տարբերություն արդի հայերենի, որտեղ թվաձևային ութ վերջավորությունից (-եր, -ներ, -իկ, -այք, -ք, -անք, -յանք, -ենք, -ոնք) հիմնական գործառնությունը կատարում են -եր, -ներ մասնիկները) գրաբարում հիմնական թվային իմաստ ունեցող վերջավորությունն է –ք-ն: Գրաբարը ունենալով բուն հոգնակերտ

-ք, -ց վերջավորությունները, աչքի է ընկնում նաև հավաքական մասնիկների առկայությամբ՝ -իկ, -ական, -որայ, -անք, -ինք, -ոյք և այլն:

Եթե ժամանակակից հայերենում իբրև միևնույն հոգնանիշ անփոփոխակի (ձևույթի) դիրքային տարբերակներ հանդես են գալիս վերոհիշյալ ութ փոփոխակները, ապա գրաբարում դրանց թիվը զգալիորեն շատ է (եթե նկատի չունենանք գրաբարի նորմավորված տիպը):

Եթե արդի հայերենում կա թվաձևույթի երկու անփոփոխակ (գրո ձևույթ և հոգնանիշ ութ փոփոխակ), ապա գրաբարում վիճակն ավելի բարդ է, մի շարք հին լեզուների (հին հունարեն, լատիներեն և այլն) նման գրաբարում տարածված երևույթ է անեզականների (*pluralia tantum*), այնպես էլ անհոգնականների (*singularia tantum*) առկայությունը: Թվի քերականական կարգում դասական գրաբարը սանսկրիտից տարբերվում է նրանով, որ գրաբարում երկակի թիվ չկա:

Հոլովանիշ թեքույթների ուսումնասիրությունից պարզվում է, որ վերջինները կարող են գործածության երկու պայման ունենալ՝ ձևական և իմաստային: Ընդ որում, ինչպես առհասարակ սպասվում է, զուտ ձևական կամ զուտ իմաստային դեպքերը հազվադեպ են:

Ստորև տրվում են այն կարևոր առանձնահատկությունները, որ ունեն դասական գրաբարի և արդի հայերենի հոլովման հիմքերի տիպերը:

1. Ի տարբերություն արդի հայերենի, որտեղ առաջին և երկրորդ կարգի հոլովանիշներով ձևավորված հիմքերի և երկրորդ կարգի հոլովանիշ վերջավորությունների միջև որոշակի

կապ գոյություն ունի, գրաբարում հիմքերի տիպերի և հոլովանիշ վերջավորությունների փոխհարաբերությունը շատ ավելի բարդ պատկեր է ներկայացնում, որտեղ վերջիններս հաճախ խառնվում են: Այսպես՝ ամ-ամի-ամաւ-ամաց, այգի-այգւոյ-այգեաց, անձն-անձին-անձանց և այլն:

2. **Բ** հոլովական վերջավորությանը նախորդող **ն**-ն առնմանությամբ դառնում է **մ**:

Կառուցվածքային լեզվաբանության մեջ լեզուների հոլովական իմաստների արտահայտման համար ընդունվում են սահմանափակ թվով հատկանիշներ¹⁴: Այսպես՝ ռուսաց լեզվի հոլովման համակարգի կառուցվածքային վերլուծությունը այժմ կատարվում է երեք գույգ տարբերակիչ հատկանիշով: Այդ հատկանիշներն են՝ **А**-ուղղվածություն (ցույց է տալիս առարկան, դեպի որը ուղղված է գործողությունը), **В**-ծավալայնություն (հաղորդման բովանդակության մեջ առարկայի մասնակցության ծավալը), **С**-եզրայնություն (ցույց է տալիս արտահայտության մեջ առարկայի ոչ հիմնական լինելը): Այսպիսով, ռուսաց լեզվի հոլովման համակարգի կառուցվածքային կադապարը կունենա հետևյալ տեսքը՝

ուղղական— $\bar{A}, \bar{B}, \bar{C}$
 սեռական— $\bar{A}, B, C^-$
 տրական— $A, \bar{B}, C,$
 հայցական— $A, \bar{B}, \bar{C}$
 գործիական— $\bar{A}, \bar{B}, C$

¹⁴ **Вяч. Вс. Иванов**, *Лингвистические проблемы кибернетики и структурная лингвистика*, сб. «Кибернетика на службу коммунизму», I, М., 1991,

Առաջին իսկ հայացքից պարզ է դառնում, որ դասական գրաբարի հոլովման համակարգի կառուցվածքային կաղապարն էլ կունենա մոտավորապես նույն տեսքը, միայն թե հարկավոր է որոշել հայոց լեզվին հատուկ բացառական հոլովի տեղը:

Եթե նկատի ունենանք, որ վեց լեզվական միավորի նկարագրության համար երեք տարբերակիչ հատկանիշ բավական է, ապա՝ հիմք ընդունելով եզրայնությունը, ուղղվածությունը և ծավալայնությունը, գրաբարի հոլովների իմաստային տարբերակիչ հատկանիշների աղյուսակը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով:

Աղյուսակ № 17

Հոլովական միավորներ						
Տարբերակիչ հատկանիշներ	ուղղ.	սեռ.	տրակ.	հայց.	բաց.	գործ.
Եզրայնություն	–	0	0	–	+	+
Ուղղվածություն	–	–	+	+	+	–
Ծավալայնություն	–	+	+	–	–	–

Դասական գրաբարի ուղղական և հայցական հոլովները տարբերվում են և հոլովական ձևով, և հոլովական իմաստով: Նշված հոլովների տարբերակման խնդրում գլխավոր դերը պատկանում է **բ-ս** հակադրությանը: Որպես հայցական հոլովի՝ ուղղականից ունեցած երկրորդական ձևական տարբերակիչ հանդես է գալիս նաև **գ-ն**:

Դերանվանական հոլովումը դասական գրաբարում ունի իր որոշակի յուրահատկությունները թե՛ թվի և թե՛ հոլովի կարգերում: Դա ամենից առաջ դրսևորվում է հոլովիչների բացակա-

յությամբ, արմատի յուրատեսակ փոփոխություններով, տարարմատությամբ և այլն:

Դերանվանական թվակազմության դեպքում առկա է եզակի և հոգնակի թվաձևերի արմատների տարահիմքությունը. որպես «ուղիղ» հոլով հանդես է գալիս ուղղականը, եզակի հայցականը աչքի է ընկնում ուղղականի նկատմամբ ունեցած տարահիմքությամբ¹⁵:

Դասական գրաբարի դերանվանական հոլովման կարգի կարևոր առանձնահատկությունը ուղղական, սեռական և տրական հոլովների կազմության տարարմատությունն է, որով տարբերվում են անձնականների եզակի և հոգնակի թվերի առաջին և երկրորդ դեմքերը, ինչպես նաև մնացած դերանունների եզակի ձևերի ուղղական, սեռական և տրական հոլովաձևերը՝ ես-իմ-ինձ, մեք-մեր-մեզ և այլն: Դերանվանական հոլովման կարևոր առանձնահատկություններից է նաև եզակի սեռական և տրական հոլովաձևերի որոշակի տարբերակվածությունը՝ իմ-ինձ, մեր-մեզ և այլն:

Դերանվանական հոլովման մեջ ամենից առաջ պետք է նշել տարարմատության կարևոր դերը թե՛ գրաբարում և թե՛ արդի հայերենում, ընդ որում, որոշ դեպքերում արդի հայերենում առկա է տարարմատություն, իսկ գրաբարում այն բացակայում է (հմմտ. գրաբարում՝ ինքն-ինքեան, արդի հայերենում՝ ինքն-իրեն): Գրաբարում բացառական և գործիական հոլովների կազմության եղանակը անվանական հոլովման համապատասխան

¹⁵ Ինչպես հայտնի է դերանունների մի մասին հատուկ է անվանական հոլովումը: Ներկա դեպքում այդպիսիք խնդրո առարկա չեն:

ձևերի տիպերի հետ մեծ մասամբ չի համընկնում, այսինքն՝ եթե արդի հայերենում նշված հոլովները կազմվում են տրականից ինձ-ինձնից, ապա գրաբարում՝ ինձ-յինեն, ինն: Այսպես է նաև **այս, այդ, այն** ցուցականների կրկնակ ձևերի երկար տարբերակներում՝ այնմիկ-յայն-մանէ և այլն:

Դեմքի արտահայտությունը դերանունների համար պարտադիր հատկանիշ է: Դերանվանական հոլովման ժամանակ դիմային տարբերությունները դրսևորվում են ոչ թե հոդերով, այլ սուպլետիվ եղանակով:

Հաղորդակցման գործընթացքով դեմքի քերականական կարգը կարող է ունենալ երեք դիմային եզր (դեմք) հաղորդող (առաջին դեմք), ընդունող (երկրորդ դեմք), հաղորդմանը չմասնակցող (երրորդ դեմք): Նշված դիմային եզրերը կարելի է բաժանել նաև երկու այլ խմբերի՝ հաղորդակից և ոչ հաղորդակից: Առաջինի մեջ մտցվում են հաղորդողի և ընդունողի դիմային եզրերը, վերջինի մեջ հաղորդմանը չմասնակցողինը: Բազմաթիվ լեզուների դեմքի քերականական կարգի ուսումնասիրությունից պարզվել է, որ դեմքերի նման դասդասումը կարելի է ընդունել որպես ընդհանրույթ: Այդ առումով, բնականաբար, թե՛ գրաբարը, թե՛ արդի հայերենը կունենան մի ընդհանուր պատկեր¹⁶:

Դասական գրաբարի և մի շարք հին լեզուների համապատասխան քերականական կարգերի գուգադրումից կարելի է նշել հետևյալը.

1. Փրեթե բոլոր լեզուներում (գրաբար, հին հունարեն, սանսկրիտ, հին վերին գերմաներեն, հին վրացերեն և այլն), անուն-

¹⁶ Գ.Ջահուկյան, նշված աշխ., էջ 195:

ների համեմատությամբ, դերանուններն աչքի են ընկնում սահմանափակ քանակությամբ (յուրաքանչյուր լեզվի համար մեծ դժվարություն չի ներկայացնում բոլոր դերանունների թվարկումը որոշակի ցուցակով):

2. Հակառակ դրան, ամենուրեք դերանունները բնորոշվում են բարձր հաճախականությամբ:

3. Նշված լեզուներում հոլովի կարգում հիմնական դեր է խաղում տարարմատությունը:

4. Թվանիշ թեքությունները հանդես են գալիս գերազանցապես վերջնային դիրքում:

5. Ինչպես հին հունարենում, լատիներենում և այլն, այնպես էլ գրաբարում խոսողի, խոսակցի և «այնր» ոլորտները մատնանշող հատուկ ցուցական հոդերի առկայությունը ընդհանուր գիծ է:

6. Ամենուրեք հատկապես դերանուններն են համեմատաբար կարճ:

Որպես դասական գրաբարի՝ վերոհիշյալ հին լեզուներից ունեցած կարևոր առանձնահատկություն պետք է նշել հետևյալը.

1. Եթե մի շարք լեզուների համար կարելի է ընդունել դերանվանական ձևերի ժամանակի ընթացքում կայունությունն ու անփոփոխությունը հաստատող ընդհանրություն¹⁷, ապա գրաբարյան դերանունների ձևական անփոփոխությունը չի կարելի պնդել, եթե վերջիններս համեմատենք արդի հայերենի համապատասխան ձևերի հետ (**սմին, այսմ, յինէն, քն, ոյք, զի, ուրումն** ձևերը աշխարհաբարում զգալի փոփոխության են ենթարկվել):

¹⁷ Л.Р. Зиндер, Т.В. Строева, նշված աշխ., էջ 102:

2. Դասական գրաբարում բացակայում է սեռի քերականական կարգը:


Սեռի քերականական կարգի կապակցությամբ անհրաժեշտ է անդրադառնալ տիպաբանական մի յուրօրինակ դասակարգման, որ առաջարկել է Ռոժդեստովենսկին¹⁸:

Հայտնի է, որ ձևաբանական հատկանիշների հաշվառմամբ լեզուների տիպաբանական դասակարգումը լեզվաբաններին լուրջ դժվարությունների առաջ է կանգնեցնում: Բանն այն է, որ բավական դժվար է գտնել դասակարգման այնպիսի հատկանիշներ, որոնք, էական լինելով հանդերձ, տարակարծությունների տեղիք չտան: Այսպես՝ ավանդական թեքական-կցական-անջատական դասակարգման պատկերի մեջ միննույն լեզուն կարող է դրվել և՛ թեքականների, և՛ կցականների շարքում, չնայած այդ դեպքում անգամ, հաշվի առնելով տվյալ լեզվում ձևային գույքադրման տիպերն ու քերականական իմաստների արտահայտման հիմնական եղանակները, կարելի է հաստատապես ասել, որ տվյալ լեզուն կամ թեքական է, կամ կցական: Քանի որ լեզվաբանական տիպաբանությունը գործ ունի լեզվական ընդհանրությունների հետ, նշանակում է, դասակարգման հիմքում պետք է դրվեն ընդհանրական (ունիվերսալ) հատկանիշներ, բայց այնպիսիք, որ բացարձակ ընդհանրություններ չեն (ասենք՝ չկա լեզու առանց հնչույթի, չկա չեզու, որ թիվ չունենա և այլն): Այստեղից էլ առաջանում է այն պահանջը, որ հատկանիշները այնպես ընտրվեն, որ յուրաքանչյուր նոր հատկանշի ավելացման

¹⁸ Ю. Рождественский, նշված աշխ., էջ 188:

դեպքում լեզուների տիպաբանական խմբերի բաշխման փոփոխության պատճառով լեզվադասակարգման պատկերը չքանդվի:

Ընդունելով, որ սեռի և հոլովի քերականական կարգերը, հիմնական և իրարից անկախ լինելով, ենթադրում են նաև մյուս կարգերը, Ռոժդեստովենսկին վերջիններիս հիման վրա (դրանց գումարած նաև թվի կարգը) աալիս է տիպաբանական դասակարգման հետևյալ պատկերը.



գծ. № 1

Թ-թիվ
Հ-հոլով
Հ-հոլովի բացակայու-
թյուն
Մ-սեռ
Մ- սեռի բացակայու-
թյուն

Ինչպես կարելի է պարզել գծագրից, տարբերվում են լեզվական հետևյալ չորս շրջանները՝ 1. անսեռ անհոլով լեզուներ, 2. սեռային հոլովային լեզուներ, 3. անսեռ հոլովային լեզուներ, 4. սեռային անհոլով լեզուներ:

Առաջին խումբը հատկացվում է անձև կոչված լեզուներին, որոնց ստորոգման կարգի մեջ եղանակի և ժամանակի քերականական կարգերը պարտադիր չեն, բացի այդ, թվի քերականական կարգը այլընտրանքային արժեք ունի:

Երկրորդ խմբի մեջ մտնում են թեքական լեզուները, որտեղ առկա են սեռի և հոլովի կարգերը: Ստորոգման կարգի մեջ տարբերակվում են եղանակի և ժամանակի կարգերը:

Երրորդ խումբը կազմում են կցական լեզուները, որոնք ունեն հոլով և թիվ, բայց չունեն քերականական սեռ: Այստեղ ևս ստորոգման կարգի մեջ տարբերակվում են եղանակի և ժամանակի կարգերը:

Չորրորդ խմբին պատկանում են վերլուծական լեզուները, որտեղ կա սեռի կարգը կամ անունների՝ ըստ բառաքերականական կարգերի տարբերակում, որ արտահայտվում է բայով: Այստեղ ևս եղանակի և ժամանակի կարգերը արտահայտվում են ստորոգման կարգի մեջ:

Այս դասակարգումը, որքան էլ հեղինակը նշի տերմինների բացահայտման մեջ ավանդականից տարբեր իր մոտեցումը, քննադատելի է: Ամենից առաջ՝ սեռի քերականական կարգը թեև հատուկ է շատ թեքական լեզուների, սակայն սխալ է հեղինակի այն պնդումը, թե իբր ավանդական տիպաբանական դասակարգման հիմքում նույնպես սեռահոլովային հատկանիշներ են դրվել: Մինչդեռ, եթե հոլովային հատկանիշը, իրոք, տեղ է գտել այդ դասակարգման մեջ, ապա սեռի հաշվառում չի կատարվել թեկուզև մասնակի կերպով: Բացի այդ, ինչքան էլ հեղինակը նշի, թե սեռահոլովային դասակարգումը պետք է դիտել որպես քերականական կարգերի հիման վրա լեզուների տիպաբանական դասակարգման առաջին փուլ, բոլոր դեպքերում, մասնավորապես դասական գրաբարի (և ընդհանրապես հայերենի) տվյալների հաշվառմամբ այդ դասակարգումը խոցելի է:

Հայտնի է, որ դասական գրաբարը, լատիներենի և հին սլավոներենի նման տիպիկ թեքական լեզու է, մինչդեռ հիմք ընդունելով այն, որ գրաբարում սեռի քերականական կարգը բացակա-

յում է, ըստ առաջարկվող դասակարգման ստիպված պետք է լինենք գրաբարը մտցնել կցական լեզուների խմբի մեջ:

Վերոհիշյալ դասակարգման մեջ որոշակիորեն խառնվում են նաև ձևաբանական և շարահյուսական մակարդակները. այսպես՝ վերլուծականությունը հակադրվում է ոչ թե համադրականությանը (ինչպես արվում է անգամ ավանդական տիպաբանության մեջ), այլ կցական-թեքական և անձն¹⁹ լեզուներին բնորոշ թեքականությանը և կցականությանը և այլն:

Այսպիսով, դասական գրաբարը, սեռի քերականական կարգ չունենալով հանդերձ, կատարյալ թեքական լեզու է, որի թեքականությունը առանձնապես արտահայտվում է հոլովման ոլորտում:

Դասական գրաբարի խոնարհման քննությունը կարելի է կատարել հիմնականում մնալով մեկ բառի սահմաններում: Դրանում արտահայտվում է դասական գրաբարի խոնարհման համակարգի համադրականությունը:

Հոլովման նման, խոնարհումը բնութագրվում է թե՛ վերջնամասնիկավորմամբ, թե՛ միջմասնիկավորմամբ և թե՛ նախամասնիկավորմամբ (ե-գիտ, ե-բեր): Պետք է նշել, որ նման մասնիկավորումը պայմանավորված է հիմքի վանկաքանակությամբ (նախամասնիկ դրվում է միավանկի դեպքում):

¹⁹ Վերջին ժամանակներս **անձն** տերմինը իրավացի քննադատության է ենթարկվում: Բացարձակ անհարմարություն ունենալով, այն նաև անտրամաբանական է, որովհետև խոսքը թեքված ձևի բացակայության մասին է և ոչ թե ձև չունենալու – տե՛ս **Н.Д. Андреев, Статистико-комбинаторное моделирование языков**, М., 1967.

Խոնարհման բուն վերջավորությունների վերաբերյալ շատ կարևոր է նշել, որ դրանք առաջին հերթին արտահայտում են ոչ անմիջապես բայի հետ առնչվող իմաստներ՝ թվային և դիմային: Բայի թվի և դեմքի քերականական կարգերից եղանակի կարգը նույնպես դրսևորվում է վերջամասնիկներով:

Գրաբարում խոնարհման համակարգին հատուկ է վերջամասնիկների համանունությունը, քերականական իմաստների և ձևերի փոխհարաբերության բարդ կապերը, հարացույցի մեջ դերանվանական հոլովմանը հատուկ տարարմատությունը և տարահիմքությունը, «զրո» վերջավորության բազմարժեքությունը:

Չնայած խոնարհման լծորդ ձայնավորները կարելի է դիտել իբրև անկախ մասնիկներ, սակայն նվազագույն իմաստակիր միավորների հաշվառման դեպքում դրանք անկախ միավորներ ենք համարել միայն այն դեպքում, երբ վերջիններս հանդես են գալիս վերջնային դիրքում, այսինքն՝ նրանցով ավարտվում է բառը: Լծորդ ձայնավորների վերաբերյալ անհրաժեշտ է նշել նաև, որ **ե** լծորդը հակադրության մեջ է **ի**-ի հետ և **ա** լծորդի նման արտահայտում է քերականական որոշակի իրազեկում:

Գրաբարյան բայահիմքերը բնորոշվում են առավել մեծ տարաբեքությամբ, ընդ որում, հիմքերը ունեն նաև կերպային (կատարյալ-անկատար) արժեք՝ զբոսնուլ-զբոս, թքանել-թուք (անշեշտ՝ թըք):

Խոնարհման մեջ, ինչպես և հոլովման համակարգում, ձուլման երևույթը բավական տարածված է, որի պատճառով դժվարանում է այն հարցը, թե ինչին հատկացնենք, օրինակ, **տալ** բայի **տուր** ձևի **ու**-ն՝ հիմքին, թե՞ վերջավորությանը: Նման վիճակը ինքնըստինքյան վկայում է գրաբարի թեքական բնույթը,

որովհետև կցական կառույցների (կառուցատիպերի) դեպքում ձևությամբ հատույթավորումը սովորաբար այդպիսի դժվարություն չի առաջացնում:

Գրաբարի խոնարհման վերջամասնիկների հաջորդման կարգը (հաջորդականությունը) և փոխհարաբերությունը շատ ավելի բարդ պատկեր են ներկայացնում, քան հոլովման վերջամասնիկներին, չնայած վերջիններս էլ իրենց հերթին, արդի հայերենի հոլովման համակարգի համեմատությամբ աչքի են ընկնում խիստ խճճված փոխհարաբերություններով, արտահայտության և բովանդակության պլանների բարդ կապերով:

Դասական գրաբարում միևնույն մասնիկը միաժամանակ մի քանի իմաստ է արտահայտում ժամանակային, դիմային, թվային, մյուս կողմից միևնույն իմաստը կարող է երեք կարգի մասնիկներով արտահայտվել (a, b, c):

Դասական գրաբարի խոնարհման ոլորտի իրապատկերը հիշեցնում է լատիներենի խոնարհման համակարգը: Երկու լեզուներում էլ ընդհանրույթ է այն, որ միևնույն դիմային վերջավորություններով և զանազան մասնիկներով արտահայտվում են տարբեր եղանակային և ժամանակային իմաստներ. հմմտ. գր-եմ, գր-ից-եմ, հաս-ոյց, հաս-ուց-ան-եմ և lauda-t-նա գովում է, laudabu-t—նա գովում էր, lauda-vi-t- սա գովեց և այլն:

Գրաբարի խոնարհման համակարգում կան հետևյալ կարգերը՝ եղանակի, ժամանակի, կերպի, սեռի, թվի, դեմքի և դասի:

Ընդունելով, որ բայի համար առաջնային կերպա-ժամանակային և ոչ թե դիմային հակադրությունն է, պետք է նշել գրաբարի այն գիծը, ըստ որի դիմավոր բայի և դերանվան համատեղ կիրառությունը ավելցուկության նշան է (տվյալ դեպքում, ան-

շուշտ, զանց է առնվում դեմքի հատուկ ընդգծման անհրաժեշտությունը):

Տարբերելով բայի անդեմ և դիմավոր ձևերը, կարելի է տեսնել, որ անդեմ ձևերի մեջ եղանակ, ժամանակ, դեմք և թիվ հանդես գալ չեն կարող, և առկա են մյուս կարգի իմաստները՝ սեռը, կերպը և այլն:

Դասական գրաբարում առաջնային եղանականիշ արժեք ունեցող հատուկ մասնիկներ չկան, և ինչ-որ ձևով եղանականիշ արժեք են ստանում բայական վերջավորությունները:

Բայի անդեմ ձևերի սեռային պատկանելությունը թեև արտահայտության պլանում որոշակիորեն տարբերակված չէ, բայց այնուամենայնիվ հնարավոր է որոշել: Հայտնի է, որ մի շարք բայերի լծորդության փոփոխությունը առաջ է բերում բայական սեռի փոփոխություն: Խոնարհված ձևերում ներգործական և կրավորական սեռերի տարբերակումը կատարվում է **ե/ի** հիմքային վերջամասնիկների միջոցով (գրեմ՝ ներգործական, գրիմ՝ կրավորական սեռ): Սեռի տարբերակման տեսակետից թույլ դիրք է ներկայացնում **ա** խոնարհումը, որին պատկանող բայերի մի զգալի մասին հատուկ է երկու սեռերի համար հավասարապես կիրառվող ընդհանուր ձևեր ունենալը: Գրաբարյան սեռանիշ վերջամասնիկները կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝ **ե, ա(ց) ոյց/ան, գրո:**

Ի տարբերություն արդի հայերենի, որտեղ կրավորականության հատուկ ձևական ցուցիչը (-վ-) դրվում է հիմքի և դիմային վերջավորության միջև, գրաբարում կրավորականությունը միշտ բառավերջային արտահայտություն ունի՝ շարժ-եց-ի, շարժ-եց-այ:

Պատճառականության իմաստը գրաբարում դրսևորվում է –ոյց-(անշեշտ՝ -ուց-) ածանցի միջոցով, որին անկատարություն (ներկայի հիմք) արտահայտող ձևերում ավելանում է –ան- ածանցը (-ոյց-ան-): Վերջինիս էլ անորոշ դերբայի դեպքում ավելանում է –ել վերջավորությունը: Չորս խոնարհման փոխարեն պատճառականներն ունեն միայն մեկ՝ **ե** խոնարհում:

Դասական գրաբարում ժամանակային տարբերություններն արտահայտվում են գերազանցապես վերջավորություններով՝ լծորդ ձայնավորներով կամ ձայնավորի և բաղաձայնի զանազան զուգորդումներով:

Եթե եղանականիշ վերջամասնիկները հանդես են գալիս միաձույլ կերպով (ֆուզիա), ապա թվի կարգը ձևական որոշակի տարբերակվածություն ունի (-ք-ի կամ -ն-ի առկայությունը վերջնային դիրքում հոգնակիության նշան է):

Գրաբարի խոնարհման ոլորտի դիմային վերջավորությունների դիրքային տարբերակների ընդհանուր պատկերը տրվում է ստորև բերվող աղյուսակում (աղյուսակ № 18):

Գրաբարի բայը, աշխարհի լեզուների մեծամասնության բայի նման, ունի երեք դիմային եզր (առաջին, երկրորդ և երրորդ), ընդ որում, այստեղ էլ դրսևորվում են դասային որոշ կարգի իմաստների տարբեր հակադրություններ (**անձ–ոչ անձ** հակադրությունը): Եթե առաջին և երկրորդ դեմքերը անձնանիշ դասային խմբի մեջ են մտնում, ապա երրորդ դեմքը անձ–ոչ անձ հակադրության նկատմամբ չեզոք է: Թվի կարգը գրաբարում արտահայտվում է միայն երկու եզրով՝ եզակի–հոգնակի: Դեմքի քերականական կարգն արտահայտվում է հերթագայությամբ՝ **մ/մք, ս/յք, է/ն, –/ն** և այլն:

	ց-ով-ից աց, ե/ա/ց մաս- նիկներին հաջորդելիս		Մնացած դեպքերում			
Ս-ի խումբ	–	–	եմ	իմ	ամ	ում
	ես	իս	ես	իս	աս	ուս
	է	ի	է	ի	այ	ու
	ուք	ուք	եմք	իմք	ամք	ումք
	իք	իք	էք	իք	այք	ուք
	են	ին	են	ին	ան	ուն
Բ-ի խումբ	ի	այ	ի			
	իր	ար	իր			
	–	աւ	ր			
	աք	աք	աք			
	էք	այք	իք			
	ին	ան	ին			

Դասական գրաբարի բայը հարուստ է նաև վերլուծական կազմություններով: Որպես վերլուծական բայաձևերի յուրահատուկ կադապար պետք է նշել՝ անցյալ դերբայ+օժանդակ բայի 3-րդ դեմք+սեռականաձև դերանուն: Նմանօրինակ կառույցներով հատկապես հարուստ են վերլուծական տիպի լեզուները (անգլերեն և այլն):

Ինչպես հոլովման համակարգում գերակշռող ներքին թեքման և մասնիկավորման միջոցների կողքին առաջ են եկել բազմաթիվ նախդրվող ձևեր, որոնք հիմք են հանդիսացել թեքականությունից զարգացման և ոչ թե զարգացում դեպի թեքականությունը (չնայած համակարգն ամբողջությամբ թեքականությամբ է որակում), այդպես էլ խոնարհման համակարգում կարելի է նշել ոչ միայն կցականության ակնհայտ տարրեր (հատկապես՝

ստորադասականի երկրորդ ապառնու ձևերում), այլև վերլուծականության, որի օրինակ կարող է ծառայել վերոհիշյալ կառույցը:

Ձանց առնելով այն որոշակի ընդհանրությունները, որ կան դասական գրաբարի և արդի հայերենի խոնարհման համակարգերում, նշենք մի քանի առանձնահատկություններ.

1. Եթե գրաբարի խոնարհումը կարելի է քննել մնալով մեկ բառի սահմաններում, ապա արդի հայերենինը անհնար է: Դա պայմանավորված է աաջինի համադրականությամբ և վերջինիս՝ գերազանցապես վերլուծականությամբ:

2. Ի տարբերություն արդի հայերենի, որտեղ նախամասնիկավորումը, սահմանական եղանակում իսպառ բացակայելով, մեծ դեր է խաղում մյուս եղանակների կազմավորման ժամանակ (**ալիտի, կ**), գրաբարում ինչ-որ չափով նախամասնիկավորման մասին կարելի է խոսել միայն սահմանականի դեպքում (օր.՝ ետու, ե-բեր):

3. Գրաբարում թվային և դիմային վերջամասնիկներից բացի բառավերջում են կենտրոնացած նաև եղանականիշ մասնիկները, այն դեպքում, երբ արդի հայերենում վերջիններս նախորդում են հիմքին (հմմտ. երկրորդ կետում բերված եղանականիշ մասնիկները):

4. Եթե **ե** լծորդը արդի հայերենում իմաստային առումով չեզոք է, ապա գրաբարում այն քերականական որոշակի իրազեկում է կրում **ի**-ի հետ ունեցած հակադրության շնորհիվ (ներգործական-կրավորական):

5. Ի տարբերություն արդի հայերենի, գրաբարի խոնարհման մասնիկները (խոսքը նախամասնիկների մասին է), թեկուզ երկրորդաբար, արտահայտում են դիմային և թվային իմաստներ:

6. Արդի հայերենի համեմատությամբ գրաբարն աղքատ է նախամասնիկներով:

7. Արդի հայերենի ըղձական և ենթադրական եղանակների փոխարեն գրաբարյան ստորադասականը բնութագրվում է ուղղվածություն-ոչ ուղղվածություն տարբերակիչ հատկանիշով:

8. Ժամանակակից հայերենում, ի տարբերություն գրաբարի, բայական սեռը ինչ-որ չափով ձևականացված է (վ) հակադրության առկայությունը:

9. Արդի հայերենի մեկ հրամայական եղանակի փոխարեն գրաբարում առկա են երկուսը: Այստեղից էլ՝ գրաբարյան երկու հրամայականները հակադրվում են ժամանակային որոշ տարբերություններով:

Գրաբարի և վերոհիշյալ հին լեզուների խոնարհման համակարգերի զուգադրությունից նշենք հետևյալ գծերը.

1. Խոնարհման համակարգի ելակետային ձևերի ընտրության դեպքում կարելի է, ինչպես և կատարվել՝ քերականների կողմից, հիմք ընդունել ներկայի ձևերը:

2. Գրաբարն աչքի է ընկնում միևնույն քերականական ձևով մի շարք քերականական իմաստների արտահայտության հնարավորությամբ, որ պայմանավորված է խոնարհված ձևերի համեմատաբար քիչ տարբերակվածությամբ:

3. Բայական դեմքի առկայության դեպքում, երբ տրամաբանական շեշտ կրելու անհրաժեշտությունը չկա, անձնական դերանունները հանդես են գալիս երկրորդային արժեքով:

4. Դասական գրաբարում, ինչպես նաև հատկապես սլավոնական լեզուներում. կարելի է նշել գործողության տևականու-

թյան, միակատարություն-բազմակատարություն կերպային հակադրության առկայությունը:

5. Ամենուրեք բայն ունի երեք դեմք (առաջին, երկրորդ և երրորդ): Նոր լեզուների (ֆրանսերեն, անգլերեն) համեմատությամբ կարելի է նշել, որ դրանց բայական համակարգերում առկա են վերլուծական կառույցներ, սակայն, ի տարբերություն նշված լեզուների, որտեղ բայը մնում է անփոփոխ և դիմային իմաստն արտահայտվում է դերանվամբ, գրաբարում դեմքի քերականական կարգը դրսևորվում է հերթագայությամբ:

Վերոհիշյալ հին լեզուներում, այնպես էլ հատկապես դասական գրաբարում, բացի մասնիկավորումից ձևաբանական էական դեր են խաղում ձայնավորների և բաղաձայնների հերթագայությունները:

Ձևաբանական կառուցվածքի տիպաբանական քննությունը կարելի է կատարել քանակական, մի շարք մեթոդների օգնությամբ: Մենք դիմել ենք Ջ. Գրինբերգի առաջարկած մեթոդին, հաշվի առնելով, որ մի կողմից մի շարք լեզուների նկատմամբ տվյալ մեթոդի կիրառությունից ստացած տվյալները արդեն կան և կարելի է դրանց զուգադրությամբ որոշակի եզրակացությունների հանգել, մյուս կողմից, որ առավել կարևոր է, այդ մեթոդը որոշ փոփոխություններից հետո ավելի լուրջ արժեք է ներկայացնում: Մեթոդը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու ամենատարբեր տիպի լեզուների կառուցվածքային (կցման, թեքման, բառաբարդման, ածանցման և այլն) բազմաթիվ ընդհանուր գծեր ոչ թե ցաք ու ցրիվ, ինչը հատուկ է բոլոր նախորդ մեթոդներին, այլ նախապես ընտրված մի շարք էական հատկանիշների միջոցով: Մեթոդը կոչվում է քանակական, թեև ամենևին էլ չպետք է

կարծել, թե լեզվի որակն այդտեղ անտեսվում է: Ընդհակառակը, ամեն մի քանակական վերլուծություն մի նպատակ ունի միայն, այն է՝ որակի բացահայտումը: Այլապես քանակական մեթոդի կիրառումը կլինի՝ աննպատակ:

Ջ. Գրինբերգի մեթոդը, որ հիմնված է Լ. Սեպիրի հասկացական դասակարգման վրա, բաղկացած է տասը ցուցիչներից՝ համադրման, կցման, բառաբարդման, թեքման նախածանցման, վերջածանցման, համաձայնության և այլն:

Նշենք, որ Ջ. Գրինբերգի վերցրած ընտրանքի ծավալը (յուրաքանչյուր լեզվի համար ընդամենը 100 բառանոց տեքստ) համարելով անբավարար, վերլուծության ժամանակ հաշվի ենք առել ընտրանքի ծավալի և թույլատրելի հարաբերական սխալի մեծությունները:

Ջ. Գրինբերգի մեթոդի առաջին չափանիշն է՝ M\W (ձևույթների թվի հարաբերությունը բառերի թվին): Հեղինակն այն անվանում է համադրության ցուցիչ, նշելով, որ դրա ամենացածր արժեքը հավասար է 1,00 և երբեք 1,00-ից ցածր չէ, որովհետև յուրաքանչյուր բառ պետք է գոնե մեկ ձևույթ ունենա: Չնայած տեսականորեն բարձրագույն աստիճանը (սահմանը) դժվար է որոշել, սակայն, ինչպես ցույց են տալիս այդ ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները, գործնականում մեկ բառում առկա ձևույթների թիվը չորսից չի անցնում: Այդ առումով, Ջ. Գրինբերգի նշած 3.00 մեծությունը լեզուներում այնքան էլ հաճախ չի հանդիպում:

Եթե առաջին ցուցչի արժեքները վերլուծական լեզուների համար ցածր են, ապա համադրական լեզուների համար ստաց-

վում են բարձր, բազմահամադրական լեզուների համար՝ առավել
ևս:

Կցականության ցուցիչը՝ A/J կցական կառույցների (A) հա-
րաբերություն է ձևային կարերի թվին՝ J: Ձևային կարերի
թիվը, որպես կանոն, մեկով պակաս է ձևայինների ընդհանուր
թվից: A/J-ի բարձր արժեքների դեպքում տվյալ լեզուն համարում
են կցական, հակառակ դեպքում՝ ֆուզիոն: Ինչպես կարելի է
նկատել, համադրության և կցականության ցուցիչները կախված
են իրարից. առաջինի ցածր արժեքների դեպքում երկրորդի՝
կցականության, արժեքները նույնպես ցածր են ստացվում, այն-
պես որ համադրության 1,00 արժեք ունեցող լեզվի կցականու-
թյան ցուցիչը իմաստ չունի որոշել, որովհետև այն ինքնըստինքյան
հավասար է 0/0-ի: Կցականության ցուցչի դեպքում Գրինբերգը
հաշվի չի առել Սեպիրի դասակարգման մեջ հանդես եկող II, III և
IV խմբերի հասկացությունները, մասամբ այն պատճառով, որ
այդպիսով կարելի է խուսափել «տիպաբանական դասակարգ-
ման մեջ չափազանց մեծ բարդություններից», և մասամբ այն
պատճառով, որ նրանց հաշվառումը կապված է նշանակալից
դժվարությունների հետ»²⁰:

Ջ. Գրինբերգի դասակարգման երրորդ չափանիշը Սեպիրի
դասակարգման սխեմայի մեջ առանցքային կետ է՝ բառակազմա-
կան կամ ածանցական (դերիվացիոն) և կոնկրետ վերաբերական
հասկացությունների առկայություն/բացակայությունը: Համոզվե-
լով, որ հասկացությունների դասակարգման վրա հիմնված
սեպիրյան մեկնակետով հնարավոր չէ գիտական անհրաժեշտ

²⁰ Д.ж. Гринберг, նշված աշխ., էջ 76:

ճշտության հասնել, նա ձևույթները դասակարգում է ըստ երեք խմբի արմատական, բառակազմական (ածանցական) և բառափոխական:

Առաջին խմբի ցուցիչը՝ R/W բառաբարդման ցուցիչն է, որտեղ R-ը արմատական ձևույթների թիվն է, իսկ W-ն՝ բառերի: Ջ. Գրինբերգի համար անվիճելի է այն, որ ամեն բառ բաղկացած է առնվազն մեկ արմատական ձևույթից²¹: Եթե բառը բաղկացած է երկու կամ ավելի արմատական ձևույթից, ապա գործ ունենք բառաբարդման հետ: Այդ ցուցչի տեսակետից կարող են լինել երեք տիպի լեզուներ՝ 1. բառաբարդումից ընդհանրապես զուրկ լեզուներ (սուահիլի, էսկիմոսերեն)²², 2. լեզուներ, որոնք մեծապես օգտվում են բառաբարդումից (գերմաներեն և այլն) և 3. լեզուներ, որոնք միջին դիրք են գրավում:

Երկրորդը բառակազմության (ածանցման) ցուցիչն է՝ D/W: Վերջինիս բարձր արժեքների դեպքում տվյալ լեզուն պատկանում է բարդ կամ դերիվացիոն խմբին: Երրորդը բառափոխության ցուցիչն է՝ J/W, որտեղ J-ը բառափոխային ձևույթների թիվն է, իսկ W-ն՝ բառերի:

²¹ Այդպիսի ըմբռնման դեպքում սխալ կլինի բառ ընդունել բացատից բացատ ընկած ամեն մի տարածություն, որովհետև շաղկապները, նախդիրները և այլն բառ չեն համարվի, չնայած անջատ միավորներ են: Հետևաբար, կամ պետք է վերջիններս բառ չհամարել, կամ, որ ավելի ճիշտ է, ընդունել, որ ամեն մի բառ առնվազն մեկ ձևույթից է կազմված, այն էլ՝ գերազանցապես արմատական ձևույթից:

²² Այդ լեզուներում բառաբարդման ցուցիչը հավասար է 1,00, այսինքն՝ մեկ բառ-մեկ ձևույթ: Տվյալներն ըստ Ջ. Գրինբերգի նշված աշխ., էջ 91:

Չնայած արմատի նկատմամբ սպասարկու տարրերի հաջորդականության կարգը, ինչպես նշում է Գրինբերգը, Մեպիրի՝ լեզվի ձևաբանական կառուցվածքի տեսակետից չափազանց կարևոր է, այնուամենայնիվ վերջինս այդ չափանիշը չի մտցրել իր դասակարգման մեջ: Այնինչ դա Գրինբերգի առաջարկած ձևաբանական տիպաբանության չորրորդ չափանիշն է: Ըստ այդմ, նա տարբերակում է՝ 1. նախածանցության ցուցիչ (P/W), որն արտահայտում է նախածանցների թվի հարաբերությունը բառերի թվին, 2. վերջածանցության ցուցիչ (S/W), որն արտահայտում է նախածանցների թվի հարաբերությունը բառերի թվին: Միջածանցության ցուցիչը նա չի ընդունում, հաշվի առնելով, որ լեզուներում այն հանդես է գալիս հազվադեպ:

Ջ. Գրինբերգի դասակարգման վերջին չափանիշը վերաբերում է բառերի միջև եղած կապակցման միջոցներին: Այդ առթիվ սովորաբար զանազանում են երեք կարգի հնարավորություն՝ բառափոխություն առանց համաձայնության, համաձայնություն, բառերի նշանակիր կարգ կամ դասավորություն: Վերջինս Գրինբերգը սահմանափակում է այնպիսի դեպքերով, երբ տարրերի որոշակի հաջորդականությունը կամընտրային չէ, այսինքն՝ հաջորդականության խախտումը կառույցի նշանակության փոփոխություն է առաջացնում: Բացի այդ, բառափոխական ձևույթների բացակայությունը հիմք է ծառայում այն բանին, որ այդպիսի բառերի միջև եղած կապը իրագործվի բառերի ունեցած հաջորդականությամբ:

Այսպիսով, վերջին չափանշի երեք ցուցիչներն են.

1. Անջատականության առաջին ցուցիչը՝ O/N, որտեղ O-ն հաջորդականությունն է, իսկ N-ը (некыс)՝ նախադասության մեջ

բառերի միջև եղած հարաբերությունների ցուցման այս կամ այն սկզբունքի կիրառման յուրաքանչյուր դեպքը:

2. Pi/N մաքուր ձևով բառափոխության ցուցիչն է, որտեղ Pi-ն մաքուր բառափոխությունն է (pure inflection): 3. Co/N-ն համաձայնության ցուցիչն է:

Անհրաժեշտ է նշել որ վերջին չափանիշով Գրիներգը խառնում է շարահյուսական և ձևաբանական մակարդակները: Քանի որ նրա դասակարգումը անվանված է **ձևաբանական տիպաբանություն**, ուստի բառերի կարգի կամ հաջորդականության մասին խոսելը ձևաբանական դասակարգման շրջանակներից դուրս է:

Ստորև տրվում են այն հիմնական սկզբունքները, որոնք հաշվի են առնվել վիճակագրական քննության ժամանակ:

1. Կառուցվածքային լեզվաբանության մեջ (հատկապես մենքենական թարգմանության դեպքում, երբ գործ են ունենում գրավոր տեքստերի հետ) սովորաբար բառ է դիտվում երկու բացատների միջև ընկած ամեն մի հատված: Գրաբարի համար տվյալ սկզբունքը խոցելի է, որովհետև այդ սահմանմամբ միևնույն անփոփոխակի դիրքային տարբերակներից մեկը (**ի**-ն) առանձին բառ պետք է դիտել, մյուսը (**յ**-ն)՝ ոչ: Հաշվի առնելով այդ և նմանօրինակ երևույթները (մի քանի նախդիրների հաջորդականություն՝ **առ ի** և այլն, որի դեպքում ստիպված պետք է նախդիրներից յուրաքանչյուրն առանձին բառ համարել), նպատակահարմար է բառ դիտել ինքնուրույն գործածությամբ օժտված ձևովյթը կամ ձևույթների անքակտելի (անխոցելի) միասնությունը:

2. Սույն ձևույթային վերլուծությունը, ինչպես նշվել է, կատարվել է դասական գրաբարի համաժամանակյա կտրվածքով,

ըստ այդմ ծագումնաբանական տվյալները հաշվի չեն առնվել: Այստեղից էլ՝ **եթե, ոչ** և այլ ձևերի մեջ, **ե, ո** մասնիկները չեն առանձնացվել:

3. Օժանդակ բայաձևերի ներսում ձևույթային տրոհում չի կատարվել՝ հաշվի առնելով վերջիններիս իմաստային անտրոհելիությունը:

4. Ստորադասական առաջին ապառնու ձևերում (-իցեմ, -իցես, -իցե) դիմային **-եմ, -ես, -է** վերջավորություններից **-ից**-ը առանձնացվել է, հաշվի առնելով վերջինիս արտահայտած ապառնիության իմաստը:

5. Հոդակապն առանձին միավոր չի ընդունվել. բարդության դեպքում այն դիտվել է որպես ներույթ, և որովհետև Գրիներգի ցուցիչների մեջ համապատասխան արժեքը (ներույթի ցուցիչը) բացակայում է, դուրս է թողնվել: Վերջածանցներից առաջ հոդակապը միացվել է վերջիններիս (օր.՝ **թագ-ա+ւոր**):

6. Բարդ է դերանունների (հատկապես անձնական) ձևույթային տրոհման խնդիրը: Եթե **մենջ, ձենջ** ձևերի մեջ այս կամ այն կերպ կարելի է տարբերակել երկու մաս՝ մե-նջ, ձե-նջ, ապա ավելի դժվար է որոշել **քեզ, քէն, քեւ** դերանունների ձևույթների թվի հարցը: Նշված ձևերում երկու ձևույթ է ընդունվել, ինչպես որ **նմին, նմա** ձևերի մեջ՝ երեք ձևույթ՝ ն-մ-ին, ն-մ-ա: Համեմատաբար հեշտ են առանձնացվում **ուրեմն, ումեմն** ձևերի մեջ **ուր, ում** մասնիկները:

Հատվածները վերցվել են մեր դասական շրջանի մատենագիրներից, Հին և Նոր Կտակարաններից, դասական շրջանի թարգմանական գործերից: Աշխատել ենք քննության մեջ ներա-

ռել հնարավորին չափ տարբեր ոճի և սեռի տեքստեր (փիլիսոփայական, պատմական և այլն): Դրանք են.

1. Ագաթանգեղոս, Վարք և պատմություն սրբոյն Գրիգորի՝ «Ընդ նուագել ժամանակաց թագաւորութեանն Պարթևաց...» մինչև «...պաշտամանց տեղիսն մեծարէր»:

2. Վարք Մաշտոցի՝ «Առն զոր նախակարգ բանիսն...» մինչև «...ի մտի արկանէր և ասէր հոգալով» և «Ապա յետ այնորիկ առանոյր թուղթս յեպիսկոպոսէ» մինչև «...յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և հայրապետին»:

3. Եզնիկ, Եղծ աղանդոց, գիրք երկրորդ, գլուխ Թ և Ժ:

4. Փաւստոս Բուզանդ՝ «Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ...» մինչև «...ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես» և «Իսկ զպատանեակն Գնել առնուին գնացին...» մինչև «...անդէն զՏիրիթն սպանանէին»:

5. Հատվածներ բանահյուսությունից (Հ. Աճառյանի «Գրաբարի ուսուցիչ» գրքի «Ծաղկաքաղ» բաժնում եղած հատվածները):

6. Աւետարան ըստ Ղուկասու, գլուխ ԺԸ:

7. Գործք առաքելոց, գլուխ ԻԳ:

8. Առակք Սողոմոնի, գլուխ Ա:

9. Երգ երգոց, գլուխ Գ:

10. Բ. Կեսարացի, Վեցօրիայք՝ «Բարի և գեղեցիկ է ծով» մինչև «...ելանեն ի նա ճառագայթիւք արեգական յառնույ», «Մեծութիւն արեգական»՝ լրիվ (բերվում է ըստ Հ. Աճառյանի վերոհիշյալ ձեռնարկի):

Վերլուծության արդյունքները տրվում են № 19 աղյուսակում:

Ինչպես երևում է աղյուսակից, համադրման ամենաբարձր ցուցիչը Կորյունինն է՝ 2,27 տոկոս, ապա Ագաթանգեղոսինը՝ 2,13 տոկոս: Ագաթանգեղոսի և Կորյունի համապատասխան ցուցիչները բարձր են ստացվել նաև նույն հեղինակներից ընտրած այլ հատվածների վիճակագրական քննությունից (համապատասխանաբար 2,29 և 2,21 տոկոս)²³: Միջին արժեքից ունեցած զգալի տարբերությունը պայմանավորված է մասամբ նաև նշված հեղինակների ռճական առանձնահատկություններով: Միջին արժեքին համեմատաբար մոտ է Եզնիկից վերցրած հատվածի ցուցիչը 2,12 տոկոս, այն դեպքում, երբ միջին արժեքին բացարձակապես նույնանում է Բուզանդի համապատասխան ցուցիչը (2,08 տոկոս): Անհրաժեշտ է նշել, որ վերջիններիս մյուս ցուցիչները նույնպես գերազանցապես համընկնում են:

Քննած տեքստերի համադրման ցուցչի արժեքների զուգադրությունից պարզվում է, որ Ղուկասի ավետարանի, Գործք առաքելոցի, Սողոմոնի առակների և Երգ երգոցի արժեքների տատանումները աննշան են և ամբողջությամբ համընկնում են բանահյուսության համապատասխան ցուցչի հետ (1,9 տոկոս):

Թեև ընդունվում է ընտրանքի ծավալի և թույլատրելի հարաբերական սխալի մեծությունների իրական արժեքը²⁴ (ինչքան ընտրանքը մեծ է, թույլատրելի հարաբերական սխալը փոքր է, և

²³ Ա. Մարգարյան, նշված հոդվ., էջ 81:

²⁴ Հայտնի է, որ թույլատրելի սխալի մեծությունը (δ -ն) կրկնակի անգամ փոքրացնելու համար անհրաժեշտ է ընտրանքի ծավալը, մեծացնել քառակի չափով: Այդ պատճառով էլ, եթե Ջ. Գրինբերգը ընտրել է 100 բառանոց հատվածներ, ապա սույն վիճակագրական քննության համար վերցվել է քառակի անգամ ավելի:

ընդհակառակը), սակայն աղյուսակից կարելի է մի հետևություն ևս անել, որոշակի սահմանից հետո (տվյալ դեպքում մոտավորապես 400 բառից) ընտրանքի ծավալի մեծացումը հարաբերական սխալի փոփոխություն գրեթե չի առաջացնում մինևս հեղինակի մոտ (այսպես՝ Առակք Սողոմոնի—367 բառ՝ 2,00, Ավետարան ըստ Ղուկասու—497 բառ՝ 1,99, վերջապես, Գործք առաքելոց— 559 բառ՝ 2,00 տոկոս):

Աղյուսակ 19

Հեղինակ	բառերի թիվը	համադր. ցուցիչ	կցական ցուցիչ	բառաբարդ. ցուցիչ	բառակազմ. ցուցիչ	բառափոխ. ցուցիչ	նախածանց. ցուցիչ	վերջածանց. ցուցիչ	նախադրութ. ցուցիչ
Ագաթանգեղոս	488	2,13	0,67	1,06	0,31	0,53	0,01	0,16	0,16
Կորյուն	672	2,27	0,74	1,09	0,37	0,60	0,01	0,17	0,17
Եզնիկ	508	2,12	0,58	1,08	0,27	0,46	0,03	0,13	0,17
Բուզանդ	836	2,08	0,64	1,05	0,25	0,59	0,01	0,14	0,19
Բանահյուսություն	254	1,99	0,64	1,05	0,21	0,52	0,01	0,11	0,20
Ավետարան ըստ Ղուկասու	497	1,99	0,55	1,03	0,24	0,45	0,01	0,12	0,21
Գործք առաքելոց	559	2,00	0,61	1,08	0,24	0,46	0,00	0,10	0,20
Առակք Սողոմոնի	367	2,00	0,61	1,03	0,27	0,48	0,03	0,14	0,22
Երգ երգոց	197	1,99	0,66	1,04	0,20	0,50	0,00	0,09	0,24
Բարսեղ կեսարացի	592	2,17	0,66	1,10	0,26	0,49	0,02	0,16	0,20
Ընդամենը	5000	2,08	0,64	1,06	0,26	0,51	0,01	0,13	0,20

Այսպիսով, դասական գրաբարի համադրման ցուցի արժեքները տատանվում են 2,00-ի շուրջը: Այսինքն՝ ամեն բառ միջին հաշվով երկու ձևությ է պարունակում: Պարզ է, որ այդ

ամենևին էլ չի նշանակում, թե յուրաքանչյուր բառ պետք է երկու ձևությո՝ պարունակի: Կան առանձին բառեր, որոնց ձևությո՞ների թիվը անցնում է յոթից, և շատ ու շատ բառեր, որոնց ձևությո՞ների թվի հարաբերությունը բառերի թվին հավասար է մեկի (այսինքն՝ ամեն բառ մի ձևությո՞ է): Գրաբարում գերակշռում են ձևությո՞/բառերի 3/1 և 2/1 հարաբերությունները:

Կցականության ցուցիչը նպատակահարմար ենք գտել հաշվել Ջ. Գրիմերգի սկզբունքից տարբեր ձևով, քանի որ կցական կառույցներ՝ կարեր հարաբերությամբ ստացված թվային արժեքները կարող են թյուրիմացության մեջ գցել: Ըստ Գրիմերգի սկզբունքի, երկու կցվող ձևությո՞ներից կազմված բառի կցականության ցուցիչը հավասար կլինի $1/2$, այնինչ երեք և ավելի բաղադրիչներով կառույցների առկայության դեպքում համապատասխանաբար՝ $1/3$, $1/4$ և այլն, որոնք ակնհայտորեն ավելի փոքր արժեքներ են, չնայած հենց վերջին դեպքում է, որ կցականության ցուցիչը պետք է բարձր ստացվեր: Այդ պատճառով էլ, ընդունելի է համարվել կցական կառույցներով բառերի թվի հարաբերությունը բառերի ընդհանուր թվին, անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով նաև այն, թե ինչպիսի կցական կառույցներով բառերն են ավելի հաճախական:

Կցականության ցուցչի արժեքներով Կորյունի և Ագաթանգեղոսի համապատասխան հատվածները դարձյալ ամենաբարձր շեղումներն են տալիս՝ 0,74 և 0,67 տոկոս: Դա բնական է, որովհետև, ինչպես նշվել է, վերջինս ուղիղ համեմատական է համադրման ցուցչին և քանի որ այն ամենաբարձրն է, կցականության ցուցիչը նույնպես բարձր է ստացվել:

Եթե Բուզանդի և բանահյուսության համապատասխան ցուցիչները բացարձակապես համընկնում են միջին արժեքին 0,64% (այսինքն՝ 100 բառից 64-ին կցականության հատկանիշը հատուկ է), ապա հատկապես Ղուկասի ավետարանը ամենացածր արժեքն ունի (0,55%): Այդ, ինչպես նաև առհասարակ Աստվածաշնչից վերցրած այլ հատվածների (բացառությամբ Երգ երգոցի), կցականության ցուցչի ցածր արժեքը (0,66%) մեծամասամբ պայմանավորված է դրա ռճական առանձնահատկություններով (օր.՝ և-երի բարձր հաճախականությունը):

Կցականության իրական պատկերը նշված ցուցիչներով դեռևս հնարավոր չէ պարզել, պետք է քննել նաև, թե նշված արժեքների որ մասն են կազմում երկու, երեք և այլ կցական կառույցներով բառերը:

Քննված բոլոր տասը հատվածների վերլուծությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացության, չնայած 0,64 կցականության արժեքը կարծես խոսում է այն մասին, որ կցական կառույցները գրաբարում բավական շատ են, սակայն եթե հաշվի առնենք մի կողմից՝ յուրաքանչյուր կցվող տարրի հիմնականում մեկից ավելի քերականական իրադեկում պարունակելը, մյուս կողմից՝ շատ հաճախ կցականության հատկանիշի ըստ էության ներքին թեքմանն «ուղեկցող» հատկանիշ լինելը (օր.՝ տուն՝ տան-տամ-ք), ապա ակնհայտ կդառնա, որ դասական գրաբարը կցականությունից հիմնականում օգտվում է բառակազմության ոլորտում:

Ընդամին, դասական գրաբարի կցականության մասին կարելի է խոսել վերապահությամբ:

Բառաբարդման արժեքները աննշան տատանումներ են տալիս: Այդ ցուցչի նվազագույն արժեքը Ղուկասի ավետարանին է (1,03%), որ պայմանավորված է ինչպես համադրման, այնպես էլ կցականության ցուցչի (0,55%) ամենացածր արժեքներով: Ընդհակառակը, Կորյունի, Բարսեղ Կեսարացու հատվածների ցուցիչները միջին արժեքից ամենաբարձր շեղումն են տալիս 1,09 և 1,10% դարձյալ պայմանավորված միևնույն լեզվաօրինաչափությամբ:

Գրաբարյան 100 բառին, միջին հաշվով, ընկնում է 1,06 արմատ: Միևնույն արժեքն է ստացվել նաև 1500 բառանոց այլ ընտանիքի վիճակագրական քննությունից:

Բառաբարդման ցուցչի վերաբերյալ կարելի է հետևյալ դիտողությունը ևս անել. թվում է, հայերենի (և ոչ միայն հայերենի) բառաբարդման ցուցիչը շատ ավելի բարձր արժեքներ պետք է ունենար, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր հարյուր բառանոց հատվածում որոշակի տոկոս են կազմում շաղկապները, կապերը և այլն, որոնք լինելով մենաձևությամբ մենարմատ, ազդում են ընդհանուր տոկոսային հարաբերության վրա:

Լեզվակառուցվածքները լեզվի զարգացման ընթացքում փոխվում են: «Հետևաբար,- գրում է Վ. Սկալիչկան,- զարմանալի ոչինչ չկա այն բանում, որ ծագումնաբանորեն ցեղակից լեզուները տարբեր են տիպաբանության տեսակետից, օրինակ՝ ֆրանսերեն, չեխերեն և հայերեն լեզուները»²⁵:

²⁵ **В. Скаличка**, *О современном состоянии типологии*, НЛ, вып. III, М., 1963, էջ 22:

Այդ առումով, հետաքրքիր էր պարզել, թե ինչպիսին կլինի գրաբարից վերցված ընտրանքի և դրանց աշխարհաբար թարգմանության համապատասխան ցուցիչների ընդհանուր պատկերը: Վերցվել են գրաբարի դասական շրջանից Կորյունի Գ և Ե գլուխների, ետդասական շրջանից Եղիշեի երկրորդ գլխի որոշ հատվածներ և համապատասխանաբար դրանց աշխարհաբար թարգմանությունը: Այդ հատվածների համադրման և բառաբարդման ցուցիչների համեմատական տախտակը տրվում է ստորև:

Աղյուսակ 20

		Կորյուն		Եղիշե		Միջինը	
		գրաբ.	աշխարհ.	գրաբ.	աշխարհ.	գրաբ.	աշխարհ.
Համադրում	1	2.28	1,91	2,02	1,84	2,15	1,87
	2	2.14	1,93	1,85	1,66	1,99	1,79
Բառաբարդում	1	1,07	1,03	1,02	1,01	1,05	1,02
	2	1.08	1,09	1,04	1,03	1,06	1,06

Ինչպես կարելի է նկատել աղյուսակից, գրաբարի համադրման ցուցիչների դիմաց աշխարհաբարի համապատասխան ցուցիչները ցածր արժեք ունեն: Եթե համադրման ցուցիչը գրաբարում ստանում է միջին արժեքից ցածր թվային արտահայտություն, ապա նրա աշխարհաբար թարգմանության ցուցիչը ավելի ևս ցածր է ստացվում:

Գրաբարի և աշխարհաբարի համադրման և բառաբարդման ցուցիչների նշված տարբերությունը բացատրվում է հայոց լեզվի կառուցվածքի մեջ կատարված նշանակալից փոփոխությ-

յուններով: Հենց միայն խոնարհման համակարգից բավական է նշել ներկա, անցյալ անկատար ժամանակների գրաբարյան պարզ կազմությունը, որոնք լեզվի հետագա զարգացման ընթացքում վերածվել են բաղադրյալ ժամանակների: Դա հայոց լեզվի՝ համադրականությունից վերլուծականության գնալու ընդհանուր միտումի արտահայտություններից մեկն է: Եթե համադրման տեսակետից գրաբարն իր զարգացման ընթացքում գնացել է դեպի վերլուծականություն, ապա բառաբարդման տեսակետից գրեթե մնացել է անփոփոխ (թե՛ գրաբարում և թե՛ աշխարհաբարում Ա/Բ 1,06%):

Գրաբարում բառափոխության ցուցիչն ավելի բարձր արժեքներ ունի բառակազմության ցուցչի համեմատությամբ (համապատասխանաբար՝ 0,51% և 0,26%): Նշված ցուցիչներից ամենաբարձր շեղումը տալիս է Կորյունի հատվածը (0,37% և 0,60%): Մյուս հատվածների համապատասխան ցուցիչները էական շեղումներ չունեն:

Նախածանցության ցուցիչը գրեթե ամենուրեք միևնույն ցածր (0,01%) արժեքն է ստանում: Դա նկատվել է շատ հայագետների կողմից և հանրահայտ փաստ է, որ հայերենում (առավել ևս՝ դասական գրաբարում) գերակշռում են վերջածանցները: Այդպես էլ ստացվել է քանակական հաշվումներով՝ 0,01 նախածանցության արժեքի դիմաց առկա է 0,13 վերջածանցության միջին ցուցիչը: Միջին արժեքից ամենաբարձր շեղումը Կորյունի, Ագաթանդեղոսի և Բարսեղ Կեսարացու համապատասխան հատվածներին է՝ 17% և 16%, իսկ ամենացածր շեղումը Երզերգոցինը՝ (0,09%): Միջին արժեքի հետ բացարձակ համընկնում է Կորյունինը՝ 0,13%:

Միևնույն համաժամանակյա կտրվածքում քերականական իմաստների արտահայտման համադրական և վերլուծական (ձևաբանական մակարդակի) միջոցների փոխհարաբերության բացահայտման միջոց կարող է ծառայել նախդրության ցուցիչը: Հատկանշական է, որ այդ ցուցչի միջին արժեքից (0,20%) եղած տատանումները չնչին թիվ են կազմում (0,04%): Այստեղ ևս բանահյուսության և Բուզանդի արժեքները համընկնում են միջինին:

Մի շարք հին և նոր լեզուների՝ Գրիներգի մեթոդի կիրառությամբ ստացված քանակական ցուցիչների և դասական գրաբարի համապատասխան տվյալների համեմատական տախտակը տալիս ենք № 21 աղյուսակում²⁶:

Աղյուսակում բերված ցուցիչների գուգադրությունից կարելի է նշել հետևյալը.

1. Եթե համադրման ցուցչի ամենաբարձր արժեքը էսկիմոսերենինն է (3,72%), իսկ ամենացածրը՝ վիետնամերենինը (1,06%), ապա սանսկրիտը, գրաբարը և անգլո-սաքսոներենը միջին դիրք են գրավում:

2. Ինչպես համադրման, այնպես էլ բառաբարդման արժեքներով դասական գրաբարը նշված լեզուների շարքում միջին դիրք է գրավում:

3. Բառակազմության և բառափոխության ցուցիչներով նույնպես դասական գրաբարը գրավում է սանսկրիտի և անգլո-սաքսոներենի միջին դիրքը:

²⁶Բերված տվյալներից մեզ է պատկանում միայն գրաբարին վերաբերող մասը:

4. Եթե նախաձանցության ցուցչով դասական գրաբարը մերձակից է անգլո-սաքսոներենին, ապա վերլուծականության ցուցչով՝ սանսկրիտին:

5. Հաշվի առնելով ստացված տվյալները, Գրինբերգը նշել է մի կողմից անգլո-սաքսոներենի և սանսկրիտի, մյուս կողմից՝ պարսկերենի ու անգլերենի ապշեցուցիչ նմանությունը²⁷, բացի այդ զարգացման այն ընդհանուր ուղղվածությունը, որ կա մի շարք հին հնդեվրոպական լեզուներում սանսկրիտ, անգլո-սաքսոներեն, որոնք արդի լեզվավիճակներով արդեն վերածվել են վերլուծական լեզուների (օրինակ, արդի անգլերենը): Պետք է ասել, որ գրաբարը ևս, ինչպես երևում է աշխարհաբարի հետ համեմատելուց, զարգացման գրեթե նույն ուղին է անցել: Այնուամենայնիվ, ժամանակակից հայոց լեզուն համադրման և բառաբարդման ավելի մեծ արժեքներ ունի, քան ասենք ժամանակակից պարսկերենն ու անգլերենը:

Դասական գրաբարի ձևաբանական կառուցվածքը կարելի է որակել որպես **թեքական**՝ կցականության որոշ տարրերով, իսկ ժամանակակից հայերենինը՝ կցա-թեքական (կցական կառույցներով հարուստ, բայց որոշակի թեքականությամբ օժտված): Միաժամանակ պետք է նշել, որ արդի հայերենը չի կարելի համարել այնպիսի կցական լեզու, ինչպիսին, ասենք, թուրքական լեզուներն են, որովհետև վերջիններիս թեքույթների գերազանցապես մենիմաստությանը արդի հայերենը հակադրվում է

²⁷ **Дж. Гринберг**, նշված աշխ., էջ 93:

մեկ քերականական ձևի միջոցով միաժամանակ մեկից ավելի իմաստներ արտահայտելու հատկանշով:

Աղյուսակ 21

	համադր.	բառաբարդ.	կցական.	բառակազմ.	բառավորվ.	նախածանց	վերջածանց
Սանսկրիտ	2,39	1,13	0,09	0,62	0,84	0,16	1,18
Գրաբար	2,08	1,06	0,64	0,26	0,51	0,01	0,13
Անգլո-սաքսոներեն	2,12	1,00	0,11	9,20	0,90	0,06	1,03
Պարսկերեն	1,52	1,03	0,34	0,10	0,39	0,01	0,49
Անգլերեն	1,68	1,00	0,30	0,15	0,53	0,04	0,64
Յակուտերեն	2,17	1,02	0,51	0,35	0,82	0,00	1,15
Սուահիլի	2,55	1,00	0,67	0,07	0,80	1,16	0,41
Վիետնամերեն	1,06	1,07	–	0,00	0,00	0,00	0,00
Էսկիմուսերեն	3,72	1,00	0,03	1,25	1,75	0,00	2,72
Թամիլ	3,18	1,38	0,22	0,68	1,06	0,03	2,94
Ուլդուրերեն	2,77	1,05	0,99	0,87	0,79	0,01	1,66

Դասական գրաբարի ձևաբանական մակարդակի տիպաբանական քննությունը ի հայտ է բերում հայերենի կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունը ևս. ի տարբերություն անձն կոչված լեզուների (չին-տիբեթական), գրաբարի խոսքի հատույթավորումը չի համընկնում ձևայինների (բառերի) սահմանների հետ: Ձևայինների և վանկերի թիվը ոչ միայն թվապես չի համընկնում, այլև հազվադեպ չէ այն երևույթը, երբ երեք ձևային ընդամենը մեկ վանկ են կազմում (օր.՝ արտ-ի-ւ-ք): Այստեղից էլ, ի

տարբերություն չին-տիբեթական լեզուների, որտեղ ձևային երկարությունը կայուն մեծությամբ է օժտված, դասական գրաբարի (ինչպես նաև արդի հայերենի) ձևային երկարությունը կարելի է պարզել միայն վիճակագրորեն (այն հավասար է 2-3 հնչյոթի):

Եթե նկատի ունենանք, որ թեքական կարող է լինել այն լեզուն, որի բառի վանկատումը ձևաբանական որոշակի նշանակություն չունի (այսինքն՝ ձևայինների և վանկերի սահմանները չեն համընկնում), ապա կարելի է վերստին նշել դասական գրաբարի ձևաբանական կառուցվածքի թեքական բնույթը:

ՇԱՐԱՀԱՅԻՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Լեզուների տիպաբանական մերձակցության բացահայտման հարցում առաջնակարգ դերը հիմնականում ձևաբանությանն է պատկանում, այդուհանդերձ չի կարելի ժխտել սույն հարցում նաև շարահյուսական մակարդակի ունեցած կարևորությունը: Այդ է պատճառը, որ եթե հնչյոթային մակարդակը ավանդական տիպաբանության ուշադրության կենտրոնից գրեթե դուրս է եղել, ապա շարահյուսական մակարդակը բազմիցս ենթարկվել է տիպաբանական քննության²⁸, թեև պետք է նշել, որ շարահյուսա-

²⁸ Եթե զանց առնենք ձևաբանական տիպաբանության հիմքում դրվող որոշակի տիպաբանական հատկանիշները (վերլուծականություն, բազմահամադրականություն և այլն), որոնց մասին խոսվել է սույն աշխատանքի երկրորդ գլխում, բավական է նշել Վ. Շմիդտի «մշակութային շրջանների» մասին ուսմունքը, Մառի և նրա հետևորդների՝ Ի.Բ. Մեջանինովի, Ս.Դ. Կացնեկտնի և այլոց փուլային-շարահյուսական տիպաբանության փորձերը և այլն:

կան դասակարգման քիչ թե շատ ընդունելի տարբերակներ այնուամենայնիվ չեն տրվել:

Լեզվական մակարդակների ստորակարգային կապերը վկայում են, որ ձևաբանական մակարդակի քննությունը ավելի բարդ է հնչույթային մակարդակի քննությունից, ինչպես շարահյուսական մակարդակին՝ ձևաբանականից: Ընդամին պետք է նշել, որ առաջացող դժվարությունները նյութի մեջ «համակարգի իրացման ընթացքում առաջացող ավելի շատ շեղումները» չեն միայն, ինչպես գտնում են տիպաբաններից ոմանք²⁹: Բանն այն է, որ «վերին» մակարդակի միավորները թվապես շատ են, և բնականաբար վերջիններիս իրացման ավելի լայն հնարավորություններ են ստեղծվում, հենց դրանից էլ բխում է, որ շարահյուսական մակարդակում դժվար է գտնել լեզվակառուցվածքային օրենսսահմանչական (կառուցողական) հատկանիշներ:

Մասամբ նշված դժվարությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ շարահյուսական մակարդակի կառուցվածքային-տիպաբանական քննության փորձեր քիչ են արվում:

Կարծելով, որ լեզվի մեկ ամբողջական մակարդակի նկարագրություն տալու դեպքում պետք է հիմնվել ձևաբանության վրա, որովհետև շարահյուսությունը մի շարք ենթամակարդակներ ունի՝ պարզ նախադասություն, նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ և այլն, Ռոժդեստովենսկին եզրակաց-

²⁹ Ю. Рождественский, նշված աշխ., էջ 198:

նում է, որ լեզուների ձևաբանական մակարդակի տիպաբանական քննությունը կարող է լինել միակը³⁰:

Նախ՝ անհրաժեշտ է ձևաբանական մակարդակի վերաբերյալ ասվածի մեջ որոշ ճշտումներ մտցնել. այդ մակարդակի մեջ նույնպես իր հերթին հնարավոր է տարբերակել ձևային, բառային, բառաձևային ենթամակարդակներ և ապա, ելնելով մեկ մակարդակի ներսում ենթամակարդակների գոյությունից, չի կարելի ժխտել շարահյուսական մակարդակի կառուցվածքային-տիպաբանական քննության հնարավորությունն ու անհրաժեշտությունը, հետևաբար միայն ձևաբանական մակարդակը տիպաբանական քննության առարկա համարելը սխալ է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տիպաբանական (ինչպես և առհասարակ յուրաքանչյուր գուգադրական) քննությունից առաջ անհրաժեշտ է ունենալ գուգադրության եզր հանդիսացող լեզուների կառուցվածքային նկարագիրը, պետք է նշել, որ դասական գրաբարի շարահյուսական ոչ միայն ամբողջական քննություն դեռևս հրապարակի վրա չկա, այլև մինչև այժմ (այն էլ գերազանցապես վերջին ժամանակներս) քննության են առնվել շարահյուսական միայն առանձին հարցեր³¹: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում նախքան բուն տիպաբանական քննության անցնելը բացահայտել դասական գրաբարի շարահյուսական մակարդակի գլխավոր միավորի՝ նախադասության կառուցվածքային հիմնական կաղապարները և հետո նոր

³⁰ Նույն տեղում, էջ 198:

³¹ **Մ. Ղազարյանի** «Հայոց գրական լեզվի պատմության» առաջին հատորի (Ե., 1961) համապատասխան բաժինը և այլն:

միայն անցնել ցեղակից և ոչ ցեղակից լեզուների շարահյուսական կառուցվածքների զուգադրություններին:

Պետք է նշել, որ ինչպես հայ, այնպես էլ ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված միջոց է դարձել նախադասության կառուցվածքի ուսումնասիրությունը նրա կազմի մեջ մտնող անդամների խոսքիմասային բոլոր հնարավոր արտահայտությունների թվարկմանը հանգեցնելը³²: Այսպիսով ակնհայտորեն խառնվում են երկու միանգամայն տարբեր մակարդակների (ձևաբանության և շարահյուսության) միավորները: Հայտնի է, որ իր իսկական իմաստով շարահյուսություն կունենանք այն դեպքում, եթե ուսումնասիրենք նախադասության բաղադրիչների շարահյուսական կապերն ու փոխհարաբերությունները:

Նախադասության կաղապարավորման ժամանակ սույն քննության համար ելակետային նվազագույն միավոր է ծառայել ոչ թե բառը (այդ դեպքում կառաջանային բազմաթիվ լրացուցիչ դրժվարություններ)³³, այլ նախադասության միավորը (բաղադրիչը): Չենք ասում՝ անդամը, որովհետև շատ լեզվաբաններ նախադասության անդամ չեն համարում միջարկությունները, կամ, այսպես կոչված, միջանկյալ բառերը,

³² Այդպես է, օրինակ, **Ս. Ղազարյանի** վերոհիշյալ աշխատության մեջ, որտեղ հիմնական ուշադրությունը դարձված է նախադասության անդամների խոսքիմասային արտահայտությունների մատնանշմանը: Նմանօրինակ մոտեցման համար տե՛ս նաև՝ **А.М. Мухин, Структура предложений и их модели, Л., 1968**, էջ 60:

³³ Այսպես՝ հոդերը, նախդիրները, սպասարկու բառերը հանդես կգային որպես նախադասության հավասարաթեք միավորներ (բաղադրիչներ), այնինչ դրանք զուրկ են նախադասության ներքին շարահյուսական կապերից:

որոնք նախադասության միավոր են այնուամենայնիվ: Նախդրավոր հոլովները, բայական բաղադրյալ ժամանակները և այլն ընդունվել են որպես մեկ միավոր (բաղադրիչ):

Նախադասության միավորների առանձնացումը պետք է հստակորեն տարբերել տվյալ նախադասության բառերի առանձնացումից, րնդ սմին, նախադասության կառուցվածքի մեջ առկա շարահյուսական կապերի, միավորների թիվը բառերի թվի հետ հաճախ չի էլ համընկնում:

Դասական գրաբարի նախադասության կառուցվածքային կաղապարների նկարագրության ժամանակ հենվել ենք Ա. Մուխինի մեթոդի³⁴ վրա, չնայած մեր կողմից անհրաժեշտ ենք գտել որոշակի փոփոխություններ մտցնել: Այսպես՝ Մուխինի կաղապարներում ենթական և ստորոգյալը հատուկ նշաններով չեն տարբերակվում, այնինչ անհրաժեշտ է վերջիններս հստակորեն տարբերակել կաղապարի մեջ, ինչպես արվել է մեր կողմից, այլպես ստացվում է, որ **Յիսուս ասաց** և **Պատասխանի ետ Յիսուս** նախադասությունների կաղապարները Մուխինի մոտեցմամբ նույն տեսքն են ստանում:

Կիրառված մեթոդն ունի այն առավելությունը, որ կառուցվող կաղապարներում նախադասության միավորների իրական հաջորդականությունը չի խախտվում, այնպես որ լրացուցիչ թվանշաններով համարակալելու անհրաժեշտություն չկա: Պարզելու համար, թե ինչպիսի երևույթի հետ գործ ունենք՝ նախադասության ինքնուրույն միավորի, թե՝ ոչ, կիրառել ենք սահմանափակման կամ ծավալման սկզբունքը: Այսպես՝ որոշելու հա-

³⁴ Նույն տեղում:

մար, թե քանի միավոր կա **Երթ վաղվաղակի ի տուն** նախադասության մեջ, դիմենք սահմանափակման միջոցին՝ **երթ վաղվաղակի ի տուն, երթ վաղվաղակի, երթ**:

Ներկա աշխատանքում ուշադրության են առնվել դասական գրաբարի նախադասության կառուցվածքային կապակցական (junctio) կաղապարները: Կաղապարներում շարահյուսական կապերը հստակորեն տարբերակելու համար ընդունվել են հետևյալ նշանակումները՝ ստորոգելիական (պրեդիկատիվ) կապը տրված է երկու սլաքավոր գծիկով, ստորադասական կապը (սուբորդինատիվ)՝ մեկ սլաքավոր գծիկով, ընդ որում, սլաքի ուղղությունը միաժամանակ ցույց է տալիս միավորի (բաղադրիչի) ստորադասման ուղղությունը (թե որ միավորին է նա ստորադասվում): Դադար ունեցող գծիկով տրված է գեղչված միավորի հարաբերությունը:

Ինչպես կարելի է տեսնել, զուգա-ստորոգելիական (սոցիատիվ-պրեդիկատիվ) կապի առկայության համար անհրաժեշտ է առնվազն երկու միավոր՝ ենթակա և ստորոգյալ, որոնք հավասարապես ենթադրում են մեկը մյուսի առկայությունը: Ընդ որում, հենց միայն այդ երկուսի առկայությունը բավական է նախադասության կաղապար կառուցելու համար, տվյալ բաղադրիչները մտնում են նախադասության կառուցվածքային հիմքի մեջ, հետևաբար, միջուկային միավորներ են կամ միջուկներ: Մնացած բոլոր միավորները նախադասության կառուցվածքային հիմքի մեջ չեն մտնում և կոչվում են ոչ միջուկային միավորներ: Նշանակում է, զուգա-ստորոգելիական կապով նախադասությունները երկու միջուկ են պարունակում, հետևաբար, երկմիջուկ նախադասություններ են: Ինչպես խոնարհված բայի առկայությունը

նախադասության ձևական հատկանիշ է, այնպես էլ խոնարհված բայով իրագործված գուգա-ստորոգելիական կապի առկայությունը նախադասության առկայության ցուցիչ է, բայց ոչ պարտադիր ցուցիչ, որովհետև գրեթե բոլոր լեզուներում կան նաև գուգա-ստորոգելիական զրո կապով նախադասություններ:

Դասական գրաբարում ենթական ձևական ցուցիչ չունի (արդի հայերենի և ընդհանրապես հնդեվրոպական նորագույն լեզուների ենթակայի ձևական ցուցիչը ուղղական հոլովն է) և հաճախ կարող է գրվել սեռականով, տրականով և այլն: Ինչպես չենք կարող ասել, թե ենթակայի պարտադիր հատկանիշը ուղղական հոլովն է, այդպես էլ չենք կարող ասել, թե բայի դիմավոր ձևը ստորոգյալի ձևական ցուցիչն է, քանի որ վերջինս հայերենում միշտ չէ, որ արտահայտվում է դիմավոր բայով: Այնուամենայնիվ, այնտեղ, որտեղ կա դիմավոր բայ, կա նաև նախադասություն, նշանակում է, վերջենիս համար դիմավոր բայը ձևական ցուցիչ է:

Անցնելով շարահյուսական տարբեր կապերով նախադասությունների կաղապարների քննությանը կարելի է ասել հետևյալը: Կաղապարի մեջ մտնող միավորների թվի ավելացմանը զուգընթաց ավելանում է նաև ենթակաղապարների թիվը, որոնց տարբերությունները հանգեցվում են ինչպես տարբեր շարահյուսական հարաբերությունների առկայությանը, այնպես էլ, միևնույն շարահյուսական հարաբերությունների դեպքում, շարահյուսական կապերի տարբեր ուղղությունների առկայությանը:

Կարելի է տարբերակել շարահյուսական կապերի հետևյալ տիպերը՝ զրո-ստորոգելիական, գուգա-ստորոգելիական, ստո-

րադասական (սուբորդինատիվ), համադասական (կոորդինատիվ) և այլն: Համադասական կապ կա համասեռ միավորներով նախադասության մեջ: Ի տարբերություն մյուս շարահյուսական կապերի, համադասական կապը սովորաբար իր ձևական դրսևորումն է ստանում շաղկապների միջոցով: Գրեթե ամենուրեք վերջիններս դասակարգվում են երեք մեծ խմբի՝ կապակցական շաղկապներ (**և, ու**), հակադրական շաղկապներ (**բայց, իսկ**), անջատական շաղկապներ (**կամ**): Շաղկապների համեմատությամբ, համադասական կապի դեպքում դադարը կամ ելևէջավորումը երկրորդական դեր են խաղում:

Զրո-ստորոգելիական կապով նախադասություններ են կոչվում այնպիսիք, որտեղ նախադասության միջուկային միավորը երկկողմանի կապով օժտված չէ: Այդ պատճառով էլ կադապարներում այդպիսի կապը տրվում է գույգ գծով՝ առանց սլաքների: Եթե գուգա-ստորոգելիական կապով նախադասությունները այլ կերպ կարելի է կոչել նաև երկմիջուկ, ապա զրո-ստորոգելիական կապով նախադասությունները կկոչվեն երկմիջուկ կամ մենամիջուկ³⁵: Երկմիջուկ և մենամիջուկ նախադասությունները կարող են լինել ինչպես ընդարձակ, այնպես էլ՝ ոչ ընդարձակ:

³⁵ Ճիշտ է, երկմիջուկ և մենամիջուկ նախադասությունների դասակարգումը կարծես թե համընկնում է նախադասությունների ըստ միակազմ և երկկազմ տիպերի դասակարգման հետ, բայց նշված դասակարգումների միջև էական տարբերություններ կան: Այսպես՝ միակազմ-երկկազմ նախադասությունների դասակարգման ժամանակ չի լուծվում, այսպես կոչված, միջանկյալ բառերի (բառակապակցությունների) հարցը և այլն:

Եթե զրո-ստորոգելիական կապը դրսևորվում է միադիմի և անդեմ բայերով, անվանական նախադասություններով և այլն, ապա ներդրական (ինտրոդուկտիվ) կապը՝ միջարկություններով, ձայնարկություններով, կոչական բառերով, հրամայականի ձևերով և այլն: Ի տարբերություն ստորադասական կապի, որը նախադասության մեկ միավորը ստորադասում է մյուսին, ներդրական կապը տվյալ բաղադրիչը որևէ մեկ առանձին վերցրած միավորի չի ստորադասում, այլ ամբողջ նախադասությանը: Նախադասության կառուցվածքային կաղապարներում ներդրական կապը նշանակվում է դեպի ներքև ուղղված սլաքով:

Շարահյուսական կապի տեսակետից, այսպես կոչված, միջանկյալ բառերը կարող են կամ պատկանել նախադասությանն ամբողջությամբ կամ նրա միայն մեկ միավորին: Առաջին դեպքում կունենանք ներդրական կապ, երկրորդ դեպքում՝ ստորադասական: Նշանակում է, միննույն **միջանկյալ բառ** տերմինի տակ թաքնված են տարբեր շարահյուսական երևույթներ:

Այսպիսով, նախադասության կառուցվածքային հիմքն են կազմում զուգա-ստորոգելիական և զրո-ստորոգելիական կապերով նախադասությունները, իսկ ստորադասական, ներդրական և համադրական կապերը նախադասության համար պարտադիր հատկանիշ չեն:

Անհրաժեշտ է տարբերակել նաև, այսպես կոչված, լրիվ և թերի (էլիպտիկ) նախադասություններ: Թերի պետք է կոչել այն նախադասությունները, որոնցում բացակայում է թեկուզ և ոչ միջուկային բաղադրիչը: Կառուցվածքային կաղապարներում բացակայող բաղադրիչները տրվում են կետագծով, տարբերակվելու համար առկա բաղադրիչներից:

Բերված պատկերից երևում է, որ դասական գրաբարում ամենից ավելի տարածված են զուգա-ստորոգելիական կապ պարունակող կաղապարները: Գրաբարում առկա են շարահյուսական կապի գրեթե բոլոր տիպերը զուգա-ստորոգելիական, զրո-ստորոգելիական, համադասական, ստորադասական և այլն:

Զուգա-ստորոգելիական և զրո-ստորոգելիական կապերը հակադրական հարաբերության մեջ են գտնվում, նրանցից մեկն ու մեկի առկայությունը մյուսի բացառման ցուցիչ է:

Հեշտ է նկատել, որ նշված շարահյուսական հարաբերություններն ընդհանուր են ոչ միայն ցեղակից, այլև ոչ ցեղակից և տարբեր քերականական կառուցվածք ունեցող լեզուների համար: Այդտեղից էլ, բնականաբար, դժվար է գտնել այնպիսի շարահյուսական հատկանիշներ, որոնք լինեն էական և դրվեն տիպաբանական դասակարգման հիմքում:


Ձանց առնելով այն որոշակի ընդհանրությունները, որ կան դասական գրաբարի և արդի հայերենի շարահյուսական կառուցվածքների միջև, կարելի է նշել հետևյալը.

1. Արդի հայերենում, ի տարբերություն գրաբարի, անկախ խոնարհված բայ-ստորոգյալի առկայության ենթական գրեթե միշտ արտահայտվում է: Նշանակում է, գրաբարի համեմատությամբ ժամանակակից հայոց լեզվում ավելցուկությունն ավելի մեծ է:

2. Այլ դեպքերում պետք է խոսել գրաբարի համեմատաբար մեծ ավելցուկության մասին: Հիշատակելի է հատկապես անվանական կապակցությունների բոլոր միավորների թեքման բնույթը, որ չկա արդի հայերենում (որոշիչների, հատկացուցիչների, բացահայտիչների հոլովվելը ավելուրդային նշան է):


Զուգա-ստորոգելիական նախադասությունների կադապարներ

1




Պատասխանի ետ Յիսուս

2




Յիսուս ասաց

3




Թզենի արձակեաց բողբոջ

4




Թզենի արձակեաց բողբոջ իւր

5









Թզենի արձակեաց իւր բողբոջ

6




Սպա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր







Որմիզդ և Արիմն յղացան յարգանդի մոր իւրեանց




Յոտն եկաց արքայն և դատաւորն և Բերենիկ և որք ընդ նորայն նստէին




Ճշմարտութիւն կայ և մնայ և գորաւոր է յավիտեան




Եւ նա չղելոյն և չծնելոյն անուն դնէր




Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ի դպրոցն և ի փարիսեցոց




Եւ արար Տէր Աստուած Ադամայ և կնոջ նորա հանդերձս մաղղեղենս




Ջուր՝ սերման ոչ պահիչ է, այլ կորուսիչ




Պատճառ չարեաց նոյն է, և ոչ Արիմն




Յոհան յարուցեալ ողջնցեալ՝ յախտեն



Տրդատ մատուցեալ աղաչէր չսուրբն Գրիգորիս



Յաւուր այնմիկ ելեալ Յիսուս ի տանէն՝ նստէր առ ծովեզերքն





Եւ այն կամ ի շատ ուտելոյ և ըմպելոյ լինի, կամ ի սաստիկ պահոց, կամ յանխտիր կերակրոց, կամ յոյժ ի տոթի աշխատելոյ, կամ կարի ի ցրտոյ լլկելոյ, կամ յայլոյ ինչ այնպիսեաց հակառակորդաց


Զրո-ստորոգելական կապով նախադասությունների կաղապարներ


25


 Թուի





26

 Սկսաւ տարածամել

27

 Հաճոյ թուչի



28

 Ճանաչել զիմաստութիւն և զխրատ

29

 Ահաւասիկ կաս գեղեցիկ



30

 Դարձեալ, միևս ևս իմն ասեն





Կարող եմք (կարեք ըմպել զբաժակն զոր ըմպելոց եմ, կամ զմկրտութիւն զոր ես մկրտելոցն եմ մկրտիչ, ասեն ցնա. *կարող եմք*)




Ամենայն Իսրայել զբանս այլազգւոյն (Ամենայն Իսրայել լուալ զբանս այլազգւոյն)




բանք են ինձ ընդ քեզ



և էր ժամանակն զայգիսն յատելոյ



բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս նորա
երկաթս և խաղաղացուցանել զնա ի յԱնդիշն



Այդ կապակցությամբ հետաքրքիր զուգադրություն է կատարել Հ. Աճառյանը. «Գրաբարում ասում ենք՝

Ի վերայ պարսպացն այնոցիկ մեծաց, բարձանց և հաստատնոց

a	b	c	d	e
Սշխարհաբարը նույնը լինում է՝				
bc	d	e	a	

Այն մեծ, բարձր ու հաստատուն պարիսպների վրա հոգնակի սեռականի վերջավորությունը դնելով, առաջինը լինում է $ax+bx+cx+dx+ex$, իսկ երկրորդը՝ $(a+b+c+d+e)x$, որ ներկայացնում է առաջին բանաձևի պարզեցրած ձևը»³⁶:

Ինչպես տեսնում ենք, իրոք, արդի հայերենի շարահյուսական կառուցվածքի մեջ որոշ պարզություն է մտցվել: Վերջինս պայմանավորված է ամենից առաջ շարահյուսական միավորների հաջորդականության կարգի վերադասավորությամբ, որի մասին հատուկ կխոսվի քիչ հետո:

3. Գրաբարի անգամ պարզ նախադասության շարահյուսական կապերի բացահայտումը հաճախ որոշակի դժվարությունների հետ է կապված (այդ մասամբ պայմանավորված է անվանական կապակցությունների բոլոր անդամների համաձայնությամբ), որ բխում է առաջացող երկդիմությունից:

4. Թեև դասական գրաբարի շարահյուսական խմբերի առանձնահատկություններից է համարվում իմաստային առումով

³⁶ Հ. Աճառյան, նշված աշխ., էջ 306:

կապված միավորների՝ այլ միավորներով ընդմիջարկվելու լայն հնարավորությունը, սակայն վերջինս որոշակիորեն պահպանվել է նաև արդի հայերենում: Անհրաժեշտ է նշել նաև հետևյալ իրողությունը:

Գրաբարում դա կարող է այն աստիճանի հասնել, որ առաջանա որոշ կարգի ձևական ցուցիչների առկայության անհրաժեշտություն (փայլուն օրինակ կարող է ծառայել Եզնիկից բերվող հետևյալ նախադասությունը՝ «Զօդոյն որ ցայգ ի խոնավութենէ՝ ջուրց՝ հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ շքեցուցանէ ի բաց գտամկութիւնն», որտեղ անհրաժեշտություն է առաջացել հատկացալի նախդրի կրկնության):

Շարահյուսական մակարդակում կառուցվածքային տիպաբանության խնդիրն է պարզել, թե տարբեր կառուցվածքի լեզուներում շարահյուսական միավորների հաջորդականության կարգի փոփոխությունը իմաստային և գործառական ինչպիսի փոփոխություններ է առաջացնում:

Տարբերելով բառերի գծային հաջորդականությունը նախադասության միավորների միջև եղած կառուցվածքաշարահյուսական հարաբերություններից, պետք է ասել, որ գծային հաջորդականության փոփոխությունը (որոշիչ-որոշյալի կամ ենթակաստորոգյալի հաջորդականության փոփոխությունը) սովորաբար նախադասության միավորների շարահյուսական հարաբերությունների փոփոխություն է առաջացնում այնպիսի լեզուներում, որոնք թեքման (հոլովման և խոնարհման) հարուստ հնարավորություններ չունեն (օրինակ, անգլերենում): Այդ առումով, թեև դասական գրաբարում նախադասության միավորների գծային հաջորդականության փոփոխությունը շարահյուսական հարաբե-

րությունների փոփոխություն չի առաջացնում, այնուամենայնիվ, շարահյուսական կառուցվածքին ինչ-որ չափով բնորոշ է ենթակա-ստորոգյալ-խնդիր հաջորդականությունը:

Նախադասության միավորների հաջորդականության կարգի տիպաբանական ուսումնասիրությունը սկսել ենք նախադասությունից փոքր միավորից՝ կապակցությունից: Անհրաժեշտ է նշել, որ միայն շարահյուսական կապակցությունների ուսումնասիրությամբ բավարարվելը կլիներ միակողմանի և անբավարար այն առումով, որ այդ դեպքում տեսադաշտից դուրս կմնային շարահյուսական շատ հարաբերություններ, որոնք դրսևորվում են նախադասությունների, որպես ամբողջական միավորների, հաշվառման դեպքում:

Շարահյուսական նվազ կապակցելիությամբ օժտված միավորները դիրքի տեսակետից համեմատաբար շարժունակ են, ուստի դրանց դիրքափոխությունը քերականական գործառություն չի կատարում: Օրինակ, որոշիչ-որոշյալի շարադասությունը, որն ավելի ազատ է, քան նախադասության այլ միավորների հաջորդականությունը:

Հայերենագիտության մեջ ընդունված է, որ ինչպես որոշիչ-որոշյալի, այնպես էլ հատկացուցիչ-հատկացյալի համար կանոնականը առաջինների ետադաս կիրառությունն է: Այնուամենայնիվ, այնքան շատ են կանոնականից շեղումները (որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ հաջորդականության դեպքերը), որ անհրաժեշտություն է առաջանում խնդիրը մանրամասն վիճակագրական քննության ենթարկել: Այդպիսի մի քննություն վեր-

ջերս կատարել է Հ. Ավետիսյանը³⁷: Նա վիճակագրության է ենթարկել որոշիչների և որոշյալների նախադաս և ետադաս գործածության դեպքերը և եկել այն եզրակացության, որ սխալ է որոշիչների ետադաս կիրառությունը կանոնական համարելը: Պետք է նշել, սակայն, որ Ավետիսյանի աշխատությունը նվիրված չէ գրաբարի որևէ մեկ հստակ ժամանակահատվածի համաժամանակյա քննությանը, որի հետևանքով թե՛ դասական, թե՛ ետդասական և թե՛ նախամիջին շրջանների համար ստացված վիճակագրական տվյալները մինևնույն մակարդակի վրա են դրվում: Թվում է, ավելի ճիշտ է Ա. Այտընյանը, որն իր «Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ ետադաս գործածությունը բնորոշ է համարում գրավոր լեզվին, իսկ նախադաս գործածությունը՝ խոսակցական լեզվին:

Քննությունից պարզվում է, որ շարահյուսական նվազ կապակցելիությամբ օժտված միավորները (որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը) ունեն դիրքափոխության ավելի լայն հնարավորություններ և շարժունակ են: Ընդհանրապես խիստ կայուն, բացարձակապես հաստատուն շարադասության դեպքում հնարավոր չէր լինի խոսել ոճական շերտերի մասին: Պետք է նշել նաև, որ վերլուծականությամբ հարուստ լեզուները, որոնք աչքի են ընկնում կայուն շարադասությամբ, այնուամենայնիվ որոշակի ոճական շերտեր ունեն (օրինակ՝ ֆրանսերենը):

Լեզվաբանության մեջ ընդունված է, որ լեզվի վերլուծակա-
նության ցուցիչ կարող է ծառայել հոդի առկայությունը: «Վերլու-

³⁷ Հ. Ավետիսյան, *Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում*, թեկն. ատեն. սեղմագիր, Ե., 1969:

ծական կառուցվածքները տարբեր տիպի լեզուներում» ժողովածուի մեջ կարդում ենք. «Հանրահայտ է, որ ընդունված է լեզվի վերլուծական կառուցվածքի յուրահասկություններից մեկը համարել նրա մեջ հոդի առկայությունը: **Հին հունարենի և հայոց լեզվի ուսումնասիրությունը համաժամանակյա հայեցակետով** հետազոտողին կարող է բերել այն եզրակացության, որ այդ **լեզուները վերլուծական են**, իրականում հին հունարենը և հայերենը հանդիսանում են բարձր զարգացած թեքական կառուցվածքի լեզուների ներկայացուցիչներ, թեև նրանցում համադրության (սինթեզի) հետ միասին տեղ ունեն նաև արտահայտության վերլուծական միջոցները» (ընդգ. մերն է–Ա.Ս.)³⁸:

Անհրաժեշտ է նկատել, որ այստեղ համաժամանակյա քննության հնարավորությունների նկատմամբ առկա է միանգամայն սխալ պատկերացում: Համաժամանակյա հայեցակետով նույնպես (եթե չասենք՝ համաժամանակյա քննությամբ) կարելի է ոչ միայն պարզել թեքականության և կցականության, համադրականության և վերլուծականության տարրերը, այլև նրանց համամասնական հարաբերությունները, գործառական ոլորտները և այլն: Բացի այդ, միննույն մակարդակի վրա են դրված ձևաբանական տարբեր բնույթի միավորներ. հունարենում հոդը անկախ գործածություն ունի և ենթակա է թեքման (դասական լեզուներում անգամ առանձին խոսքի մաս է դիտվում), այնինչ հայերենում հոդը մասնիկ է և գերազանցապես կցվող տարր, գուրկ դադարից և այլն: Այնպես որ հայերենում հոդի առկայու-

³⁸ *Аналитические конструкции в языках различных типов*, М., 1966, էջ 146:

յունը հոգուտ վերլուծական տիպի չի կարող խոսել, որովհետև հատկանիշների հաշվառման ժամանակ հողի առկայությամբ կամ բացակայությամբ չէ, որ պետք է պարզել լեզվի կառուցվածքային տիպը: Այնուհետև հայտնի է, որ «մաքուր» թեքական և կցական, «մաքուր» համադրական և վերլուծական տիպի լեզուներ չեն կարող լինել: Այստեղից էլ, բնականաբար, հարաբերակցային քննության անհրաժեշտությունը, որն ակըն-հայտորեն ցանկալի է կատարել համաժամանակյա կտրվածքով:

Ենթակա-ստորոգյալ շարադասությունը կարելի է ներկա-յացնել SV ձևով: Այսինքն ենթական դրվում է ստորոգյալից առաջ (օր.՝ Յիսուս ասաց), սակայն հարցական նախադասություն-ներում դրանց հաջորդականությունը սովորաբար փոխվում է՝ ստորոգյալ-ենթակա:

Ետադաս ենթակայով նախադասությունների մեջ այդպիսի շարադասությունը միշտ չէ, որ ոճական կամ քերականական հաստատուն և որոշակի գործառություն է կատարում: Ենթակա-ստորոգյալ հաջորդականության վափոխությունը երբեմն պայ-մանավորված է անանցողական բայի որպես ստորոգյալ կիրա-րությամբ, նախադասության սկզբնային դիրքում դրվելու հան-գամանքով: Ընդհանրապես կարելի է ասել, որ երբ նախադա-սությունը սկսվում է ստորոգյալի լրացումներով (պարագաներ և խնդիրներ), անկախ այն բանից, նախադասությունը հարցական է, թե ոչ, ստեղծվում է շրջուն շարադասության հնարավորու-թյուն: Դա պայմանավորված է նրանով, որ, ինչպես նշվել է, նա-խադասության միջուկների ներսում ամբողջական միջուկների համեմատությամբ շարադասությունը ավելի կայուն է, այդտեղից

էլ որպէսզի պարագան չընդմիջարկվի մյուս միջուկի բաղադրիչով, նրան հաջորդում է ստորոգյալը:

Պետք է կարծել, որ, իրոք, լեզուներում ընդունված երևույթ է ավելի քիչ միավորներից բաղկացած միջուկային խմբի սկզբնային կամ միջակա, բայց ոչ վերջնային դիրքում դրվելը, չնայած սույն խնդրում ևս դասական գրաբարը համեմատաբար ազատ է (հմմտ. **Պատասխանի ետ Յիսուս և Յիսուս ասաց**):

Ենթակա-ստորոգյալ շարադասության հետ կապված անհրաժեշտ է պարզել նրանց միջև առկա դադարի հարցը: Ընդունված է, որ ենթական և ստորոգյալը բաժանվում են դադարով: Այդ առթիվ Շ. Բալին, որ ֆրանսերենի և գերմաներենի տիպաբանական-գուգադրական քննության մեջ մեծ ծառայություն ունի, գրել է. «Հէշտ է նկատել, որ հատույթավորված նախադասության մեջ A և Z (սուբյեկտը և պրեդիկատը—Ա. Ս.) միշտ բաժանվում են դադարով, ինչքան էլ որ կարճ լինի այն, այն դեպքում երբ այնպիսի կապակցված նախադասություններում, ինչպէս՝ *Le soleil eclaire la terre, Je vous punirai si vous désobéissez* դադարները, որոնք կարող են գրի առնվել գործիքներով, խստող անհատի համար ամեն մի ռեալականությունից զուրկ են»³⁹:

Այս մոտեցումն այնքան էլ ճիշտ չէ, որովհետև դադարն առկա է ոչ թե սուբյեկտի և պրեդիկատի միջև որպէս այդպիսիք, այլ երկու միջուկների, որոնցից մեկի մեջ կառուցվածքային հիմքը սուբյեկտն է, մյուսի մեջ՝ պրեդիկատը: Եվ քանի որ ոչ ծավալուն («պարզ») նախադասությունների մեջ գործ ունենք

³⁹ **III. Балли**, *Общая лингвистика и вопросы французского языка*, М., 1955, էջ 72.

միայն ենթակայի և ստորոգյալի հետ, այն տպավորությունն է ստեղծվում, թե իբր սուբյեկտը և պրեդիկատը միշտ անջատվում են դադարով, այնինչ իրականում բաժանվում են ենթակայի և ստորոգյալի միջուկները:

Դասական գրաբարի բայական կապակցությունները նույնպես ազատ են, այսինքն՝ առկա են ինչպես OV, այնպես էլ VO տիպերը:

Այսպիսով, նախադասության հիմնական միավորները նշանակելով S, V, O կարելի է դասական գրաբարի շարահյուսական միավորների զուգորդման հնարավոր տիպերը տալ աղյուսակով (տե՛ս աղյուսակ № 22):

Ինչպես տեսնում ենք, դասական գրաբարի շարահյուսությունը այնքան ազատ է, որ հնարավոր վեց տիպերից և ոչ մեկը չի բացառվում: Գրաբարի և հին լեզուների զուգադրությունից հեշտ է նկատել, որ հին լեզուները ընդհանրապես նոր լեզուների համեմատությամբ աչքի են ընկնում ազատ շարահյուսությամբ: Գրաբարի համեմատությամբ, իրոք, արդի հայերենի շարահյուսությունը համեմատաբար կայուն է: Այսպես՝ որոշիչների, հատկացուցիչների և բացահայտիչների շարահյուսությունը արդի հայերենում բավականին կայուն է, դրանք գրաբարյան սովորական ետադիր դիրքից համեմատությամբ անցել են որոշյալներից, բացահայտյալներից և հատկացյալներից առաջ:

Անցնելով լեզուների շարահյուսական տիպաբանության դասակարգման տախտակին, պետք է դարձյալ անդրադառնանք

Ջ. Գրինբերգին, որը սահմանել է որոշակի շարահյուսական կախվածություններ⁴⁰:

Աղյուսակ 22

Զուգորդման տիպեր	Օրինակներ
1. SVO	Պետրոս ասէ ցնա
2. SOV	Դուք զայն գիտեք
3. VSO	Լուսն առաքեալքն զբանն
4. VOS	Հարցանէին զնա աշակերտքն
5. OVS	Յայնժամ զնաց Յիսուս
6. OSV	Զաչս նոցա բացեալ

Դասական գրաբարի նյութի նկատմամբ Ջ. Գրինբերգի մեթոդը կիրառելու կապակցությամբ անհրաժեշտ է նշել հետևյալը: Գրաբարում մեծ տարածում ունեն բայանվանական սուբյեկտ-անվանական օբյեկտ հաջորդականությամբ նախադասությունները: Հաշվի առնելով այդպիսի կարգ ունեցող լեզուների համար տրված առանձնահատկությունները, պետք է ասել, որ վերջինս հաստատվում է նաև հայերենի տվյալներով: Այսպես՝ դասական գրաբարում նախդիրները գերակշռում են ետադրություններին ինչպես քանակով, այնպես էլ իրենց հարուստ գործառական հնարավորությամբ: Ի տարբերություն գրաբարի, որը զգալիորեն օգտագործում էր նախդիրներ, արդի հայերենը գրեթե զրկվել է դրանցից և գրաբարյան բազմաթիվ նախադրություն-

⁴⁰ J.H.Greenberg, *Some universals of grammar with particular reference to the order of meaningful elements*, «Universal of language», Cambridge, 1963.

ների միայն մի փոքր մասն է օգտագործում, դրա փոխարեն հաճախ դիմելով ետադրություններին (հմմտ. վասն հայրենեաց-հայրենիքի համար):

Հաշվի առնելով, որ այդ բոլոր գծերը համընկնում են Գրինբերգի դասակարգման սխեմայի վերջին տիպին (անվանական սուբյեկտ-անվանական օբյեկտ-բայ), կարելի է ենթադրել, որ արդի հայերենում հաճախականը որոշյալի ետադաս գործածությունն է: Ինչպես ցույց է տալիս արդի հայերենի քննությունը, իրոք, ժամանակակից հայերենի համար տիպականը որոշյի նախադաս կիրառությունն է: Այնտեղ, որտեղ գոյություն ունի SOV հաջորդականությունը, գոյություն ունեն միայն ետադրություններ, և ընդհակառակը: Առաջին դեպքում գերակշռում են վերջածանցները:

Նկատի ունենալով այն, որ ենթական սովորաբար այն լեզուներում է անմիջականորեն նախորդում ստորոգյալին, որտեղ նախադասության անդամների միջև շարահյուսական կապերը արտահայտվում են գերազանցապես բառերի հաջորդականությամբ, պետք է կարծել, որ գրաբարում ենթական ստորոգյալի նկատմամբ կայուն դիրք չունի:

Ջ. Գրինբերգի կողմից առաջարկվել է լեզուների սկզբնական դասակարգման մի մեթոդ էս, որը կրում է «բառերի հիմնական կարգի (հաջորդականության) տիպաբանություն» անվանումը⁴¹: Գրինբերգի այս մեթոդը խարսխվում է երեք հատկանշի վրա:

⁴¹ Ю.Степанов, *Основы языкознания*. М., 1963, էջ 139:

Առաջին հատկանիշը բացահայտում է բառերի հիմնական կարգը: Ենթական նշանակելով S տառով (subjectum), բայը V (verbum), իսկ խնդիրը O (objectum), Գրինբերգը 30 լեզուների ուսումնասիրությունից ստացված արդյունքների հիման վրա եզրակացնում է, որ օգտագործվում են բառերի դասավորության հիմնականում երեք ձև՝ I VSO, II SVO, III SOV:

Այստեղ, իհարկե, խոսքը հիմնական ձևերի մասին է, այլապես այնպիսի մի չկիրառվող ձև, ինչպիսին է OVS, կարելի է գտնել հենց նույն լեզուներում, այդ թվում նաև հայերենում և ռուսերենում⁴²:

Երկրորդ հատկանիշը բացահայտում է սպասարկու բառերի հաջորդականությունը, այսինքն ինչպիսի դիրք են գրավում վերջիններս: Այն դեպքում, երբ դրվում են իշխող բառից առաջ, գործ ունենք նախդիրների հետ՝ Pr (preposition), իսկ այն դեպքում, երբ դրվում են իշխող բառից հետո, ետադրություններ են՝ Po (postposition):

Երրորդ հատկանշով բացահայտվում է ածականների դիրքը: Գոյականից առաջ դրվող ածականը Գրինբերգը նշանակում է A տառով, իսկ հետո դրվողը՝ N:

Առաջին հատկանշով լեզուների դասակարգման երեք տարբեր խմբերի հնարավորություն է ստեղծվում, իսկ վերջին երկու հատկանշով՝ լրացուցիչ երկուական խմբերի ևս: Ջ. Գրինբերգի դասակարգման աղյուսակը ստանում է 12 վանդակ (3.2.2): Պետք է նշել, որ հնարավոր ոչ բոլոր ձևերն են իրացվում. այսպես VSO գլխավոր հաջորդականության Po-A, PO-N վանդակները

⁴² Б.Головна, *Введение в языкознание*, М., 1966, էջ 214:

դատարկ են, որովհետև համապատասխան շարադասություն ունեցող ոչ մի լեզու Գրինբերգը չգիտե:

Գրինբերգյան դասակարգման պատկերը ունի հետևյալ տեսքը՝

	I	II	III
	VSO	SVO	SOV
P _o -A	0	1	6
P _o -N	0	2	5
P _r -A	0	4	0
P _r - N	6	6	0

Ինչպես տեսնում ենք, իր մեթոդի հիմքում Գրինբերգը դրել է որոշակի շարահյուսական հատկանիշներ: Դասական գրաբարի դիրքը տրված սխեմայի մեջ որոշելու համար նախ պետք է պարզել բառերի գլխավոր դասավորությունը: Ընդունված է (թե՛ գրաբարի և թե՛ աշխարհաբարի համար), որ ենթական դրվում է ստորոգյալից առաջ, այսինքն՝ SV և ոչ թե VS: Ենթակայից և ստորոգյալից հետո (հնարավոր է նաև ենթակայի և ստորոգյալի միջև) դրվում են նախադասության այլ անդամներ: Որպես հիմնական կիրառություն կարելի է տալ դասական գրաբարի շարահյուսական համակարգը բնութագրող այն գիծը, համաձայն որի՝ որոշիչները, հատկացուցիչները, ինչպես նաև կապի խնդիրները ունեն ետադաս գործածություն: Շարահյուսական մակարդակում գրաբարի նախդիրներն ունեն զգալի կշիռ: Նրանց խաղացած նշանակալից դերի մասին խոսում է այն հանգամանքը, որ նախդիրների միջոցով արտահայտվում են ինչպես խնդրային, այնպես էլ պարագայական զանազան հարաբերություններ:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի դիրք է գրավում դասական գրաբարը նշված հատկանիշների հաշվառումով, ինչ ընդհանրություններ և յուրահատկություններ ունի այլ լեզուների, ինչպես նաև իր պատմական զարգացման արդյունքն հանդիսացող արդի հայերենի համեմատությամբ:

Ստորև տրվում է Գրիներգի առաջարկած տիպաբանական դասակարգման ընդհանուր աղյուսակը⁴³, համապատասխան վանդակների մեջ մտցնելով նաև դասական գրաբարը և արդի հայերենը:

Աղյուսակ 23

	I VSO	II SVO	III SOV
P _o -A		էստոներեն, չինարեն	հինդի, բենգալի, արդի հայերեն, տիբեթական լեզուներ
P _o -N		աֆրիկյան մի շարք լեզուներ	շումերերեն, ավստրալիական լեզուներ, դասական տիբեթերեն
P _r -A	նահուատլը և մի քանի այլ լեզուներ	անգլերեն, գերմաներեն, ռուսերեն	ամհարերեն
P _r -N	եբրայերեն, արաբերեն, պոլինեզիական լեզուներ	գրաբար, ֆրանսերեն, իսպաներեն	պարսկերեն, ակկադերեն

⁴³ Բերվում է կրճատումներով. ամբողջությամբ տե՛ս **Ю.Степанов**, նշված աշխ., էջ 140-141:

Ինչպես տեսնում ենք, դասական գրաքարի շարահյուսական համակարգն իր ցուցիչներով մտնում է II SVO Pr-N խմբի մեջ, իսկ արդի հայերենը՝ III SOV Po-A խմբի: Գրաքարը որոշակի ընդհանրություններ ունի ֆրանսերենի, իսպաներենի, ինչպես նաև ռոմանական այլ լեզուների հետ, այն դեպքում, երբ արդի հայերենը, ըստ Գրինբերգի շարահյուսական ցուցիչների, մերձակից է հինդիին, բենգալիին:

Անհրաժեշտ է նշել շատ կարևոր մի հանգամանք, դասակարգման հիմք ծառայած հատկանիշների թիվը վերոհիշյալ աղյուսակի մեջ մեծացման կարիք ունի: Լրացուցիչ այլ հատկանիշների հաշվառումը դասակարգված խմբերը կբաժաներ ենթախմբերի, որոնք նույնպես իրենց հերթին կարելի էր տրոհել: Այդպիսի փորձ արել է հենց ինքը՝ Գրինբերգը, հենվելով մի այնպիսի հատկանշի վրա, ինչպիսին է՝ անուղղակի խնդիրը նախորդո՞ւմ է (թե հետևում է) ուղիղ խնդրին: Այդ հատկանշով, օրինակ, գերմաներեն և անգլերեն լեզուները կբաժանվեն երկու տարբեր ենթախմբերի:

Որքան շատ էական հատկանիշներ դրվեն դասակարգման հիմքում, այնքան ավելի ամբողջական պատկերացում կստացվի դասակարգվող լեզուների կառուցվածքային տիպաբանական առանձնահատկությունների մասին: Այսպես՝ չնայած դասական գրաքարը և ֆրանսերենը, ըստ Գրինբերգի դասակարգման, մըտնում են միևնույն խմբի մեջ, բայց դրանց շարահյուսական կառուցվածքների փոքր-ինչ ավելի խորը քննությունը պարզում է, որ հին հայերենը համեմատաբար ավելի մոտ է լատիներենին:

Պետք է անվերապահորեն ընդունել, որ ինչպես լատիներենը, այնպես է գրաքարը շարահյուսական բարդ կառուցվածք

ունեցող լեզուներ են: Դրանցով ավանդված տեքստերի խրթինության մեջ մեծ դեր է խաղում այն հանգամանքը, որ այդ լեզուներով մենք վաղուց ի վեր չենք մտածում և ինչ-որ չափով նաև ոչ միշտ է, որ գերազանց տիրապետում ենք: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ շատ հարցերում հին լեզուները (գրաբար, հին հունարեն, լատիներեն) նորերի համեմատությամբ ավելի սեղմ են եղել:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերենի հնչույթային կառուցվածքը հատկապես վերջին տասնամյակների ընթացքում բազմիցս քննության առարկա է դարձել⁴⁴: Հնչյունաբանության մի շարք հարցեր հետազոտվել են փորձառական մեթոդների կիրառմամբ: Ինչ վերաբերում է արևմտահայերենի հնչույթային կառուցվածքի քննությանը, ապա այս ասպարեզում արդի լեզվաբանության նվաճումների հաշվառմամբ կատարվող հետազոտությունների առաջին փորձերն են կատարվում⁴⁵: Ընդ որում ցայժմ հրատարակված աշխատանքներում նկատի է առնվել միայն *գրական* արևմտահայերենը: Մինչդեռ անուրանալի է, որ լեզվի բոլոր տարբերակների հաշվառմամբ միայն կարելի է ամբողջական պատկերացում կազմել տվյալ լեզվի կառուցվածքի, ներկա դեպքում՝ *հնչույթային* կառուցվածքի մասին:

Սույն աշխատանքում հեղինակը նպատակ ունի վեր հանել ինչպես գրական, այնպես էլ խոսակցական արևմտահայերենի հնչաբանության բնորոշ գծերը, առանձնահատկությունները:

Արևմտահայերենի հնչյունաբանության նկարագրության ժամանակ նկատի է առնվում լեզվի արդի վիճակը (գերազանցապես XX դարի 70-80-ական թվականների պատկերը): Հայտնի է, որ հնչույթային կառուցվածքը բնութագրվում է համեմատաբար դանդաղ ընթացող փոփոխություններով: Այդ առումով հետա-

⁴⁴ Հմմտ. **Գ.Ջահուկյան**, *Հայոց լեզվի տեսության հիմունքները*, Ե., 1974:

⁴⁵ Տե՛ս **Ա.Սարգսյան**, *Գրական արևմտահայերենի հնչույթային կառուցվածքը (ռուերեն աշխատանքը «Вопросы анализа текста», Ե., 1979:*

քրքրական է պարզել, թե մեր դարի 10-ական թվականներին վերջնականապես կանոնարկված արևմտահայերենը անցած տասնամյակների ընծացքում ինչ փոփոխությունների է ենթարկվել:

Ներկա աշխատանքում նախ ներկայացվում են գրական արևմտահայերենի երևույթները, ապա խոսակցական տարբերակի առանձնահատկությունները:

Արևմտահայերենի գրական և խոսակցական տարբերակների փոխհարաբերության մասին հարկ է նշել, որ մեր դարասկզբի արևմտահայերենի գրական կանոնը իր հիմնական գծերով պահպանելու համար անցած տասնամյակներին շատ ջանքեր են թափվել: Կանոնական այդ վիճակի շարունակաբար կրկնումը եղել է մամուլի, դպրոցների, կրթամշակութային հաստատությունների բուն նպատակը, իսկ ահա խոսակցական արևմտահայերենը, բնականոն զարգացմամբ, որոշակիորեն հեռացել է ինչ-որ չափով «արհեստականացված» գրական կանոնից:

Արտալեզվական, հանրալեզվաբանական պայմաններով պատճառաբանված առաջացել են որոշակի ոլորտներ՝ լեզվաշրջաններ, ուր հատկապես խոսակցական արևմտահայերենը կրել է տվյալ ոլորտին հատուկ փոփոխություններ, ձեռք բերել տվյալ միջավայրին բնորոշ լեզվական հատկանիշներ:

Քննության ընթացքում տարբերակվել են հետևյալ լեզվական ոլորտները (նկատի ունենք Սփյուռքի արևմտահայ ոլորտները, բացառությամբ պարսկահայ ոլորտի). ա) Միջին արևելքի ոլորտ (Թուրքիա, Լիբանան, Սիրիա), բ) Հունական ոլորտ (Հունաստան, Կիպրոս), գ) Ֆրանսիական ոլորտ (Ֆրանսիա), դ) Անգլիական ոլորտ (Անգլիա, Ավստրալիա), ե) Ամերիկյան ոլորտ

(զուտ Միացյալ Նահանգների սփյուռքահայ զանգվածների լեզուն և գ) Հարավ-Ամերիկյան կամ Իսպանական ոլորտ, որն ընդգրկում է Արգենտինան, Բոլիվիան և հարակից հարավ-ամերիկյան երկրների սփյուռքահայերի լեզուն:

Եթե, ինչպես նշվեց, գրական կանոնի պահպանման առումով արդի արևմտահայերենի մեջ էական փոփոխություններ չեն առաջացել, ապա նույնը չի կարելի ասել խոսակցական արևմտահայերենի մասին: Ուստի գրական լեզվի երևույթները ներկայացնելուց հետո խոսակցականի համապատասխան առանձնահատկությունները քննվում են ըստ վերոբերյալ ոլորտների:

Վերջապես, հարկ է նշել նաև, որ կանոնրկման առումով արևմտահայերենը ոչ միայն տեղքայլ է կատարել, այլև ինչ-որ չափով նահանջել է: Դա առավել հստակությամբ դրսևորվում է խոսակցական տարբերակների քննության ժամանակ: Վերջիններս բազմաշերտ փոփոխությունների են ենթարկվել. նախկին բարբառային երևույթները աստիճանաբար տեղի են տվել անգլերենի և տվյալ ոլորտի գերիշխող լեզվի երևույթներին:

Հնչյունաբանություն և հնչույթաբանություն: Նախքան բուն շարադրանքին անցնելը հարկ է պարզել ինչպես հնչյունի և հնչույթի, այնպես էլ ամենից առաջ հնչյունաբանության և հնչույթաբանության փոխհարաբերությունը՝ ուսումնասիրության առարկայի առանձնահատկությունները, առնչակցության աստիճանը և այլն: Այդ խնդրի վերաբերյալ ինչպես ընդհանուր լեզվաբանության, այնպես էլ հայ քերականագիտության մեջ տարբեր կարծիքներ և ըմբռնումներ են արտահայտվել: Այսպես, ըստ Ս. Աբրահամյանի. «Լեզվի հնչական միավորներն ուսումնա-

սիրվում են հնչյունաբանության մեջ: Հնչյունաբանությունը, բառիս լայն իմաստով, ուսումնասիրում է՝ ա) լեզվի հնչույթային համակարգը (հնչույթաբանություն), բ) հնչույթների դրսևորումները խոսքի մեջ. խոսքի հնչյունները (բուն հնչյունաբանություն), գ) վերհնչույթային հնչական միավորները՝ շեշտ, հնչերանգ, վանկ, հնչաբառ և այլն (վերհնչույթային հնչյունաբանություն)» (Ս. Աբրահամյան, 7): Այսպիսով, ստացվում է, որ հնչյունաբանությունը իր մեջ ներառում է ինչպես բուն հնչյունաբանությունը, այնպես էլ հնչույթաբանությունը: Այլ կարծիքի է Ա. Խաչատրյանը. «Լեզվաբանության զարգացման շնորհիվ փաստորեն առաջացել են երկու առանձին գիտաճյուղեր՝ հնչյունաբանություն և հնչույթաբանություն, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես ուսումնասիրման եղանակների նպատակադրմամբ, այնպես էլ կիրառվող ուսումնասիրման եղանակների օգտագործումով: Եթե հնչյունաբանության օբյեկտը խոսքն է իր տարբեր ու բազմապիսի դրսևորումներով, ապա հնչույթաբանության ուսումնասիրության առարկան լեզուն է, նրա օրինաչափություններն ու կառուցվածքը» (Ա. Խաչատրյան, 5):

Եթե առաջին ըմբռնմամբ փաստորեն միացվում էին հնչյունաբանությունն ու հնչույթաբանությունը, ապա երկրորդ մոտեցմամբ էլ դրանք որոշապես անջատվում են միմյանցից: Այդպիսի մոտեցումը նույնպես այնքան էլ ճիշտ չէ, հակառակ այն բանին, որ նման պահանջ ներկայացվել է Ֆ. Սոսյուրի, Ն. Տրուբեցկոյի, Լ. Ելմսլևի և այլոց աշխատանքներում (նախակարապետ ունենալով Բ. դե Կուրտենեին):

Ճիշտ է, հնչյունաբանության խնդիրները պարփակվում են ձայնաբանաարտասանական կամ ձայնաբանակենսաբանական

քննության ոլորտով, բայց հենց այդ «ձայնաբանական և արտասանական տվյալների հիման վրա էլ կառուցվում է հնչույթաբանությունը, որն էլ հենց հնչույթային համակարգի հաստատումն է ըստ նրանց տարբերակիչ հատկանիշների, ըստ նրանց հակադրության և այլն, և այլն, այն, ինչ իրենից ներկայացնում է խոսքի հնչյունների լեզվական (լեզվաբանական) կամ գործառական (ըստ Լ. Շչերբայի), նաև *unghaw* հայեցակետը», (Մ. Матусевич, 6):

Միանգամայն ընդունելի է Մատուսևիչի այն ըմբռնումը, ըստ որի անկարելի է ձայնաբանաարտասանական հայեցակետը անջատել լեզվաբանականից (քանի որ հենց լեզվականն է, որ «նպաստում է հնչյունաբանությունը լեզվաբանական գիտակարգերի շարքը դասելուն»), այնպես էլ հնչույթաբանությունը չի կարելի դիտարկել հնչյունաբանությունից լրիվ անջատված: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ Մատուսևիչի ըմբռնմանը հետևելով հանդերձ՝ վիճարկելի ենք գտնում նրա հետևյալ եզրահանգումը. «Այսպիսով, հնչյունաբանությունն ու հնչույթաբանությունը կազմում են մի անքակտելի ամբողջություն, և դրանք ոչ մի դեպքում չի կարելի անջատել մեկը մյուսից» (Մ. Матусевич, 6): Դրանք թույլատրելի է անջատել ուսումնասիրության հստակ նպատակներից ելնելով, բայց այնպես, որ այդ արդյունքները մեկը մյուսին լրացնեն, ամբողջացնեն:

Հարցի միանգամայն ճիշտ և համապարփակ մոտեցում է որդեգրված ակադ. Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում (Գ. Ջահուկյան, 47 և այլն): Գ. Ջահուկյանը հստակորեն ընդունում է մեկ գիտաճյուղ՝ *հնչաբանություն*, որն իր մեջ ներառում է հնչյունաբանությունն ու

հնչյութաբանությունը: Փաստորեն այդպիսի ճիշտ լուծում է ստանում վերջիններիս փոխհարաբերության խնդիրը:

Հետևելով լեզու-խոսք-լեզու ջահուկյանական ըմբռնմանը, համաձայն որի՝ կառուցվածքաբանության կողմից լեզու-խոսք ընդունված հակադրությունը միակողմանի, քարացած և ինչ-որ տեղ ծայրահեղ ըմբռնում է, մենք ուսումնասիրության ընթացքում նկատի ենք ունենում լեզու-խոսք անընդհատ անցումները: Այդ բոլորովին չի նշանակում, որ հնչյութ եզրույթը կիրառում ենք հնչյունի փոխարեն և հակառակը (հմմտ. Ս. Աբրահամյան, 7): Հնչյունաբանության քննության ժամանակ հաշվի են առնվում լեզվական առանձնահատկությունները, հնչյունաբանական վերլուծության ժամանակ՝ խոսքային, արտասանական:

Այժմ ներկայացնենք հնչյութի այն ըմբռնումը, որին հետևում ենք մեր ուսումնասիրության ընթացքում:

Հնչյութի բնորոշումը. հանրահայտ է, որ լեզվաբանության մեջ հնչյութի բազմաթիվ բնորոշումներ են եղել և, կարելի է ասել, միասնական և համընդհանուր ընդունելի բնորոշում առայժմ գոյություն չունի: Այդուհանդերձ կարելի է ընտրել այդ բնորոշումներից համեմատաբար ավելի անխոցելին: Ներկա ուսումնասիրության մեջ հիմք ենք ընդունել լենինգրադյան հնչյութաբանական դպրոցի բնորոշումը (ըստ Մատուսևիչի). «Հնչյութը լեզվի պատմականորեն ձևավորված նվազագույն գծային առումով անբաժանելի միավորն է, հակադրված մյուս բոլոր հնչյութներին, ինքնուրույն նշանակություն ունենալու ընդունակ, որ մտնում է բառերի կամ բառաձևերի հնչյունական պատկերի կազմում և ընդունակ է դրանք տարբերակելու. խոսքում այն գոյություն ունի տարբեր նրբերանգներով կախված

հնչյունական դիրքից: Յուրաքանչյուր հնչույթ ներկայանում է բազմաթիվ նրբերանգային տարբերակներով: Ինչպես Շչերբան է նշել («Ֆրանսերենի հնչյունաբանություն») հնչույթն այն ընդհանուրն է, որ առկա է առանձին մասնիկների մեջ, այսինքն՝ հնչույթի նրբերանգների մեջ:

Ամենից առաջ յուրաքանչյուր հնչույթ, ինչպես նշել է Մ. Մատուսեվիչը (М.Матусевич, 33) «բնորոշվում է նրանով, ինչը տարբերակում է նրան նույն լեզվի այլ հնչույթներից»: Ահա թե ինչու հնչույթի հիմնական հատկանիշներից է նրա բառատարբերիչ կամ ձևատարբերիչ հատկանիշը: Ըստ լենինգրադյան հնչույթաբանական դպրոցի, հնչույթը նվազագույն, այլևս անտրոհելի լեզվական միավոր է: Եթե չընդունենք, որ հնչունը անտրոհելի է, ապա ինքնաբերաբար կստացվի, որ իմաստագատիչ դերը պատկանում է տարբերակիչ հատկանիշներին և ոչ թե հնչույթին իբրև ամբողջական լեզվական միավորի:

Լեզվի հնչույթային կազմը, հայտնի է, որ անփոփոխ չի մնում: Թեկուզ և դանդաղ, բայց այն այնուամենայնիվ փոփոխվում է: Այդ է վկայում նաև հայոց լեզվի հնչույթային կազմի պատմական փոփոխությունը: Ընդհանուր հայերենին հատուկ հնչույթների մի ամբողջ շարքի վերացումը արևմտահայերենում դրա լավագույն ապացույցն է: Լեզվի հնչույթային կազմից ոչ միայն կարող են դուրս ընկնել առանձին հնչույթներ, այլև գոյանալ նոր հնչույթներ: Այդ առումով կարող է հարց առաջանալ. փոխառյալ բառերում հանդիպող լեզվական միավորները ազդո՞ւմ են հնչույթային կազմի փոփոխության վրա, թե ոչ: Հայտնի է, որ Ռ. Ավանեսովն, օրինակ, այս հարցում բացասական դիրք է գրավում (Аванесов А.), գտնելով, որ փոխառյալ բառերի

հնչույթների քանակը, պետք է չդիտարկել ուսումնասիրելիս: Ըստ այդմ, պահանջվում է հաշվի չառնել հատուկ անունների, աշխարհագրական անունների (տեղանունների) համապատասխան բառաշերտը:

Ռ. Ավանեսովի կարծիքը չեն ընդունում մի շարք լեզվաբաններ, այդ թվում Մ. Մատուսեվիչը, Ռ. Թոխմախյանը: Ժամնակակից հայերենի (իմա՝ արևելահայերենի) շեշտաբանության ուսումնասիրությանը նվիրված աշխատանքում Ռ. Թոխմախյանը ևս փաստորեն մերժում է այդ կարծիքը, վանկատիպերի քննության ժամանակ նկատի առնելով նաև այնպիսի տիպեր, որոնք ներկայացվում են միայն փոխառյալ հատուկ անունների (աշխարհագրական տեղանունների) օրինակներով. հմմտ., օրինակ՝ Բրյանսկ, Օմսկ և այլն (տե՛ս Թոխմախյան):

Պետք է նշել, որ տվյալ լեզվում այս կամ այն կոնկրետ լեզվական միավորի (հնչույթ, վանկ) առկայությունը ապացուցելու համար սոսկ փոխառյալ ձևերի առկայությունը դեռևս բավարար հիմք չէ:

Լեզվաբանության մեջ այն կարծիքն է հայտնված, որ պետք է լեզվի սեփական միջոցներով նույնպես այն դրսևորվի: Այդ դեպքում միայն կարող ենք խոսել նորագոյացության մասին:

Տարբերակիչ հսկանիշներ. Հնչույթաբանության առանցքային հարցերից մեկը տարբերակիչ հատկանիշների գաղափարն է: Միասնական ըմբռնում այս հարցի շուրջ նույնպես չկա: Եթե Պրագայի և խորհրդային (նկատի ունենք գերազանցապես մոսկովյան լեզվաբանական դպրոցը) հնչույթաբանները հիմք են ընդունում արտաբերական-արտասանական հատկանիշները, ապա կոպենհագենյան և ամերիկյան կառուցվածքաբանները

երկրորդական են համարում հնչույթի նյութական գոյությունը, վերջինս դիտելով իբրև պայմանական նշան:

Լայն տարածում է գտել Ռ. Յակոբսոնի, Գ. Ֆանտի և Մ. Հալլեի 12 զույգ տարբերակիչ հատկանիշներով լեզվի հնչույթային համակարգը նկարագրելու մոտեցումը, որ կիրառվել է նաև հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ Է. Աղայանի կողմից (Է. Աղայան): Հիմք ունենալով այն, որ տարբերակիչ հատկանիշները ոչ թե գծային, շարակարգային հարաբերություններ են արտահայտում, այլ հարացույցային՝ տարբեր լեզվաբաններ հայերենի հնչույթային համակարգն ըստ տարբերակիչ հատկանիշների դիտարկել են փնջերով: Փոփոխվում է հատկանիշների թիվը, դուրս են դրվում առանձին հատկանիշներ, դրանց փոխարեն մտցվում են նորերը և այլն: Այսպես, օրինակ՝ Ա. Խաչատրյանի վերոհիշյալ աշխատանքում տարբերակիչ հատկանիշների թիվը հասցված է 13-ի, որոնցից վեցը ներկայացվում են իբրև հիմնական, իսկ յոթը՝ լրացական հատկանիշներ: Ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ հնչույթային հատկանիշների անվանումները (ֆիզիկական-ձայնաբանական, լսատպավորական և արտաբերական) «երբեմն խառն կերպով գործածվում են հնչաբանական գրականության մեջ: Քանի որ ֆիզիկական (ակուստիկական) բնութագրումները չեն կարող լեզվականորեն լիովին գոհացուցիչ համարվել և արտասանողին չեն կողմնորոշում այս կամ այն հնչույթը արտաբերելու գործում, իսկ լսատպավորական բնութագրումները չեն կարող լիովին փոխարինել արտաբերականներին և սրանց համեմատությամբ բավարար չափով տարբերակված չեն (հմմտ. «ոնգայնություն»),

ուստի և մենք գերադասում ենք դիմել արտաբերական բնութագրումներին (անվանումներին)» (Գ. Ջահուկյան, 60):

Ինչպես անմիջապես նշում է նաև հեղինակը հետագա շարադրանքում «ըստ հնարավորին, զուգահեռաբար տրվում են նաև մյուսները»: Այլ կերպ ասած, դարձյալ միախառնվում են բավարար չափով տարբերակված բնութագրումները:

Արևմտահայերենի հնչույթային կառուցվածքը ներկայացնելու ժամանակ այդուհանդերձ օգտվում ենք ինչ-որ չափով միախառնվող ակուստիկական, լսատպավորական և արտաբերական հատկանիշներից:

Հարկ է շեշտել լենինգրադյան հնչույթաբանական դպրոցի այն թեզը, ըստ որի խոսքում առանձին հնչույթների տարբերակումը, առանձնացումը կատարվում է ոչ թե ֆիզիկական (ակուստիկական), արտասանական հատկանիշների հիման վրա, այլ զուտ լեզվական հայեցակետից՝ իմաստատարբերակման գործառնությով: Շչերբան իր «Ֆրանսերենի հնչունաբանությունը» աշխատության մեջ շեշտել է, որ միայն լեզվաբանական կողմը ապահովում է հնչույթի ամբողջականությունը (միասնությունը), բայց ոչ թե ֆիզիկական սարանական հատկանիշների ամբողջությունը (հմմտ. М. Матусевич, 39):

Ինչպես ընդունված է հնչույթաբանության մեջ, լեզվի հնչույթային միավորների առանձնացումը, տարբերակումը կատարվում է բառերի նվազագույն զույգերի հակադրության եղանակով: Ընտրվում են այնպիսի բառային զույգեր, որոնք տարբեր են իմաստով, բայց հնչական մակարդակում միայն մեկ միավորով՝ մեկ հնչունով, տարբերվում են, օրինակ՝ *գար* և *քար*:

Հնչույթի գոյությունը ապացուցելու համար անհրաժեշտ է, որ հակադրվող եզրերից մեկն ունենա առնվազն մեկ տարբերակիչ հատկանիշ, որ բացառվում է մյուսում, որով էլ պայմանավորված է նրա իմաստագատիչ դերը: Եթե հակադրվող եզրերը տարբերակիչ հատկանիշ չունենան, ապա խոսք լինել չի կարող տարբեր հնչույթների հետ գործ ունենալու մասին: Այսպես, օրինակ՝ արևմտահայերենում առկա է հին հայերենից ավանդված գրային համակարգը՝ եռաշարք բաղաձայնական հակադրություններով, սակայն այդ բոլորովին ապացույց չէ արևմտահայերենում եռաշարք բաղաձայնական միավորների՝ հնչույթների (բ-պ-փ) առկայության: Դրա համար անհրաժեշտ է, որ իրականում լինեն բառային այնպիսի գույգեր, որոնք տարբերակված են հնչաարտաբերական առումով, ապա՝ իմաստատարբերակիչ դեր ունեն, այլապես, ինչպես ցույց կտրվի հետագա շարադրանքում, չի կարելի խոսել համապատասխան հնչույթների առկայության մասին:

Արեվմտահայերենի հնչույթային կառուցվածքը

Լեզվի հնչույթային միավորների տարբերակման համար, ինչպես նշվեց, սովորաբար վերցվում են նվազագույն հակադրական գույգեր: Ըստ այդմ նկատի են առնվում բառասկզբի, բառամիջի և բառավերջի դիրքերը: Պարտադիր չէ, որ հնչույթը նշված բոլոր դեպքերում իմաստատարբերակիչ դեր խաղա: Լեզուներում սովորաբար առկա են այնպիսի դիրքեր, ուր նման գործառույթը չեզոքացվում է կամ բացակայում (օրինակ՝ *Լ-Ռ* հակադրությունը հայերենի բառասկզբի դիրքում): Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ տարբերակվում են հնչույթների

ուժեղ և թույլ դիրքեր: Այսպես գրական արևելահայերենի համար ուժեղ դիրքեր են բաղաձայնների բառասկիզբն ու բառամեջը (ձայնավորների միջև կամ նրանից առաջ), այնինչ բառավերջը մասնակի թույլ դիրք է (տե՛ս Ժամանակակից հայոց լեզու, 32):

Արևմտահայերենն ունի վեց ձայնավոր հնչույթներ՝ *Ս, Ե, Օ, Ու, Բ, Ը*: *Ս* ձայնավորն ազատորեն հանդես է գալիս ինչպես բառասկզբի, այնպես էլ բառամիջի դիրքում և որոշ սահմանափակություն ունի բառավերջի դիրքում: Եթե հաշվի առնենք, որ գրաբարում էլ *Ս*-ով վերջացող բառերը որոշակի սահմանափակ թիվ էին կազմում (ցուցական բառեր՝ սա, դա, նա և այլն), ապա արևմտահայերենում նշված ձևերում դրափոխությամբ առաջացել են բաղաձայնահանգ բառեր՝ *աս, ադ, ան* և այլն:

Ստորև բերվում են *Ս* ձայնավորի հակադրական զույգերն ըստ երեք դիրքերի (բառասկիզբ, բառամեջ և բառավերջ) համապատասխան տառադարձությամբ:

Բառասկիզբ.

(a/u)	արու-ուրու	(aru-uru)
	ախտ-ուխտ	(axd-uxd)
	ամպ-ումպ	(amb-umb)
	աս-ուս	(as-us)
	ադտ-ուդտ	(ayd-uyd)
(a/ə)	անդ-ընդ	(ant'-ənt')
(a/ə)	աստ-ըստ	(asd-əsd)
(a/o)	ադ-օդ	(ay-oy)
(a/i)	անձ-ինձ	(anç-inç)
(a/e)	աջ-էջ	(ač-eč)

Բառամեջ.

- (a/o) լար-լոր (lar-lor)
 (a/i) կար-կիր (gar-gir)
 (a/e) սար-սեր (sar-ser)
 (a/u) ծար-ծուռ (jar-jur)
 (a/ə) թարիլ-թրիլ (t'aril-t'əril)

Բառավերջ.

- (a-i) աղա-աղի (aḡa-aḡi)
 (a-u) աղա-աղու (aḡa-aḡu)

Ինչպես տեսնում ենք, բերվող հակադրական զույգերը ներկայացվում են գերազանցապես միավանկ բառաձևերով, ուր հնչույթային հակադրություններն ավելի ակնառու են:

Ի ձայնավորը նույնպես հակադրական զույգեր է կազմում բոլոր մյուս ձայնավորների հետ: Այսպես, օրինակ.

բառասկզբում.

- (i/u) իժ-ուժ (iž-už)
 (i/o) իր-օր (ir -or)
 (i/a) իրական-արական (iragan-aragan)
 (i/e) իր-եր (ir-er)
 (i/ə) իրաւ-ըրաւ (irav-ərav)

Բառամիջում.

- (i/a) գիր-գար (kír-ǵar)
 (i/u) մինչ-մունչ (minc-munc)
 (i/ə) սիրել-սըրել (sirel-sərel)
 (i/o) կիր-կոր (gir-gor)
 (i/e) սիրտ-սերտ (sird-serd)

Բառավերջում.

- (i-a) աղի-աղա (aḡi-aḡa)

(i/o) հարզի-հարզո (harkí-harko)

(i/u) դի-դու, լի-լու (t'i-t'u, li-lu):

Բառավերջի դիրքում Ի-ն և երկվանկ բառերի համեմատաբար քիչ շարքերում է հանդես գալիս, ինչպես և Ա-ն:

Նույնպիսի սահմանափակությամբ է բնութագրվում Ե (Է) ձայնավորի բառասկզբի դիրքը, ուր առկա են միայն խիստ սահմանափակ թվով հակադրական գույգեր, մինչդեռ բառամիջի դիրքում նման սահմանափակություն գոյություն չունի:

Բառասկիզբ.

(e/u) էշ-ուշ (eš-uš)

(e/i) եմ-իմ (em-im)

(e/o) են-ոն (en-on)

(e/a) էջ-աջ (ej-aj)

Բառամեջ.

(e/a) դեր-դար (t'er-t'ar)

(e/i) գեր-գիր (ker-kir)

(e/u) քեր-քուռ (p'er-p'ur)

(e/o) կեր-կոր (ger-gor)

(e/ə) բերել-բըրել (p'ere- p'ərel):

Ինչ վերաբերում է Ե(Է) ձայնավորի բառավերջի դիրքին, ապա այն նույնպես բնութագրվում է սահմանափակ թվով հակադրական գույգերով՝

(e/a) գնե-գնա (kne-kna)

(e/i) ոսկե-ոսկի (vosge-vosgi):

Ընդհանրապես Ե(Է) հնչույթը բառավերջում հանդես է գալիս սահմանափակ թվով բառերում (բազե, ափսե, Վահե և

այլն) և, բնականաբար, բառամիջի դիրքի համեմատությամբ թույլ դիրք կարող է դիտվել:

Օ ձայնավորը նույնպես, ինչպես և *Ա, Ի, Ե* ձայնավորները, թեև հակադրական զույգեր է կազմում բոլոր ձայնավորների հետ, սակայն բառասկզբի և առավել ևս բառավերջի դիրքում աչքի է ընկնում սահմանափակ թվով հակադրական զույգեր կազմելու հատկանիշով: Բառասկզբում *Ո* գրությամբ նշանակում է *ՎՕ* երկհնչույթը. Ընդհանուր թիվը, ըստ «Հայոց լեզուի նոր բառարանի» կազմում է ընդամենը 230 բառ (ներառյալ նաև բաղադրյալ, բարդված բառաձևերը. առանց այդ ձևերի ընդամենը 40 բառ կարելի է նշել, որ սկսվում է *օ*-ով):

Բառասկզբում.

(*o/i*) օր-իր (*or-ir*)

(*o/a*) օղի-աղի, օղ-աղ (*oyi-ayi, oy-ay*)

(*o/u*) օր-ուր (*or-ur*)

(*o/e*) օր-էր (*or-er*)

Բառամիջում.

(*o/e*) կոր-կեր (*gor-ger*)

(*o/i*) ծորան-ծիրան (*joan-jiran*)

(*o/u*) կոռ-կուռ (*gor-ger*)

(*o/ a*) կոր-կար(*gor-gar*)

(*o/e*) կող-կել (*goγ-geγ*)

(*o/ə*) խորել-խ(ը)րել (*xorel-xərel*):

Արևմտահայերենում *Օ* ձայնավորը բառավերջում համեմատաբար սակավ է հանդիպում և գերազանցապես անձնանունների կոչականաձև տարբերակներում՝ Կարօ (Կարապետ), Սագօ (Սարգիս), Հարօ (Հայրապետ) և այլն:

Ու հնչույթը իմաստատարբերակիչ գործառույթով կարող է հանդես գալ՝ հակադրական գույգեր կազմելով ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջում և բառավերջում: Այսպես, բառասկզբում.

(u/a) ուղտ-աղտ (uɣd-aɣd)

(u/o) ուր-օր (ur-or)

(u/ə) ունդ-ընդ (unt'-ənt')

(u/i) ուր-իր (ur-ir)

(u/e) ուշ-էշ (uʃ-eʃ)

Բառամիջում.

(u/a) լուր-լար (lur-lar)

(u/e) դուռ-դէռ (t'ur-t'er)

(u/o) հուր-հոր (hur-hor)

(u/i) ճուտ-ճիտ (jud-jid)

(u/ə) խուզել-խըզել (xuzel-xəzel)

Բառավերջում.

(u/a) աղու-աղա (aɣu-aɣa)

(u/i) ձու-ձի (ɟu-ɟi)

(u/i) արու-արի (aru-ari):

Ըստ էության, բառավերջի դիրքում Ու-ն հակադրական գույգ է կազմում Ի-ի հետ: Ա-ի հետ կազմած գույգը, ներկայացված է *աղա* բառով և փոխառությունն է: Կարելի է նշել նաև *տղա-տղու* հակադրական գույգը: Հին հայերենին հատուկ *հասու-հաստ* և *նու-նա* հակադրական գույգերը արևմտահայերենին խորթ են:

Ը ձայնավորը բառասկզբում կազմում է հետևյալ հակադրական գույգերը.

(ə/a) ըստ-աստ (əsd-asd)

(ə/u) ընդ-ունդ (ənd-und)

(ə/i) ընձի-ինձի (ənçi-inçi)

Ը-ն իբրև հակադրության տարր հանդես է գալիս հիմնականում երկվանկ և բազմավանկ բառերում: Ըստ այդմ էլ, բառամիջի դիրքում Ը-ն հակադրական անհամեմատ մեծ թվով գույգեր է կազմում: Բերենք օրինակներ.

(ə/a) բըրդել-բարդել (p'ərtel- p'art'el)

(ə/o) խըրել-խորել (xəpel- xopel)

(ə/e) կըրել-կերել (gəpel- gerel)

(ə/u) բըրել-բուրել (p'ərel- p'urel)

(ə/i) սիրել-սըրել (sərel- sirel)

Ը հնչույթը դիրքային սահմանափակություն ունի և բառավերջում հակադրական գույգեր չի կազմում (նկատի չեն առնվում թեք ձևերում կազմվածները, ինչպես, օրինակ՝ Արամը-Արամի և այլն):

Հիմք ունենալով վերոբերյալ հակադրական գույգերը, կարելի է եզրակացնել, որ հայերենի վեց ձայնավորներից դիրքային սահմանափակությամբ բնութագրվում է ամենից առաջ Ը ձայնավորը: *O, ŌL, P*, ինչպես նաև *U* ձայնավորի բառավերջի դիրքը կարելի է դիտել իբրև թույլ դիրք: Այդ դիրքում կազմվում են համեմատաբար քիչ հակադրական գույգեր:

Արևմտահայերենի բոլոր վեց ձայնավորներն էլ ունեն իմաստատարբերակիչ որոշակի գործառույթ և նրանց քանակի հարցը վիճարկելի չէ:

Ինչպես ընդհանրապես հայոց լեզվի բոլոր փուլերում, գրական արևմտահայերենում նույնպես երկար և կարճ

ձայնավորներ չկան: Այսինքն՝ ձայնավորների քանակային տարբերակում չկա:

Արևմտահայերենում ձայնավորներն, այդուհանդերձ, տևողության հատկանիշով տարբերություններ ի հայտ են բերում (այսպես, օրինակ՝ *Ը*-ն բառամիջի դիրքում համեմատաբար կարճ տևողություն ունի, իսկ *Ու*-ի և *Ի*-ի համեմատությամբ, *Ա*-ն և *Օ*-ն ավելի երկար տևողություն ունեն): Հարկ է նշել, որ արևմտահայերենի *Ը* ձայնավորը, արևելահայերենի համեմատությամբ, բառասկզբի դիրքում համեմատաբար երկար տևողություն ունի: *Ը* ձայնավորի բառամիջի դիրքում ունեցած կարճ տևողությունը ժամանակին պատճառ է եղել գրությամբ այն չնշելու: Անվիճելի է, որ *գէր-գիրուկ*, *գինի-գինետուն* և այլ օրինակներում առկա է հերթագայություն, բայց *սիրտ-սրբոտի* և այլ դեպքերում *Ը*-ի առկայությունը չեզոքացված ձայնավորի հանգամանքով բացատրելը վիճարկելի է: Այդ դեպքում կամա թե ակամա մերժում ենք *Ը*-ի լիահունչ ձայնավոր լինելը և դիտում իբրև լիահունչ ձայնավորի տարբերակ:

Ը ձայնավորի համեմատաբար երկար տևողությունը առկա է բառամիջյան բաղաձայնների ոլորտում՝ *համալրսարան*, *կըրկնել* և այլն: *Ը*-ի հստակ հնչումը բնորոշ է արևմտահայերենի գրությամբ *սպ*, *զբ* և այլ կապակցություններից առաջ՝ *ըզբաղիլ*, *ըստանձնել* և այլն, որոնք, ինչպես ճիշտ նկատել է Ա. Խաչատրյանը. «կազմում են արևմտահայերենի արտասանական բազայի կարևոր կողմերից մեկը» (Ա. Խաչատրյան, 44):

Եթե նկատի ունենանք լեզվի նկարագրության անտեսման սկզբունքը, ապա ինչպես նշել է Գ. Ջահուկյանը, վեց ձայնավոր հնչույթի սպառիչ նկարագրության համար երեք տարբերակիչ

հատկանիշ պետք է բավարարեր: «Սակայն,- ինչպես նշում է Գ. Ջահուկյանը,- հայերենի ձայնավորների համակարգի անդամները հակադրվում են երեքից ավելի հատկանիշներով» (Գ. Ջահուկյան, 75):


Արևմտահայերենի հնչույթային համակարգն ըստ տարբերակիչ հատկանիշների ներկայացնում ենք օգտագործելով Ջահուկյանի եզրույթները, որոշ փոփոխություններ մտցնելով տարբերակիչ հատկանիշների ցանկում: Այսպես օրինակ՝ շրթնայնությունը արևմտահայերենի համար հավելուրդային հատկանիշ չէ (հմմտ. Ռ. Թոխմախյան): Ուստի և տարբերակիչ հատկանիշների ցանկում մտցնում ենք նաև շրթնայնացածության հատկանիշը, ինչպես նաև միջին աստիճանի բացվածքայնությունը, որ հաստուկ է երեք հնչույթի, այսինքն՝ ձայնավորների կեսին:

Աղյուսակ 1

Հատկանիշներ	Ձայնավորներ					
	Ա	Ի	Ու	Ե	Ը	Օ
Նեղբացվածքայնություն	–	+	+	–	–	–
Լայնբացվածքայնություն	+	–	–	–	–	–
Առաջնաշարքայնություն	–	+	–	+	–	–
Ետնաշարքայնություն	+	–	+	–	–	+
Շրթնայնացածություն	–	–	+	–	–	+
Միջնաշարքայնություն	–	–	–	–	+	–
Միջին աստիճանի բացվածքայնություն	–	–	–	+	+	+

Այսպիսով, ձայնավորները բնութագրվում են որակական աստիճանի տարբերություններով: Ինչպես ընդհանրապես հայերենում, արևմտահայերենում նույնպես ձայնավորների վերինչույթային արժեքները (հատկանիշները) հնչույթատարբերակիչ հակադրական գույգեր չեն կազմում: Նմանապես ելևեջավորումը, ինչպես նշել է արևելահայերենի համար Գ. Ջահուկյանը, ծառայում են «անձի սուրբեկտիվ վերաբերմունքի դրսևորմանը» (Գ. Ջահուկյան, 79):

Արևմտահայերենի ձայնավորների կառուցվածքային պատկերը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով (հմմտ. Թոխմախյան, 12):



Գծապատկեր 1.

Գծագրում դժվար է ճշգրտորեն ներկայացնել $\mathcal{L}$ -ի միջակա դիրքը: Ինչպես նշվել է նաև արևելահայերենի ձայնավորներից $\mathcal{U}$ -ի համար (տե՛ս Ժամանակակից հայոց լեզու, 39), այն տատանումներ է տալիս ստորին աստիճանից մինչև գրեթե միջին աստիճանը: Ահա թե ինչու ձայնավորների եռանկյան մեջ $\mathcal{U}$ -ն գուտ ետին շարքին չի վերագրվում, այլ առանձնացվում է բուն ետնաշարքայիններից:

Բաղաձայն հնչույթներ, գրական արևմտահայերենն ունի 25 բաղաձայն հնչույթներ՝ *բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, հ, ձ, ղ, լ, յ, ն, շ, չ, ջ, ռ, ս, վ, ր, զ, ք, փ, ֆ*:

Բաղաձայն հնչույթների տարբերակիչ հատկանիշներն ընտրելու ժամանակ պետք է հենվել փակվածքի և նեղվածքի, ձայնի և աղմուկի առկայությունը բացահայտող հատկանիշների վրա: Ահա հենց վերջին հատկանիշի՝ ձայնի և աղմուկի համամասնության, հիման վրա էլ սովորաբար հայերենագիտության մեջ տարբերակվում է բաղաձայնների շարքում *ձայնորդների* ոլորտը:

Արևմտահայերենում ձայնորդները վանկարար արժեք չունեն: Նրանցով սովորաբար կազմվում են երկուսից ավելի բաղաձայնով կապակցությունները, ինչպես նաև, այսպես կոչված, երկհնչյունները:

Ներկայացվում է արևմտահայերենի ձայնորդների շարքն ըստ տարբերակիչ հատկանիշների (տե՛ս աղյուսակ 2):

Ինչպես երևում է աղյուսակից, արևմտահայերենի ձայնորդների հիմնական տարբերակիչ հատկանիշներն են առաջնալեզվայնությունը և վերատամնայնությունը: Հավելուրդային չենք դիտում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են շրթնայնությունը, որով միայն մեկ հնչույթ՝ *Մ*-ն տարբերակվում է մյուս ձայնորդներից, և միջնալեզվայնությունը, որով *Յ*-ն հակադրվում է մյուս ձայնորդներին:

Աղյուսակ 2

Տարբերակիչ հատկանիշ \ Հնչույթ	Լ	Մ	Ն	Բ	Ռ	Յ
Առաջնալեզվայնություն	+	–	+	+	+	–
Միջնալեզվայնություն	–	–	–	–	–	+
Ռնգայնություն	–	+	–	–	–	–
Շրթնայնություն	–	+	–	–	–	–
Վերատամնայնություն	+	–	+	–	+	–
Թրթռայնություն	–	–	–	+	+	–

Արևմտահայերենի *Յ* հնչույթը, ինչպես և արդի արևելահայերենի համապատասխան հնչույթը, հանդես է գալիս միայն մեկ գործառույթով՝ իբրև ձայնորդ։ Երկհնչյունների կազմում *Յ*-ն ոչ միայն վանկարարության արժեք չունի, այլև ինչպես հիմնավորապես ցույց է տվել Ա. Խաչատրյանը, հայերենի (խոսքը արդի հայերենի, ավելի կոնկրետ՝ արևելահայերենի մասին է) *յա, այ, յե, եյ, յու, ոյ* հնչյունակապակցություններում *Յ*-ն «էապես չի տարբերվում մյուս ձայնորդներից, իսկ վերոհիշյալ տարրալուծումը գալիս է փաստելու, որ նման կապակցությունները չեն կարող համարվել իսկական երկբարբառներ» (Ժամանակակից հայոց լեզու, 1)։

Մեկ խոսքով, արդի հայերենում (ներառյալ, բնականաբար, արևմտահայերենը) երկբարբառներ չկան։

Յ հնչույթը ձայնորդների համար ընտրած հինգ տարբերակիչ հատկանիշներից չորսի դեպքում բացակայության (–) նշանով է բնութագրվում. Այն վերատամնային չէ, թրթռական չէ և, վերջապես, առաջնալեզվային չէ։ Միակ հատկանիշով՝ միջնալեզվայնությամբ, *Յ*-ն առանձնակի դիրք է գրավում

ձայնորդների ոլորտում, որը խոսում է այն մասին, որ թեպետ Յ-ն բաղաձայնական միավոր է, սակայն նրանում առկա են դեռևս հին հայերենից մնացած երկբարբառային (ձայնավորային) բաղադրիչի հատկանիշի հետքերը:

Պատահական չէ, որ ավանդական հայերենագիտության մեջ Յ-ն որակվել է որպես *կիսաձայն*, որով փաստորեն խուսափողական պատասխան է տրվել այն ձայնավորների՝, թե՞ բաղաձայնների շարքին դասելու հարցին:

Ներկայացնենք գրական արևմտահայերենի բաղաձայն հնչույթներն ըստ հակադրական զույգերի (ինչպես և ձայնավորների դեպքում, նկատի ունենալով հնչույթային հակադրության երեք դիրք՝ բառասկզբ, բառամեջ և բառավերջ):

Բոլոր ձայնորդները (բացառությամբ *Ը*-ի) հանդես են գալիս նշված երեք դիրքերում: *Ը-Ը* հակադրությունը հանդես է գալիս բառամիջի և բառավերջի դիրքերում: Արևելահայերենին հատուկ *ռոպե* բառն էլ արևմտահայերենում փոխարինելով *վայրկյան* բառով՝ փաստորեն բառասկզբի դիրքի համար *Ը*-ով բառերը վերացել են: Անգամ *Րաֆֆի* բառը արևմտահայերենում ներկայացվում է հաճախ *Ռաֆֆի* ձևով:

Բառամեջ. (r-r) արու-առու (aru-aru)

Բառավերջ. (r-r) բար-բառ (p'ar- p'ar)

Մյուս ձայնորդների համար բերենք բառասկզբի դիրքում հետևյալ հակադրությունները. (m-n-l-y) մերկ-ներկ-լերկ-յերկ
(merg-nerg-lerg-yerg)

Բառամեջ. (m-n-l-y) հիմա-հինա, հանել-հալել, բնական-բայական (hima-hina, hanel-halel, p'anagan, p'ayagan):

Բառավերջ. (m-n-l-y) համ-հան-հալ-հայ (ham-han-hal-hay):

Արևմտահայերենի շփական բաղաձայնների հնչությային հակադրական գույգերը կարելի է ներկայացնել հետևյալ դիրքերով.

Բառասկզբում. (s-z) սուտ-զուտ (sud-zud)

(x-h) խեղ-հեղ (xey-hey)

(ž-š) ժահ-շահ (žah-šah)

(γ-h) դերձ-հերձ (γerç-herç)

(v-h) վար-հար (var-har)

Բառամիջում. (s-z) աք-ազգ (ask-azk)

(š-ž) ուշաթափ-ուժաթափ (ušat'ap'-žat'ap')

(x-γ) ախտ-աղտ (axd-aγd)

(x-h-v) քախել-քահել-քավել (p'axel- p'ahel- p'avel)

Բառավերջում. (s-z) մաս-մազ (mas-maz)

(š-ž) խաղ-խաժ (xaš-xaž)

(v-f) հավ-հաֆ (hav-haf)

(x-h) ժախ-ժահ(zax-zah)

(γ-h) շաղ-շահ (šaγ-šah):

Ճ հնչյոթի վերաբերյալ հարկ է նշել, որ այն ըստ էության, արևմտահայերենի հնչությային կառուցվածքի եզրային միավորներից է:

«Հայոց լեզվի նոր բառարանի» (Բեյրութ, 1968) պարունակած Ճ-ով սկսող ընդամենը 13 բառի կեսից ավելին փոխառյալ բառեր են, մնացածը՝ բաղաձայնական կազմություններ են: Այնպես որ այնպիսի հակադրություններ, ինչպես *հավ-հաֆ*, ոչ միայն սահմանափակ են, այլև, ըստ էության, արևմտահայերենին բնորոշ չեն:

Արևմտահայերենի պայթական բաղաձայնները ներկայացվում են երկշարք հակադրություններով, ուր հակադրության մեկ եզրում էական հատկանիշ է ձայնեղությունը, մյուս եզրում՝ շնչեղությունը, իբրև խլության ուղեկցող էական հատկանիշ: Պարզ խուլերը գրական արևմտահայերենում բացակայում են: Նման երկշարք հակադրություններ են առկա նաև պայթաշփականների ոլորտում: Ստորև ներկայացնում ենք պայթական և պայթաշփական բաղաձայնների հակադրական շարքերը. Բ-Փ, Գ-Ք, Դ-Թ, Զ-Ց, Զ-Չ:

Այժմ ներկայացնենք նշված հնչույթներն ըստ հակադրական զույգերի.

Բառասկզբում.

(g-ǵ) գերել-կերել-քերել (ǵerel-gerel- k̄erel)

Բառամիջում.

(g-ǵ) անգամ- անկամ - անքամ (anǵam-angam-anǵam)

Բառավերջում.

(g-ǵ) գիրգ-գիրկ-գիրք (k̄irǵ-k̄irg-k̄irǵ):

Բառասկզբում.

(d-tʼ) դուր-տուր-թուր (tʼur-dur- tʼur)

Բառամիջում.

(d-tʼ) խտել-խթել (xd̄el-xtʼel)

Բառավերջում.

(d-tʼ) մարդ-մարտ-մարթ (martʼ-mard-martʼ)

Բառասկզբում.

(b- pʼ) բակ-պակ-փակ (pʼag-bag-pʼag)

Բառամիջում.

(b- pʼ) տպել-տփել (db̄el-dpʼel)

Բառավերջում.

(b- p') տապ-տափ (dab-dap')

Բառասկզբում.

(ç-j) ձախ-ձախ-ցախ (çax-jax-çax)

Բառամիջում.

(ç-j) անձիր-անցիր (anjir-ançir)

Բառավերջում.

(ç-j) օձ-օձ (օç-oj) հունձ-հունց (hunç-hunj)

Բառասկզբում.

(č-ǰ) ջահ-ճահ (čah-jah) ճար-չար (ǰar-čar)

Բառամիջում.

(č-ǰ) մնջել-մնջել (mnčel-mnǰel), աջել-աճել (ačel-ajel)

Բառավերջում.


(č-ǰ) աջ-աճ-աչ (ač-aǰ-ač)

Բաղաձայնական շարքերում կատարված փոփոխությունները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ արևմտահայերենում ստեղծվել է նույնահունչ բառերի լայն հնարավորություն:

Արևմտահայերենի հնչույթային համակարգի ձայնավորների և բաղաձայնների հարաբերակցությունը հաստատում է հնդեվրոպական լեզուների համար տրված այն ընդհանրույթը, որ ձայնավորների քանակը (ներառած նաև ձայնավորի արժեքով հանդես եկող ձայնորդները) չեն գերազանցում լեզվի հնչույթների ընդհանուր թվի մեկ երրորդը:

Ստորև ներկայացնում ենք արևմտահայերենի աղմկային բաղաձայնների գծապատկերը (տե՛ս գծ. 2):

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ից, (աղյուսակում ձայնորդները չեն ներկայացվում այն պարզ պատճառով, որ առանձին աղյուսակով արդեն ներկայացվել են ըստ տարբերակիչ հատկանիշների) արևմտահայերենի բաղաձայնական ոլորտի էական տարբերակիչ հատկանիշներն են՝ շփականություն-ոչ



Գծապատկեր 2

շփականություն, հպականություն-ոչ հպականություն, ձայնեղություն-ոչ ձայնեղություն, և տևականություն-ոչ տևականություն հատկանիշները, որոնցից յուրաքանչյուրը դրական բնութագրում է տալիս 19 բաղաձայն հնչույթներից առնվազն կեսին: Այնուհետև տարբերակիչ ուրույն դեր են խաղում նաև շնչեղություն-ոչ շնչեղություն և առաջնալեզվայնություն-ոչ առաջնալեզվայնություն տարբերակիչ հատկանիշները (հակադրական գույգերը). առաջինը հատուկ է համապատասխան ոլորտի վեց հնչույթի, իսկ երկրորդը՝ ութ հնչույթի:

Հնչույթաբանական գրականության մեջ սովորաբար առանձին-առանձին ներկայացվում են ձայնավորների և բաղաձայների արտասանական և ձայնաբանական հատկանիշները:

Արևմտահայերենի համար համապատասխան բնութագրերը ներկայացնելիս օգտագործել ենք արևելահայերենի համար կատարված փորձառական տվյալներից (համապատասխան հղումներով):

Ստորև ներկայացնում ենք ձայնավորների և բաղաձայների ինչպես արտասանական, այնպես էլ ձայնաբանական բնութագրերը:

Աղյուսակ 3

Արևմտահայերենի բաղաձայն հնչյւթների տարբերակիչ հատկանիշները:

Հնչյւթ Հատկանիշ	Բ	Փ	Դ	Թ	Գ	Ք	Ձ	Յ	Ջ	Չ	Ջ	Ս	Ժ	Շ	Ղ	Խ	Հ	Վ	Ֆ
Ձայնեղություն-ոչ ձայնեղություն	+	-	+	-	+	-	+	-	+	-	+	-	+	-	+	-	-	+	-
Շնչեղություն-ոչ շնչեղություն	-	+	-	+	-	+	-	+	-	+	-	-	-	-	-	-	+	-	-
Տևականություն-ոչ տևականություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	+	+	+	+	+	+	+	+	+
Հպականություն-ոչ հպականություն	+	+	+	+	+	+	+	+	+	+	-	-	-	-	-	-	-	-	-
Առաջնալեզվայնություն-ոչ առաջնալեզվայնություն	+	+	+	+	-	-	+	+	-	+	+	-	-	-	-	-	-	-	-
Շփականություն-ոչ շփականություն	-	-	-	-	-	-	+	+	+	+	+	+	+	-	+	+	-	+	-

Ձայնավորների արտասանական բնութագիրը. լեզվի բարձրության աստիճանը առաջին շարքի ձայնավորներից ամենավերին դիրքն է գրավում *Ի* ձայնավորի կազմության ժամանակ: Այն հիմնական որակներով նման է արևելահայերենի *Ի*-ին, որի նկարագրության ժամանակ Ա. Խաչատրյանը նշել է վերջինիս ոչ շրթնայնացած լինելը. «Շրթունքները չեզոք դիրք են գրավում, բերանի բացվածքը շատ փոքր է, ուստի ձայնավորը կարելի է անվանել փակ» (Ժամանակակից հայոց լեզու, 66): *Է*-ի արտասանության ժամանակ բերանը *Ի* ձայնավորի համեմատությամբ ավելի լայն է բացված, իսկ լեզուն էլ ավելի ցածր դիրք է գրավում և ընդհանուր առմամբ որակվում իբրև միջին բարձրացման ձայնավոր:

Ա ձայնավորի արտաբերությունը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով. *Ա*-ն շրթնայնացումից զուրկ է և բնութագրվում է ետին շարքի ստորին բարձրացմամբ: «*Ա* ձայնավորի արտաբերման ժամանակ,- ինչպես գրել է Ա. Խաչատրյանը,- լեզուն, գտնվելով բերանի ետին մասում, գմբեթաձև բարձրանում է դեպի փափուկ քիմքը, բայց ոչ այնչափ, որքան *Օ*-ի և *Ու*-ի ժամանակ» (Ժամանակակից հայոց լեզու, 69):

Այդ նույն շարքի միջին բարձրացման ձայնավորը՝ *Օ*-ն, բնութագրվում է շրթնայնություն հատկանիշով: Այնպես, որ շրթնայնությունը, իրոք, չի կարելի դիտել իբրև հավելուրդային հատկանիշ:

Նույն շրթնայնացված լինելու հատկանիշով բնութագրվող *Ու*-ն վերին բարձրացման ձայնավոր է:

Միջին շարքի միջին բարձրացման միակ հնչույթը՝ *Ը*-ն, շրթնայնության և ռնգայնության հատկանիշներից զուրկ է:

Ձայնավորների ձայնաբանական բնութագիրը. բոլոր ձայնավորների համեմատությամբ, *Ա* ձայնավորը բնութագրվում է տևողության որոշ երկարությամբ: Արևմտահայերենի ոչ մի ձայնավոր չունի *Ա*-ի երկար հնչումը: Եվ պատահական չէ, որ *Ա*-ն հայերենում ամենաբարձր հաճախականությունը ունեցող ձայնավորն է (այդ մասին տե՛ս հնչավիճակագրության բաժինը):

Ա-ից հետո համեմատաբար երկար տևողությամբ և ինտենսիվությամբ աչքի է ընկնում *Օ* ձայնավորը:

Ի ձայնավորի տևողությունը, *Ա*-ի և *Օ*-ի համեմատությամբ, կարճ է: Թեև *Է* ձայնավորը ավելի մեծ ինտենսիվությամբ է բնութագրվում, քան *Ի*-ն, սակայն ինտենսիվության արժեքները մեծ տարբերություններ չեն տալիս:

Ու ձայնավորը բնութագրվում է իբրև համեմատաբար թույլ արտաբերվող, փոքր էներգիայով, բայց բարձր ինտենսիվություն ունեցող ձայնավոր: Վերջապես, ամենակարճ տևողությամբ ձայնավորը *Ը*-ն է: Իր թույլ էներգիայով *Ը*-ն ընդհանուր գծեր ունի *Ու*-ի հետ: *Ը*-ի կարճ տևողությունն է եղել թերևս պատճառ, որ հայերենի գրաբանությամբ այն մի շարք դեպքերում չի նշվել: Հարկ է նշել, որ արևելահայերենի *Ը*-ն բնութագրվում է համեմատաբար ավելի մեծ տևողությամբ և ուժգնությամբ: Այդ կարելի է վկայել նաև առանց փորձառական քննության, թեև փորձառական ուսումնասիրությունը ի հայտ կբերի այդ տարբերությունը:

Բաղաձայնների արտասանական բնութագիրը. *Բ-Փ* երկշրթնային բաղաձայնների կազմում հպականոնները հանդես են գալիս երկանդամ՝ *Բ-Փ* հակադրությամբ: *Բ*-ի և *Փ*-ի արտասանության ժամանակ հպումը, արևելահայերենի *Պ*-ի համեմատությամբ

յամբ, թույլ է: *Բ*-ն և *Փ*-ն քմայնացումից զուրկ են: Եթե *Բ*-ի արտասանության ժամանակ դուրս մղվող օդի քանակը քիչ է, ապա *Փ*-ի դեպքում շատ է: Տարբերակիչ հատկանիշ է ծառայում ձայնեղություն-շնչեղություն հակադրությունը:

Արևմտահայերենում ատամնային պայթականները նույնպես ներկայացվում են երկանդամ հակադրությամբ՝ *Դ-Թ*: Արտաբերության տեղը նկատի ունենալով *Դ, Թ* ատամնայինները ձևավորվում են վերին ատամնաշարի և լնդերքի մոտ: Համանուն ժգնության հաշվառումով համեմատությամբ թույլ պատնեշ առկա է *Թ*-ի արտաբերման ժամանակ: Տարբերակիչ հատկանիշը, ինչպես և երկշրթնային հպականների դեպքում, ձայնեղություն-շնչեղություն հակադրությունն է:

Ետքմային պայթականները, նախորդ երկու զույգերի նման, կազմում են երկանդամ հակադրություն՝ *Գ-Ք*: Արևելահայերենի համար նշված այն իրողությունը, որ «*Կ, Գ, Ք* հնչյւնքները կազմավորվում են բերանի ոչ շատ խորը մասում, այլ փափուկ քիմքի առաջամասում» (Ժամանակակից հայոց լեզու, 85), հատուկ է նաև արևմտահայերենին, այն տարբերությամբ միայն, որ պարզ խուլը գրական արևմտահայերենում բացակայում է: Բացի այդ, արևմտահայերենի *Գ*-ի և *Ք*-ի քմայնացումը, արևելահայերենի համեմատությամբ, թույլ է դրսևորվում: Գրական արևելահայերենում քմայնացման տարբերակով հանդես է գալիս հատկապես *Կ*-ն (հմմտ. *կյանք, կին* և այլն), որ գրական արևմտահայերենում ներկայացվում են ձայնեղացված վիճակով՝ *գյանք, գին*: Այդ դեպքում գրական ընդունված կանոնական արտասանությամբ *գ*-ն երկհնչյունային նույնպիսի սերտությամբ

յունը չունի, ինչ արևելահայերենում և քմայնացումն էլ ընդհանրապես համեմատաբար թույլ դրսևորում է ստանում:

Գ-Ք հակադրության էական տարբերակիչ հատկանիշն է ձայնեղություն-շնչեղություն հակադրությունը:

Ետնատամնային կիսաշփականները արևմտահայերենում ներկայացվում են **Ձ-Յ** երկանդամ հակադրությամբ: **Ձ**-ի կազմավորման ժամանակ հայումն ավելի ուժեղ է, **Յ**-ի դեպքում՝ թույլ: Երկուսն էլ ծայրալեզվային կիսաշփականներ են և հակադրվում են իրար ձայնեղություն-շնչեղություն հատկանիշով: Նույն հատկանիշով են հակադրվում նաև նախաքմային կիսաշփականներ **Ջ**-ն և **Ջ**-ն: Ի տարբերություն պայթական բաղաձայնների **Ջ**-ի և **Ջ**-ի արտաբերության ժամանակ պայթյուն տեղի չի ունենում: Փակվածքի լարվածությունը ուժեղ չէ, այնինչ արևելահայերենի **Ժ**-ի դեպքում «հայումն ավելի ամուր է» (Ժամանակակից հայոց լեզու, 90):

Ձայնորդներ. *Մ* և *Ն* ձայնորդները ռնգային են և արտաբերության տեղով մոտ են *Մ*-ն՝ *Բ*, *Փ*-ին, *Ն*-ն՝ *Դ*, *Թ*-ին: *Ն*-ի հնչման դեպքում շրթունքները կլորացած չեն, բայց և բացված չեն: Արևմտահայերենի *Ն*, *Մ* ձայնորդները էական տարբերություններ չունեն արևելահայերենի համապատասխան ձայնորդների համեմատությամբ «*Մ*-ն երկշրթնային ռնգային հպական ձայնորդ է, իսկ *Ն*-ն՝ ետնատամնային ծայրալեզվային ռնգային ձայնորդ» (Ժամանակակից հայոց լեզու, 94): Ընդ որում, երկուսն էլ բնութագրվում են թավության հատկանիշով:

Գրական արևմտահայերենում *Լ*-ի քմայնացումը համեմատաբար թույլ դրսևորում է ստանում: Քմային *Լ* տարբերակի արևմտահայերենին բնորոշ լինելու մասին հարկ է խոսել

որոշակի վերապահությամբ: Ինչ վերաբերում է կոշտ և միջին փափկությամբ *L*-երի մասին, ապա այդ կարելի է ընդունել անվերապահորեն:

Հաշվի առնելով լեզվի դիրքը նշենք հայերենագիտության մեջ ընդունված այն կարծիքը, որ *L*-ն առաջնալեզվային է, ըստ ատամների մասնակցության՝ ետնատամնային: Ինչպես ընդհանրապես հայերենի, այնպես էլ արևմտահայերենի *L*-ն բնութագրվում է նաև *կողքային* հատկանիշով:

Յ ձայնորդը բնութագրվում է նեղբացվածքայնությամբ. նրա էական հատկանիշներից է նաև քմայնությունն ու միջլեզվայնությունը: *Յ*-ի արտասանությունը տարբեր երանգներ է ստանում, կախված այն բանից, թե ինչ ձայնավորի է նախորդում կամ հաջորդում:

Հատուկ ուշադրության առարկա պետք է դարձնել արևմտահայերենի *Լ* և *Ռ* ձայնորդ հնչույթները: Արևելահայերենի համար Ա. Խաչատրյանը փաստել է հետևյալը. «Ըստ արտաբերման եղանակի *Լ*-ն նեղվածքային հնչյուն է, և ոչ թե թրթռուն, ինչպես ընդունված է հիմա» (Ժամանակակից հայոց լեզու, 109):

Արևմտահայերենում այդ նեղվածքայնությունը թույլ դրսևվորում է ստացել. դրա փոխարեն *Լ*-ն ձեռք է բերել թրթռունության որոշ երանգ և դրա հետևանքով թույլ դրսևորում է ստացել *Ռ-Լ* հնչույթային հակադրությունը: Այս երկու հնչույթների էական տարբերությունը հայագիտության մեջ սովորաբար ներկայացվում է թրթռայնություն հատկանիշով՝ միաթրթռունություն-բազմաթրթռունություն (հմմտ. է. Աղայան): Ինչպես ներկայացվել է Ա. Խաչատրյանի վերոհիշյալ աշխատանքում, *Լ* և *Ռ*

հնչույթները բնավ այդ հատկանիշով չեն տարբերակվում: Այդ առումով հետաքրքրական է Մ. Աբեղյանի հետևյալ միտքը. «*Ը* բաղաձայնը նույն *Ը* հնչյունն է, միայն լեզվածայրի դողողացողը շատ թույլ է: Այս երկուսի արտաբերման ժամանակ աղմուկը գրեթե անլսելի է մնում. բայց և այնպես դրանց հետ միացած աղմուկի աստիճանը տարբեր է՝ նայելով բարբառին: Եթե լեզվի առաջին մասը սեղմվում է ատամներին և բացվածքը նեղանում է, իսկ արտաբերության ուժը սաստիկ է, այդ ժամանակ լեզվի առաջ ընկած մասը դողում է մի նեղ անցքի մեջ, և *Ը* բաղաձայնի հետ լսելի է լինում Ս, Շ հնչյունների մի աղմուկ: ... Գրական լեզվի մեջ, սակայն, դրանք (*Ը*, *Ը*) հստակաձայն հնչյուններ են» (Մ. Աբեղյան, 82):

Ուրեմն, ինչպես հետազայում փորձառական տվյալներով ներկայցրել է Ա. Խաչատրյանը, *Ը*, *Ը* հնչույթների էական տարբերությունը ոչ թե թրթռման որակի մեջ է, այլ հպականության և ոչ հպականության: Այդ մասին որոշ գաղափար է տալիս նաև Աբեղյանը հենց վերոբերյալ հատվածում, շեշտելով լեզվի ծայրի ատամների սեղմված լինելու հանգամանքը:

Պետք է ասել, որ գրական արևմտահայերենում այդ հակադրությունը բնութագրվում է շատ ավելի թույլ դրսևորումով. ընդ որում *Ը* հնչույթն է կորցրել ուժեղ հնչույթ լինելու հանգամանքը. հաճախ շփոթը հոգուտ *Ը*-ի է: Խոսակցական արևմտահայերենի ոլորտներում նույնպես այդ ընթացքն է առկա, բացառությամբ հունահայ ոլորտի, ուր կարծես թե հակառակ երևույթի հետ գործ ունենք՝ շփոթը հաճախ ի նպաստ *Ը*-ի է: *Ը*-ն ներկայացվում է իբրև թույլ տարբերակվող հնչույթ:

Ը ձայնորդին բնորոշ արտասանական առանձնահատկություններն են ատամնային, ծայրալեզվային, նեղվածքային հատկանիշները: *Բ*-ի հնչյւման ժամանակ ձայնալարերը որոշակի դեր են խաղում իրենց թրթռումով:

Այսպիսով, *Բ-Ռ* հակադրությունը ոչ թե միաթթթություն – բազմաթթթություն հակադրությամբ է բնութագրվում, այլ նեղ-վաճքայնություն – թրթռություն հակադրությամբ: *Բ*-ի նեղվաճքային հականիշը համեմատաբար թույլ է դրսևորվում արևմտահայերենում: Ծայրալեզվայնություն, ինչպես նաև ալվեոլայնություն հատկանիշներով ընդհանուր լինելով *Ռ*-ի հետ, որոշ թրթռուն երանգ ստանալով այն առանձին դիրքերում կարծես թե դառնում է *Ռ*-ի տարբերակը (այս մասին տե՛ս հատկապես *խոսակցական* արևմտահայերենի մասը):

Վ, Ֆ բաղաձայնները շրթնատամնային շփականներ են: Ըստ արտաբերության ուժի Ֆ-ն, Վ-ի համեմատությամբ, ավելի լարված բաղաձայն է: Երկուսն էլ կարող են բնութագրվել *կատ-կայնություն* հատկանիշով: Որպես առանձին հնչույթներ նրանք հակադրվում են ձայնեղություն-խլություն հատկանիշով:

Լինելով առաջնալեզվային բաղաձայններ, ինչպես և $\mathcal{Q}$, U -ն, շփական բաղաձայններ $\mathcal{C}$, $\mathcal{C}$ -ն տարբերակվում են նախաքմային հատկանիշով: Երկուսին էլ հատուկ է թույլ քմայնացման երևույթը: Բուն տարբերակիչ հատկանիշը դրսևորվում է ձայնեղություն-խլություն հակադրությամբ:

Նույն ձայնեղություն-խլություն հակադրությամբ զույգ են կազմում *Խ-Ղ* բաղաձայնները (*Ղ*-ն ձայնեղ, *Խ*-ն՝ խուլ): Երկուսն էլ կատկային (փափկաքմային) շփական բաղաձայններ են:

Այսպիսով, արևմտահայերենում բաղաձայնների հակադրության հիմնական հատկանիշը պայմանավորված է ձայնեղություն-շնչեղություն հատկանիշով (*խլություն* հատկանիշով գուգակցված):

Հ բաղաձայնի արտասանությունը մոտ է ըմպանային արտասանությանը, սակայն «նրա արտաբերմանը, ըստ երևութին, մասնակցում են նաև ձայնալարերը, որոնք չեն տատանվում, բայց մոտենում են իրար, հետևաբար Հ-ն կարելի է անվանել կոկորդային կամ խոչակային բաղաձայն» (Խաչատրյան, 105): Այդ բնութագրումը ճշտորեն վերաբերում է նաև գրական արևմտահայերենի Հ բաղաձայնին:

Բաղաձայնների ձայնաբանական բնութագիրը. նկատի ունենալով արևմտահայերենի բաղաձայնական ոլորտին հատուկ շնչեղության հատկանիշի լայն գործառույթը՝ *Փ, Զ, Թ*, որոնց արտաբերության համար օդի համեմատաբար ավելի մեծ քանակ է պահանջվում, կարելի է ասել, որ մասամբ դրանով է պայմանավորված արևմտահայերենի հնչաշղթայի բաղադրիչների արտաբերման, արևելահայերենի համեմատությամբ, դանդաղ տեմպը: Ըստ ձայնաբանական տվյալի, օդի հոսանքի հատվածն ավելի երկար է *Թ*-ի և *Զ*-ի արտաբերման ժամանակ. ընդ որում *Զ*-ի արտաբերման ժամանակ օդի պոռթկմանը հաջորդող ժամանակը համեմատաբար երկար է:

Զ-ն և *Մ*-ն երկար տևողությամբ են բնութագրվում և ունեն ամենամեծ ուժգնությունը: Ընդ որում եթե իրենք գրեթե չեն ազդվում «շրջապատից», ապա իրենք կարողանում են ազդել ինչպես նախորդ, այնպես էլ հաջորդող հնչյունների վրա: Այդ հատկանիշներով ընդհանուր շատ բան ունեն *Շ, Ծ* հնչյուններն, այն

տարբերությամբ, որ վերջիններս տևողությամբ և հզորությամբ զիջում են Ջ-ին և Մ-ին: Շատ ավելի թույլ են դրսևորվում ուժգնության և տևողության հատկանիշները Ղ, Խ բաղաձայնների դեպքում, թեև այնուամենայնիվ Ղ-ն բնութագրվում է ավելի մեծ ուժգնությամբ, քան Խ-ն:

Ըստ ձայնաբանական տվյալների, Յ-ի արտաբերման դեպքում հպման պահը կարճ է, իսկ շփմանը՝ երկար: Պետք է ասել, որ արևելահայերենի համար նկատված երևույթը՝ հպումից շփման անցնելու համեմատաբար դանդաղ ընթացքը շատ ավելի բնորոշ է արևմտահայերենին: Ահա արևմտահայերենի դանդաղ տեմպի օգտին խոսող մի հատկանիշ ևս:

Ջ-ի համեմատությամբ, Ջ-ի ընդհանուր էներգիան ավելի մեծ է: Ջ-ի արտաբերության ընթացքում շնչի անկաշկանդ հոսքն առաջացնում է աղմուկի զգալի անկանոնություն:

Մ և Ն ռնգային ձայնորդները որոշակի շոշափելի ազդեցություն են գործում հաջորդող հնչյունների, հատկապես ձայնավորների ձայնաբանական բնութագրերի վրա: Մ և Ն ռնգային ձայնորդների և բուն ձայնավորների միջակա դիրքն է գրավում, ըստ ուժգնության հատկանիշի, Լ ձայնորդը:

Տևողության հատկանիշով Բ-ն ամենակարճն է հատկապես ձայնավորների միջավայրում, համեմատաբար երկար է բառավերջի դիրքում: Այնինչ Դ-ն ընդհակառակն, շատ ավելի կարճ է բառավերջում, քան բառամիջում և առավել ևս բառասկզբում, ուր այն ահամեմատ երկար է հնչվում: Այս առումով հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա. արևմտահայերենի Բ-ն Դ-ի հետ ունեցած հակադրության մեջ մեծ, մասամբ

չեզոքանալով, ձեռք է բերել նաև Ռ-ին հատուկ տնողության արժեքը:

Վերջապես, Յ ձայնորդի ձայնաբանական ընդհանուր բնութագիրը մոտ է Ի ձայնավորին, այն էական տարբերությամբ, որ վերջինիս ընդհանուր էներգիան բարձր է:

Ստորև ներկայացվող աղյուսակում տրվում են արևմտահայերենի բաղաձայններն ըստ արտաբերության եղանակի, ձայնի և աղմուկի պարունակության և արտաբերության տեղի (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Բաղաձայնների դասակարգման ընդհանուր տախտակ

Արտասանության տեղ	ձայնորդ		շփական		պայթական		պայթաշփական	
	շփական	ոնգային	ձայնեղ	խուլ	ձայնեղ	շքնչեղ	ձայնեղ	շքնչեղ
Երկշրթնային		Մ			Բ	Փ		
Շրթնատանային			Վ	Ֆ				
Հագագային (կոկորդային)				Հ				
Ետնալեզվային			Ղ	Խ	Գ	Ք		
Առաջնալեզվային	Լ Դ Ռ	Ն	Զ Ժ	Ս Շ	Դ	Թ	Չ Ջ	Յ Ջ
Միջնալեզվային	Յ							

Մինչ այժմ ներկայացվեցին *գրական* արևմտահայերենի հնչույթներն ըստ իրենց բնորոշ հատկանիշների: Այժմ ներկայացնենք *խոսակցական* արևմտահայերենի առանձնահատկություններն ըստ վերոհիշյալ լեզվագործածության ոլորտների:

Խոսակցական արևմտահայերենի հնչյունական առանձնահատկությունները. Արդի խոսակցական արևմտահայերենի հնչյունական կառուցվածքում առկա են այնպիսի երևույթներ, որոնք բնորոշ են սփյուռքահայ այս կամ այն գաղթօջախին միայն: Ստորև հատուկ ուշադրություն պիտի դարձվի ահա հենց այդպիսի երևույթների վրա:

1. Եռաշարք բաղաձայնական հակադրությունների ոլորտ: Ինչպես նշվեց, գրական արևմտահայերենը պայթական և կիսաշփական բաղաձայնների երկու շարք ունի միայն՝ *Բ-Փ, Գ-Ք* և այլն: Արդի խոսակցական արևմտահայերենի հատկապես հունահայ ոլորտում հստակորեն առանձնացվում են եռաշարք հակադրությունները՝ ձայնեղ-խուլ-շնչեղ-խուլ՝ *Պ-Բ-Փ* և այլն: Առօրյա խոսքում հունահայը հնչում է պարզ խուլերը՝ *Պ, Կ, Տ, Ծ, Ժ* հնչյունները, բայց գրական պաշտոնական խոսքի անցնելու դեպքում անգամ այդ ոլորտի սփյուռքահայը աշխատում է գրային *Պ, Տ, Կ* նշանների հնչումը ներկայացնել ձայնեղացած տարբերակով՝ *Բ, Դ, Գ*: Ստացվում է, որ առօրյա խոսակցական ոլորտում պարզ խուլերն առկա են և տարբերակվում են, բայց գրական հաղորդակցման ժամանակ շարունակվում է պահպանվել կանոնական երկշարք պայթականների և կիսաշփականների ընդհանուր արևմտահայերենի հատուկ հնչումը:

2. Փոփոխություններ են կատարվել նաև ձայնորդային ոլորտում: Խոսակցական արևմտահայերենում *Բ-Բ* հակադրությունը շատ ավելի թույլ է դրսևորվում, քան գրական կանոնական լեզվում: Ընդ որում, եթե Միջին Արևելքի ոլորտում *Բ*-ն հաճախ դառնում է *Բ*-ի դիրքային տարբերակ, ապա հունական ոլորտում *Բ*-ն է դիտվում իբրև *Բ*-ի դիրքային տարբերակ: Ըստ այդմ, նշված

ուղորտները ներկայացնող Մելքոնյան վարժարանի սաները կատարում էին համապատասխան ուղղագրական սխալներ. լիբանանահայը հաճախ շփոթում էր *Ռ*-ն՝ *Լ*-ի հետ:

Լ-Ռ հակադրության մեջ ներկայումս առաջացել է նոր վիճակ՝ անգլերենի ազդեցության հետևանքով: Այն թույլ հնչումով է որակվում անգլոամերիկյան ուղորտում, այն դեպքում, երբ ֆրանսիական ուղորտում *Լ*-ի հնչումը ֆրանսերենի ազդեցությամբ «մոտեցվել» է *Դ*-ին:

3. Արաբական ուղորտում *Դ*-ի արտասանությունը աչքի է ընկնում որոշ կոշտությամբ, արաբերենի բաղաձայնական ուղորտի առանձնահատկություններով պայմանավորված: Այդ ազդեցությունն աննշան է և չի կարելի խոսել անգամ հնչյունական տարբերակի մասին, բայց առանձնապես այն շոշափելի է հունահայ ուղորտի համապատասխան հնչյունի որակի համեմատությամբ:

4. *Գ, Ք* հնչյունները գրական արևմտահայերենում սովորաբար քմայնացած չեն: Ֆրանսահայ ուղորտում, սակայն, նշված հնչյունները որոշակի քմայնացման են ենթարկվել. Ընդ որում ավելի, քան արևելահայերենի համապատասխան հնչյունները:

5. Խոսակցական արևմտահայերենում առաջ են եկել նստվածքային մի քանի շերտեր՝ բնիկ (բնաշխարհիկ) հաճախ գուտ բարբառային հնչյունական առանձնահատկություններին գումարվում են տվյալ գաղթավայրի հիմնական լեզվի ազդեցությունները, առավել անգլերենի աստիճանաբար շոշափելի դարձող հնչյունական յուրահատկությունների ներթափանցումը առօրյա խոսքին բնորոշ ուղորտ:

Այդ ազդեցությունները հաճախ վերաբերում են վերինշուքային հնչական միավորներին՝ շեշտին, հնչերանգին, հնչաբառին, ուստի և կքննվեն համապատասխան բաժնում:

Ամերիկյան ոլորտում առաջացել է *Մ*-ի արտասանական մի տարբերակ, որ բնութագրվում է անգլերենի *Մ*-ին հատուկ լարվածությամբ և ռնգայնությամբ:

Վերինշուքային հնչական միավորներ. Գրական արևմտահայերենի վերինշուքային հնչական միավորների շարքում քրնենք շեշտը, հնչերանգը: Գրական արևմտահայերենի տոնի, ուժգնության և տևողության հարցերը վերջերս քննության առարկա են դարձել Ս. Ղուկասյանի մի քանի հոդվածներում (հիմնականում այդ հարցերը քննվել են հարցական նախադասությունների կառուցվածքային տիպերը բացահայտելու տեսանկյունից): Ինչպես ընդհանրապես հայերենում, այնպես էլ արևմտահայերենում, ուժգնության, տոնի և տևողության տարբերությունները պարզապես հատկանիշներ են, «Հատկանիշներ, որոնք կարող են ստեղծել հնչույթային տարբերություններ կամ ծառայել խոսքի ձևավորման ու սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտմանը» (Գ. Զահուկյան, 80): Հատկապես դրանք ունեն վերջին գործառույթը: Ծառայում են խոսքի անհատական բնութագրմանը: Տևողությունն ու ուժգնությունը առավելապես բնորոշ են ձայնավորներին, թեև հատուկ են նաև բաղաձայններին: Արևմտահայերենի տոնային փոփոխությունների պատկերը գրական արևմտահայերենի համեմատությամբ ավելի հարուստ է: Տոնի տարբերությունները բազմաեզր պատկեր են տալիս, ուր իրացված են տոնային բարձրացման և իջեցման հատկանիշները: Գրական արևմտահայերենին շատ ավելի բնորոշ հարթ/ հավա-

սար տոնի փոխարեն գրական արևմտահայերենին հատուկ է իջնող տոների հարափոփոխությունը:

Շեշտը գրական արևմտահայերենում կայուն – շարժական է. այն վերջնականկային է, ունի իր կայուն տեղը, ապա՝ բառի դեպի աջ աճման դեպքում շարժվում է վերստին դեպի վերջին վանկը: Շեշտագուրկ է գաղտնավանկով բառավերջը՝ *ըստ այնմ*, *աստղ* և այլն: Նման դեպքերում շեշտվում է գաղտնավանկից ձախ ընկած վանկը: Շեշտագուրկ են նաև այսպես կոչված սպասարկու բառասնիկները՝ *ի* տեսություն, *առ* այն, *ըստ* երևույթին և այլն:

Կանոնից շեղվում են լեզվի զարգացման նախորդ փուլերում հարադրական այնպիսի կազմություններ, ուր շեշտվել է ոչ թե վերջին, այլ առաջին բաղադրիչը՝ նույնիսկ, մի՛թե, ե՛րբևէ և այլն: Ի տարբերություն գրական արևմտահայերենում նկատվող միտումի՝ այս ձևերի շեշտը նույնպես վերջնական փոխադրել, գրական արևմտահայերենում շեշտը պահում է իր ավանդական դիրքը: Շեշտի ոչ տիպական այս ձևը կարելի է որակել իբրև պատմական հանգամանքով պայմանավորված:

Առաջին բաղադրիչն է սովորաբար շեշտվում նաև *երրորդ* վերջածանցով կազմված թվականներում՝ յո՛թներորդ, տա՛սներորդ: Ընդ որում առանձին ձևերում էլ շեշտը շարժվում է առաջին բաղադրիչից դեպի երրորդ բաղադրիչի առաջին ձայնավորը՝ *Ե-ն*՝ տասներե՛րորդ, տասներչո՛րորդ և այլն:

Կոչականի ձևերում նույնպես որոշակի է շեշտի նախավերջին վանկին դրվելը. «Եկո՛ւր, ո՛րոյակ» (ԴՎ):

Խոսակցական արևմտահայերենի հնչերանգն ու շեշտը.

Ստորև ներկայացնում ենք գրական արևմտահայերենից խոսակցականի ունեցած առանձնահատկությունները:

1. Առոգանություն, տոնային, հնչերանգային փոփոխություններով առանձնապես տարբերակվում է հունահայ ոլորտը: Հունարենի ազդեցությամբ, խոսակցական տվյալ ոլորտը ձեռք է բերել ընդհանրապես հայերենին ոչ բնորոշ երաժշտականության հատկանիշ, երգեցիկության, որ նկատում են նաև Միջին Արևելքի արևմտահայերը: Մեղեդայնությունը, տոնային ելևէջավորումը իսկույն մատնում են խոսողի հունահայ ոլորտին պատկանելը:

2. Այդ նույն ոլորտին պատկանողները շեշտադրության մեջ նույնպես սովորաբար գրական լեզվին բնորոշ շեշտի դիրքը փոփոխության են ենթարկում: Այդպիսով խոսքը դառնում է ոչ միայն, ինչպես Գ. Ջահուկյանն է նշել, սուբյեկտիվ երանգավորումով, այլև որոշակի լեզվաոլորտը երանգավորող էական հատկանիշ:

3. Գրական լեզվին ոչ բնորոշ շեշտային տեղաշարժ է նկատվում նաև անգլոամերիկյան ոլորտում՝ շեշտի նախավերջին վանկ փոխադրվելը համապատասխան հնչյունական արտաբերական լարվածությամբ և հնչյունական թուլացմամբ, ինչպես, օրինակ՝ *Հակոբյան*, *Ջամբաճյան* և այլն: Այս հնչումը ներկայումս լայն տարածում է գտնում հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հաճախ ամերիկահայի խոսքը տարբերակվում է ահա հենց այդ հատկանիշով:

4. Հնչման տարբերություններ են նկատվում նաև վենետիկյան և ոչվենետիկյան ոլորտներում: Այսպես՝ *բերեր են*,

տեսեր են ձևերը ներկայացվում են երկու արտասանական տարբերակով՝ գրական, կանոնական՝ բերեր են և այսպես կոչված՝ հույժ-գրական՝ *բերեր յեն, տեսեր յեն* և այլն:

Այդպիսի հնչումը թերևս պայմանավորված է օժանդակ բայի ձևերի առանձին գրությամբ: Տեսնելով զատ գրությունը, ենթադրվում է, որ գործ ունեն առանձին միավորների հետ և *են, ենք, եմ, ես* օժանդակ բայաձևերը հնչվում են այնպես, ինչպես կհնչվեին *Ե*-ով սկսվող բառերը: *Յեահնչումը* այնքան տարածված է, որ անգամ ներկայացվում է ռադիոհաղորդումների ժամանակ (այդպես է, օրինակ՝ Մերձավոր Արևելքի առանձին հաղորդավարների (խոսնակների) լեզվում): Թեև նման հնչումը դիտողության է արժանանում հոգուտ էահնչմանը:

Վանկ, արևմտահայերենի վանկի կառուցվածքը ի հայտ է բերում այն գծերը, որոնք հատուկ են ընդհանրապես հայերենին: Ամենից առաջ որոշակի սահմանափակումներ բաղաձայնական կապակցությունների հնարավոր տարբերակների ոլորտում: Ահա գրական արևմտահայերենում առկա բոլոր վանկատիպերը (ներկայացնում ենք միավանկ բառերի նմուշներով).

Բաց վանկեր	Ձ	ու
	ԲՁ	մը
	ԲԲՁ	-Սյու-
Փակ վանկեր	ՁԲ	ան
	ԲՁԲ	գիր
	ՁԲԲ	ինչ
	ԲԲՁԲ	սյուք
	ԲՁԲԲ	վանկ
	ԲԲՁԲԲ	կյանք

Եթե լեզվում բաց վանկատիպերը թվապես 1/3 են կազմում ընդհանուր վանկատիպերի, ապա խոսքաշարում (ինչպես ցույց կտրվի քիչ հետո) բաց վանկատիպերը թվախին գերակշռություն են ստանում:

Ինչպես երևում է նաև վանկատիպերում բաղաձայնական կապակցությունների հնարավոր իրացումներից, երեք բաղաձայնի կապակցություն մեկ վանկի սահմաններում գրական արևմտահայերենում բացառվում է: Հարկ է նշել նաև, որ բաղաձայնական կապակցություններով վանկատիպերը խոսքում իրացվում են 100-ից 7 հնարավորությամբ, այսինքն՝ բոլոր բաղաձայնական կապակցություններով վանկատիպերի հաճախականությունների գումարը 7 տոկոսից չի անցնում: Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների զուգադրման քննության ժամանակ մեր կողմից կատարվել են վիճակագրական անհրաժեշտ փորձեր, պարզելու համար ինչպես հնչյունների իրական բեռնվածությունը, այնպես էլ վանկատիպերի հաճախականությունը: Այստեղ ներկայացնում ենք այդ քննության արդյունքը (մանրամասնորեն տե՛ս մեր վերոհիշյալ աշխատանքը):

Նախ ներկայացնենք գրական արևմտահայերենի վանկատիպերն ըստ վիճակագրական արժեքների.

Վանկատիպ	տոկոս
Q	5,022
FQ	48,834
QF	4,606
FFQ	34,433
QFF	1,360

ԲԲԶ	0,555
ԲԶԲԲ	3,996
ԲԲԶԲ	1,054
ԲԲԶԲԲ	0,139

Այսպիսով, բաց վանկատիպերը կազմում են ընդհանուր վանկատիպերի շուրջ 55 տոկոսը, ընդ որում ամենաբարձր հաճախականություն ունեցող վանկատիպն է ԲԶ-ն, որն ունի շուրջ 49 տոկոսի հաճախականություն: Ըստ նվազող հաճախականության հաջորդ վանկատիպը եռահնչույթ ԲԶԲ տիպն է (34 տոկոս): Արևմտահայերենի հնչաբառը կարելի է ներկայացնել երկհնչույթ ԲԶ (բաց) և եռահնչույթ՝ ԲԶԲ (երկփակ) վանկատիպերի կապակցության պատկերով:

Ստորև ներկայացնում ենք արևմտահայերենի հնչավիճակագրության արժեքներն ըստ նվազող հաճախականության (տե՛ս աղյուսակ 5):

Հնչավիճակագրություն. գրական արևմտահայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունների քանակային հարաբերությունը ունի հետևյալ պատկերը.

	Համակարգ	տեքստ
Ձայնավորներ	6 19,4 տոկոս	41,37 տոկոս
Բաղաձայններ	25 80,6 տոկոս	58,63 տոկոս

Արևմտահայերենում միջին շարքի ձայնավորները ավելի հաճախական են. դա պայմանավորված է նաև քերականական կառուցվածքի առանձնահատկություններով (բացառական հոլովի *Է*-ով վերջանալը, *ԿԸ(ԳԸ)* մասնիկի մեջ *Ը*-ի առկայությունը, *կոր(գոր)*-ի գործածությունը (շարունակական ներկա) և այլն: *Ը* ձայնավորի բարձր հաճախականությունը պայմանավորված է

հատկապես հետևյալ հանգամանքով. բաղաձայնական կապակցություններից խուսափելու ընդհանուր հայերենին հատուկ միջոցը (Լ-ի ներմուծելով բաղաձայնների խճողումը վերացնելը) առաջին հերթին բնորոշ է արևմտահայերենին: Մա, ստ, սկ, սփ, սթ, սք, շտ, զբ, զգ երկանդամ բաղաձայնական տառակապակցությունները արևմտահայերենում տրոհվում են նախահունչ Լ-ի միջոցով՝ ըս-թափ, ըս-քանչ, ըզ-բաղ և այլն: Ահա թե ինչով է պայմանավորված արևմտահայերենի Լ-ի բարձր հաճախականությունը:

Աղյուսակ 5

(շարունակություն)

Կարգա- համար	հնչույթ	Տոկոս
1	2	3
1	Ա	13,60
2	Ն	9,67
3	Ե(Է)	8,78
4	Ը	7,97
5	Ը	5,87
6	Ի	5,37
7	Ու	4,13
8	Գ	3,99
9	Յ	3,85
10	Վ	3,77
11	Օ	3,62
12	Մ	3,30
13	Դ	2,91
14	Ք	2,74
15	Թ	2,45
16	Ս	2,22

1	2	3
17	Հ	1,90
18	Ց	1,76
19	Ջ	1,56
20	Լ	1,54
21	Փ	1,48
22	Բ	1,37
23	Ղ	1,37
24	Ձ	1,14
25	Շ	1,103
26	Ռ	0,82
27	Խ	0,73
28	Ջ	0,64
29	Ջ	0,38
30	Ժ	0,23
31	Ֆ	0,01

Ըստ էության, կարելի է ասել, որ արևմտահայերենին շատ ավելի բնորոշ են բաղաձայնական հաջորդականությունները, քան թե կապակցությունները: Այսինքն՝ գրային ձևով հաջորդող բաղաձայնները արտասանության ժամանակ հատկացվում են տարբեր վանկերի:

Հնչյունափոխություն. հայ քերականագիտության մեջ սովորաբար առանձնացվում է հնչյունափոխության երեք տիպ՝ պատմական, փոխազդեցական և դիրքային կամ շեշտափոխական (հմմտ. Հ. Աճառյան, 602-716): Գ. Ջահուկյանը ներկայացնում է հնչափոխության հինգ տիպ.

1. Վանկի մասնատում (*հաց-հա-ցի, մարդ-մար-դու*):
2. Առնմանություն (*անբիծ-ամբիծ*):
3. Հարմարեցում (*հանգիստ-յան-հանգստյան*):
4. Ամփոփում (սղում՝ *թշնամի-թշնամական* կամ փոփոխում՝ *տարի-ական-տարեկան*):
5. Շեշտափոխական հնչույթաբանություն (*սիրտ-սրտի* և այլն): (Գ. Ջահուկյան, 93-95):

Վանկի մասնատման դեպքում գործ ունենք ոչ թե զուտ հնչյունափոխության հետ, այլ հնչյունի վերաբաշխման՝ տարբեր վանկերի միջև: Գրական արևմտահայերենում այս տիպը ներկայացնում է ընդհանուր հայերենին բնորոշ յուրահատկություններ: Հնչյունափոխության այս տիպի հետ կապված մեկնաբանենք գրաբարի երկբարբառներից գոյացած «երկհնչյունների» մի առանձնահատկություն ևս: Ընդունված է, որ արդի արևմտահայերենում գրաբարյան երկբարբառները վերածվել են «երկհնչյունների»: Գրաբարյան երկբարբառները առաջացած երկհնչյունները վանկամասնատման (տարբեր վանկերի բաշխման) չեն

ենթարկվում: Սովորաբար *այ, էյ* և այլ հնչյունակապակցությունները ներկայացվում են առանց տարբերակելու, որ դրանք բուն երկբարբառային ձևերից գոյացած լինելու դեպքում չեն տրոհվում ինչպես՝ *գույն-գույ-նի, քայլ-քայ-լի* և այլն), իսկ բացվանկային համապատասխան կազմությունները՝ *հայ, թեյ* և այլն տրոհվում են՝ *թե-յի, հա-յի*: Այդ թերևս խոսում է այն մասին, որ «երկհնչյունները» շարունակում են պահպանել իրենց ամբողջական միավոր լինելու հատկությունը:

Առնմանության երևույթը (ձայնեղների և խուլերի «բախմամբ» հաջորդ բաղաձայնը ստիպում է, որ նախորդը նմանվի իրեն), գրական կանոնով սահմանափակվում է, ընդհանրապես ուղղախոսությունից ուղղագրության չանցնելով: Կարելի է թվել միայն մի քանի դեպք, երբ երևույթն արտացոլվել է նաև ուղղագրության մեջ: Այդպես է, օրինակ՝ *անբիծ-ամբիծի* դեպքում:

Հարմարեցման հետևանքով (ըստ արտասանության մեկ հնչյունի հարմարեցումը հատկապես ձայնավորից կախված) հնչույթային արժեքի տարբերություններ չեն առաջանում: Եթե գրական արևելահայերենի համար նշվում է, որ հարմարեցմամբ գոյացած տարբերությունները ենթահնչույթային են, ապա գրական արևմտահայերենում այս տարբերությունները շատ ավելի աննշան են:

Ամփոփման կամ սանդիի երևույթը գրական արևմտահայերենում ներկայացվում է մնացորդային (նստվածքային) երևույթներով, իբրև լեզվի զարգացման նախորդ փուլից ժառանգություն մնացած հին օրինաչափության հետքեր՝ *տարի-տարեկան, նոճի-նոճեստան, գինի-գինետուն* և այլն: Ամփոփման

հարցում գրական արևմտահայերենը որոշ սահմանափակումներ է դրել. այսպես՝ *կատու-ի* – *կատուի* և ոչ թե *կատվի*:


Ըստ էության գրական արևմտահայերենի հնչյունափոխության հիմնական տիպը շեշտափոխական հնչյունափոխությունն է: Շեշտափոխական հնչյունափոխությունը մասնավորաբար հատուկ է արևմտահայերենի բառակազմությանը (*գիրք-գրակալ, գրքային*), բայց ոչ այնքան ձևաբանությանը (թեքմանը)՝ *գիրք-գիրքի, ջուր-ջուրեքու* և այլն: Սա խոսում է Ջահուկյանի արտահայտած այն մտքի օգտին, որ շեշտափոխական հնչյունափոխության գրաբարին բնորոշ կանոնավոր մեխանիզմը արդի հայերենում գործում է միայն մասամբ, «շատ դեպքերում ժառանգվելով պատրաստի ձևով» (Ժ, 94): Այդ առումով գրական արևմտահայերենը զգալիորեն բեռնաթափվել է նշված ժառանգությունից:

Շեշտափոխական հնչյունափոխության ոլորտում առանձնացնելով բառակազմությանը և ձևաբանությանը վերաբերող փոփոխությունների տիպերը, վերջիններս կներկայացվեն արևմտահայերենի համապատասխան մակարդակների քննությանը նվիրված բաժիններում:

Նկատի առնելով, որ գրական արևմտահայերենը պահպանում է գրաբարյան (մեսրոպյան) ուղղագրությունը, բերենք գրաբարի հնչյունափոխության բնույթը հստակորեն պատկերող՝ Գ. Ջահուկյանի կողմից առաջարկված գծապատկերը (տե՛ս գծապատկեր 3):

Անշուշտ, ինչպես նշվեց, այս մեխանիզմը արևմտահայերենում չի գործում հին հայերենին հատուկ կանոնավոր ընթացքով: Բացի այդ, շեշտափոխական հնչյունափոխության նշված ձևերին

հարկ է ավելացնել արևմտահայերենին միջին հայերենից և արևմտահայ բարբառներից անցած հետևյալ երևույթը. բազմա-վանկ բառերի վերջընթեր վանկի ձայնավոր հնչյունի թուլաց-մամբ առաջացած հնչյունափոխության կամ անկման երևույթը՝ *հասկանալ-հասկընալ, մոռանալ-մոռնալ* և այլն: Եվ քանի որ այդպիսի (միջակա) դիրքում հանդես է գալիս սովորաբար *Ս* ձայնավորը, այդտեղից էլ արևմտահայերենում *Ս*-ի համեմատա-բար ավելի շատ հնչյունափոխության ենթակա լինելու իրողու-թյունը:



Գծապատկեր 3

Վերհատույթային հնչաբանություն. գրական արևմտա-հայերենում շեշտային առումով առկա է, այսպես կոչված, *անկայուն* բառերի մի խումբ, որոնք այլազան հանգամանքներով պայմանավորված՝ ստանում են շեշտային տարբեր արժեքներ՝ շեշտակիր են, բնութագրվում են թույլ շեշտով և, վերջապես, շեշտազուրկ են (հմմտ. Развитие фонетики современного русского языка): Այսպես, օրինակ՝ *Ուկ* աղջկան մը տանն էք, պարոն, *ո՛ւկ՛է՛* աղջիկը պիտի հագվի (ՀԶ, 147): Բերված նախադասության

մեջ երեք անգամ կիրառվում է *ռնէ* դերանունը և ամեն անգամ շեշտային տարբեր բնութագրումներով: Առաջին դեպքում այն թույլ շեշտակիր է, երկրորդում՝ աչքի է ընկնում ուժեղ շեշտով, ընդ որում գրեթե բոլոր ձայնավորները ընդգծված՝ տևական հնչում ունեն, վերջին դեպքում *ռրնէ*-ն գրեթե շեշտագուրկ է:

Ռիթմահնչերանգային և իմաստաշարահյուսական հատույթավորման անհամապատասխանությունը հատուկ է առանձնապես գրական բանաստեղծական ոճին:

Արևմտահայերենի գրական արտասանությունը վկայում է երկրորդական բառային շեշտերի առկայության մասին: Լսողական տպավորությամբ ստացած սույն եզրահանգումը, համաձայն որի երկրորդական շեշտ ունեցող ձայնավորն ըստ տևողության ավելի կարճ է բուն շեշտակիր ձայնավորից, բայց երկար է մյուս բոլոր շեշտագուրկ ձայնավորներից, հաստատվում է այլ լեզուների նյութի փորձառական քննությամբ:

Ի տարբերություն խոսակցականի, գրական արևմտահայերենում սահմանափակ կիրառություն ունի հնչյունի տևողության երկարաձգումը (Հ. Աճառյանի տերմինով՝ կրկնակի բաղաձայնների գործածումը)՝ *քսսան*, *քառասուն*, *հազգար* և այլն: Հնչյունների տևողության նմանօրինակ երկարացմամբ, ինչպես նշել է Հ. Աճառյանը, արտահայտվում է ոչ միայն դրական կամ բացասական հոգեվիճակ (հմմտ. *օֆֆ*, *ուֆֆ* և այլն), այլև սաստկական իմաստ (հմմտ. Հ. Աճառյան, 566): Խոսակցական լեզվից գրականին են անցել մի շարք այդպիսի ձևեր՝ *շիտտակը* (*Շիտտակը չես ըսեր* –ՎԶ, 108), *աստեղեն* (*Մինչև կես գիշերները աստեղեն չերերար...* ՎՇ, 152) և այլն: Նման դեպքերում սովորաբար շեշտ-

վում է այսպես կոչված կրկնակ բաղաձայնին նախորդող ձայնավորը՝ *շի՛տտակը, քը՛սսան, ա՛ստեղեն* և այլն:

Գրական արևմտահայերենը բնութագրվում է հնչաշղթայի բաղադրիչների (բառերի) համեմատաբար հստակ շեշտադրությամբ: Շեշտագուրկ բառերի թիվը, խոսակցականի համեմատությամբ, մեծ չէ: Հաճախ այնտեղ, ուր խոսակցական լեզվում առկա է մեկ հնչյունական տակտ (*թույլ շեշտակիր բառ + հիմնական շեշտով բառ*), գրական լեզուն ներկայացնում է երկու տակտ (*շեշտակիր բառ + շարույթային շեշտ ունեցող բառ*):

Գրական լեզվում շեշտը համեմատաբար կայուն տեղ ունի, այն դեպքում, երբ խոսակցական լեզվի շեշտը կարող է անցնել բառի ցանկացած վանկի ձայնավորի վրա (այսպես, օրինակ՝ *հա՛րքրու, շի՛տտակը, բարի՛կուն և այլն*): Ահա թե ինչու գրական լեզվում հնչյունները հիմնականում պահում են իրենց պատկերը և այլ լեզուներին հատուկ հնչական աղճատման երևույթը, որ ինչ որ չափով տարածվում է նաև արևմտահայ խոսակցականի վրա, խիստ սահմանափակ դրսևորում ունի գրական արևմտահայերենում: Պիտի-պի՛, կոք-կո՛ օրինակները բնորոշ են խոսակցական արևմտահայերենին: Ի թիվս արտաբերական այլ հանգամանքների, դա պայմանավորված է նաև արևմտահայ խոսքի համեմատաբար դանդաղ տեմպով:

Փորձառական տվյալներով ուսումնասիրելով գրական արևելահայերենի վանկի ինտեսիվությունը, Ռ. Թոխմախյանը եկել է այն եզրակացության, որ ինը վանկանի բառերում երրորդ, վեցերորդ և իններորդ վանկերը ուժգնության կուտակման երեք կենտրոններն են (տե՛ս Ռ. Թոխմախյան, 73): Ահա թե ինչ է գրել հետազոտողը. «Եթե բառի իններորդ վանկը բառային շեշտը

կրողն է ու ունի բառակազմիչ և սահմանազատիչ նշանակություն, ապա երրորդ և վեցերորդ վանկերի առանձնացումը կապվում է հնչաբառի ֆիզիոլոգիական դրսևորման հետ, և այդ վանկերում երկրորդային շեշտի հավանական արտահայտությունները չունեն հնչույթաբանական արժեք, այլ կարող են դիտվել որպես *ակցենտայնության ռիթմա-ինտոնացիոն դրսևորում*» (ընդգծումը մերն է – Ա.Ս.):

Ընդհանուր առմամբ ճիշտ բացահայտելով հայերենի շեշտաբանության այդ դրսևորումը, արժեր թերևս մեկնաբանել այն ոչ թե ինքնակա՝ բառերի օրինակով, այլ պարզապես հայերենի ռիթմի որոշակի օրինաչափությամբ. եռավանկ բառում() տիպի առկայությամբ և խոսքի շղթայում ոչ շեշտակիր երկու վանկերին հաջորդող վանկի շեշտակրությամբ, որ հենց Ռ. Թոխմախյանը իրավամբ համարում է «հայերենի խոսքի կենսաբանական արտահայտություն, խոսքի արտահայտման ռիթմական կազմակերպվածություն» (Ռ. Թոխմախյան, 73): Այդ երևույթը ընդհանուր առմամբ գործում է նաև գրական արևմտահայերենում, սակայն ռիթմական կազմակերպվածության որոշ խախտումներով, հատկապես երկրորդական շեշտերի ավելի լայն գործառությամբ պայմանավորված:

Ինչ վերաբերում է խոսակցական արևմտահայերենին, ապա այնտեղ գործում են երկու հակադիր միտումներ՝ շեշտակիր վանկերի միջև ընկած տարածության կրճատման, այնպես էլ, մյուս կողմից, նույն տարածության ընդարձակման ձգտումները, որոնց կանդրադառնանք հետո:

Գրական արևմտահայերենի վերհատույթային քննությամբ պարզվում է, որ (ներկայացվում է երեք կետերով)

1. Գրեթե յուրաքանչյուր բառ կազմում է առանձին հնչաբառ և շեշտակիր է: Անշուշտ, անշեշտ բառերը կարելի է ներկայացնել որոշակի բառաքանակ պարունակող ցուցակով:

2. Տակտի սահմանները համեմատաբար կարճ են և այդ սահմանների ընդարձակումը կարող է հաղորդմանը խոսակցական լեզվի երանգ տալ:

3. Խոսքի տեմպը համեմատաբար դանդաղ է: Ընդ որում տեմպային միջին ցուցիչները (արժեքները էական տատանումներ (տարբերություններ) չեն տալիս:

Խոսակցական արևմտահայերենի վերհատույթային քննության առաջին փորձն է այս: Բնականաբար, քննության ենթակա մի շարք հարցեր հետագա մանրակրկիտ վերլուծության են կարոտ: Գաղտնիք չէ, որ լեզվական բոլոր մակարդակներն էլ (հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն) այս կամ այն չափով առնչվում են վերհատույթային (ըստ Գ. Ջահուկյանի տերմինի՝ *վերհնչույթային*) կամ առոգանական երևույթների հետ:

Խոսակցական լեզվում վերհնչույթային հատկանիշները բնութագրվում են ավելի լայն գործառնությով, քան գրականում, հաճախ փոխարինելով զուտ լեզվական՝ բերանացի ձևերին: Այսպես, խոսակցական արևմտահայերենում տոնի իջեցումը՝ շեշտակիր ձայնավորի տևողության երկարացմամբ, ինչպես մի շարք լեզուներում, կարող է ծառայել հաղորդակցային միավորի ամբողջացման միջոց՝ արտահայտելով խոսողի վստահությունն իր ասածի նկատմամբ: Օրինակ՝ *-Վստա՜հ ես... -Ա՛յ-ոո՛*: Գրական լեզուն նույն «բովանդակությունն» արտահայտելու համար կնախընտրեր առանձին բառերի գործածությունը՝ *հարկավ, անշուշտ* և այլն:

Խոսակցական լեզվում մեծ կշիռ են ստանում խոսքի տեմպը, դադարը, տոնի փոփոխությունը և այլն: Դրանցով ստեղծվում են չեղանգային տիպերի լայն բազմազանություն: Խոսակցական արևմտահայերենում շեշտային տարբեր բնութագիր ունեցող բառերի թիվը զգալիորեն մեծ է: Ուստի կարելի է ասել, որ խոսակցական արևմտահայերենում շեշտի առումով անկայուն բառերը ձեռք են բերել ավելի մեծ կշիռ:

Խոսքի շղթայում բառերի շեշտակրության աստիճանը բնորոշվել է վերլուծությամբ: Ձայնագրված ժապավենների որակը հնարավորություն չի տվել կիրառելու փորձառական սարքեր: Անշուշտ, հետագայում հարկ կլինի շարունակել աշխատանքներն այս բնագավառում, լսողական քննությամբ ստացած միջոցներով:

Խոսակցական արևմտահայերենում շատ ավելի ուժեղ է զգացնել տալիս երկրորդական բառային շեշտի գոյությունը: Բառի սահմաններում շեշտակիր ձայնավորից բացի մեկ այլ ձայնավորի՝ մյուս բոլոր անշեշտ ձայնավորների համեմատությամբ ունեցած տևողության բարձր արժեքը կարող է ծառայել երկրորդական բառային շեշտի գոյության հիմք: Իմիջիայլոց, երկրորդական բառային շեշտի գոյությամբ կարելի է բացատրել միջին հայերենից արևմտահայերենին անցած հնչյունափոխական այն իրողությունը, որ բազմալանկ բառերում տեղի է ունեցել բառամիջի ձայնավորի սղում, բառավերջի ուժեղ շեշտի և բառասկզբի երկրորդական բառային շեշտի ազդեցությամբ, բառամիջի ձայնավորի տևողությունը հասնելով նվազագույնի՝ վերածվել է հայերենի ամենակարճատև ձայնավորի՝ *Է*-ի կամ էլ՝ պարզապես սղել է:

Խոսակցական լեզվին բնորոշ երևույթներից է առանձին սպասարկու բառերի հստակ շեշտակրությունը: Այդպիսիք գերազանցապես զբաղեցնում են հնչաշարային եզրային (սկզբնային կամ վերջնային) դիրքերը: Դրանցից են՝ *ահա, այո, սանկ* և այլն, որոնք հանդես են գալիս հիմնականում սկզբնային դիրքում: Այսպես, օրինակ՝ -*Այո՛, ըսեմ, որ ատանկ բան չէ եղած...*: Շեշտակիր մասնիկի կիրառումը հնչաշարային սկզբում ոչ միայն հաճախ հետապնդում է խոսակցության մեջ «ներգրավվելու»՝ առկայացվելու նպատակ, այլև երբեմն փոխարինում է շարույթի մեկ մասին, առանձին դեպքերում՝ ամբողջ շարույթին: Դրանով այն դառնում է, այսպես ասած, շարույթի «փոխարինող»: Հմմտ., Օրինակ՝ -*Խնդիրն ահա աս է* (ցուցամատ-բթամատի հայտնի շարժում): Շարույթն ամբողջանում է հանրալեզվաբանության միջոցներով (ձեռքի շարժում, դիմախաղ և այլն): Այսպիսով, խոսակցական արևմտահայերենում արտահայտությունը դառնում է ավելի սեղմ, քանի որ բառ-մասնիկները բեռնավորվում են վերհատույթային հատկանիշներով՝ հնչերանգ, տոնային երանգավորում, դադար և այլն:

Խոսակցական տարբերակում, սակայն, առկա է նաև սեմությանը հակառակ երևույթը՝ երկարաբանությունը, որ դրսևորվում է բառակրկնությամբ, արտահայտչական շեղումներով. «*Արթաքի էֆենդի, չըլլալիք բան մը պատահեցավ վերջը... ինչ պատահեցավ, գիտե՞ս... խելքեդ միտքեդ չանցնիր, Արթաքի էֆենդի... փորես որդ ինկավ, որդ, Արթաքի էֆենդի...*» (ՇՇ, 180): Կամ՝ «*Հա, կեցիր, ի՞նչ պըտը ըսեի յա... հա՛, ադ գող Տոնիկը*» (ՎԶ, 166): Այսպիսով, խոսակցական արևմտահայերենը, ինչպես խոսակցական մի շարք լեզուներ, բնութագրվում է հակոտնյա

երևույթներով. մի կողմից ձգտում *սեղմության* (սինկրետիզմին)՝ լեզվական փոքր ծավալով ավելի մեծ իրազեկում հաղորդելուն, մյուս կողմից հակառակ միտումին՝ *վերլուծականության*՝ տրոհմանը կրկնմանը և շեշտմանը... Հանդես են գալիս այսպես կոչված «դատարկ»՝ փուչ-բառերը, որոնք իրազեկացման առումով հավելուրդային են և հաճախ խոսքի շղթայի մեջ են մտցվում անգիտակցորեն՝ մեխանիկորեն, պարզապես խոսքի պարապը լրացնելու, մտքի թելը վերագտնելու, խոսքի շարունակությունը «պատրաստելու» համար: Այդպիսի բառիկներն են՝ *ահա, այո, ասանկ, տես*, այլն՝ *ըսի ըսավ* և այլ բառերը: Դրանց լայնորեն գործածելը խոսակցական լեզվի՝ գրականից ունեցած առանձնահատկություններից մեկն է: Օրինակ՝ *-Հա, կեցիր, ի՞նչ կըսես... կըսես թե Խաչիկը կըրցավ հանձնել քնությունը:*

Այդ դերով հանդես են գալիս նաև միանգամայն լիմաստ («առողջ») բառերը, բայց նման կիրառություններում այդպիսիք կորցնում են բառի հիմնական հատկանիշները. ամենից առաջ՝ շեշտակիք լինելու հատկանիշը: Օրինակ՝ *«Ըսել է, վաղը պիտի գայի, ապահո՞վ... ըսել է վաղը ամեն օրվա պես պիտի գայի»* (ՀԶ, 178): Բերված նախադասության մեջ այդպիսի դերով հանդես է գալիս *ըսել*-ը: Այդպիսի դեր է կատարում հաճախ նաև *շիտակ*-ը: Օրինակ՝ *«Շիտակը, Արսեն, աս խնդրին վրա շատ զարմացած եմ: Ինչպե՞ս... դուն, որ... չխորհեցար, որ... դուն. Որ առաջ այնքան խելացի էիր... ինչպես կըլլա, որ... շիտակը... ալ ձգենք մենք: Եթե ամեն մարդ, ատանկ... Ինչ է նե, երկար մեսելե: Անոնք տեպրյուե կըլլան, պե, անոնք տեպրյուե կըլլան, որ...»* (ՀԶ, 227):

Փուչ բառերը գերազանցապես շեշտագուրկ են և, ինչպես նշվեց, հիմնականում «լցնում են» խոսքաշղթայի դատարկ

տեղերը: Անբռնազբոս խոսքում, իսկ տվյալ դեպքում նկատի ունենք հենց այդպիսի խոսքը, նման բառերը խոսողի կողմից կիրառվում են բնագոյաբար և գերազանցապես ծառայում են խոսակցական լեզվի ռիթմիկ կազմակերպմանը: Ահա թե ինչու, երբ խոսողին դիտողություն էլ է արվում «մակաբույծ» բառեր գործածելու համար, դրան անմիջապես հաջորդող խոսքում շարունակվում է նույն բառերի կիրառումը:

Նկատելի է, որ «փուչ» բառերը հանդես են գալիս որոշ ռիթմիկ հաջորդականությամբ: Այդ իրողությունը փաստվել է մի շարք խոսակցական լեզուների տվյալներով: Երևույթը պարզորոշ դրսևորվում է հատկապես բերանացի խոսքում (առանձին դասախոսների ելույթներում), ուր պարբերաբար, որոշ ռիթմիկ հաջորդականությամբ մտցվում են «հերթապահ» բառեր: Օրինակ՝ *-Գիտես ինչ, Վարդան, ...ուրեմն...ես մինչև հիմա... ուրեմն, տեսեք որ ըսեմ...ուրեմն, նորեն, եթե ամբողջ հոգիովս համոզված չըլլայի... կհավատացնեմ ձեզ որ միայն...(ՀԶ, 130):*

Դադարներից առաջ անգամ դատարկ մասնիկները սովորաբար շեշտակիր են. *«Սանկ, Վահան, գիտես...ըրըր՝, չեմ սիրեր...ահա՛...չեմ սիրեր...սա՛նկ...խոսքի ասպետներուն:*

Նման դեպքերում *ըրըր*-ն, *ահա*-ն և այլն հնչերանգով առանձնացվում են, շեշտվում են, ընդգծվում են տոնով և, ինչպես նշվեց, հիմնականում ծառայում են խոսքի պարապր լցնելուն, նպատակ ունենալով ընդգծել նախադասության բուն բովանդակությունը: Այսպիսի դատարկ բառի է վերածվել նաև արևմտահայերենի *ըսի, ըսավ*-ը: Օրինակ՝ *Ըսի չերթանք: Տուն երթանք, ըսի, աղվոր փիլավ կա, ըսի: Ուտենք, թավլու խաղանք, ըսի: Կամ՝ Ըսավ քի չըլլար, կերթանք ըսավ Օննիկենց, ըսավ հրավերք կա*

հոն... Այս ձևերը խոսքի ռիթմիկ կազմակերպման «օժանդակ» միջոցներից են: Գրական բանավոր հաղորդակցման ժամանակ նմանօրինակ «փուչ» բառերը սահմանափակ կիրառություն են ունենում, սովորաբար ծառայելով գրական տիպարի կերպավորմանը, գրական խոսքին խոսակցականին բնորոշ երանգավորում տալու նպատակով: Օրինակ՝ *-Ըսել է, վաղը պիտի գայի, ըսել է վաղը, ապահո՞վ... Ե՛ս, ես հոգնած մարդ եմ, իսե՛նթ է, ինչ կըսե...* Նման կիրառություններում *ըսել*-ը դեմքով կարող է չհամաձայնվել բուն դիմային իրավիճակին: Առերևույթ քերականական խախտում կարող է տեղի ունենալ: Փոխանակ ասելու *ի՞նչ կըսես-ի՞նչ կըսե* (3-րդ դեմք 2-րդ դեմքի փոխարեն): Վերոբերյալ օրինակում հենց այդպիսի կիրառությունն է առկա: Նմանապես, փոխանակ ասելու *կըսես*, կիրառվում է *ըսել է* ձևը:

Ռիթմիկ կազմակերպման նման դեր ունի նաև *նայինք* բայաձևը. *-Է, ի՞նչ եղավ նայինք հետո...* Որոշապես երևում է, որ *նայինք*-ը շեշտագուրկ է: Հաճախ նման շեշտագուրկ նախկին լիիմաստ բառերը սովորաբար նախորդում են բուն շեշտակիր բառերին: Օրինակ. *Ըսել է երբեք, ըսել է ալ բնավ չես սիրեր... Ըսել է երբեք չես սիրած ինձի* (ՌԶ, 58):

Խոսակցական արևմտահայերենի հնչադասությունը եզրափակում է սովորաբար փոխառյալ եղանակավորող բառերով (օտարաբանությամբ): Միջին Արևելքի ոլորտում այդ դերով հանդես են գալիս գերազանցապես թրքաբանությունները, ֆրանսիական և անգլոամերիկյան ոլորտներում՝ համապատասխան բառաձևերը (հատկապես նոր սերնդի և որոշ չափով միջին սերնդի խոսքերում): Այսպես.

-Ադ չեղավ, *իշտե...* -Վարսենիկ, աղջիկս, ադ չի վայելեր *իշտե...*

-Պարապ բաներ կըսես, *ջանքմ...* Ասիկա ասանկ ըլլալու է, *ուել...*

-Ի՞նչ գործ ունես պարտեզին մեջ այս ժամուն, *հե...*

-Պատճառը շատ աղել գիտեմ, *sapristi* և այլն:

Հարկ է անդրադառնալ դերանունների և դերանվանական ձևերի շեշտակրության հարցին: Դերանունները, իրազեկացման առումով, բնութագրվում են իմաստային համեմատաբար սահմանափակ բեռնվածությամբ: Խոսակցական լեզվում այդ ձևերը կամ թույլ շեշտ են ունենում, կամ ընդհանրապես շեշտագուրկ են: Վերջինս պայմանավորված է խոսքի ռիթմական կազմավորմամբ: Ինչպես նշվել է ռուսերենի շեշտաբանությանը նվիրված աշխատանքներում (հմմտ. Русская разговорная речь) դերանունների շեշտակրության կամ շեշտագուրկ լինելու հանգամանքը պայմանավորված է հիմնականում հետևյալ երկու գործոններով՝ մի կողմից իրարահաջորդ ուժեղ շեշտերից խուսափելու և մյուս կողմից՝ շեշտակիր միավորների միջև ընկած տարածության նորմայից չգերազանցելը: Այդ գործոնները դրսևորվում են նաև հայերենում:

Ըստ դերանունների շեշտակրության հատկանիշի, պետք է տարբերակել երկու դեպք. 1. Հաղորդակցական արժույթով բնութագրվող դերանուններ, որոնք սովորաբար շեշտակիր են: Օրինակ՝ *Մեզի ասանկ մարդ պետք է, իշտե...ինծի՛, քեզի՛ պես կըտառապի...* (ՀՋ, 244):

Բերված նախադասության մեջ *ասանկ* դերանունը ոչ միայն շեշտակիր է, այլև ունի հնչերանգային ինքնուրույնություն և

հաղորդակցական առումով արժույթավորված է: Ընդ որում *ասանկ*-ը ներքին հակադրության մեջ *անանկ*-ի հետ: Դերանվան շեշտակրության հարցը (ուժեղ կամ թույլ շեշտ ունենալը) կախված է այն բանից, թե ինչ դիրք է գրավում դերանունը շարույթում: Սկզբնական դիրքում (շարույթի սկզբում) այն ընդհանուր առմամբ շեշտակիր է. «*Դո՛ւն ըսիր, կհասկանա՞ս...: Կամ՝ «Ոնե՞ ատեն, ախպար...»*: Կարելի է ասել, որ *ոնե* դերանվան յուրաքանչյուր ձայնավոր շեշտակիր է և հնչում է ուժեղ շեշտի դեպքում տրոհված ձևով՝ *ո՛-յե՛-վէ՛*:

2. Խոսքի պարապը լցնող դերանունները շեշտագուրկ են: Հանպատրաստից խոսքում պատեհ բառը փնտրելու ընթացքում հաղորդակցվողը դիմում է դերանունների օգնությանը. այդ դեպքում խոսքը բնութագրվում է որոշ դադարով, որին անմիջապես հաղորդում է մասնավորեցնող՝ ճշգրիտ բառը: Այդ դեպքում դերանունները ուժեղ շեշտ չեն ունենում, մինչդեռ «փնտրտուքային» ՀՀՀ-երը տարբերվում են ուժգնությամբ և հաճախ շեշտվում են: Օրինակ՝ *Հագար անգամ ըսած եմ, գիտե՞ք, ա, ան՝ առավոտվա կողմը, առիթեն օգտվելու է, պատեհությունեն, ան առավոտվա կողմ բան մը ըլալու է նե՛ ըլլա, դէ նե՛ ճար չի կա* (ՀԶ, 86):

-*Հա, կեցիր, ի՞նչ պըտը ըսեի յա... ըրը. Հա ադ գող-Տոնիկը* (ՎԶ, 165):

-*Լսե, ծո, ի՞նչոր էր ադ... հերթապահին անունը...ադ...ըրը... Սահակյա՞ն, այո, Սահակյան, գիտես քի Բեյրութ է գավալլըն:*

Նմանօրինակ դերանունները սովորաբար հանդես են գալիս դադարից առաջ, անհրաժեշտ բառը փնտրելիս և կարելի է անվանել «փնտրտուքային» դերանուններ: Նման կարգի հավե-

լուրդային դերանունների դերով հանդես են գալիս նաև վերոբերյալ հայերեն *այո, հա, հե, ըհը* և այլ ձևերի թրքերեն, ֆրանսերեն, անգլերեն համարժեքները, ըստ ուրտային բաշխվածության՝ *ուել, ուի* և այլն:

«Փոխարինող» դերանունները սովորաբար շեշտ են ունենում ասույթի հաղորդակցական կենտրոնում «տեղակայվելու» դեպքում:

Նոր իրազեկացում հաղորդող լիիմաստ բառերը գերազանցապես շեշտակիր են: Սակայն, ինչպես վկայված է մի շարք խոսակցական լեզուների քննությունից (հմմտ. վերոբերյալ աշխատանքները), եթե բառի պարունակած իրազեկացումն արդեն հայտնի է բուն հաղորդակցմանը նախորդած փուլից կամ իրադրությունից, ապա լիիմաստ բառը կարող է սուսկ թույլ շեշտ ունենալ կամ էլ բոլորովին չունենալ: Շեշտային անկայունությամբ են բնութագրվում հատկապես հաղորդակցման նույն հատվածում մի քանի անգամ կրկնվող բառերը և ըստ այդմ ուժգնության տարբեր շեշտեր են ունենում: Օրինակ՝ *Խելք ըսեմ՝ չունիս, զարգացում ըսեմ՝ չունիս, հարստություն ըսեմ՝ չունիս, գեղեցկություն ըսեմ՝ չունիս, մեկ որդ մը ունեիր, որ քեզ նուրբ կպահեր, հիմա ան ալ չունիս...* (ՇՇ, 184): Ընդ որում անկայուն շեշտադրությունը նկատելի է. առանձին դեպքերում շեշտը դրվում է առաջին կիրառության ժամանակ, հետո բառը կրկնվելով՝ ստանում է թույլ շեշտ: Որոշ դեպքերում էլ հակառակն է տեղի ունենում: Պատճառը պետք է փնտրել հաղորդակցման կենտրոն լինելու հանգամանքի մեջ: Այսպես, օրինակ՝ *Փարիզ չէ...Լիոն է... Չկարծեք, որ Փարիզ է...Լիոնեն կու գա, Լիոնե՛ն...* (ՀԶ, 128):

Շեշտակիր կամ թույլ շեշտված լինելու հանգամանքը հիմնականում պայմանավորված է խոսքի ռիթմիկ բեռնվածությամբ (հմմտ. Ռ. Թոխմախյան, անդ), նայած թե տվյալ բառը խոսքի շղթայում ինչ դիրք է գրավում: Այսպես՝ *Ինչ որ է, խնդիրը այդ չէ... Խնդիրը սա է...* (ՀԶ, 150): Իմաստային հակադրության երկրորդ եզրը՝ *սա*, հստակ շեշտվում է՝ հաղորդակցման կենտրոնին մոտ լինելով:

Բառակապակցության շեշտային կառուցվածքը. հայտնի է, որ որքան սերտ է բառակապակցության բաղադրիչների իմաստային կապը, այնքան ավելի սպասելի է, որ բաղադրիչներից մեկը շեշտային (դինամիկ) թուլացման ենթարկվի: Ըստ այդմ բառակապակցության բաղադրիչները շեշտակրության առումով տարբեր աստիճաններ կարող են ներկայցնել (հմմտ. Русская разговорная речь, 40): Սովորաբար բառակապակցության առաջին բաղադրիչը թույլ (երկրորդային) շեշտ է կրում (կամ անշեշտ է լինում), իսկ երկրորդ բաղադրիչը հիմնական (ուժեղ) շեշտ է կրում: Երկուսը միասին կազմում են մեկ հնչյունական տակտ: Օրինակ՝ *բարի մարդ (մըն է):*

Անվանական կայուն կապակցությունները սովորաբար ներկայացնում են մեկ հնչյունական տակտ և ունենում են մեկ շեշտ, որ դրվում է վերջին բաղադրիչի վրա՝ *սուրբ ծնունդ, նոր տարի* և այլն:

Բարդ է երկբառ կապակցությունների պարագան, երբ առաջին բաղադրիչը թվական որոշիչ է. այդ դեպքում սովորաբար հիմնական շեշտը դրվում է վերջադիր (գլխավոր) բառի վրա՝ *հիսուն ոսկի* (հմմտ. *հիսուն ոսկի տոլի*), բայց հաղորդակցման բովանդակությունից ելնելով՝ շեշտային բախշիվածության

պատկերը կարող է փոխվել. ըստ այդմ բուն շեշտակիք կարող է դառնալ առաջին բառը՝ *հիսուն ոսկի*: *Հիսուն ոսկի* և նման կապակցություններում ոչ միայն շեշտվում է առաջին բաղադրիչը, այլև շեշտը իր վերջնականակային սովորական դիրքից առաջ է ընկնում, դրվելով երկար տևողությամբ (կրկնակ) բաղաձայնից անմիջապես առաջ:

Կան դեպքեր էլ, երբ երկու բաղադրիչներն էլ շեշտվում են. Նման դեպքերում, սովորաբար, երկու շեշտակիք բառերի միջև «ներմուծվում է» օտար բառ և փաստորեն կապակցությունը տրոհվում, ընդմիջարկվում է: Օրինակ՝ *հիսուն պայուսակ* – *հիսուն, ըսած եմ, պայուսակ...*

Բայական և անվանական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչների շեշտակրությունը. արևմտահայերենի հարադիր բառերը շեշտակրության հարցում հետևում են հայերենին ընդհանրապես բնորոշ այն հատկանիշին, որ ուժեղ բառային շեշտ են կրում բարդության առաջին բաղադրիչները (հմմտ. 126)՝ *մոտ երթալ, խելքին պառկիլ, գլխուն զարնել* և այլն: Այդ այնքան էլ ճիշտ չէ, եթե բարդության երկրորդ բաղադրիչը թեքված ձև է՝ *խելքին պառկեցալ*:

Բայ, գոյական, ածական, մակբայ, թվական + ըլլալ: Բայական և ածական բաղադրիչների դերով հանդես են գալիս հաճախ փոխառյալ բառաձևեր, ըստ ոլորտային պատկանելության տվյալ ոլորտի գերիշխող լեզվական ձևերը և բոլոր ոլորտների համար՝ թրքաբանությունները: Օրինակներ՝ *Էքսքյուզե ըրե, չուրյումիշ ըլլա, մերախներս ելավ, տուվա ըրե, տիրեքթ ըրե, տեպրույե կըլլան* և այլն: Նման դեպքերում նույնպես, երբ բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչները ընդմիջարկվում են,

երկու մասերն էլ շեշտակիր են դառնում՝ *Անիկա գացած կարծես ըլլալու է*:

Ի տարբերություն օժանդակ բայաձևերով ստորոգյալի, բաղադրյալ ստորոգյալի երկու բաղադրիչներն էլ հաճախ շեշտակիր են առաջինն ավելի ուժեղ, քան երկրորդը: Մանավանդ այն դեպքում, երբ ինչպես նշվեց, բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչները ընդմիջարկվում են, անհրաժեշտ պայման է դառնում երկու բաղադրիչների շեշտակրությունը: Օրինակ՝ *Գացած կերնի ըլլալու է*:

Արևելահայերենի համար Ռ. Թոխմախյանի արած եզրակացությունը, որոշ վերապահությամբ կարելի է ընդունել ինչպես արևմտահայերենի, այնպես էլ արևելահայերենի համար: Ռ. Թոխմախյանը գրել է. «Հայերենի հարադիր բառերը խոսքային շղթայում ունեն հնչական սերտ միասնություն և *սովորաբար միշտ* հանդես են գալիս մեկ շարույթի սահմաններում» (Ռ. Թոխմախյան, 128): *Սովորաբար* ճիշտ է, բայց ահա *միշտ*-ը վիճարկելի է:

Բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչների, ինչպես նաև հարադիր բառերի շեշտային որակը պայմանավորված է նաև տվյալ բառի երկարությամբ: Երեք և ավելի վանկերից բաղադրված լինելու դեպքում շեշտակիր լինելը դառնում է միանգամայն ակնկալելի:

Այսպիսով, խոսքի շղթայում բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչը բնութագրվում է թույլ շեշտով կամ էլ պարզապես շեշտազրկությամբ երբ կամ բազմավանկ բառ չէ, կամ էլ գտնվում է նախադասության իմաստային «կենտրոնից» ոչ հեռու: Վանկա-

քանակությամբ պայմանավորված շեշտակրության երևույթը որոշ հավանականություն ունի և մեկընդմիջտ վճռված բան չէ:

Հետևողական գործադրություն ունի այն սկզբունքը, որ (ինչպես հարադրական բայերում) բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչները ընդմիջարկվում են, ապա երկու բաղադրիչներն էլ դառնում են հավասարապես շեշտակիր: Օրինակ՝ *մար մտնել* – *մար պիտի մտնե*, *գլխի իյնալ* – *գլխի կրնար թերևս իյնալ*:

Հանրահայտ իրողություն է, որ բառի հնչյունական աղճատումը հաճախ պայմանավորվում է նրա շեշտակրության բնույթով, կախված այն բանից, թե աղճատումը տեղի է ունենում շեշտակի՞ր, թույլ շեշտվա՞ծ թե անշեշտ բառերում: Ըստ այդմ էլ սովորաբար տարբերակվում է հնչյունական աղճատման (սղման, ձևափոխման) երեք տիպ՝ ա) շեշտակիր, բ) թույլ շեշտված և գ) շեշտագուրկ բառերի տիպ:

Ա) Շեշտակիր բառերի վերաբերյալ լեզվաբանական գրականության մեջ նկատված է, որ լեզուներում, սովորաբար, ետ-շեշտակիր առաջին վանկի ձայնավորի սդում է տեղի ունենում: Այսպիսի երևույթ առկա է հատկապես արևմտահայերենում (*ցամաք-ցամքիլ*, *ցամքեցնել*), ուր բառասկզբի առաջին վանկի թույլ շեշտի և վերջնավանկային ուժեղ շեշտի ազդեցության տակ միջվանկային ձայնավորի աղճատում է առաջանում (*Ա*-ի հնչյունափոխում *Ը*-ի կամ սդում՝ *վաճառական-վաճառկան*):

Բ) Թույլ շեշտված բառերը կարող են ենթարկվել ինչպես որակական, այնպես էլ քանակական փոփոխությունների: Ընդ որում հնչյունական աղճատումը կարող է կատարվել ինչպես նախահար դիրքում (*պիտի-պի*), այնպես է վերջահար դիրքում (*կըսեմ կոր* – *կըսեմ կո*):

Արևմտահայ խոսակցականի բնորոշ գծերից է այն, որ նմանօրինակ աղճատման են ենթարկվում ամենահաճախական բառերը, որ երևում է հենց բերված *պիտի, կոր* մասնիկների հնչյունափոխությունից: Ինչպես պարզվել է շեշտաբանական քննությունից, հայերենի բառի կառուցվածքն ըստ շեշտի բաշխման կարելի է ներկայացնել հետևյալ պատկերով՝ $\sim$ (երկու անշեշտ և երրորդ վանկը շեշտված): Եթե նկատի ունենանք, որ սովորաբար առաջին վանկը նույնպես թույլ շեշտ է կրում, իսկ երկու շեշտակիր վանկերի «արանքը», հայերենի օրինաչափությամբ, երկու վանկից սովորաբար չի անցնում, ապա պարզ կդառնա, թե ինչու *պիտի ուտեմ* հնչաբառը խոսակցականում վերածվել է *պի ուտեմ*-ի: Սղումի հետևանքով թուլանում է խոսակցական լեզվի միջբառային սահմանը և հնչաբառերի կազմի «վերադասավորում» է տեղի ունենում:

Գ) Լեզուներում (հատկապես խոսակցական տարբերակում) հնչյունական աղճատման են ենթարկվում շեշտագուրկ (անշեշտ) բառերը: Այդպիսի բառերի ձայնավորը աղվելով՝ բառը վերածվում է նախամասնիկի կամ վերջնամասնիկի, որի հետևանքով ձևավորվում է մի նոր հնչաբառ:

Քննությունից պարզվում է, որ այդ երևույթը արևմտահայերենի խոսակցական տարբերակում խիստ սահմանափակ տարածում ունի, ուստի կարելի է ասել՝ բնորոշ չէ: Իրազեկացման առումով սահմանափակ բեռնվածություն ունեցող բառերը, սովորաբար, շեշտագուրկ են և այդպիսի բառաձևերում (ոչ բազմավանկ) ձայնավորի տևողության զգալի նվազում է նկատվում:

Այդպիսին է արևմտահայերենի շեշտագուրկ բառերի իրավիճակը: Ինչ վերաբերում է հնչյունական աղճատման երևույթին, ապա այն, ինչպես նշվեց, աննշան դեր է խաղում: Պատճառը ամենայն հավանականությամբ խոսակցական արևմտահայերենի *խոսքի համեմատաբար դանդաղ տեմպն է*, որ *նպաստում է հնչյունական պատկերի անխաթար պահպանմանը*:

Համառոտաբար անդրադառնանք խոսակցական *արևմտահայերենի տակտի* սահմանների հարցին: Խոսակցական արևմտահայերենը գրական կանոնական լեզվից տարբերվում է ամենից առաջ անշեշտ և թույլ շեշտակիր բառերի համեմատաբար մեծ քանակով, որ, բնականաբար, ազդում է տակտի ծավալի ընդարձակման վրա:

Շեշտագուրկ և թույլ շեշտված բառերի քանակով պայմանավորված՝ տակտի ծավալը մեծանում է:

Եթե գրական լեզվում, անգամ արագ հնչման դեպքում, գրեթե յուրաքանչյուր բառ առանձին տակտ է կազմում և շեշտակիր է, ապա խոսակցական լեզվում պատկերն այլ է. փոքրանում է տակտի քանակը, բայց մեծանում է տակտի ծավալը: Տակտի և բառի հարաբերության փոփոխությունը հետաքրքիր է դիտարկել միևնույն անձնավորության գրական կանոնական խոսքից խոսակցականին անցնելու պայմաններում: Բացի բառապաշարային և քերականական բնույթի փոփոխություններից, տեղի է ունենում տեղաշարժ խոսքի ռիթմիկ կառուցվածքում՝ *տեմպը համեմատաբար արագանում է* և, ինչպես նշվեց, *մեծանում է տակտի ծավալը*: Մեկ տակտ են կազմում արդեն ոչ թե առանձին վերցրած ամեն բառ, այլ մինչև մի քանի այնպիսի բառեր, որոնք կորցրել են շեշտակրության հատկանիշը: Այդպիսի շեշտազրկ-

ված բառերը ենթարկվում են հնչյունական աղճատման՝ սղման, հնչյունափոխության հարմարեցման: Իմիջիայլոց հնչյունական աղճատման կարող են ենթարկվել նաև բարդ բառերի կազմի մեջ մտած առանձին բաղադրիչներ՝ *թատր-երգություն-թատերգություն, կեղծ-ծամ կեղծամ*: Հնչյունական նման սղումը նաև շեշտային պայմանավորվածություն ունի:

Մեր կողմից ուսումնասիրել են գրական և խոսակցական արևմտահայերենի շուրջ երկու հազար տակտեր: Անշուշտ, հետազայում ավելի լայն լավալի վիճակագրական քննություն կարելի է կատարել, բայց այժմ իբրև նախնական արդյունք ներկայացնենք արևմտահայերենի գրական և խոսակցական տարբերակների տակտի արժեքները (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Խոսքի տիպ (տեսակ)	տակտերի ընդհանուր թիվը	մեկ բառանոց տակտերի տոկոսը	երկբառանոց և ավելի տակտերի տոկոսը
1. Ելույթ ձայնասփյուռով	450	91	9
2. Դասախոսություն	605	89	11
3. Անպաշտոն զրույց	453	82	18
4. Մտերմիկ զրույց	512	79	21

Աղյուսակից երևում է, որ մեկ բառից ավելի բաղկացած տակտերի թիվը խոսակցական լեզվում զգալիորեն ավելի է (16 տոկոս) գրական լեզվի 8-10 տոկոսի համեմատությամբ: Այսպիսով, խոսակցականում տակտի սահմանները ընդարձակվում են:

Կարելի է անվիճելի համարել այն դրույթը, որ արևմտահայերենի խոսքի ռիթմահնչերանգային կառուցվածքը բացի շեշտից, պայմանավորվում է նաև վերհնչության մի շարք այլ գործոններով՝ հիմնական տոնի շարժման բնույթ, բարձրություն, տեմպ և այլն: Դրանցով կարելի է հեշտությամբ որոշել նաև բանավոր խոսքի խոսակցական լինելու իրողությունը:

Քանի որ վերհատության լարևոր հատկանիշներից է տեմպը, քննենք *արևմտահայերենի խոսքի տեմպը*: Մի շարք լեզուների խոսակցական ոլորտների տեմպը քննելիս պարզվել է, որ գրական լեզվի բանավոր տարբերակի համեմատությամբ խոսակցականը բնութագրվում է համեմատաբար արագ տեմպով (հմմտ. Русская разговорная речь, 51): Նմանօրինակ պատկեր է ստացվել նաև արևելահայերենի տեմպը առաջին անգամ փորձառական միջոցներով քննելիս (տե՛ս Ա. Խաչատրյան, Ռ. Թոխմախյան, Հ. Ջաքարյան, Խոսքի տեմպը):

Արևմտահայերենի Խոսքի տեմպը քննելիս հետապնդվել են հետևյալ նպատակները. 1. Գտնել խոսակցական արևմտահայերենի բնորոշ խոսքատեմպային միջին ցուցիչներ, 2. Զուգադրել այդ տվյալները գրական խոսքի տեմպային արժեքների հետ, 3. Գտնել խոսակցականի տեմպի փոփոխության սահմանները և պատճառները, 4. Վերջապես, տեմպի ազդեցության ձևերը (աստիճանը) հնչունական փոփոխությունների վրա:

Ամենից առաջ հարկ է նշել, որ խոսակցական արևմտահայերենում, ինչպես և մի շարք այլ լեզուներում, խոսքի տեմպային ցուցիչները ընդգրկում են փոփոխության լայն սահման ոչ միայն տարբեր մարդկանց, այլև միևնույն մարդու տարբեր իրավիճակներում կատարված հաղորդակցման ժամանակ: Ուստի,

միշտ չէ, որ կարելի է որոշել կայուն և վերջնականապես հաստատված տեմպային սահմաններ: Հասկանալի է, որ խոսքի տեմպը հաճախ պայմանավորված է նույն անհատի հոգեզգացական վիճակից, իրադրությունից, մեկ խոսքով՝ բարձրագույն նյարդային համակարգից:

Լսողական քննությամբ իսկ պարզ է դառնում, որ այդուհանդերձ կարելի է խոսել ընդհանրապես գրական լեզվին և խոսակցականին բնորոշ խոսքային տեմպի միջին արժեքների մասին: Միջին տեմպային արժեքները գտել ենք հետևյալ կերպ. տեսաձայնադրիչ ձայնագրությունները քննվել են ըստ արևմտահայերենի գրական-բանավոր և խոսակցական տարբերակների (ուսումնասիրվել է երեք տեղեկատուի գրական և խոսակցական՝ մտերմիկ, տեմպերի առանձնահատկությունը): Քննված ձայնագրությունները ժանրային և հանրալեզվաբանական արժեքներով տարաբնույթ են. նկատի ունենք խոսակցության նյութը, տարիքը (հին, միջին, նոր սերնդին պատկանելը), ծանոթության աստիճանը և այլն: Հաշվի պետք է առնել նաև լսարանի չափը, այսինքն՝ թե քանի մարդ է ներգրված տվյալ անմիջական հաղորդակցմանը:

Ուսումնասիրության էական խնդիրներից է եղել միևնույն տեղեկատուի տեմպային արժեքների փոփոխության բացահայտումը՝ գրական լեզվից խոսակցականին անցնելու ժամանակ:

Ճիշտ է, որ անգամ միևնույն անհատը տեմպային տարբեր բնութագրումներ կարող է ունենալ տարբեր իրավիճակներում (նկատի ունենք խոսքային իրավիճակները): Մակայն եթե բոլոր տեղեկատուների գրական խոսքը ստացվում է մեկ միջին արժեքով բնութագրվող (արագ կամ դանդաղ), իսկ խոսակցականը

բնութագրվում է մեկ այլ միջին արժեքով (ավելի արագ կամ արագ), ապա նշանակում է, որ գրական բանավոր և խոսակցական լեզուները ունեն ընդհանուր առմամբ յուրահատուկ տեմպային միջին արժեքներ: Ահա այդ արժեքների զուգադրությամբ էլ կարելի է խոսել տվյալ լեզվավիճակների տեմպային առանձնահատկությունների մասին:

Մի քանի խոսքով ներկայացնենք տեմպի չափման մեր կողմից որդեգրված մեթոդիկան: Հետևելով ռուս լեզվաբանության մեջ խոսքի տեմպի քննության մեթոդաբանությանը խոսքի միջին արագությունը որոշվել է ըստ արտաբերված հնչյունների քանակի և ժամանակի միավորի հարաբերության: Հայտնի է, որ հաճախ կիրառվում են խոսքի տեմպը որոշելու տարբեր չափորոշիչներ՝ ռիթմական խմբի միջին տևողությունը, վանկերի թիվը մեկ վայրկյանում, բուգեում և այլն: Հաշվի է առնվում հատկապես միջին վանկային տևողությունը:

Ներկա քննության համար, ինչպես նշեցինք, հիմք ենք ընդունել *հնչյունների քանակ+ժամանակի միավոր* հարաբերությունը ավելի կոնկրետ՝ մեկ վայրկյանում արտաբերված հնչյունների քանակը և հնչյունի միջին տևողությունը: Այսպիսի մոտեցումը պայմանավորված է նրանով, որ ինչպես գրում են խոսակցական ռուսերենի ուսումնասիրողները (Русская разговорная речь, 53). «Այդպիսի հաշվարկման մեթոդիկան թույլ կտա ներկայացնել խոսակցական լեզվի տեմպի ամենաճշգրիտ նկարագրությունը»:

Քննվել են գրական բանավոր և խոսակցական վիճակներից ընտրված հատվածները, յուրաքանչյուր 1000 մվրկ մեծության (ըստ երեք տեղեկատուների՝ երկու այր և մեկ կին): Խոսքի

տեմպը քննելիս աշխատել ենք հեռու մնալ չհիմնավորված խոսքային դադարներից: Ստացված նյութը վերաձայնագրվել է ձայնագրիչ ժապավենի վրա 76, 2 սմ/վրկ արագությամբ և ենթարկվել լսողական քննության: Լսման ընթացքում հաշվարկվել է հնչյունների քանակն ըստ յուրաքանչյուր հատվածի և որոշվել յուրաքանչյուր հատվածում հնչյունի միջին տևողությունը:

Ստացված արդյունքների համաձայն, խոսքի միջին տեմպը գրական լեզվում ավելի դանդաղ է, քան խոսակցականում: Այդ են վկայում բոլոր տեղեկատուների գրական և խոսակցական տարբերակների տեմպային արժեքները (տե՛ս աղյուսակ 7): Բոլոր տեղեկատուների խոսակցականի տեմպը, գրականի համեմատությամբ, արագացել է: Հարկ է նշել, սակայն, որ խոսակցական լեզվում խոսքի տեմպը տարբերվում է գրական լեզվի տեմպից ոչ միայն արագությամբ, այլև տեմպային բազմազանությամբ. եթե գրական լեզուն աչքի է ընկնում համեմատաբար միատեմպ (հավասարատեմպ) ընթացքով, ապա խոսակցականը բնութագրվում է տեմպային արժեքների խայտաբղետությամբ և անհամապատասխանությամբ: Կարելի է ասել, որ եթե գրական լեզվի խոսքի միջին տեմպային արժեքները համեմատաբար մոտ են իրար, ապա խոսակցական լեզվի տեմպային արժեքները մեծ տատանումներ են տալիս: Մի կողմ թողնելով արտալեզվական պատճառները, ներկայացնենք զուտ լեզվական այն հատկանիշները, որոնցով պայմանավորված՝ խոսակցական լեզվի տեմպը ձեռք է բերում բազմազանություն: Հետևելով խոսքի տեմպի քննության ժամանակ հատկապես վերջերս կիրառվող մոտեցմանը, առանձնացնում ենք խոսքային երեք հատված, պարբերությո՜ւթ,

շարույթ և ասույթ. ըստ այդմ՝ պարբերույթի տեմպը տարբերակում ենք ասույթի և շարույթի տեմպերից:

Պարբերույթն իր մեջ ընդգրկում է միասնական թեմայով պայմանավորված մեկ կամ մի քանի ֆրագ: Սովորաբար, բացի դադարի հատկանիշից, հիմնական տոնի հաճախականության անկումը, երբեմն նաև ձայնածավալի փոփոխումը կարող են մեկ պարբերույթից մյուսին անցնելու նշան ծառայել:

Պարզվում է, որ խոսքի բաժանումը պարբերույթների այնքան էլ դյուրին գործ չէ. այդտեղ, անշուշտ, հիմնական դեր է խաղում, բացի թեմայի և ռեմայի առանձնացումից, համեմատաբար երկար դադարը: Միջանկյալ արտահայտություններն ու ասույթները ավելի արագ տեմպ ունեն: Դա միանգամայն ակնկալելի էր, որովհետև կարծես գործում է ընդհանուր լեզվաբանական այն դրույթը, որ *իրազեկացման առումով մեծ բեռնվածություն ունեցող լեզվական միավորներն ավելի դանդաղ տեմպ են ունենում*: Լինելով բուն խոսքային բովանդակությանը միայն ընդմիջարկված կերպով կապված՝ միջանկյալ արտահայտությունները աչքի են ընկնում շեշտի թուլացմամբ և արագ տեմպով: Նման կառույցները բնութագրվում են նաև ձայնի իջեցմամբ, ձայնածավալի փոփոխությամբ: Ընդ որում այդ ցուցիչները կարող են հանդես գալ ինչպես համակցված ձևով, այնպես էլ առանձին-առանձին: Հաճախ գործառում է նրանցից մեկն ու մեկը, կամ երկուսը միասին: Այսպես, օրինակ՝ միասնաբար հանդես են գալիս արագ տեմպը և ուժգնության թուլացումը:

Առանց փորձառական տվյալների էլ կարելի է պնդել, որ խոսքի տեմպային փոփոխությունը կարող է ծառայել իբրև միջանկյալ արտահայտությունների՝ ընդմիջարկությունների,

բացահայտման ցուցիչ: Կարելի է ասել, որ տվյալ դեպքում գործ ունենք լեզվական ընդհանրության հետ: Այդպիսին է մեր ձեռքի տակ եղած մի շարք լեզուների ընձեռած պատկերը (տե՛ս Русская разговорная речь): Ընդ որում եթե ինչ-ինչ պատճառներով միջարկություններում խոսքի տեմպը չի արագացել ակնկալելի չափով, ապա «օգնության է» գալիս ձայնաձավալի փոփոխությունը և այլն:

Խոսակցականի բնորոշ գծերից է նաև *կրկնությունը*: Սովորաբար, երբ կրկնությունը առարկայացման դեր ունի, ապա խոսքի տեմպը դանդաղում է: Այսպես, օրինակ՝ *Ես գիտեմ... իրավ կըսեմ, որ ատիկա ըլլա...: Խնդիրը ջուրն ինկալ... վերջնականապես ջուրն ինկալ*: Լեզվաբանական գրականության մեջ նշվել է, որ նմանօրինակ կրկնությունները նույն դերն են խաղում, ինչ որ ուժեղ տրամաբանական շեշտը: Երկուսն էլ (տրամաբանական շեշտն ու կրկնությունը) ունեն միևնույն գործառույթը՝ *ասույթի նշանակալից մասերի ընդգծում*: Առանձին դեպքերում նույն հատվածում առկա թե՛ տրամաբանական շեշտը, թե՛ կրկնությունը: Այս երևույթը ռուսերենի խոսակցական տարբերակը քննողները որակել են իբրև «ծայրահեղ ընդգծում» (տե՛ս Русская разговорная речь, 64): Տեմպի դանդաղությամբ, բնականաբար մեծանում է տևականությունը:

Կրկնության դեպքերի քննությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է տարբերակել երկու կարգի կրկնություններ. Ա) *ընդգծող* կրկնություններ – ուր հետապնդվում է հաղորդման կարևոր մասերի ընդգծման նպատակ: Այս դեպքում կրկնությունը կատարվում է համեմատաբար դանդաղ տեմպով: Բ) «Պարապ» կրկնություններ, ուր կրկնությունը պարզապես խոսքի

պարապը լցնելու նպատակ ունի: Այս դեպքում խոսքի տեմպը արագանում է:

Խոսողը լեզվական համապատասխան «տարազ» է որոնում հաղորդելիք բովանդակության համար: Այսպես՝ *-Շիտակը, Արսեն, աս խնդրին վրա շատ զարմացած եմ: Բնչպե՞ս...դուն, որ ... չխորհեցար..., որ... դուն, որ առաջ այնքան խելացի էիր ինչպե՞ս կըլլա, որ... Շիտակը, Արսեն, ձգենք աս խոսքը:*

Խոսքի շղթայի տարբեր հատվածների տեմպային զանազանությունները (արագ տեմպ, դանդաղ տեմպ) ոչ միայն դյուրությանմբ ընկալվում են լսողական միջոցներով, այլև լեզվական միավորների հաղորդակցական արժույթը (իմաստակրության աստիճանը) որոշող միջոց կարող են ծառայել:

Քննված երևույթները որքանո՞վ են վերաբերում զուտ խոսակցական լեզվին. Արդյոք դրանք չե՞ն բնորոշում բանավոր խոսքն ընդհանրապես (նկատի է առնվում անսպասելի դադարներով, «շեղումներով» բնութագրվող չկազմակերպված խոսքը): Պետք է ասել, որ գրական լեզվի բանավոր տարբերակում նմանօրինակ «շեղումները», դադարները, կրկնությունները այնքան չեն տարածված, որքան բուն խոսակցական լեզվում: Ընդ որում այդպիսիք խոսակցականին բնորոշ հատկանիշներ են դիտվում և կարող են ծառայել իբրև ձևական ցուցիչ քննվող խոսքի գրական կամ խոսակցական տարբերակին հատկացնելու դեպքում:

Գրական կանոնական խոսքում խոսակցականին բնորոշ ինքնաճշգրտումը, դադարները, կրկնումները, լեզվական առանձին ձևերի «փնտրտուքը» իսկույն դիտվում են իբրև գրական նորմայի խախտումներ: Մինչդեռ այդպիսիք խոսակցական

լեզվում հաճախ չեն էլ նկատվում (դրանց ուշադրություն չի էլ դարձվում):

Իբրև արևմտահայերենի խոսքի տեմպի նմուշ բերենք միջին արժեքներին ամենամոտ տեմպային նմուշը ներկայացնող

Աղյուսակ 7

Տեղեկատու	Խոսքի տեսակ	Նվազագույն արժեքներ		Առավելագույն արժեքներ		Միջին արժեքներ	
1	2	3	4	5	6	7	8
Ս.Աբգարյան	գրական լ.	8	125	15	66,7	11	90,9
	խոսակցական լ.	9	111,1	17	58,9	12,5	80
Հ.Թորոսյան	գրական լ.	8	125	14	71,4	11	90,9
	խոսակցական լ.	8	125	16	62,5	12	83,3
Թ. Դովլեթյան	գրական լ.	9	111,1	16	62,5	12,5	80
	խոսակցական լ.	10	100	18	55,5	13,5	74,1
Ընդհանուր միջին	գրական լ.	8,5	117,6	15	66,7	11,5	37
	խոսակցական լ.	9	111,1	17	58,9	12,5	80

(տեղեկատու Ս. Աբգարյան) հետևյալ հաստվածը (բերվում է ըստ հնչաշարայությունների, կողքին նշվում է տևողությունն ըստ վայրկյանների, ապա՝ միջին տևողությունը վայրկյաններով և վերջապես տևողության ընդունված ցուցիչներով՝ սվրկ).

Սիրելի ունկնդիրներ / 1վրկ. 17հնչ. 17հնչ/վրկ. 58,9սվրկ.

մի մոռնաք ունկնդրելու/ 2վրկ. 18հնչ. 9 հնչ/վրկ. 111,1մվրկ.
չորեքշաբթի տասներեք

փետրվարի/ 2վրկ. 26հնչ. 13հնչ/վրկ. 76,9մվրկ.
մեր գեղարվեստական մշա-

կության հայտագիրը/ 2վրկ. 34հնչ. 17հնչ/վրկ. 58,9մվրկ.
Վարդանանց ուխտին

նվիրված հաղորդումը/ 3վրկ. 30հնչ. 10հնչ/վրկ. 100մվրկ.

Բերված հատվածը, տասը վայրկյան տևողությամբ, պարունակում է 125 հնչյուն (միջին հաշվով՝ 12,5 հնչ/վրկ.): Հատվածը բաժանված է հինգ շարության միավորների, որոնցից յուրաքանչյուրի տևողությունը տարբեր արժեքներով է բնութագրվում: Հատվածի երկրորդ շարությամբ, արգելակման հրամայականի ձևով, տևողությամբ ամենաերկարն է՝ 9 հնչ/վրկ., վերջինը՝ 10 հնչ/վրկ.: Իսկ ահա իրազեկացման առումով համեմատաբար քիչ արժեք պարունակող շարությամբ՝ *մեր գեղարվեստական-մշակության հայտագիրը* (34 հնչ/2 վրկ.) ամենակարճ տևողությունն ունի: Եվ դա միանգամայն սպասելի էր:

Բերված հատվածի հնչյունի միջին երկարությունը հավասար է 80 մվրկ-ի, որ համընկնում է արևմտահայերենի խոսակցական լեզվի համապատասխան արժեքին:

Հնչյունի միջին տևողությունը որոշվում է հատվածի երկարությունը (1000 մվրկ) բաժանելով հնչյունների միջին թվի վրա: Այսպես, եթե տեղեկատուի խոսքի միջին տեմպը հավասար է 11 հնչ/վրկ, ապա հնչյունի միջին տևողությունը հավասար կլինի 90,9 մվրկ: Որքան շատ հնչյուններ են ընկնում որոշակի ժամանակահատվածին (վրկ), այնքան ավելի կարճ է հնչյունի միջին տևողությունը և, բնականաբար, ավելի արագ է խոսքի տեմպը:

Մեկ խոսքով, հնչյունի երկարությունը հակադարձ համեմատական է խոսքի տեմպին, որքան փոքր է հնչյունի միջին երկարությունը, այնքան արագ է խոսքի տեմպը և հակառակը: Այսպես գրական լեզվում հնչյունի միջին երկարության միջին ցուցիչը հավասար է 87 մվրկ-ի, իսկ խոսակցական լեզվում՝ 80 մվրկ-ի: Այդ նշանակում է, որ արևմտահայերենի խոսակցական լեզվում հնչյունի միջին տևողությունը 7 մվրկ ավելի կարճ է, ուստի և խոսքի տեմպը համապատասխանաբար արագ է:

Աղյուսակից երևում է. 1. Գրական լեզվի տեմպը ավելի դանդաղ է, քան խոսակցական լեզվինը:

2. Չնայած առկա տատանումներին (շեղումներին), գրական և խոսակցական լեզուների տեմպային տարբերությունները մեծ չեն՝ 12,5-11,5 հնչվրկ կամ 7 մվրկվ ավելի արագ է խոսակցական լեզվի տեմպը:

3. Այլ լեզուների համեմատությամբ, արևմտահայերենի գրական և խոսակցական լեզուների տեմպային տարբերությունների աննշան լինելը (տեմպային համեմատաբար մոտ արժեքներ ունենալը) պայմանավորված է արևմտահայերենին ընդհանրապես հատուկ համեմատաբար դանդաղ տեմպը, որ դրսևորվում է նաև խոսակցական լեզվում: Այդուհանդերձ, արևմտահայերենում գրական լեզվի տեմպը ավելի դանդաղ է, քան խոսակցական լեզվինը: Դա կարելի է թերևս դիտել իբրև լեզվական ընդհանրություն:

Խոսակցական լեզվին հատուկ երևույթներից է նաև ընդհատումը (խզումը): Տարբերակվում են երկու կարգի խզումներ. 1. **Ընդհատում-ինքնակտրում**, որ սովորաբար ընթանում է առանց դադարների. նման պայմաններում կամ փոխվում է

ասույթի բովանդակությունը, կամ՝ միտքն արտահայտելու ձևը: Հաճախ բառը փոխարինվում է այլ՝ մտքին ավելի համապատասխանող բառով: Նման դեպքերում փոփոխության երկու ենթատիպ կարելի է առանձնացնել. ա) փոփոխվում է բառի քերականական ձևը (եզակի-հոգնակի և այլն), համաձայնության համապատասխան, բ) փոփոխվում է արտահայտության կառուցվածքը:

2. Ընդհատում-մտածում. Խոսողը ստիպված դադար է տալիս մտքի ընթացքը վերագտնելու և շարունակելու համար: Բնականաբար, նման դեպքերում առկա է լինում դադար, որ հաջորդում է ընդհատում-մտածումին: Այդպիսի դադարները կարող են «հագեցվել» ԸԸԸ-երով կամ հըմ-երով և այլ կարգի բառիկներով՝ *ի՜նչ կըսեր... հըմ... Վարդանյան...բբբ...այդ պայմանագիրին համար:* Սովորաբար առաջին տիպի խզման դեպքում խզումից առաջ եղած շարույթը ավելի մեծ տևողություն է ունենում, որ պայմանավորվում է վերջնային հնչյունների (ինչպես ձայնավոր, այնպես էլ բաղաձայն) համեմատաբար երկարացմամբ: Օրինակ՝ *հիսունը անց...* Դադարից հետո ընկած շարույթը սովորաբար բնութագրվում է դանդաղ տեմպով, որ դարձյալ պայմանավորված է ասույթի բովանդակությամբ, ավելի մեծ իրազեկմամբ:

Այսպիսով, հնչյունական պարբերություն շարույթի և ֆրագի ժամանակային փոփոխությունները պայմանավորված են խոսակցական լեզվի իմաստային կազմակերպման առանձնահատկություններով. իմաստակիր միավորները ավելի դանդաղ տեմպ են ունենում, քան նվազ իմաստակիր լեզվական միավորները: Դրանով պայմանավորված, միջանկյալ արտահայտու-

յունները, բառերը համեմատաբար ավելի արագ տեմպով են բնութագրվում:

Վերջապես, տեմպի փոփոխության լայն սահմանները պայմանավորված են նաև խոսակցական տարբերակում հաճախ հանդիպող ընդհատումներով, դադարներով, ինքնավերակառուցումով: Տեմպի տատանումները ֆրազի սահմաններում նույնպես հաղորդակցական հանգամանքներով են պայմանավորված՝ իմաստակիր միավորները դանդաղ տեմպ են ունենում, նվազ իմաստակիրները՝ համեմատաբար արագ տեմպ: Այդ նշանակում է, որ, ըստ առկայական տրոհման, թեման տեմպային առումով ավելի արագ է, քան ռեման: Սակայն, ինչպես վկայում են արևմտահայերենի տվյալները, առաջնային դիրքում գտնվելով հանդերձ, թեման սովորաբար բնութագրվում է ավելի դանդաղ տեմպով, քան ռեման: Դա պայմանավորված է հնչաարտաբերական հանգամանքներով. հայերենի հնչադասության սկիզբը ըստ տևողության ավելի երկար է, քան միջակա դիրքը: Այն շարույթներում, ուր հնչյունների մեծ կուտակում կա, խոսքի տեմպը սովորաբար արագանում է: Դա լեզվաբանական գրականության մեջ բացատրվում է ֆրազի մասերի հավասարաժամանակության (իզոխրոնության) միտումով:

Եթե ֆրազում հնչյունների քանակը մեծ չափերի չի հասնում, ապա տեմպը մնում է միջին արժեքների մոտ, ուստի և հաղորդակցական գործառնությունը պայմանավորված՝ ռեման ավելի մեծ տևողություն է ունենում, քան թեման:

Ի տարբերություն գրական արևմտահայերենի, խոսակցական տարբերակի շարույթի երկարությունը նշանակալից տատանումներ է տալիս. սկսած մեկ հնչյունից մինչև 35-40 հնչյուն:

Ընդ որում գործում են ընդհանրապես խոսակցական լեզուներին հատուկ երկու հակոտնյա միտումներ. Մի կողմից՝ կադապարված լեզվի ձգտումը՝ լեզվական կլիշեների լայնորեն գործածումը, մյուս կողմից՝ «լեզվաստեղծագործումը»՝ ինքնակերտումը, ոչ կադապարված հադորդակցումը: Եթե առաջին դեպքում խոսքը բնութագրվում է արագ տեմպով, ապա վերջին դեպքում, հակառակը, տեմպային դանդաղ ընթացքով: Ընդ որում հնչյունների մեծ քանակով բնութագրվող ֆրազներն անգամ տվյալ դեպքում կարող են արտաբերվել համեմատաբար դանդաղ տեմպով:

Խոսակցական արևմտահայերենում առկա են նաև, այսպես կոչված, հավելյալ հնչերանգային կենտրոններ, որոնք դեռևս կարոտ են համակողմանի քննության: Ըստ Զլատոուստովի, շարույթի վերջում անգամ շեշտագուրկ ձայնավորները ավելի երկար են, քան մյուս բոլոր դիրքերում (հմմտ. Русская разговорная речь, 76): Հարկ է նշել, սակայն, որ արևմտահայերենում դա վերջնական իրողություն չէ, և առկա է հաճախ հակառակ պատկերը: Ասենք անգամ ռուսերենի համար Զլատոուստովի ասածը վերջնական արժեք չունի, քանի որ հենց վերոբերյալ գրքում ուսումնասիրողները հատուկ նշում են, որ շարույթի «տվյալ ժամանակային ծրագիրը խոսակցական լեզվում իրագործվում է ոչ միշտ» (Русская разговорная речь, 76):

Շարույթի վերջում տեմպի արագացումը կարող է պայմանավորված լինել հնչերանգային կենտրոնը շարույթասկիզբ տարվելու հանգամանքով: Շարույթի վերջնամասի արագ հնչումը պատճառ է դառնում հենց այդ մասերի հնչյունական աղճատման: Հմմտ., օրինակ՝ *Ի՞նչ կըսե կո... իննչ պի բերե* և այլն:

Քանի որ ինչքան արագ է խոսքի տեմպը, այնքան լեզվում ավելի հաճախական են դառնում հնչյունական աղճատումները, իսկ արևմտահայերենի ինչպես խոսակցականը, այնպես էլ առավել ևս գրական-բանավոր տարբերակը աչքի են ընկնում համեմատաբար դանդաղ տեմպով, ուստի կարելի է եզրակացնել, որ *արևմտահայերենում հնչյունական աղճատումները մեծ թիվ չեն կազմում*, ունենալով սահմանափակ տարածում: Այդ ընդհանուր առմամբ ճիշտ եզրահանգմանը հարկ է ավելացնել նաև, որ արևմտահայերենում (գրական-բանավոր և խոսակցական տարբերակներում հավասարապես) անգամ արագ տեմպի ժամանակ գրեթե բոլոր հնչյունների աղճատման երևույթը նվազագույն դրսևորում է գտնում: Հմմտ., օրինակ՝ արևելահայերեն համապատասխան հնչաբառի հետ՝ *համալսարան*:

Ստացվում է, որ արևմտահայերենի գրական և խոսակցական լեզուների բուն տարբերությունները տեմպային պայմանավորվածություն չունեն, հիմնականում դուրս են տեմպի ծիրից և շատ ավելի արտալեզվական (հանրալեզվաբանական) հանգամանքներով են բնութագրվում (ոչ պաշտոնականություն, անբռնագրություն, հաղորդման չնախապատրաստված լինելը): Այդ հատկանիշները բնորոշ լինելով շատ լեզուների, կարելի է դիտել իբրև լեզվական ընդհանրույթ:

Խոսակցական արևմտահայերենի տեմպային առանձնահատկությունները կարելի է ներկայացնել հետևյալ ոլորտային բաշխվածությամբ.

1. Դանդաղ տեմպը հիմնականում բնորոշ է Միջին Արևելքի ոլորտին:

2. Համեմատաբար արագ տեմպով է բնութագրվում հունահայ ոլորտի խոսքը:

3. Հնչյունական նկատելի աղճատման մասին կարելի է խոսել ամերիկյան ոլորտի խոսակցական տարբերակի դեպքում: Հմնտ. վերոբերյալ Ճամբազյա՛ն-Ճամբա՛զյան, Սարգիսյա՛ն-Սարգի՛սյան և այլ ձևերը, ուր անգլերենին հատուկ շնչահնչերանգային առանձնահատկությունների ազդեցությամբ հնչակազմական հայերենին խորթ երևույթներ են առաջացել. հնչյունների անհաստակ հնչում, տոնի հայերենին ոչ բնորոշ փոփոխություն, շեշտի ոչ կանոնական դասավորում:

Կարելի է ասել, որ եթե խոսակցական ոլորտները ավելի մեծ ազդեցությունների են ենթարկվում տեղական գերիշխող լեզուների և անգլերենի կողմից, ապա գրական բանավոր տարբերակը համեմատաբար ավելի անաղարտ է մնում: Թեև, ինչ որ սպասելի է, խոսակցական ոլորտներն իրենց հերթին ազդում են գրական արևմտահայերենի հնչյունաբանության վրա: Այսպիսով, եթե գրական բանավոր տարբերակի դեպքում մենք ունենք համեմատաբար միասնական կառուցվածք, ընդհանուր օրինաչափություններին ենթակա ընդհանրական համակարգ, ապա խոսակցական արևմտահայերենի դեպքում գործ ունենք խայտաբղետ, խիստ տարբերակված արտասանական լեզվավիճակների հետ: Խոսքի գրական բանավոր լինելու հանգամանքը դյուրությամբ փաստվում է ըստ ոլորտային պատկանելության «օտարաբանությունների»՝ հայերենին օտար վերհատույթային երևույթների առկայությամբ:

Վերջապես, խոսակցական լեզվի հիմնական հատկանիշը՝ բերանացի լինելը, ինչպես նշվել է վերը, պետք է (անհրաժեշտ է)

տարբերել գրական լեզվի բերանացիության հատկանիշից: Վերջին դեպքում սովորաբար գործ ունենք նախապես մշակված, ծրագրված գրական խոսքի հետ, մինչդեռ խոսակցական լեզվում անբռնազբոս, տեղում «ոտքի վրա» հաճախ ստեղծագործվող խոսքի հետ, որն անշուշտ, ինչպես ցույց տրվեց խոսակցական լեզվի վերհաստոյթային քննությունը, ունի իր ներքին կառուցվածքն ու օրինաչափությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981:

Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

Աղայան Է., Գրաբարի քերականություն, Սինխրոնիա, հ. 1գ. Ա, Ե., 1963:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971:

Արամյան Ա., Ժամանակակից հայերենի ձայնավորները, Ե., 1969:

Թոխմախյան Ռ., Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Ե., 1983:

Խաչատրյան Ա., Թոխմախյան Ռ., Զաքարյան Հ., Խոսքի տեմալը, Լրաբեր, 1974, 6:

Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979:

Ղուկասյան Ս., Ինչու-որ հարցման հնչերանգի զուգադրությունը արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում, Միջազգային հայերենագիտական գիտաժողովի թեզիսներ, Ե., 1982:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:

Մարգարյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների հնչույթային համակարգերի զուգադրական-տիպաբանական քննությունը, Միջազգային հայերենագիտական գիտաժողովի թեզիսներ, Ե., 1982:

Аванесов А., Русское литературное произношение, М., 1972.

Матусевич М., Современный русский язык, фонетика, 1976.

Пауфощим Р., О темпе речи некоторых русских говорах, сб... «Русские говоры», М., 1975.

Развитие фонетики современного русского языка, М., 1971.

Русская разговорная речь, М., 1983.

Саркисян А., Фонологическая структура западноармянского языка, сб., «Вопросы анализа текста», 1979.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԶ - Վազգեն Շուշանյան, Ճերմակ վարսենիկ, Մթին պատմություն, Ե., 1983,

ՇՇ - Շահան Շահնուր, գ. Ա., Ե., 1982,

ՀԶ - Հրաչ Զարդարյան, Մեր կյանքեն, Ե., 1982,

ԴՎ - Դանիել Վարուժան, Երկեր, Ե., 1984:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԵՐԱՒՏԱՎՈՐԸ

(Նվիրվում է Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին)

Հրաչյա Աճառյանը հայագիտության բոլոր բնագավառներում հսկայական ավանդ է թողել՝ իր պատմահամեմատական հետազոտություններով, ստուգաբանություններով (որպես արդյունք ունենալով քառահատոր «Արմատական բառարանը»), հայոց լեզվի պատմության բոլոր փուլերի գիտական խորաթափանց ուսումնասիրությամբ (արդյունք ունենալով «Հայոց լեզվի պատմություն» երկհատորյակը), հայերենի և 562 լեզուների համեմատական քննությամբ (բացառիկ վկայությունը հնչյունական կառուցվածքից մինչև իմաստաբանություն շարադրած 10 հսկայածավալ հատորներն են), հայոց բազում բարբառների մենագրական քննությունից մինչև ընդհանուր բարբառագիտական հետազոտությունը, հայոց անձնանունների ստուգաբանական քննությունից մինչև դարերի ընթացքում այդ հատուկ անունները կրած անձնավորությունների սպառիչ ցանկերը («Հայոց անձնանունների բառարանի» հինգհատորյակն իբրև ապացույց) հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված ծավալուն մենագրությունը և այլն, և այլն:

Հր. Աճառյանը իր բոլոր աշխատանքներում (իսկ դրանք երեք տասնյակից ավելի են) միշտ հենվել է գիտության վերջին նվաճումների վրա, համաշխարհային լեզվաբանության նվաճումների համապատկերում դիտարկվել է հայոց լեզվի նախագրային շրջանից մինչև արդի վիճակը՝ գրական աշխարհաբարի երկու տարբերակներով և բազմաթիվ բարբառների ընձեռած հսկայածավալ նյութով: Անվիճելի իրողություն է, որ ո՛չ իրենից

առաջ, ո՛չ էլ հետագայում շուրջ վեց տասնամյակի ընթացքում ոչ ոք նման բնույթի տիտանական աշխատանք չի կատարել, հակառակ որ հենց Հրաչյա Աճառյանը պատրաստել է լեզվաբանության բնագավառի մեծանուն դեմքերի՝ ակադեմիկոսներ Էդ. Աղայան, Գ. Ջահուկյան և այլք:

«Հ. Աճառյանի պատմահամեմատական հետազոտությունները» հոդվածում Բ.Գ.Թ. Մելադա Աղաբեկյանը միանգամայն տեղին է եզրակացնում, որ մեծանուն գիտնականը «մեզ թողել է հայերենի գիտականորեն մշակված հսկայածավալ նյութ. հայերենագիտության բոլոր բնագավառները այսօր բարձրանում են նրա դրած ամուր հիմքերի վրա: Ժամանակի ընթացքում, բնականաբար, փոխվել ու դեռ կշարունակեն փոխվել տեսակետները, մշակվել ու կմշակվեն ուսումնասիրության նոր մեթոդներ, սակայն աճառյանական ժառանգությունը միշտ կմնա այն ելման կետը, որին բոլոր ժամանակներում հայագետ ուսումնասիրողը անհրաժեշտաբար կվերադառնա» (տե՛ս Ջահուկյանական ընթերցումներ, Ա., 2011 թ., էջ 15):

Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ Հ. Աճառյանը ստուգաբանական փորձեր սկսել է անել տակավին դպրոցական տարիներին: Տասնամյակների հետազոտական աշխատանքի արդյունք «Արմատական բառարանում» Հ. Աճառյանը Հ. Հյուբշմանի և Ա. Մեյեի նվաճումներն ընդհանրացողը չէ միայն, այլև հիմնավոր եզրահանգումներ ներկայացնող հոչակավոր հնդեվրոպաբան:

Չկա հայագիտության մի բնագավառ, ուր Հ. Աճառյանը իր նպաստն ու խոշոր ավանդը բերած չլինի: Անգամ 19-րդ դարի մայրամուտին, երբ նոր-նոր ձևավորվում էր փորձառական լեզ-

վաթանությունը, Փարիզում Հ. Աճառյանը աշխարհի առաջին փորձառական փորձասրահում դիտարկել է հայոց լեզվի բարբառների հնչյունական առանձնահատկությունները:

562 լեզուների իմացությանը զուգընթաց՝ Հ. Աճառյանը բնութագրվում է գիտական սկզբունքներն հետևողական կիրառմամբ, որի ընթացքում ոչ միայն փայլուն կերպով դիտարկում էր առկա լեզվաբանական գրականությունը, այլև իր բոլոր նախագծերը հետևողականորեն եզրահանգման հասցնում: Ապացույց կարող է ծառայել նրա հեղինակած «Լիակատար քերականություն հայոց լեզվի» տասհատորյակը: Բ.գ.դ. Խաչիկ Բադիկյանը ճիշտ է նկատել, որ «այն հեղինակի համապարփակ լեզվաբանական գիտելիքները ամփոփող մի յուրահատուկ հանրագիտարան է» (տե՛ս Ջահուկյանական ընթերցումներ, 2011 թ., էջ 17): Լեզվի հետազոտությունը, ըստ Հ. Աճառյանի, ուղղակի կապ ունի բառապաշարի հետ: Ըստ մեծանուն լեզվաբանի, լեզվի բառապաշարի հարստության աստիճանը ուղղակի կապ ունի լեզվի հարստության հետ: Մեծանուն լեզվաբանը խորագնին քննության է ենթարկել մանավանդ հայոց լեզվի փոխառյալ բառապաշարը: Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» վերաբերյալ 1930 թվականին «Հանդես ամսօրյա» գիտական հանդեսում տպագրված գրախոսականում Ն. Ակինյանը չորս կետից բաղկացած դիտողությունների շարք է ներկայացրել, որի վերաբերյալ Հ. Աճառյանը հիմնավոր պատասխան է տվել. «Ն. Ակինյանը պահանջում է, որ ... ես ստուգեի Էջմիածնի և Երևանի ձեռագրերը 8000 ձեռագրերի վրա: Բայց ինչո՞ւ չստուգեի նաև Վիեննայի, Վենետիկի, Երուսաղեմի, Նոր Զուղայի, Պոլսի, Անտոնյան միաբանության և այլ տասնյակ հազարավոր ձեռագրերի վրա»: Հ. Աճառյանի

համոզումն էր, որ հրաշալի կլիներ, բայց մեկ հոգուց այդ ամենը պահանջելը անհնարին բան է: Արդեն Հ. Աճառյանի արածը նման անհավանական իրագործումների վկայություն է: Մեծանուն լեզվաբանը հայագիտության որ բնագավառին էլ անդրադարձել է, ոչ միայն մնայուն և գնահատելի հետք է թողել, այլև ստեղծել է ամուր և վստահելի լեզվաբանական հիմք:

«Հրաշյա Աճառյանի բարբառագիտական հայացքները» հոդվածում ժամանակին մեջբերել ենք ակադ. Էդ. Աղայանի շուրջ կես դար առաջ հրատարակված «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատոր մենագրության 2-րդ հատորում ներկայացված գնահատականը. «Այդ աշխատության արժեքն իմանալու համար պետք է նկատի ունենալ, որ մինչև այդ հայերեն բարբառների ընդհանուր բնույթի գիտական լուրջ ուսումնասիրություններ չկային, թեև շատերն էին շեշտել դրանց անհրաժեշտությունը, կային մի քանի բարբառների առանձին հետազոտություններ, որոնք *հաճախ գիտական արժեքից զուրկ էին* (Հ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, էջ 192):

Հ. Աճառյանը հանգում է այն եզրակացության, որ հայոց լեզվի խայտաբղետ ու տարաբնույթ բարբառների դասակարգման ժամանակ հիմք պետք է ընդունել ոչ թե *հնչյունական* առանձնահատկությունները, այլ *ձևաբանական* հատկանիշները, քանի որ միմիայն այդ ճանապարհով է, որ հաստատուն հիմք կարելի է ունենալ և կատարել գիտականորեն ճշգրիտ և հստակ դասակարգում: Այդուհանդերձ բնավ չի նշանակում, թե մեծանուն հայերենագետը իր բարբառագիտական ուսումնասիրություններում անտեսել է *հնչյունական* երևույթների դիտարկումը: Ըստ էության Հ. Աճառյանի բարբառագիտական բոլոր իրագործումներում,

կոնկրետ բարբառների կառուցվածքը քննելիս հստակ ուշադրություն է դարձվում հնչյունական կառուցվածքին, բարբառում առկա հնչյունական առանձնահատուկ երևույթներին: Հենց հնչյունական ոլորտում է, որ մեծանուն գիտնականը ձևակերպել է իր անունը կրող *Աճառյանական օրենքը*: Հ. Աճառյանը իր մշակած համակարգով քննության առարկա է դարձրել շուրջ երկու տասնյակ բարբառներ (Ագուլիս, Մարադա, Ղարաբաղ, Վան, Պոլիս, Առտիալ, Նոր Նախիջևան, Նոր Զուղա, Կիլիկիա և այլն):

Հետագա տասնամյակներում Հ. Աճառյանի մշակած համակարգը հաջողությամբ կիրառել են Հ. Մուրադյանը, Մ. Ասատրյանը, Ալ. Մարգարյանը և այլք: Հ. Աճառյանի կադապարի կիրառմամբ տողերիս գրողը 1965-ին պատրաստել էր «Գանձակի խոսվածքը» ավարտաճառը:

Հ. Աճառյանը այն համոզման էր, որ հայերենի բարբառների միջև առկա տարբերությունները դարերի ընթացքում տեղի ունեցած գործընթացների արդյունք են:

Հ. Աճառյանը երագում էր ստեղծել լեզվի բարբառների բառամթերքն ամփոփող բառարան, սակայն, իրավացիորեն, մեկ մարդու ուժերից վեր էր համարում (տե՛ս «Գավառական բառարանի» առաջաբանը): Հ. Աճառյանի երագանքը արդեն մի քանի տասնամյակ է, ինչ հաջողությամբ փորձում է կենսագործել մեծանուն գիտնականի անունը կրող ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը:

Որպես հայերենագիտության և հայագիտության, ազգային մշակույթի մեծագույն հետազոտող, Հ. Աճառյանը ուսումնասիրել է հայոց գաղթավայրերը, գրական հուշարձանները և այլն: Վերջին շրջանում լույս տեսած «Հայոց գաղթավայրերի պատ-

մութուն» ծավալուն մենագրությունը ապացույց է մեծ երախտավորի համընդգրկուն մտահորիզոնի, հետաքրքրության առարկա դարձած խնդիրների, ապշեցուցիչ եռանդի ու աներևակայելի լայն մտահորիզոնի:

Մ. ԱՐԵՂՅԱՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Մեծ է Մ. Արեղյանի դերը հայոց լեզվի քերականական կառուցվածքի բոլոր մակարդակների ուսումնասիրության բնագավառում: Այդ են վկայում մեծանուն գիտնականի լեզվաբանական մի շարք աշխատություններն ու հոդվածները, որոնք մնայուն տեղ են ապահովել հայերենագիտության մեջ⁴⁶: Մ. Արեղյանի որդեգրած լեզվաբանական ուղղությունը, հայոց լեզվի զարգացման օրինաչափությունների մասին ունեցած ըմբռնումներն ըստ էության ամփոփված են «Հայոց լեզվի տեսություն» հիմնարար աշխատության մեջ:

Նախանցյալ դարի երկրորդ կեսում ընդհանուր լեզվաբանության բնագավառում տիրապետող ուղղությունը երիտքերականների դպրոցն էր, որին էլ հետևել է Մանուկ Արեղյանը: Լեզվի բնորոշման արեղյանական ձևակերպումը խարսխված է երիտքերականների հիմնարար սկզբունքների վրա: Ըստ այդմ, «*Խոսքը կամ նախադասությունն... հոգեբանական դատողության (մտածողության) արտահայտությունն է բառերով*»⁴⁷: Լեզվաբանության

⁴⁶ Տե՛ս Մ. Արեղյան, *Աշխարհաբարի քերականություն*, Թիֆլիս, 1907, նույնի «*Գրաբարի համառոտ քերականություն*», Վաղարշապատ, 1907-1908, նույնի՝ «*Աշխարհաբարի հոլովները*», Վաղարշապատ, 1908, «*Աշխարհաբարի շարահիւսություն*», Վաղարշապատ, 1912, «*Հայոց լեզվի տեսություն*», Ե., 1931:

⁴⁷ Ա. Արեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1931, էջ 25:

կարևոր սկզբունքներից մեկն էլ, ըստ Մ. Աբեղյանի, այն է, որ «ամեն լեզու միշտ և անընդհատ փոփոխվում է»⁴⁸:

Ըստ նրա, լեզվի անընդհատ փոփոխման և զարգացման մեջ առկա է երեք գործոն.

1) *Համաբանություն*. «Մարդս,– գրել է Մ. Աբեղյանը,– վերարտադրում է իր սովորական լեզվական իրականությունները, և ապա անալոգիական կազմությամբ արտադրում է այնպիսի ձևեր, որ ինքը չի սովորել, բայց լեզվի մեջ կան»⁴⁹: Հենց այդպիսի կազմություններով են բացատրվում լեզվում ձևավորվող և տեղի ունեցող փոփոխությունները:

2) *Անհատական լեզվի փոփոխությունն իբրև լեզվի զարգացման երկրորդ գործոն*: Հաշվի առնելով, որ անհատները հասարակության մեջ առանց գիտակցելու և իրենց կամքից միանգամայն անկախ ստեղծում են լեզվական նորանոր ձևեր ու արտահայտություններ, լեզուն ենթարկում են դինամիկ զարգացման: Ահա հենց անհատական լեզվի այդ փոփոխությունն էլ, ըստ Մ. Աբեղյանի, լեզվի զարգացման երկրորդ գործոնն է:

Ի՞նչ է անհրաժեշտ, որ նոր բառաձևերն ու բառիմաստները տարածում գտնեն և «ընդունվեն» հասարակության կողմից: Մ. Աբեղյանը մատնանշում է երկու գործոն՝ ա) *նպատակահարմարություն*, եթե նոր լեզվական ձևի կիրառումը նպատակահարմար է դիտվում հանրության կողմից և բ) *համապատասխանություն*, երբ առաջարկվող նոր ձևը ներդաշնակ է լեզվի զարգաց-

⁴⁸ Նույն տեղում, էջ 66:

⁴⁹ Նույն տեղում, էջ 44:

ման ընդհանուր ուղղվածությանը, համապատասխանում է լեզվի ներքին դինամիկային:

3) Վերջապես, *լեզվի զարգացման երրորդ գործոնը լեզուների փոխազդեցությունների և այլ լեզուների ազդեցությամբ է պայմանավորված մայրենի լեզվի վրա*⁵⁰: Այդքանից հետո զարմանալի է, որ անգամ Էդ. Ադայանը Աբեղյանին բնութագրելիս նշել է. «Մ. Աբեղյանը անտես է առնում լեզվի ներքին զարգացման օրինաչափությունները: Նրա մոտ, ինչպես և երիտքերականների մոտ ընդհանրապես, լեզվի զարգացում, բուն իմաստով, չկա էլ...»⁵¹:

Մանուկ Աբեղյանը համոզված էր, որ ժամանակի ընթացքում բարբառները այն աստիճանի կարող են իրարից հեռանալ, որ վերածվեն միանգամայն տարբեր, ինքնուրույն լեզուների: Բարբառների հիմքի վրա ինքնուրույն լեզուների ձևավորման գործընթացը հայագետը պատկերացրել է հետևյալ կերպ. «Երբ բարբառների տարբերությունները միմյանցից այնքան մեծանում են, որ մի բարբառով խոսող մարդն այլևս չի հասկանում մյուս բարբառով խոսողին...»⁵²: Ի միջի այլոց, հենց այդ պնդումն էլ Աբեղյանի տեսությունը քննադատողները որակել են իբրև *նացիոնալիզմ*⁵³: Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» հետմահու լույս տեսած մենագրության մեջ կարդում ենք. «Մի բան պարզ է հիմա, որ հայոց լեզվի միայն մի մասն է հնդեվրոպական: Բազմաթիվ բառեր ու մասնիկներ, անպայման

⁵⁰ Տե՛ս նույն տեղը. էջ 51:

⁵¹ Էդ. Ադայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. 2, Ե., 1962. էջ 147:

⁵² Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 63:

⁵³ Հմմտ. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ը, Ե., 1985, էջ 493:

նանք քերականական ձևեր, որոնք դեռ բացատրված չեն, հավանորեն գալիս են ոչ հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերից...»⁵⁴: Սա թերևս կարելի է դիտել իբրև մառականության առանձին դրույթների «դրսևորում»:

Ըստ Մ. Աբեղյանի, մաշտոցյան գրերի գյուտով Այրարատի բարբառը դարձել է ընդհանուր գրական լեզու (հին գրական հայերեն): Նա առաջինն էր, որ գիտական հստակ մոտեցումներով ուսումնասիրեց գրաբարի ու արդի հայերենի հնչյունական համակարգը և, ինչպես նշել է Էդ. Աղայանը, «հայ քերականագիտության մեջ հիմնադրեց նաև այս ճյուղը»⁵⁵:

1890 թ. «Նոր-Դարի» ինը համարներում լույս է տեսել Մ. Աբեղյանի «Գրաբարի երկբարբառները» աշխատանքը, որ գրվել է լեզվաբան Սարգիս Սարգսյանի և գրող Ղ. Աղայանի միջև ծագած բանավեճի առիթով⁵⁶: Հենց սկզբից Մ. Աբեղյանը հստակորեն նշել է, որ «Ու գրությունը մեր հին լեզվի մեջ երկբարբառ է կոչվում: Լեզվի՝ դարերի ընթացքում կրած փոփոխությամբ հին երկբարբառ կոչված *ու*-ն պարզվել է և դարձել է կամ պարզ ձայնավոր *ու* կամ բաղաձայն *վ*, որով միևնույն *ու* գրությունը, տեղին նայած, թե *ու* ձայնավոր է արտասանվում և թե *վ* (ւ) բաղաձայն»⁵⁷: Աբեղյանը շեշտել է, որ հայոց հին ու նոր լեզուների էական տարբերությունը նոր լեզուների (բարբառների)

⁵⁴ Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, Ե., 1945, էջ 9-10:

⁵⁵ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 150-151:

⁵⁶ Տե՛ս «Նոր-Դար», 1890, №№ 187-197:

⁵⁷ Ա. Աբեղյան, Երկեր, հ. Ը, էջ 292:

քերականության և հնչյունաբանության մեջ *պարզության* դիմելն է:

Անվանի հայագետը հերթով ցույց է տվել, թե ինչպես են գրաբարի երկբարբառները աշխարհաբարում վերածվել պարզ ձայնավորների: Անդրադառնալով արևելահայերենի և արևմտահայերենի միակերպ տառադարձման անհնարինության խնդրին՝ Մ. Աբեղյանը գրել է. «Մի՞թե կարող ենք նրանցից (իմա՝ պոլսեցիներից - Ա. Ս.) այդ պահանջել, չե՞ որ նրանք օտարազգի բառերն իրենց արտասանության համեմատ են տառադարձում, նրանք հայերեն *պարկ* բառը հնչում են *բարգ*, ուստի և իրենց արտասանության հիման վրա ամենայն իրավամբ կարող են և օտարազգի *բուրգ* բառն էլ գրել *պուրկ*»⁵⁸:

Մանուկ Աբեղյանը գիտական մի շարք աշխատություններ է նվիրել արդի հայերենի ուղղագրության խնդրին⁵⁹: Ուղղագրության հարցում Մ. Աբեղյանի սկզբունքներն են.

«1. Որքան կարելի է, գրությունը պետք է մոտեցնել արտասանությանը, և կենդանի արտասանությունը պիտի առաջնորդ լինի ուղղագրության համար:

2. Բայց գրությունը պիտի մոտեցնել արտասանությանը միայն այն ժամանակ, երբ մոտեցնելիս ուղղակի չենք հակասում բառի ծագմանն ու կազմությանը, այսինքն ի նկատի պիտի ունենալ և ստուգաբանական սկզբունքը»⁶⁰: Ըստ այդմ,

⁵⁸ Նույն տեղում, էջ 319:

⁵⁹ Հմմտ. **Մ. Աբեղյան**, *Մեր ուղղագրության մասին*, տե՛ս նույն տեղը, էջ 330, *Հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի մասին*, տե՛ս նույն տեղը, էջ 367, *Ուղղագրության ռեֆորմը*, տե՛ս նույն տեղը, էջ 387 և այլն:

⁶⁰ **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Ը. էջ 326:

ուղղագրության փոփոխության վերջնական նպատակը, Մ. Աբեղյանի համոզմամբ, պիտի լինի նշված երկու՝ հնչյունական և ստուգաբանական, սկզբունքները հաշտեցնելը՝ գրության մեջ առկա տարաձայնությունները վերացնելով:

Մ. Աբեղյանի լեզվաբանական հայացքներին ժամանակին բարձր գնահատական է տվել Անտուան Մեյեն "Journal asiatique"-ի մեջ (1912 թ.): «Մ. Աբեղյանը, որին պարտական ենք արդեն լավ քերականական աշխատություններ արդի հայերենի վերաբերյալ, այժմ հրատարակել է... այժմյան գրական լեզվի մի մանրամասն շարահյուսություն: Այս շարահյուսությունը... հարուստ է վավերական, լավ դասավորված և խելացի կերպով ընտրված օրինակներով...»: Մ. Աբեղյանը առհասարակ կարևորություն չէր տալիս իր աշխատությունների մասին եղած գովեստներին, բարձր գնահատականներին, բայց Մեյեի կարծիքի վերաբերյալ գրել է. «Անտուան Մեյեի նման մեկի խոսքը, թե իմ աշխատանքը «իսկական գիտական գործ է», այդ արդեն բավական է ինձ համար»⁶¹:

Տակավին 1890-ին «Նոր-Դարում» տպագրվել է Մ. Աբեղյանի «Ժողովրդական լեզվի շեշտադրությունը (արևելյան ճյուղի բարբառների մեջ)» աշխատությունը: Մ. Աբեղյանը համոզիչ կերպով ցույց է ավել, որ «գրականական լեզուն *յուր* հարստությունը՝ քերականական զարգացումը, ճկունությունն ու վայելչությունը *պիտի վերցնի* առավելապես ժողովրդական լեզվից, իսկ գրաբարից *պիտի օգտվի* բառերի մթերքի և մասամբ

⁶¹ Նույն տեղում, էջ 498:

դարձվածների կողմից...»⁶²: Ասվածը կարող է ուղեցույց ծառայել նաև ժամանակակից հայոց գրական լեզվի զարգացման ուղիները ճշգրտելիս:

Հետագա շարադրանքում Մ. Աբեղյանը նկատել է. «Վաղուց արդեն մեր նորածին աշխարհաբարի մեջ եղած գրաբարի ձևերը, որոնք անխուսափելի են ամեն մի նոր ծնվող *գրական* լեզվի համար, դուրս են ձգվում և հետզհետե մեր արևելյան կոչված աշխարհաբարը շատ արագ թոթափում է *յուր* վրայից գրաբարի ազդեցությունը»⁶³:

Մ. Աբեղյանը գիտական մանրակրկիտ քննության է ենթարկել իր ձևակերպումով՝ «անուշադիր մնացած կողմը» մեր աշխարհաբարի *քերականական* շեշտը. «Մենք սովոր ենք ասել,– գրել է նա,– թե հայոց լեզուն շեշտ չունի կամ լավ ևս ասել՝ շեշտը միշտ բառի վերջին վանկի վրա ունի, բացի այն դեպքից, երբ որ վերջին վանկի ձայնավորը *ը* հնչյունն է. օրինակ՝ քաղա՛քը, թա՛նձրը, ա՛ստըղ... Այդպես ենք սովորել մենք ուսումնարանում, այդպես հավատացած ենք գրեթե ամենքս...»: Իրականում, ինչպես եզրակացնում է Մ. Աբեղյանը. «Երկար առանձին ուշադրություն դարձնելուց հետո այն համոզման ենք եկել, որ հայոց ժողովրդական լեզվի մեջ արևելյան կոչված ճյուղն ունի առանձին շեշտադրություն, որի ուսումնասիրությունն առանց ուշադրության է թողնված»⁶⁴:

Անդրադառնալով հին գրական հայերենի (գրաբարի) ձայնավորների երկար և կարճ (սուղ) արտաբերության հարցին՝

⁶² Նույն տեղում, էջ 273:

⁶³ Նույն տեղում:

⁶⁴ Նույն տեղում, էջ 275:

Մ. Աբեղյանը այն համոզումն է հայտնել, որ «Գրաբարն ունեցած էլ լինի ձայնավորների երկարություն և սղություն, որ, սակայն, *դեռևս կասկածելի է*, այժմ այդ մոռացված է, և մենք ներկայումս գրաբարը կարդում ենք այնպես, ինչպես և աշխարհաբարը»⁶⁵: Ապա Մ. Աբեղյանը տիպաբանական զուգահեռ է անցկացնում հին ու նոր լեզուների (այդ թվում գրաբարի և աշխարհաբարի) միջև. «Թեպետև ձայնավորների երկարության և սղության հին հետքերը մինչև այժմ մնացել են մեր մի քանի գավառական բարբառների մեջ, որոնք ձայնավորներից մեկը կամ մյուսը բառի մեջ ձգում են, որով և խոսակցությունը ստանում է մի տեսակ երգեցիկ եղանակավորություն,– բայց մեր նոր լեզվին, *ինչպես ընդհանրապես նոր լեզուներին*, հատուկ է շեշտը, այսինքն ձայնի սուր կամ բարձր լինելը, մի վանկի մեջ»⁶⁶:

Մ. Աբեղյանը շեշտում է, որ մեր ժողովրդական լեզվի մեջ թեև միշտ չէ, որ շեշտը վերջին վանկի վրա է դրվում, այդուհանդերձ առկա են որոշակի ու հաստատուն կանոններ, որոնք իմանալուց հետո առանց շեշտադրական սխալների կարելի է ընթերցել ժողովրդական լեզվով գրված տեքստերը:

Իր աշխատության վերջում լեզվաբանը գրել է. «... Մեր արևելյան գրականական լեզուն, փոխանակ արևելյան կենդանի բարբառների առոգանությամբ և շեշտադրությամբ կարդացվելու, կարդացվում և *մասամբ խոսվում է գրաբարի և արևմտյան բարբառների առոգանությամբ և շեշտադրությամբ*»⁶⁷: Մ. Աբեղյանը շեշտում է *մասամբ* բառը, որովհետև գրական լեզվի

⁶⁵ Նույն տեղում, էջ 277:

⁶⁶ Նույն տեղում, էջ 278:

⁶⁷ Նույն տեղում, էջ 290:

բանավոր տարբերակում, երբ խոսքը վերաբերում է առօրյա կյանքին, գերիշխում է ժողովրդական շեշտադրությունը:

Մ. Աբեղյանը քննում է բառամիջի ձայնավորի՝ շեշտից հետո կատարվող սղման երևույթը, հոգնակիակազմ ձևերի շեշտադրության օրինաչափությունները:

1913 թ. հոկտեմբերի 14-ին Մ. Էջմիածնում Համագգային մեծ հոբելյանի հանդեսի ժամանակ Աբեղյանը զեկուցել է «Մեր ուղղագրության մասին»: Աբեղյանական ուղղագրության հակառակորդները սովորաբար այն որակում են *խորհրդային*: Հարկ է հիշեցնել, որ հեղափոխությունից տարիներ առաջ Մանուկ Աբեղյանը շեշտել է հետևյալը. «Ուղղագրության վեճի ժամանակ փոփոխության հակառակորդները հաճախ օրինակ են բերում ուրիշ ազգերի ուղղագրության դժվարություններն՝ ասելով, թե ֆրանսիացիք և ուրիշները, որ մեզանից շատ ավելի խելոք են, ինչո՞ւ չեն իրենց դժվար ուղղագրությունը փոխում: Եվ այս առարկությունը հիմնավոր է, եթե *միայն մանկավարժական* տեսակետից նկատի առնվի, բայց կորցնում է իր արժեքը, երբ խնդրին նայում ենք գրաբարի և աշխարհաբարի, հին և նոր լեզուների միացման տեսակետից: Որովհետև այդպես առարկողները երկու լեզուների տարբեր շրջաններ են իրար հետ բաղդատության մեջ դնում»⁶⁸: Ո՞րն է Աբեղյանի հիմնարար եզրակացությունը ուղղագրության խնդրում. «Գրական լեզվի մեջ ուղղագրության *միակերպությունն* առաջին անհրաժեշտ սկզբունքն է: Դա պետք է լինի գերիշխողը»: Այնուհետև Մ. Աբեղյանը նշում է. «Պատմական անհրաժեշտությամբ՝ աշխարհաբարի մեջ ըն-

⁶⁸ Նույն տեղում, էջ 336:

դունված է գրաբարի ուղղագրությունը, և մենք չենք կարող այդ ուղղագրության մեջ հիմնական մեծ փոփոխություններ մտցնել, *առանց լեզուն ցնցումի ենթարկելու...*⁶⁹: Ըստ այդմ էլ բաղաձայնների գրությունը Աբեղյանն անձեռնմխելի է թողնում: Ո՞վ պետք է իրականացնի ուղղագրական ռեֆորմը: Իր զեկուցման մեջ Մ. Աբեղյանը կարծում է, որ «Ակադեմիան միայն բավարար իշխանություն և հեղինակություն ունի այս վերանորոգությունը կատարելու...»: Իրականում, սակայն, Աբեղյանը ցավով նկատում է, որ մեզանում «ամեն անհատ կարող է մի ակադեմիա լինել և ուզած փոփոխությունը ոչ միայն առաջարկել, այլև անմիջապես գործադրել»⁷⁰: Ի՞նչ է հարկավոր դրությունը շտկելու համար: Մ. Աբեղյանի համոզմամբ. «Հարկավոր է մի հեղինակավոր խորհուրդ՝ մասնագետներից կազմված, որ լրջությամբ պարապեր այդ խնդրով, բազմակողմանի կերպով ուսումնասիրեր մեր ուղղագրությունը» և այդ «խորհրդից ընդունվածն ընդունելի կլիներ և՛ հոգևոր իշխանությունից, և՛ գրագետների ու լրագիրների կողմից»⁷¹:

Մ. Աբեղյանը այն համոզման էր, որ ուղղագրական բարեփոխումը կարող է լինել կամ չլինել, գուցե և «պահվի մեր հին ուղղագրությունը՝ թեթև փոփոխություններով, գուցե և առանց փոփոխությունների»⁷²: Սակայն Մ. Աբեղյանը կարծում է նաև՝ «քանի որ ընդունված է գրաբարի ուղղագրությունը, թվում է, թե

⁶⁹ Նույն տեղում, էջ 340:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Նույն տեղում:

աշխարհաբարի հաղթանակը դեռ թերի է»⁷³: Մ. Աբեղյանը վստահ էր. որ ուղղագրական հիմնական փոփոխությունները հնարավոր չէ անել, այն էլ *միանգամից*: Մինչդեռ կյանքը ցույց տվեց, որ հենց այդպես էլ եղավ:

Ուղղագրության 1922 թ. դեկրետի սկզբում լուսժողովուրդ. Մակինցյանը շեշտել է «ժողովրդական լայն խավերի համար հայերենի գրագիտության ուսումը հեշտացնելու, ընդհանուր կրթությունը բարձրացնելու և դպրոցն ուղղագրություն սովորելիս գործ դրած անպետք և ապարդյուն ժամավաճառությունից և աշխատանքից ազատելու նպատակը»: 1924 թ. Թիֆլիսի «Заря Востока» թերթում Պողոս Մակինցյանը առաջարկել է հրաժարվել մեսրոպյան տառերից և անցնել լատինատառ գրությանը⁷⁴, այլապես, ըստ Մակինցյանի, անիմաստ էր ուղղագրության ռեֆորմը: Մ. Աբեղյանը խստագույնս քննադատել է Մակինցյանի «գաղտնի նպատակը», որ ստեղծել է «զվարճալի դրություն» (բնութագրումները Աբեղյանին են): Այդ կապակցությամբ Մ. Աբեղյանը պարզաբանել է. «Լատիններեն տառերին անցնել... Հեշտ գլուխ գալու բան չէ այդ, թեկուզ միայն այն պատճառով, որ մեր բաղաձայնների համար, սակավ բացառությամբ, չունենք ընդհանուր, միակերպ արտասանություն»⁷⁵: Ըստ Մ. Աբեղյանի, մենք դեռ «ապրում ենք մեր բաղաձայնների շրջման ժամանակաշրջանը, որ *դեռ չի վերջացել*»⁷⁶ (ընդգծումը մերն է- Ա. Ս.):

⁷³ Նույն տեղում, էջ 336:

⁷⁴ Տե՛ս «Заря Востока», 1924, նոյեմբերի 29-ի համարը:

⁷⁵ **Մ. Աբեղյան**. Երկեր, հ. Ը, էջ 491:

⁷⁶ Նույն տեղում:

Անցյալ դարի 30-ական թվականներին Մ. Աբեղյանից մեծ ջանք չէր պահանջվում ապացուցելու, որ յուրաքանչյուր լեզուն իր քերականական առանձնահատկությունները: Ի պատասխան իր տեսության քննադատների՝ (Ա. Ադոյան, Գ. Սևակ և այլք) Մ. Աբեղյանը գրել է «Մի քանի քերականական խնդիրների մասին» ծավալուն աշխատանքը, որն առաջին անգամ լույս է տեսել գրության թվականից (1936 թ.) կես դար անց, Աբեղյանի երկերի Ը հատորում⁷⁷: Մ. Աբեղյանը նշված աշխատանքում մատերիալիզմի և իդեալիզմի մասին այնպիսի հայացքներ է արտահայտել, որ այսօր էլ անհրաժեշտ է դիտարկել բանասիրականի բոլոր բաժանմունքներում:

Խոսքի մասերի աբեղյանական սահմանումները, լեզվի փոփոխության ներքին մեխանիզմի մեկնաբանությունը, հայոց լեզվի կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների աբեղյանական դիտարկումները ուղղակի դասական օրինակներ են: Այսօր էլ աբեղյանական պահանջը խիստ արդիական է. «Քերականության գրողը նախ և առաջ հիմնովին պիտի ուսումնասիրի այն լեզուն, որի քերականությունը պիտի գրի»⁷⁸:

Աբեղյանը լիովին ջախջախում է իր հակառակորդների պնդումները, թե «Աբեղյանի քերականությունը «ֆորմալիստական» է»: Ցավոք, այդպես է նրան բնութագրում նաև ակադ. Էդ. Աղայանը իր «Հայ լեզվաբանության պատմության» մեջ⁷⁹:

Քանի որ Աբեղյանը մեղադրվում էր իր, այսպես կոչված, իդեալիստական կամ բերկլիական հայացքների համար, մեծա-

⁷⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 493:

⁷⁸ Նույն տեղում, էջ 543:

⁷⁹ Տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 146:

նուն հայագետը առաջ է քաշում հետևյալ հարցը. «Կարո՞ղ է իդեալիստական, այն էլ բերկլիական լինել այն փիլիսոփայական տեսությունը, որ ճանաչում (признание), ընդունում է մեզ շրջապատող *արտաքին* (= մեզանից դուրս եղած) առարկաները»⁸⁰: Մ. Աբեղյանը դիպուկ բնութագրումներ է բերում մարքսիզմի կլասիկներից (Ֆ. Էնգելս, Վ. Լենին) և եզրակացնում, որ իր «Հայոց լեզվի տեսության» մեջ բազմիցս, կիրառված «պատկերացում», «մտապատկեր» եզրերը «անհրաժեշտորեն ենթադրում են օբյեկտիվ իրականությունը»:

Քննադատելով իր ընդդիմախոսներին՝ Մ. Աբեղյանը գրել է. «Մեր երիտասարդները ձևական տրամաբանություն չեն սովորել, այլ միայն հեռվից են լսել դրա մասին և արհամարհանքով են վերաբերվում դրան»⁸¹: Ուստի այն դեպքում, երբ նրանք ուղղակի պարտավոր են առաջնորդվել տրամաբանությամբ, այդ ի վիճակի չեն անելու:

Քննելով լեզվի փոփոխության խնդիրը կոնկրետ լեզվի մեջ՝ Աբեղյանը ցույց է տվել, որ տեսության քննադատները ոչ միայն հստակորեն չեն տարբերում մատերիալիզմն ու իդեալիզմը, այլև չեն հասկանում *պատճառ* և *նպատակ* եզրերը:

«Ես իմ քերականությունների մեջ,– շեշտել է Մ. Աբեղյանը,– չեմ հիշատակել և չեմ ասել «մասն-բանի» և «մասունք-բանի» տերմինը, այլ գործածել եմ «բառերի տեսակներ», իհարկե, առանց այսպիսի բացատրության, բայց ի՞նչ կանես, որ օտարականը և ավանդականը սիրելի է: Եվ որովհետև «մասունք-բանի» գրաբար

⁸⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ը, էջ 507:

⁸¹ Նույն տեղում, էջ 512:

է, սովորական են դարձրել դրա թարգմանությունը՝ «խոսքի մասեր»։ Ինչո՞ւ, որովհետև Շապիրոն էլ դեռ չի փոխել ունի *часть речи*»⁸²։ Մ. Աբեղյանը *նախադասություն* և *խոսք* եզրերը դիտել է իբրև համանուններ։ Իր «Աշխարհաբարի քերականության» մեջ լեզվաբանը ուղղակի գրել է «Խոսքը քերականության մեջ սովորաբար կոչվում է *նախադասություն*»⁸³։ Իր ընդդիմախոսներն ընդվզել են, թե ինչո՞ւ է նա նախադասությունը խոսք անվանել։ Աբեղյանը հիշեցրել է Ա. Այտընյանի «Քննական քերականության» հետևյալ մեջբերումը. «Ամեն նախադասություն կամ խոսք երեք գլխավոր մաս ունի»⁸⁴։

«Աշխարհաբարի հոլովները» աշխատության մեջ (Վաղարշապատ, 1908) Մ. Աբեղյանը, քննության առնելով հայերենի հոլովական համակարգը, հիմնավորել է այն տեսակետը, ըստ որի արևելահայ աշխարհաբարը ունի ընդամենը հինգ հոլով։ Միայն կես դար անց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտական քանավեճում հաղթեց հինգ հոլովի տեսությունը։

Աբեղյանի դասերը մեր օրերում էլ խիստ կարևոր են. մեծանուն հայագետին խելամտորեն հետևելը պարտադիր է հայերենագիտության ասպարեզ մտնող յուրաքանչյուր սկսնակի համար։

Մ. Աբեղյանի ջանքերի շնորհիվ հաջողությամբ պսակվեց ժամանակակից հայոց լեզվի գիտատեխնիկական մասնագիտական տերմինաբանության մշակման գործը։ Մեր լեզվի ցանկա-

⁸² Նույն տեղում, էջ 532։

⁸³ Մ. Աբեղյան. *Հայոց լեզվի տեսություն*, էջ 25։

⁸⁴ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Ը, էջ 583։

ցած բնագավառում վաստակաշատ գիտնականը թողել է իր անուրանալի ավանդը:

Շնորհիվ Մանուկ Աբեղյանի բառագիտական ուսումնասիրությունների՝ հիմնադրվեց նաև հայերենի բառագիտությունը: Այն դարձավ հայոց լեզվի գիտական քննության առանցքային ճյուղերից մեկը՝ *իմաստաբանություն* և *բառակազմություն* բաժիններով: Մ. Աբեղյանի շարահյուսական վերլուծությունների կադապարները, նրա ստեղծած համակարգը հայերենագիտության մեջ մասնակի ճշգրտումներով կիրառվում է առ այսօր: Մ. Աբեղյանն առաջինն էր, որ բարձրացրեց շարահյուսական ուսումնասիրությունները մի նոր մակարդակի և դարձրեց քերականական ուսումնասիրության՝ ձևաբանության հետ *իրավահավասար* մի ճյուղ: Մ. Աբեղյանի շնորհիվ է, որ ժամանակակից հայոց լեզվի քերականական կառուցվածքի քննությունը մեկընդմիջտ ձեռքագատվեց գրաբարյան քերականական կադապարներից և ձևավորեց իրեն հատուկ սխեմաները:

Մ. Աբեղյանի լեզվաբանական աշխատությունները այսօր էլ ունեն մեծ արժեք և չեն կորցրել իրենց հրատապությունը: Անցած տասնամյակների ընթացքում, ընդհանուր լեզվաբանական մշակումների, մեթոդաբանության, հետազոտության սկզբունքների զարգացման հետ (հատկապես եթե նկատի առնվի մեքենական թարգմանության, լեզուների ձևային նկարագրության, ընդհանրական-իմաստաբանական դաշտերի տեսության բնագավառները) Մ. Աբեղյանի հիմնարար դրույթները դարձել են առանցքային և արդիական:

Հայ բառարանագրության պատմության մեջ ուղենշային են Աբեղյանի բառարանագրական աշխատությունները («Ռուս-

հայերեն ռազմական բառարան» (1925 թ.), «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան» (տպագրվել է Աբեղյանի մահից յոթ տարի անց): Մ. Աբեղյանը գիտականորեն մշակել է հայ իրավաբանական և մասնավորապես ռազմագիտական տերմինաբանությունը:

Ժամանակակից հայ քերականագիտության մեջ ուղենշային են նաև Աբեղյանի լեզվաբանական հայացքները: Բառերի կապակցության տեսակների, բառերի պաշտոնների, հոլովների ու կապերի կիրառությունների ու նշանակությունների աբեղյանական դասակարգումները հայերենագիտության հիմնարար, ելակետային մոտեցումներ են:

Հայերենի շարադասության օրենքները, նախադասության անդամների համաձայնությունը սպառնիչ նկարագրվել են Աբեղյանի՝ մեկ դար առաջ գրած աշխատություններում: Նույն ձևով արդի հայերենի բայի եղանակների, բայաժամանակների առանձնահատկությունների նկարագրությունը տրված է Աբեղյանի լեզվաբանական երկերում:

Սեղմություն, ընդգրկման ամբողջականություն, կոռ մեթոդաբանություն՝ ահա այն էական հատկանիշները, որոնցով բնութագրվում են Մ. Աբեղյանի երկերը:

Մանուկ Աբեղյանը լավագույնս է հաշվի առել հայոց լեզվի զարգացման ներքին և արտաքին օրինաչափությունները, հայ քերականության մեջ ստեղծել *իր ուղղությունը*, որը տասնամյակներ շարունակ սխալմամբ բնութագրել են իբրև ֆորմալիստական (լեզվի *ձևային* նկարագրությունը նույնացնելով սոսկ *ֆորմային* (ձևին) առավելություն տվող ուսմունքի հետ):

Միանգամայն արդարացի էր ակադ. Էդ. Ադայանը, երբ իր «Հայ լեզվաբանության պատմության» երկրորդ հատորում հատուկ ընդգծումով ներկայացրել է հետևյալ բնութագրականը. «Մանուկ Աբեղյանը մեր ժամանակի ամենամեծ հայագետներից մեկն է եղել, և նրա թողած գիտական հարուստ ժառանգությունը հայագիտության ոսկե ֆոնդի մասն է կազմում»⁸⁵:

⁸⁵ Էդ. Ադայան, նշվ. աշխ., էջ 153:

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՑԱՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Մեկ դար առաջ՝ 1911 թ. Ն. Նախիջևանում լույս է տեսել Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատությունը, որը դրանից երկու տարի առաջ ֆրանսերեն լույս տեսած "Classification des dialectes arméniens" («Հայ բարբառների դասակարգումը») ատենախոսության վերամշակված տարբերակն էր: Այն Հ. Աճառյանը ներկայացրել էր Սորբոնի համալսարանին՝ իբրև դոկտորական ատենախոսություն: Հ. Աճառյանի գրչին են պատկանում բազմաթիվ արժեքավոր մենագրություններ: Դրանց թվում Հ. Աճառյանի այդ աշխատանքը իր ուրույն տեղն է գրավում: Ահա թե ինչ գնահատական է տվել ակադ. Էդ. Աղայանը շուրջ կես դար առաջ (1962 թ.) հրատարակված «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատոր մենագրության 2-րդ հատորում. «Այդ աշխատության արժեքն իմանալու համար պետք է նկատի ունենալ, որ մինչև այդ հայերեն բարբառների մասին ընդհանուր բնույթի գիտական լուրջ ուսումնասիրություններ չկային, թեև շատերն էին շեշտել դրանց անհրաժեշտությունը. կային մի քանի բարբառների առանձին հետազոտություններ, որոնք *հաճախ գիտական արժեքից զուրկ էին*» (Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, էջ 192):

Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության բուն արժեքին անդրադառնալուց առաջ հարկ ենք համարում կասկածի տակ առնել Է. Աղայանի սույն պնդումը: Իրականությունն այն է, որ Հ. Աճառյանից առաջ էլ եղել են անվանի հայերենագետներ (Արսեն Այտընյան, Քերովբե Պատկանյան, Լևոն

Մսերյան և այլք), որոնց բարբառագիտական հետազոտությունները, ցավոք, առ այսօր բավարար ուշադրության չեն արժանացել: Այսպես, տակավին 1869 թ. Սանկտ Պետերբուրգում հրատարակված "Исследование о диалектах армянского языка" աշխատության մեջ Քերովբե Պատկանյանը չափազանց կարևորում է բարբառների համընդգրկուն քննությունը: Ս. Պետերբուրգի համալսարանի սույն հայագգի պրոֆեսորը, որ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր, պնդում էր, որ շուրջ 16 դար առաջ էլ եղել են հայերեն մի շարք բարբառներ, որոնցից մեկը «բարձրացել է գրական լեզվի աստիճանի և անվանվել *գրաբար* (հին գրական հայերեն)» (հմմտ. Ա. Սարգսյան, Լեզվաբանական աշխարհագրություն, Ե., 2003 թ., էջ 14) Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Լ. Մսերյանը, որ հետազայում շուրջ 20 տարի եղել է Վարշավայի համալսարանի ամբիոնի վարիչ, բարբառագիտական զեկուցումներով հանդես է եկել Փարիզի, Հռոմի, Աթենքի, Համբուրգի միջազգային կոնգրեսներում, տակավին 1897 թվականին տպագրել է "Этюды по армянской диалектологии" մենագրությունը, որում քննել է հայերեն բարբառների համեմատական ձևաբանության հարցեր՝ գրաբարի և միջին հայերենի ձևաբանական կառուցվածքների բաղդատությամբ: Ի միջի այլոց այս մենագրությամբ Լ. Մսերյանը ձեռք է բերել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Այս ամենը նշում ենք մեկ նպատակով: Ցույց տալու համար, որ Հ. Աճառյանից առաջ էլ գիտականորեն ուսումնասիրվել են հայերենի բարբառները: Այնպես որ համոզիչ չէ ակադ. Է. Աղայանի վերոհիշյալ պնդումը, ըստ որի «Աճառյանն առաջինն էր, որ լեզվաբանորեն ուսումնասիրեց հայերենի բազմաթիվ

բարբառները և գիտական հիմունքներով դասակարգեց դրանք, այդպիսով իսկ հիմնադրելով հայ բարբառագիտությունն իբրև հայ լեզվաբանության մի առանձին ճյուղ: Աճառյանի այս գիրքը հայ բարբառագիտության հիմքն է հանդիսանում» (ն.տ., էջ 192): Մեր համոզմամբ հայ բարբառագիտության հիմքը դրվել է Հ. Աճառյանի գրքից ավելի քան չորս տասնամյակ առաջ Ք. Պատկանյանի լույս ընծայած "Исследование о диалектах армянского языка" աշխատությամբ, մինևույն ժամանակ անվիճելի է, որ հսկայական է Հ. Աճառյանի բերած նպաստը հայ բարբառագիտության ոլորտում, սակայն այն արժեքավորելու համար, կարծում ենք, բնավ անհրաժեշտության չկա անտեսելու մինչ Հ. Աճառյանը եղած աշխատանքները: Միանգամայն ճիշտ է վարվում ակադ. Գ. Զահուկյանը՝ առանձնացնելով հայ բարբառագիտության զարգացման չորս հիմնական փուլ.

1. Հայ բարբառների նախնական նկարագրություն և տարածքային դասակարգման մասնակի փորձերի փուլ (V-XVII դդ.).

2. Հայ բարբառների տարածքային դասակարգման և ծագումնաբանական հիմքերի ճշգրտման փուլ (XIX դ.): Այս փուլի նշանակալից ձեռքբերումների հեղինակներն են Ա. Այտընյանը, Ք. Պատկանյանը և այլք.

3. Հայ բարբառների դասակարգման մեջ ձևաբանական սկզբունքների գերակայության փուլ (XIX դարասկզբից մինչև 40-ական թթ.):

4. Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման փուլ, որ ձևավորվում է Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (1969) աշխատության մեջ մշակած բազմահատկանիշ մեթոդով:

Երրորդ փալում է, որ իր հիմնարար աշխատանքներով առանձնանամ է Հրաչյա Աճառյանը: Հ. Աճառյանը համոզված էր, որ հայերեն բարբառների դասակարգման «հիմք կարող են ծառայել ձևաբանական տարբերությունները» (Է. Աղայան, ն.տ., էջ 193): Ի՞նչ սկզբունքների վրա է հիմնվում մեծանուն հայագետը: Հ. Աճառյանը հստակորեն ցույց է ավել, որ հայ բարբառների աշխարհագրական դասակարգումը չի կարող ներկայացնել բարբառների իրական և ճշգրիտ պատկերը: Ինչո՞ւ, որովհետև աշխարհագրական դասակարգմամբ առանձնացված, այսպես կոչված, Արևելյան և Արևմտյան բարբառախմբերը ինչպես հնչյունական, այնպես էլ ձևաբանական առանձնահատկություններով տարբերվում են, ուստի չեն կարող ծառայել իբրև դասակարգման գիտականորեն արտահայտված հիմք: Հենվելով Հ. Աճառյանի նկարագրած բարբառային երևույթների վրա՝ Է. Աղայանը իր «Հայ լեզվաբանության պատմության» մեջ խնդրո առարկա հարցի մասին հստակորեն նշում է հետևյալը. «... մի կողմից՝ իրարից բոլորովին տարբեր, նույնիսկ տարբեր ճյուղերի մեջ մտնող բարբառները հնչյունական միևնույն հատկանիշներն ունեն (ինչպես՝ պայթականները Ագուլիսի և Մեղրու բարբառներում), մյուս կողմից՝ երբեմն միևնույն բարբառի խոսվածքները տարբեր հնչյունական հատկանիշներ ունեն (ինչպես՝ պայթականները Նոր-Նախիջևանի խոսվածքներում)» (նույն տեղում):

Հ. Աճառյանը, այս ամենը հիմք ընդունելով՝ հանգում է այն եզրակացության, որ հայոց լեզվի խայտաբղետ ու տարաբնույթ բարբառների դասակարգման ժամանակ հիմք պետք է ընդունել ոչ թե հնչյունական առանձնահատկությունները, այլ *ձևաբանական* հատկանիշները, քանի որ միմիայն այդ ճանապարհով է,

որ հաստատուն հիմք կարելի է ունենալ և կատարել գիտակա-
նորեն ճշգրիտ և հստակ դասակարգում: Մա, սակայն, բնավ չի
նշանակում, թե Հ. Աճառյանը իր բարբառագիտական ուսումնա-
սիրություններում անտեսել է հնչյունական երևույթների դիտար-
կումը: Հակառակը, Հ. Աճառյանի մշակած բարբառագիտական
ուսումնասիրության համակարգումը (ըստ Մ. Ասատրյանի՝
«դալիբը») հանգամանալից հետազոտության է ենթարկում ամեն
մի բարբառի հնչյունական կառուցվածքը, բարբառում առկա
հնչյունափոխությունների առանձնահատկությունները: Հենց այդ
ուղորտում է, որ վաստակաշատ գիտնականը ձևակերպել է, այս-
պես կոչված, *Աճառյանական օրենքը*: Հ. Աճառյանի մշակած հա-
մակարգով դիտարկվել են ոչ միայն այն բարբառները, որ
անձամբ քննել է վաստակաշատ գիտնականը, իսկ դրանց թիվը
շուրջ երկու տասնյակ է (Ագուլիս, Մարադա, Ղարաբաղ, Վան,
Պոլիս, Առտիալ, Նոր Նախիջևան, Նոր Զուղա, Կիլիկիա, Սվեդիա
և այլն): Վերջին երկու աշխատությունները լույս են տեսել գի-
տնականի մահից ավելի քան կես դար անց: Հ. Աճառյանի բար-
բառագիտական առանձին աշխատանքները, ինչպես «Ասլան-
բեկի և Սուչավայի բարբառների քննությունը» հոդվածաշարի
տեսքով տպագրվել են «Բազմավեպ» հանդեսում 1898-1899 թթ.:

Հ. Աճառյանի մշակած համակարգը, որով ցանկացած բար-
բառի հնչյունական առանձնահատկությունները վեր են հանվում
հանգամանորեն և նկարագրվում հստակորեն, հետագայում կի-
րառել են շատերը՝ Մ. Ասատրյան, Ալ. Մարգարյան, Հ. Մուրադ-
յան, Մ. Մուրադյան և ուրիշներ: Նույն կադապարի կիրառմամբ
տողերիս գրողը պատրաստել էր «Գանձակի խոսվածքը» ավար-
տաճառը:

Անշուշտ, հնչյունի ե հնչույթի, հնչյունական տարբերակների, իմաստատարներիչ հատկանիշների, այս առումով կառուցվածքային և լեզվահամակարգային հարաբերությունների դիտարկումներ Հ. Աճառյանի գործերում փնտրելը տեղին չի լինի, քանի որ Հ. Աճառյանի ձեռքի տակ եղած լեզվաբանական նյութը, նոր միայն մշակվող կառուցվածքային մեթոդների մասնակի տվյալները սահմանափակվում են անցյալ դարի 20-ական թվականներով:

Բարբառագիտական, լայն առումով հայերենագիտական առանցքային խնդիրներից է հետևյալը. ե՞րբ են ձևավորվել, տարանջատվել հայերենի բարբառները: Անցյալ դարի 50-ական թվականներին "Вопросы языкознания", «Պատմա-բանասիրական հանդես» գիտական ամսագրերում տեղի ունեցած, բանավեճերին իրենց հողվածներով մասնակցեցին մի շարք հայագետներ (ակադ. Է. Աղայանը, ակադ. Ա. Ղարիբյանը, ակադ. Գ. Ջահուկյանը և այլք): Հ. Աճառյանը չէր կարող մասնակցել այդ բանավեճերին, քանի որ արդեն ողջ չէր, սակայն հրապարակի վրա է Հ. Աճառյանի տեսակետը: Հայոց լեզվի բարբառների առաջացման ժամանակի հարցում Հ. Աճառյանի տեսակետը հետևյալն է: Մ. Մաշտոցի կողմից հայերեն գրերի գյուտի ժամանակ՝ 5-րդ դարում, հայերենը բարբառներ չի ունեցել: Առկա բարբառային ոչ էական տարբերությունները հնթաբարբառներին բնորոշ պատկեր են ներկայացրել: Հ. Աճառյանի համոզմամբ, արդի բարբառային տարբերակները ձևավորվել են մասամբ 6-9-րդ դարերում, իսկ «մի քանիսը՝ էլ ավելի ուշ» (Է. Աղայան, անդ., էջ 195):

Է. Աղայանը, քաջ գիտակցելով, որ 5-րդ դարում էլ առկա են եղել բարբառներ և գոյակցել են, փորձել է մասամբ «մեղմել»

Հ. Աճառյանի նման եզրահանգումը. «Այս եզրակացությունները, – գրել է Է. Աղայանը, – հիմնականում ճիշտ լինելով, կարիք ունեն որոշ բացատրության: Այն արտահայտությունը, թե 5-րդ դարում եղել են միայն ենթաբարբառներ, պետք է հասկանալ փոխաբերաբար, այսինքն՝ 5-րդ դարում եղել են բարբառներ, բայց նրանց միջև եղած տարբերություններն այնքան խոր չեն եղել, այլ տարբերությունները մոտավորապես այնքան են եղել, որքան այժմյան ենթաբարբառների միջև եղած տարբերություններն են» (Է. Աղայան, անդ., էջ 195): «Ըստ այդմ Հ. Աճառյանի կողմից բարբառները ենթաբարբառներ կոչելը, ըստ Աղայանի, պետք է դիտել իբրև պայմանական» (ն. տ.): Այդպես դատելու համար Է. Աղայանը հիմնվում էր Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 2-րդ հատորի այն եզրահանգման վրա, ըստ որի հայերեն բարբառները 5-րդ դարում «չունեին իրենց անջրպետող խոշոր տարբերություններ, և բոլոր հայերը հեշտությամբ հասկանում էին իրար» (Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, էջ 184):

Հ. Աճառյանը այն համոզման էր, որ հայերենի բարբառների միջև առկա տարբերությունները դարերի ընթացքում տեղի ունեցած գործընթացների արդյունք են: Բարբառների տրոհման գործընթացը շարունակական երևույթ է: Մինևույն ժամանակ, ըստ Հ. Աճառյանի, հայերենի բարբառների կառուցվածքներում առկա ձևափոխությունները, տարբերակայնությունը իբրև սկզբնաղբյուր ունեն հին գրական հայերենը (գրաբարը) ըստ այդմ բառաքերականական, հնչյունական և այլ միավորների համար, ըստ Աճառյանի, հիմք պետք է ընդունել *մեկ եզր*, մեկ սկզբնաղբյուր՝ *գրաբարը*: Ինչ խոսք, նման պատմական մոտեցու-

մը հնարավորություն է ընձեռում մի կողմից՝ դիտարկելու գրա-
բարից եկած երևույթները, առանձնացնել նորակազմություն-
ները, որոնք ի հայտ են բերել բարբառները հետագա զարգացման
ընթացքում, մյուս կողմից՝ գոնե մասնակիորեն քննելու հնդեվրո-
պական նախաձևից առաջացած, վաղնջահայերենից (եզրույթը
Գ. Ջահուկանինն է) գրաբարը շրջանցելով, բարբառներում
հայտնված երևույթները: Այդ եղանակով, օրինակ, Լ. Հովհաննիս-
յանը քննել է Ղարաբաղի բարբառում նախագրաբարյան շրջանից
պահպանված մի շարք լեզվական ձևեր (տե՛ս ՊԲՀ, 1977, 1, 141-
152: ԼՀԳ, 1979, 9, 52-60):

Անվիճելի է, որ բարբառագիտական իր հետազոտություն-
ներում վաստակաշատ գիտնականը հիմք է ընդունել պատմա-
համեմատական մեթոդի սկզբունքները: Լինելով հայ բարբառ-
ների ուսումնասիրության երրորդ փուլի ամենակարկառուն
ներկայացուցիչը՝ Հ. Աճառյանը հայ բարբառների դասակարգման
հիմքում դրել է ձևաբանական հատկանիշը: Իբրև ավելի ցայտուն
ձևաբանական տարբերություն նա հիմք է ընդունել սահմանա-
կան եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների
կազմության առանձնահատկությունները: Հայտնի է, որ բարբառ-
ների մի զգալի մասը ներկան կազմում է *ոււմ* մասնիկով, բար-
բառների մեկ այլ ստվար խումբ՝ *կը* նախամասնիկով: Համեմա-
տաբար փոքր մասն էլ՝ *եղ*-ով: Ըստ այդմ, Հ. Աճառյանը հայոց
լեզվի բոլոր բարբառները դասակարգում է երեք խմբի՝ *ոււմ*, *կը*, *եղ*
ճյուղերի միջև: Հ. Աճառյանի սույն դասակարգումը, ըստ էության,
միայն մասնակի փոփոխությունների ենթարկելով, ընդունված է
առ այսօր, մանավանդ եթե խոսքը *միահատկանիշ* դասակարգ-
մանն է վերաբերում և ոչ թե Գ. Ջահուկյանի մշակած բազմա-

հատկանիշ դասակարգման մեթոդին: Կարելի է ասել, որ Հ. Աճառյանի կիրառած սկզբունքները այսօր էլ հայոց լեզվի բարբառների գիտական դասակարգման հիմք են ծառայում: Կարծում ենք՝ միանգամայն ճիշտ է «Հայերենագիտական բառարանի» հեղինակ Հ. Պետրոսյանը, երբ նշում է, որ «անվանի հայագետը հայ բարբառների ձևաբանական դասակարգման հիմնադիրն է» (Հայերենագիտական բառարան, էջ 23):

Հ. Աճառյանի բարբառագիտական հրատարակությունների շարքում իր բացառիկ տեղն ունի 1913 թ. լույս տեսած «Հայերեն գաւառական բառարանը», որն ամփոփում է շուրջ 30 հազար բարբառային միավոր: Հ. Աճառյանը երագում էր ստեղծել հայոց լեզվի բոլոր բարբառների բառամթերքն ամփոփող բառարան, սակայն, իրավացիորեն, մեկ մարդու ուժերից վեր էր համարում (տե՛ս «Գավառական բառարան»-ի առաջաբանը): Հետագայում Հ. Աճառյանի այդ ծրագիրը փորձեց իրագործել նրա անունը կրող լեզվի ինստիտուտը:

Հ. Աճառյանի բարբառագիտական ուսումնասիրությունները շարահյուսական միայն առանձին, մասնակի երևույթներ են դիտարկել, մինչդեռ բարբառների բուն շարահյուսական կառուցվածքը, բառակազմությունը և այլն չի ամբողջացվել: Այդ իրողությունն ընդունում է նաև Հ. Աճառյանի ջերմ պաշտպանը՝ Է. Աղայանը՝ հաստատելով, որ բառային և մանավանդ շարահյուսական քննությունը Աճառյանի բարբառագիտական աշխատանքներում «որոշ չափով թերի է» (տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 196):

Ամփոփելով հարկ ենք համարում նշել հետևյալը. Հ. Աճառյանը իբրև հայ բարբառագիտական զարգացման երրորդ փուլի

ամենակարկառուն ներկայացուցիչը, մեծ գիտնականին վայել խորահմուտ քննությամբ նկարագրել է հայերենի շուրջ երկու տասնյակ բարբառներ, մշակել է բարբառների դասակարգման ձևաբանական մի համակարգ, որն ըստ էության կիրառվում է առ այսօր: Հայ բարբառագիտությունը, որ ձևավորվել էր իրենից առաջ, բարձրացրել է գիտական մի նոր աստիճանի և իր մնայուն տեղն ապահովել հայ քերականագիտության պատմության մեջ՝ իբրև 20-րդ դարի առաջին կեսի հայ մեծագույն բարբառագետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աճառյան Հ., "Classification des dialectes arméniens", P., 1909.
2. Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն, Ն. Նախիջևան, 1911:
3. Աճառեան Հ., Ասլանբեկի և Սուչավայի բարբառների քննութիւնը, «Բազմավէպ», Վենետիկ, 1898-1899:
4. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1940:
5. Աճառեան Հ., Հայերէն գաւառական բարաբան, 1913:
6. Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, մ. 2, Ե., 1962:
7. Մսերյան Լ., "Этюды по армянской диалектологии", 1897:
8. Патканян К., "Исследование о диалектах армянского языка", С.-Петербург, 1869.
9. Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

ՊՈՒՐՊՈՒՐ ԳՈՒՆԱՆՎԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ընդհանրապես տարածված կարծիք կա, թե իբր հնդեվրոպական ծագմամբ գունանվանումներով հայերենը հարուստ չէ: Որպես բնիկ հայերեն գունավորում նշվում է միայն դեղին բառը:

Այժմ մենք կփորձենք հնդեվրոպաբանության մեջ արտահայտված կարծիքի, անտիկ հեղինակների վկայությունների հիման վրա ներկայացնել մեր դիտարկումները **պուրպուր**, **պորփյուր** բառերի ծագման, նախնական իմաստային և գունային նրբերանգների հարցի շուրջ:

Ի՞նչ է գրում Հ. Աճառյանը **պորփիր** բառի ծագումնաբանական և արտահայտած իմաստի մասին իր նշանավոր «Արմատական բառարանի» 4-րդ հատորում (մեջբերում ենք ամբողջությամբ), «***Պորփիր** «մի տեսակ ազնիւ քար». ունեն միայն ՀՀԲ և ՋԲ առանց վկութեան, գործածական է արդի գրականում:

Յն. porfura «ծիրանին տուող խեցեմորթը», որից «պորփիր կոչուած ազնիվ մարմարիոնը», բուն ծագումը անյայտ է. թերևս սեմական փոխառութիւն լինի (Boisacq, 805-6). յոյնից են նաև ֆրանս. porphyre, ասոր. porforon, վրաց. պորփիրի, ռուս. порфиръ և այլն:

Ուղիղ մեկնեց ՀՀԲ»¹:

Ինչպես տեսնում ենք, Հ. Աճառյանը անորոշ է թողնում բառի ծագման աղբյուրը և պարզապես կրկնում է Է. Բուազակի ենթադրությունը, որ Porphyreos ածականը կարող է սեմական ծագում ունենալ: Է. Բուազակն իր այդ կարծիքին է մնացել 1950 թ. Փարիզում հրատարակած «Հունարեն լեզվի ծագումնաբանական

բառաբանում» (հմմտ. Boisacq E. Dictionnaire etymologique de la langue grecque, Paris, 1950)²: Դե, քանի որ հին հունարենի մասին խոսք բացվեց, նշենք, որ porphyreos ածականը, գործածված է նաև Հոմերոսի լեզվում, կապված է porphyra խխունջի հետ, որի հյուրով գործվածքներ են ներկել (հմմտ. Ն. Մալինաուսկենեի "Обозначения пурпурного цвета в эпосе Гомера" աշխատանքը, "Вопросы классической филологии" ժողովածուի 7-րդ հատորում, էջ 214)³:

Ճիշտ այդպես որդան կարմիրը որպես կարմիր գույնի մի երանգ, որից՝ գունանվանում... porphyra անվանումը միքենյան շրջանից հայտնի է: Արժե նշել նաև, որ տակավին Գ. Կուրցիուսը այն կապում է porphyro բայի հետ, որն արտահայտել է «բուռն» իմաստը (ռուսերեն "бурлить", "буршевать"), կապված սրընթացության, «փայլի և պուրպուր գույնի միախառնման հետ»⁴:

Նշված ձևերի շուրջ բազմաթիվ և իրարամերժ կարծիքներ են արտահայտվել:

Տակավին մեկ դար առաջ Վ.Պրելվիցը porphyreos և porphyro բառերը միավորում է մեկ հոդվածում՝ այն դիտելով իբրև phyro բայի արմատի կրկնություն⁵: Որպես արմատի կրկնության արդյունք է համարում այն նաև Է. Բուազակը:

Խ. Լեվին ժամանակին (1895թ.) ենթադրություն է հայտնել, որ porphyra բառը փյունիկյան ծագում ունի <*sporphyra: Արամեերենում առկա է sepapara «փայլել», «այգաբաց»⁶:

Հ. Ֆրիսկը 1972թ. Հեյդեբերգում հրատարակած «Հունարեն ստուգաբանական բառարան»-ի 2-րդ հատորում անհավանական է համարել Խ. Լեվինի վարկածը «իր տեխնիկական բնույթով» և

ավելի հավանական է համարել միջերկրածովային լեզվից ծագելու վարկածը⁷:

«Griechisches etymologisches Wörterbuch» բառարանի 3-րդ համարում Հ. Ֆրիսկը ծագումնաբանական նոր տարբերակ է առաջարկում porphyra-ի համար՝ ծագումնաբանական զուգահեռ առաջարկելով հայերենի **փրփուր** բառի հետ: Հայերենի **փրփուրի** հետ կապը ժամանակին նշել է Ա. Մեյեն, որը չի ընդունվել Հ. Աճառյանի կողմից: Հետագայում, 1966-ին Վ. Պիզանին Վիեննայում տպագրված աշխատանքներից մեկում ["Armenische Miscellen", էջ 274] կրկնում է Ա. Մեյեի կարծիքը⁸: Առ այսօր հնդեվրոպաբանության մեջ անորոշ և վիճելի է մնում այն հարցը, թե porphyra բառը նախասկզբնապես **պուրպուր** գոյնն է նշանակել, թե ոչ:

Եթե վերստին վերադառնանք Հոմերոսին, ապա պետք է շեշտել, որ Հոմերոսի պոեմներում այն ունի «փոթորկուն, փրփրուն, բուռն» իմաստը, իսկ ահա հետագայում՝ Հոմերոսից հետո, porphyreos-ը միմիայն գունանվանում է նշանակել:

Յ. Ֆրիսկը տարբերակում է porphyreos (>porphyro) գունանվանումը porphyreos (>porphyro) «փոթորկուն, բուռն» (ծովի մասին) իմաստից: Բառն իր ածանցյալ նշանակությունը՝ մուգ կարմրավուն, գորշ կարմրավուն, ձեռք է բերել հոմերոսյան լեզվում արյան հատկանիշների իմաստային անցմամբ, իմաստափոխությամբ՝ բուռն- փոթորկուն-կարմրաներկ-կարմիր...

Պուրպուր գույնը բազմաթիվ և իրարից էապես տարբեր նրբերանգներ կարող է ունենալ՝ վառ կարմիրից երկնագույնի միջոցով ընդհուպ մինչև սևը: Այդուհանդերձ, հնագույն շրջանում ի՞նչ իմաստ է ունեցել **պուրպուր** գունավորումը և ի՞նչ առար-

կաների հետ է կապվել: Հոմերոսի պոեմներում այն կապվում է հագուստեղենի (կտորեղենի), գորգերի, ծովի հետ: Պուրպուր ծով, ալիք: Հանձարեղ բանաստեղծ Ի. Գյոթեն հետաքրքրական գուգահեռներ է կատարել ծովի ալիքների, արշալույսի և վերջալույսի ժամանակ ստացած երանգների հետ կապված: Ըստ Գյոթեի՝ ծովի լուսավորված ալիքները կանաչ գույնի են, իսկ ստվերոտ մասում՝ պուրպուր գույն: Դա աչքի վրա թողած տպավորությունն է. «Ով որ գիտե, պուրպուրի պրիզմայի ծագումը, նա անհերթերթության չի համարի, երե պնդենք, որ այդ գույնը մասամբ ակտուալ, մասամբ պոտենցյալ կերպով իր մեջ պարունակում է բոլոր մնացյալ գույները» (Գյոթե, ն.տ.): Այդուհանդերձ, պետք է ընդունել, որ **պուրպուրի** մեջ միշտ էլ իբրև առաջնային գույն իշխել է կարմիրը կամ ծիրանագույնը: Հիշենք նախամաշտոցյան մշակույթից «Վահագնի ծնունդ»-ի «...երկներ և ծովն ծիրանի», որ համահունչ է պուրպուրին:

Պուրպուր գունանվանման իմաստային դաշտին հատկապես անդրադարձել է Հ. Գիպպերը. ըստ նրա պուրպուր գունանվանումը հատուկ է կարմիր գույնի դաշտին¹⁰: Պուրպուր գունային նշանակության հարցը Հ. Գիպպերը քննում է ներլեզվային ճանապարհով՝ փորձելով բնութագրել այն որպես կառուցվածքային դաշտի անդամ:

Ե. Շպայգերը պուրպուրի ծագումը հունական ոլորտից տանում է փյունիկյանը, քանի որ ըստ նրա՝ «փյունիկեցիները հայտնի էին պուրպուրի արտադրությամբ»¹¹:

Գ. Բոնֆանտեն Ե. Շպայգերի տեսությունը անհիմն է համարում երկու առումով: Նախ, որ իմաստաբանորեն ազգերը ընկալումով չեն բնութագրվում, ապա ձևաբանորեն **պուրպու-**

րիսը հունարենից չի կարող բխեցվել¹²: Համաձայն ենք Բոնֆանտեի կարծիքին, բայց արի ու տես, որ Գ. Բոնֆանտեն էլ առաջարկում է ընդունելի համարել պուրպուրի իլլիրիական ծագումը:

Ինչպես տեսնում ենք, 20-րդ դարի մի շարք հնդեվրոպաբաններ, կասկածի տակ առնելով պուրպուրի հունական ծագում ունենալու խնդիրը, փնտրում են հնագույն մեկ այլ լեզու, որից կատարված լինի փոխառությունը: Նշվում են սեմական լեզուները, փյունիկեերենը, իլլիրենը և այլն: Գլխավոր կովանը գերագանցապես ծառայում է ներկի աղբյուր հանդիսացող երկրի հետ կապվելու հիմնադրույթը: Այդպես է կարծում նաև Ն.Մալինաուկենեն իր վերոհիշյալ «**Պուրպուր** գունանվանման նշանակությունը Հոմերոսի էպոսում» հոդվածում¹³: Այդ փաստառատ ուսումնասիրության վերջում պուրպուրի մասին իր խոսքը եզրափակելով՝ նա գրում է. «Այդ անվանումները (**պուրպուրի** և **պորփյուրի** մասին է –Ա.Ս.)¹⁴ հարկ է դիտարկել»:

Այժմ տեսնենք, թե ինչ է ասում անտիկ նշանավոր հեղինակ Պլինիոս Ավագը **պուրպուր** գունանվան և ծագման աղբյուրի ու լեզվի մասին:

Ահա թե ինչ է գրում Պլինիոս Ավագը իր "Naturalis Historia" գրքում (տե՛ս ռուսերեն թարգմանությունը "Естествознания", թարգմ. Գ. Տարոնյանի)¹⁵. «XXVI Այլ գույների շարքում, որոնք, ինչպես ասացինք, իրենց բարձր գնի պատճառով առաջարկվում էին պատվիրատուների կողմից, առաջին տեղում **պուրպուրիսն** է:

XXVIII. Հայաստանը առաքում է ներկ, որ կոչվում է իր անունով (!): Դա քար է. այն նույնպես խրիսկոլի նման ներկված է, և ամենալավը հայկականն է, այն, որ ամենից ավելի մոտ է

խրիսկոլէին և միևնույն ժամանակ գոյնով անցում է կատարում լազուրին»:

Ինչպէս համոզվում ենք, վառ կարմիր, պուրպուր գունա- նյութը ստացվում է անտիկ աշխարհում Հայաստանից: Այդպէս էլ այն հաճախ կոչվում էր Armenium (հմմտ. հուն. Armenion): Ավելի ուշ հեղինակների գործերում՝ Armeniacum և Armeniacon: Անտիկ նշանավոր ճարտարապետ Վիտրուվին նույնպէս շեշտում է, պուրպուրը իբրև հայկական: Անտիկ ճարտարապետը նշում է ոսկեգույնը, հայկականը (իբրև պատերը վառ գոյնով ներկելու նյութ): Թե՛ Պլինիոս Ավագը, թե՛ հետագայում Դիոսկուրիդոսը **պուրպուր** գույնի քարն ուղղակի անվանում են հայկական: Բժշկության ոլորտում օգտագործվող քարը Դիոսկուրիդոսի գրքում ուղղակի անվանվում է Armenion («Հայկական» կամ «Հայկական քարի մասին»): Գունային բաղադրիչներին անդրադառնալիս Պլինիոս Ավագը ուղղակի գրում է «Armenico colori pingmentorum»: Ժամանակի (տեղի) սղության պատճառով չենք անդրադառնում Թեոփրաստեսի և ուշ շրջանի անտիկ հեղինակ- ների բնութագրումներին: Մեր օրերում գտնվել են հետազոտող- ներ, որոնք կարծիք են հայտնել, թե քանի որ ներկա Հայաստա- նում պուրպուր գույնի քարհանքեր չկան, պետք է ենթադրել, որ Հայաստան են բերել Սկյութիայից (իմա՝ Բաղաշխանից), և հետո միայն Հայաստանից քարն արտահանվել է Եվրոպա: Ա՛յ քեզ բան, նախ Հայաստանը պետք է դիտարկել իր պատմական տարած- քով՝ իրոք, ճիշտ տեղն է ասելու՝ **ծովից ծով** կարգավիճակով: Հետո, մի թե անտիկ հեղինակներն այդքան տկար էին աշխար- հագրությունից, որ Հայաստանը շփոթեին Սկյութիայի, Իլլիրիայի կամ այլ վայրի հետ: (Հիշենք Վյաչեսլավ Իվանովի հայտնի գեկու-

ցումը Հայագիտական միջազգային գիտաժողովում, որում պընդվում է հայերի ծովային ազգ լինելու տեսությունը՝ հենց «Վահագնի ծնունդ»-ով...):

Կարելի է ասել, որ ինչպես որ մեր որոշ դրացիներ զուտ հայկական տարածքները յուրացնելուց հետո մշակույթն էլ են փորձում «սեփականացնել», այդպես էլ անտիկ հեղինակների հստակ մատնանշումները, իբրև **պուրպուրի** գունային սկզբբնաղբյուրը Հայաստանն ու հայկականը, փորձում են կա՛մ անտեսել, կա՛մ հարցականի տակ դնել: Ցավոք, երբեմն դրան նպաստում է թե՛ մեր պասիվությունն ու անտարբերությունը, թե՛ անցյալի առանձին հայագետների չափազանցյալ կասկածամտությունը:

Հիմք ընդունելով հնդեվրոպաբանների այն առանցքային դրույթը, ըստ որի ներկանյութը տրամադրող լեզվից էլ կատարվում է փոխառությունը, համոզիչ ենք համարում այն պնդումը, որ պուրպուրը բնավ հունական ծագում չունի: Երկար որոնումները՝ գտնելու այն երկիրն ու լեզուն. որից փոխառվել է պուրպուրը, հանգեցնում են 1972-ին Գ. Ֆինկի առաջ քաշած ծագումնաբանական այն զուգահեռին, որով **պուրպուր** հունարեն բառը աղերս է ունենում հայերեն **փ(ու)րփուրի** հետ: Հիմք ունենալով անտիկ հեղինակների բազմաթիվ վկայությունները, որ պորֆյուրը Հայաստանից արտահանվող քարի գույնից է, և որ այն պուրպուրի (հունարեն **պուրպուրիսի**) հիմքում է, գտնում ենք համոզիչ **պուրպուր** գունանվան զուտ հայկական ծագումը, **փուրփուր** բառը (**փուր** արմատի կրկնությամբ) բնիկ հայերեն է, հնիւ., pher-ի կրկնությամբ առաջացած: Հետաքրքրական է, որ ՆՀԲ-ն գրեթե 2 դար առաջ որոշ վերապահությամբ այն կապել է

հունարեն *porfura* և լատիներեն *purpura* «ծիրանի» ձևերի հետ, առանց, սակայն, անդրադառնալու բառի բուն ծագման խնդրին: ՆՀԲ-ն հատկապես շեշտում է հունական դիցաբանության մեջ Աֆրոդիտեի՝ ծովի փրփուրներից ծագած լինելու առասպելաբանությունը¹⁶:

Հայերենի **պուրպուրը** և **ծիրանին**, որպես գունանվանումներ, ունեն իրենց իմաստային դաշտում արձանագրված անցումները՝ ծովի արշալույսյան գույն-պուրպուր-փրփուր-բուռն բոնկվել- կարմիր և այլն: (Հմատ. «Վահագնի ծնունդ»-ի ...Երկներ և ծովն ծիրանի... Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ...): Պուրպուր-ծիրանի-կարմրիկ-կապտանարնջագույն անցումները պատահական չէ, որ դարձել են մեր ազգային դրոշի՝ գերագույն սիմվոլի, խորհրդանիշներ:

Ամփոփենք, հայերենի գունավորումների դաշտը վերադիտարկվելու կարիք ունի, եթե նկատի ունենանք, որ գունային անցումներին համապատասխան բառային ձևերի, նրանց արտահայտած նախնական իմաստների և տեղի ունեցած իմաստային փոփոխությունների կառուցվածքային քննությունը խիստ արդիական խնդիր է դառնում:

Ընդամենը մեկ գունանվան **պուրպուրի** հպանցիկ քննությունն իսկ վկայում է, որ հայերենի գունանվանումների համակարգը ոչ միայն աղքատիկ չէ, այլև «մատակարարող» դեր է կատարել հոմերոսյան հունարենի, Պլինիոս Ավագի ժամանակաշրջանի լատիներենի համար: Պարզապես պետք է տեր կանգնել մեր լեզվական գանձարանին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Ե., 1980:
2. **Boisacq E.** Dictionnaire etymologique de la langue grecque, P., 1950:
3. **Малинаускение Н.** "Обозначения пурпурного цвета в эпосе Гомера", сб. "Вопросы классической филологии" вып. VII, стр. 214:
4. Տե՛ս նույն տեղում:
5. Տե՛ս նույն տեղում:
6. Հմմտ. Մալինաուսկենի վերոհիշյալ հոդվածը. "Вопросы классической филологии, вып. VII, стр. 214:
7. Հմմտ. **Frisk H.** Griechisches etymologisches Worterbuch, bd. II, Heidelberg, 1972.
8. **V. Pizani**, "Armenishe Miscellen, Vien, 1966, էջ 290:
9. Տե՛ս **Դերե И.Б.** Изб. Соч. по естествознанию, М., 1957, էջ 290:
10. Տե՛ս **Gipper H.** Purpur, "Glotta" 1964, Bd 42:
11. **Speiser E.A.**, The name of the Phoenices- "Museum Helveticum. Journal of the Linguistic society of America", 1936, XII, էջ 121-126:
12. Տե՛ս **Bonfante G.** The name of the Phoenician "Classical Philology", 1941, V 36, № 1, էջ 4:
13. Տե՛ս ծանոթագրություններ 3, 4, 5:
14. Տե՛ս նույն տեղում, էջ 233:
15. **Плиний Старший**, Естествознание, М., 1994, էջ 87:
16. Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. II, 1937:

STUDY CYCLES OF THE ARMENIAN DIALECTS

Studies of the Armenian dialects encompass an extensive period of about sixteen centuries, in which numerous attempts were made first to simply differentiate and partially describe, thereafter to possibly group and classify them.

Academician G. Jahukyan identifies four main stages in the development of the Armenian dialectology [1]. The first stage in this classification is referred to as "specific descriptions and geographic (territorial) classification of dialects" extending from the 5th to the early 20th centuries [2]. It is our conviction that at least two stages are intertwined herein, because if in fact the period from the 5th until the late 18th centuries may rightly be characterized by mere descriptions of various dialects, later, admittedly, by attempts of territorial (regional) classification, then it cannot be attributed to especially Cherobe Patkanian [3], Arsen Aitenian [4], who not only marks off four dialectal groups (see below), but also examines the background of their origin, their phonetic and lexical characteristics. Therefore, in distinguishing stages of the Armenian dialectology, it is appropriate to differentiate between the initial attempts for providing **specific descriptions and geographic classifications** (starting from the 5th until the 19th centuries) and the phase throughout the 19th century, when not only serious attempts are made to define dialectal foundations, but also basis for their morphological classification are set and successfully utilized (cf. attempts by Ch. Patkanian, A. Aitenian).

Below are brief descriptions of the main stages in the development of the Armenian dialectology.

1. **Particular attempts of initial description and regional (geographic) classification of the Armenian dialects (from the 5th up to the end of the 17th centuries).** This stage starts with Dionysus of Thracia, who in "Armenian translations and interpretations" of his grammar makes partial observations of dialectal phenomena. Usually, as a textbook example, Greek dialects are contrasted with corresponding Armenian dialects: e.g. the Gordian dialect is mentioned in connection with the Dorian dialects [5].

The first serious attempt of classifying Armenian dialects by region was made about a thousand and three hundred years ago by a famous grammarian Stephanos of Syunik. As correctly observed in the Armenian linguistics, in this regional classification of Armenian dialects the author functions as an interpreter and simply seeks parallels within the Armenian language according to the Greek dialectal classification. "And you know all the words and terms of the language as in Korch and Tayk and Huth and Fourth Hayk and Spcr and Syunik and Artsakh" (see N. Adonts, *Dionysus of Thracia and Armenian Interpreters*, (in Russian) [6]).

Foreign travelers' (mostly European; Marko Paulo, etc.) observations regarding the linguistic condition in the Armenian land, even though scant, are quite interesting. Passing through the historic Armenia, especially through Cilicia, Roman Catholic missionaries make notes of several linguistic peculiarities, prepare a version of the Bible in the vernacular Armenian (a mixture of the Middle Armenian), which belongs to the sub-phase preceding the two-branched colloquial stage of the Armenian language (cf. A. Sargsyan's and Y. Tadevosyan's report on "The Typology of the Armenian language in

the culture of the 17th century", as presented in an international humanities symposium) [7].

These issues, unfortunately, have not yet been examined in a proper scientific research.

Already in the 16th to the 18th centuries we find quite a lot of material on dialects in the works of European experts in the Armenian Studies. In his dictionary published in 1633. F. Rivola provides a lengthy list of dialectal words. Y. Schroder's "The Treasure of the Armenian language", published in 1711, deserves a special examination.

In the historical sketches of almost all dialectological studies, researchers refer to P. Rivola's and Y. Schroder's data, which, despite being unsophisticated attempts of regional or geographical classification, contain important factual data on the given period.

2. Regional classification and identification of origins of Armenian dialects (19th century). This century marks one of the most important stages in the development of the Armenian dialectology. It is in this period that significant progress is achieved in the classification of dialects, especially by A. Aitcnian and Ch. Palkanian.

In his classical work, "Critical Grammar of the Vernacular or Contemporary Armenian*" (Vienna, 1866), Aitcnian sets off four groups of Armenian dialects: a) middle-provincial, Armenia (Van, Mesopotamia, etc.), b) Asia Minor-Constantinople, c) western - Poland-Arteal, d) eastern - Astrakhan, Persia. The latter, according to Aitcnian, includes a vast geographic area: "from Russia to India". A. Aitcnian does not perform a mere geographical classification by grouping the dialects according to their geographical location; rather, he attempts to clarify the background of their origins. Thereby, the

renowned linguist identifies the first three as having one and the same (western) origin, while attributing the eastern type to a different origin. Like Ch. Patkanian, Ailenian also identifies a series of distinguishing features, e.g. the availability of the locative case in the eastern branch and its absence in the western dialects; the proverbial formation of the present tense in the eastern branch, the simplification or loss of double-dialects, etc.

3. Prevalence of the morphological principle in the classification of the Armenian dialects (early 20th century until the 1940s).

Naturally, morphological classification is largely based upon geographical-regional grouping. An author of such a morphological exhaustive classification is H. Acharian by his foundational works: "Classification des dialectes arméniens", published in French (Paris, 1919) [8] and "An Outline of the Armenian Dialectology and Classification of Armenian Dialects", published in Armenian (Moscow, Nor Nakhijevan, 1921). Based on the formation of the present tense, H. Acharian distinguishes three dialectal branches: a) The "—um" ending (Ararat, Karabagh, Agulis, etc.), b) The "k—" prefix (Constantinople, Karin, Moush, etc.) and c) the "—el" ending (Khoy, Ardvin, Maragha). G. Jahukyan finds this classification principle as quite correct: "...basing the classification of dialects upon a certain morphological feature, H. Acharian gives no specific principles for differentiating dialects within any given branch, rather here he is led by the territorial feature, inconsistently drawing parallels with some phonemic and morphologic features" (G. Jahukyan, *ibid*, page 19). Later, A. Gharibyan, based on H. Acharian's classification, adds another group: the "—s" branch (Karchevan, Hadrut, Urmia, etc.) in

the groups of Armenian dialects (see A. Gharibyan. *A New Branch in the Armenian Dialects*, Yerevan, 1939) [9].

4. The period between the 1940s and the close of the 20th century is separated by G. Jahukyan as the third stage (in this classification, it is the fourth stage), which is characterized mainly by the predominance of the **phonetic classification** principle. In this stage, however, some attempts are made to further investigate and elaborate the approaches presented in the previous stages of morphological classifications. A summary outcome, characteristic of this stage, is A. Gharibyan's "Armenian Dialectology" (Yerevan, 1953). The dialectologist relies upon the consonantal system of the old literary Armenian by considering the changes that have occurred to the voiced as well as voiceless plosives and semi-fricatives *of grabar* (i.e. the old Armenian) in the contemporary dialects (thus distinguishing among gradations such as from voiced to voiceless, eg. "b" > "p", "g" > "k"; from voiced to voiced fricatives, e.g. "b" > "b?", "g" > "g?" and from voiceless to voiced, e.g. "p" > "b" and vice versa). Accordingly, the following types are distinguished: 1) double-degree voiceless in Karabagh, Hadrut, Shamakhi, Van, Khoy; 2) double-degree without voiceless in Constantinople, Crimea, New Nakhijevan, Trabzon; 3) triple-degree without voiceless in Hamshen, Hajen, Yerznka; 4) triple-degree grafow-type in Ardivin, Tiflis, Meghri, etc.

Academician A. Gharibyan directly links the consonantal systems of the contemporary Armenian dialects to the Indo-European base and tries to thereby explain "historical subsequence" of the rise of the Armenian dialects (see G. Jahukyan, *ibid*, page 21). In this regard, the following observation is quite acceptable: "This interpretation,

which seems resilient on the outward, as promoted by some linguists, is vulnerable due to the insufficient regard for historical conditions, simplistic view of the Indo-European consonantal system and the schematic and one-sided representation of the characteristics in the Armenian dialects" (G. Jahukyan, *ibid*, see also Вопросы языкознания, М., 1959-62, "Historical-Philological Journal" (in Armenian), Yerevan, 1958-1960)[10].

Continuing his research on the Armenian dialects, A. Gharibyan identifies 3 groups and 7 branches in his final classification, made about half a century ago. The observable differences in the formation of the single present and past perfect forms have served as basis of identification. Accordingly, participle-based verbs, those with affixes and others having resemblance to the *grabar* are attributed to different groups. In this period (with some reservations, this may be referred to the present as well), there are not clear standards of differentiating among dialects, sub-dialects and particular ways of discourse. Often a linguistic-regional element that is otherwise qualified as a discourse is considered to be dialect (not even a sub-dialect), etc.

5. The next stage in the Armenian dialectology may be qualified as of the development and initial attempts in application of **multi-featured classification** principle as well as of the compilation of the Armenian dialectological atlas. The start of this stage is acceptably 1964, when the II. Acharian Linguistic Institute of the Armenian National Academy of Sciences initiates a large-scale project aimed at developing a comprehensive compilation of the discourses within the Ararat dialect by dispatching on-site dialectological work groups (scientific lead: Academician G. Jahukyan). Significant progress is

made in rejecting the historicity principle in dialectological research due to its insufficiency and in striving to clearly differentiate dialectological phenomena according to synchronic and diachronic principles, etc.

By adopting the synchronic and diachronic principles and applying multi-featured statistical data, G. Jahukyan developed the so-called "statistical dialectology" method and used it for the first time in the Armenian dialectological studies. In this connection, the author of the method has emphasized the following: "It is necessary to apply the principles of linguistic geography in Armenian, studies, in distinguishing dialectical elements to use not one or two, but the **totality of the features**" (emphasis ours, A.S., see G. Jahukyan, *ibid*, page 23) [11].

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գ. Զահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
2. Տե՛ս ն.ս., էջ 16:
3. **Патканян К.**, Исследование о диалектах армянского языка. Спб. 1896. Этыды по армянской диалектологии. Спб., 1897.
4. **Ա. Այտընեան**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
5. **Գ. Զահուկյան**, ն.ս., էջ 16:
6. **Адонц Н.** Диониссий фракийский и армянские толкователи. П., 1915.
7. **Ա.Սարգսյան, Ե.Թադևոսյան**, Հայոց լեզվի տիպաբանությունը 17-րդ դ. մշակույթում, Միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Ե., 1986:
8. **Հ.Աճառյան**, Հայ բարբառների դասակարգումը (Ֆրանսիա), Փարիզ, 1919:
9. **Ա.Ղարիբյան**, Հայերեն բարբառների մի ճյուղ, Ե., 1939:

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՑԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՌԻՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՌԵՖՈՐՄԸ

Տասնամյակներ շարունակ Սփյուռքի տարբեր հատվածներում (ինչու չէ, նաև Հայաստանում) մեղադրանքներ են հնչում մեծավաստակ գիտնական, խորահմուտ հայագետ Մանուկ Աբեղյանի հասցեին՝ ուղղագրության ռեֆորմի հեղինակ լինելու կապակցությամբ: Այդ մեղադրանքների հասցեատեր դարձած Մանուկ Աբեղյանը հանիրավի քարկոծվում և շարունակաբար քննադատվում է, իրականում առանց հիմնավոր պատճառի:

Հայտնի է, որ 1913 թ. հոկտեմբերի 14-ին Ս. Էջմիածնում, Համագգային մեծ հոբելյանի հանդեսին Մ. Աբեղյանը կարդացել էր իր «Մեր ուղղագրության մասին» զեկուցումը: Հենց սկզբից մեծանուն հայագետը դիմում է հարցման հետևյալ ձևին. «Արդյոք պե՞տք է և կարելի՞ է փոփոխություններ մտցնել մեր ավանդական ուղղագրության մեջ, և ի՞նչպիսի և ի՞նչ փոփոխություններ կարևոր և հնարավոր է այժմ անել» (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Ը, էջ 330): Նկատի առեք Մ. Աբեղյանի կրկնակ հարցադրումները՝ *պե՞տք է, կարելի՞ է*: Գիտնականը հստակ տարբերակելով *պետք են և կարելի են*, միաժամանակ հստակորեն առանձնացնում է երկու բան. *Կարևոր* լինելը և մանավանդ *հնարավոր* լինելը...

Մ. Աբեղյանն այդ պատմական զեկուցման մեջ շեշտել է բոլոր ազգերին (խոսքը գրավոր մշակույթ ունեցող ազգերի մասին է) բնորոշ այն սկզբունքը, ըստ որի *միակերպ քերականություն* ունենալուց բացի պայման է նաև *միակերպ ուղղագրություն* ունենալը:

Շեշտելով *միակերպ ուղղագրության* պայմանը՝ Մ. Աբեղյանը նկատում է, որ «հայերենի համար ավելի մեծ է այս պայմանի նշանակությունը: Իսկ թե ինչու, մեծանուն գիտնականը բացահայտում է անմիջապես. «...քանի որ մենք ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նույնանում են զոնե միակերպ ուղղագրությամբ: Ուստի հենց սկզբից պետք է ասեմ,- կասկածամտության, երկընտրանքի տեղ չի թողնում Մ. Աբեղյանը,- որ *եթե որևէ փոփոխություն պետք է մեր ուղղագրության մեջ ավելի խառն դրություն մտցնի և մեր գրական լեզուներն իրարուց ավելի հեռացնի, ավելի լավ է, որ չլինի*» (ընդգծումը մերն է-Մ.Ա., ն.տ.):

Ուրիշ կերպ թերևս չէր էլ կարող վարվել Աբեղյանի պես ամեն ինչ հաշվի առնող, կշռադատող գիտնականը: Ուստի նա խորհուրդ է տալիս և՛ ներկաներին, և՛ բովանդակ հայությամբ. «... այս խնդրին պետք է շատ մեծ զգուշությամբ մոտենալ»:

Ուղղագրության խնդրում արմատական մոտեցումներին դեմ է եղել Մ. Աբեղյանը «ոչ թե նրա համար, որ լեզվագիտությունն անգոր է այդ անելու, այլ որովհետև այդ անհրաժեշտորեն կմտցնե խառն դրություն, և մարդիկ մեկմեկու գրած հեշտությամբ չեն հասկանալ...» (Մ.Ա., ն.տ., էջ 332): Իհարկե, Մ. Աբեղյանը քաջ գիտեր, որ «ամեն տեղ էլ կան մարդկանց ամբողջ դասեր, որոնք ծանոթ հոգեբանությամբ՝ ավելի սիրով կապված են մնում հինին, ավանդականին: Դրանք են և այն ծայրահեղները, որոնք մերժում են ամեն փոփոխության ուղղագրության մեջ» (Մ.Ա., ն.տ.):

Եվ ինչպես ցույց տվեց կյանքը, Պ. Մակինցյանի կողմից առաջ մղված ուղղագրական ռեֆորմի ամբողջ մեղքը գցվեց Մ. Աբեղյանի վրա: Ի հայտ եկան և ծայրահեղականներ (Ստ.

Մալխասյանց և այլք), և ավանդական հոգեբանական մոտեցում ունեցողներ (Հր. Աճառյան և այլք): ... Մի խոսքով, բուն Աբեղյանական դատումներն ու բնութագրումները անտեսվեցին, գիտնականին վերագրվեցին բաներ, որոնց դեմ ինքը արդեն պայծառատեսորեն ընդվզում էր ռեֆորմը ընդունելուց տարիներ առաջ:

Ապագա ընդդիմադիրներին է կարծես ուղղված Մ. Աբեղյանի հետևյալ դատումը. «Մեր ուղղագրությունը ևս միշտ փոփոխության մեջ է եղել: Առանց հին դարերի փոփոխությունների դիմելու, որ գտնում ենք ձեռագրերի մեջ և որոնցից մի քանիսը կտեսնենք 19-րդ դարու առաջին հիսնամյակում» (ն.տ.):

Մ. Աբեղյանը հստակորեն շեշտում է, որ «Գրաբարն աշխարհաբարի վրա շատ ավելի է ազդել ուղղագրության մեջ, քան շարահյուսության և ձևաբանության մեջ, մենք այժմ գրում ենք գրեթե ամբողջապես գրաբարի ձևով» (ն.տ., էջ 335):

Բոլոր նրանց, ովքեր փորձում են կապված մնալ ավանդականին, Մ. Աբեղյանը հիշեցնում է հետևյալը. «Ուղղագրության վեճի ժամանակ փոփոխության հակառակորդները հաճախ օրինակ են բերում ուրիշ ազգերի ուղղագրության դժվարություններն՝ ասելով, թե ֆրանսիացիք և ուրիշներ, որ մեզանից ավելի խելոք են, ինչո՞ւ չեն իրենց դժվար ուղղագրությունը փոխում» (ն.տ., էջ 335): Աբեղյանը իսկույն տալիս է իր գիտական սպառիչ մեկնաբանությունը. «Հին ֆրանսերենի ուղղագրությունը նոր ֆրանսերենից, նույնպես հին, միջին և բարձր գերմաներենի ուղղագրություններն իրարուց, շատ տարբեր են: Նրանք ուղղագրական շատ վեճեր, փոփոխության զանազան փորձեր ունեցել են, մինչև մի որոշ դրության են հասել...» (ն.տ.):

Մ. Աբեղյանն այնուհետև մեջբերում է մի հայտնի քերականության հետևյալ ինքնատիպ ձևակերպումը. «Ֆրանսերենի ուղղագրությունը սուկավի համբավ ունի, այն իմանալը մեծ պարծանք չէ, բայց մեծ ամոթ է չիմանալը: Ամենափոքր սխալը վարկաբեկում է հեղինակին» (տե՛ս Մ.Ա., Ե., էջ 339):

Ի՞նչ ասենք մերօրյա հայ մամուլի, դասագրքերի, եթերի լեզվի մասին: Ամոթի մասին, կարծում ենք, անիմաստ է մտածելն իսկ...

Փոփոխությունների, մանավանդ ուղղագրական ռեֆորմի դեմ սուր ճոճողներին Մ. Աբեղյանը հիշեցնում է, որ «Ֆրանսերենի ուղղագրության մեջ ևս հետզհետե փոփոխություններ են մտնում» (ն.տ.):

Եթե ուղղագրական փոփոխություն պիտի լինի այնուամենայնիվ,- կարծում է Մ. Աբեղյանը,- ապա պիտի լինի հետևյալ երկու պայմանների հիման վրա: «1. *Մեծ, հիմնական փոփոխություններ, այն էլ միանգամից, երբեք հնարավոր չէ անել:*

2. Կատարված փոփոխությամբ նույնիսկ մի բառի պատկերն անձանաչելիության աստիճանի չպիտի հասնի...» (ընդգծումը մերն է, ն.տ., էջ 345):

Ընթերցողը կհամոզվի, որ *արմատական, մեծ և հիմնական* փոփոխությունների դեմ է Մ. Աբեղյանը: Նա համոզված է, որ այդպես հնարավոր չի անել: Մինչդեռ հետագա կյանքը ցույց տվեց, որ ռեֆորմը իրականացավ հենց այդպես, առանց արեղյանական առանցքային ըմբռնումները հաշվի առնելու:

Ամփոփելով իր գեկուցման եզրակացությունները՝ Մ. Աբեղյանը գրում է. «Մենք տեսանք, որ հնարավոր է *միայն մասնակի փոփոխություններ մտցնել մեր ուղղագրության մեջ,*

այն էլ միայն ձայնավորների գրության մեջ» (ն.տ., էջ 349): Մինչդեռ Պ. Մակինցյանի մոտեցմամբ ամեն ինչ ոչ թե պետք է միայն *միանգամից*, հախուռն մոտեցմամբ անել, այլև կատարել հաջորդ քայլը... *անցնել լատինատառ համակարգին*: Փառք Աստծո, որ այդ ազգադավ հղացքը չիրականացավ:

Մ. Աբեղյանը անդրադառնում է կարևորագույն մի հարցի ևս. *Գրական արտասանությանը*: Ահա թե ինչ է առաջարկում անվանի հայագետը. «Ես կուզեի, որ առանձին ուշադրության առնվեր այստեղ գրական լեզվից, այնպես էլ տարբերինք բարբառային արտասանությունները այն արտասանությունից, որ գործադրում են կամ աշխատում են գործադրել գրական լեզվով խոսողները...» (ն.տ.):

Վերստին անդրադառնալով հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի ընդհանուր սկզբունքներին և անելիք բարեփոխումներին՝ Մ. Աբեղյանը «Արարատ» ամսագրում 1913 թ. տպագրած իր հոդվածում գրում է. «Ուղղագրության բարեփոխությունը պետք է հիմնվի *դպրոցական – գրական արտասանության վրա և գրությունը մոտեցնի արտասանությանը*: Փոփոխությունը պետք է այնպես լինի, որ *բացառություններ չմնան* և, ըստ կարելիության, քիչ բառերի գրությունը տարբերվի եղածից: 3. Փոփոխությունը պետք է հիմնավորված լինի հնչաբանական տեսակետով և պատմականորեն...» (ն.տ., էջ 367):

Ուղղագրության բարեփոխման ժամանակ, բացի Աբեղյանի կողմից նշված վերոհիշյալ երեք սկզբունքներից, հենց իր կողմից առաջ են քաշվում նաև հետևյալ երեք տեսակետները՝ *մանկավարժական, աշխատանքի տնտեսման և ընդունելության*: Ըստ առաջին տեսակետի ձգտումը հեշտ և արագ սովորեցնելն է,

անսխալ գրելն ու կարդալը: Երկրորդ սկզբունքով առաջ է մղվում *Ժամանակի տնտեսման* տեսակետը: Ավանդական ուղղագրության ջերմ պաշտպանները երբեմն մոռացության են տալիս այն փաստը, որ արևմտահայերենում, դասական ուղղագրության սկզբունքներին հետևելով հանդերձ, ընդամենը մեկ դար տևած ժամանակահատվածում միևնույն *անգլերեն* բառը ներկայացվել է հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարանները եռյակ տարբերակներով՝ *անգլիարեն, անգլիերեն, անգլերեն...*

Նման օրինակներ կարելի է բերել նաև ֆրանսերենից, գերմաներենից, գրային պատմություն ունեցող բոլոր այլ լեզուներից:

Մեր մոտեցումը ավանդական (Մեսրոպյան) ուղղագրության հարցում նույնն է, ինչ ավանդապաշտներինը: Տարբերությունը Մ. Աբեղյանին ներկայացված մեղադրանքների անհիմն լինելը փաստելու մեջ է: Թերևս արժե մեկ անգամ ևս շեշտել, որ մեծանուն գիտնականի համոզմամբ, եթե ուղղագրական որևէ ռեֆորմ լինելու է մեկ գրական լեզվի միայն մեկ ճյուղի համար, ապա դա միանգամայն անընդունելի, խիստ մերժելի է, որովհետև սեպ կլիրի մեր գրական լեզվի երկու ճյուղերի միջև:

Իր գեկուցուման վերջում գերմանական բանասիրության բարձրագույն դպրոցն ավարտած Մ. Աբեղյանը վերստին շեշտում է, որ «Ուղղագրությունը նորոգել և հնչական գրությամբ՝ արտասանությանը մոտեցնելը *մի բնական և կարևոր պահանջ է*, որ լուծումը պիտի ստանա *հետզհետե, աստիճանաբար...*» (ընդգծումը մերն է- Ա.Ս.):

Ֆրանսիայում ուղղագրական որևէ բարեփոխում իրավասու է կատարել միայն ակադեմիան: Մեջբերելով ֆրանսիացի մի գիտնականի խոսքը՝ Մ. Աբեդյանը շեշտում է. «Ակադեմիան միայն բավարար իշխանություն և հեղինակություն ունի այդ բարեփոխումը կատարելու»: Մ. Աբեդյանը շեշտում է. «Բայց ո՞վ է մեր այդ հեղինակությունը... ամեն անհատ մեզանում կարող է ակադեմիկոս լինել և ուզած փոփոխությունը ոչ միայն առաջարկել, այլև անմիջապես գործադրել...» (ինչպիսի՝ հեռատեսություն...):

Վերջում, Մ. Աբեդյանի եզրահանգումն է. «Հարկավոր է մի հեղինակավոր խորհուրդ՝ մասնագետներից կազմված, որ լրջությամբ պարապեր այդ խնդրով, բազմակողմանի կերպով ուսումնասիրեր մեր ուղղագրությունը: ... Այդ մասնագետ մարդկանց խորհրդից ընդունվածն՝ ընդունելի կլիներ և՛ հոգևոր իշխանությունից, և՛ գրագետների ու լրագիրների համար» (էջ 365):

Կյանքը ցույց տվեց, որ ինչ սկզբունքների հետևում էր Մ. Աբեդյանը, Պ.Մակիցյանը հակառակն իրագործելու հնարավորություն ունեցավ: Անցան տասնամյակներ: Այսօր էլ սփյուռքում անընդհատ շեշտվում է *աբեդյանական խեղազրություն* և բազում այլ պիտակներ, մինչդեռ մեծն Աբեդյանը ամեն ինչ ժամանակին զգուշացրել էր, ամեն բան կանխատեսել: Թերևս այդ էլ պատմության դառն հեզնանքն է:

Ինչևէ, անցել են տասնամյակներ, Մանուկ Աբեդյանը եղել և այսօր էլ մնում է հայագիտության, ներառյալ հայերենագիտության հսկան՝ *Մհերը*:

ԱՐՏԵՄ ԵՂԻՇԵՒ ՍԱՐԳՍՅԱՆ

Արտեմ Եղիշեի Սարգսյանը ծնվել է 1942 թ. պատմական Գանձակ քաղաքում (XIX դարում կոչվել է Ելիզավետպոլ): 1949-1960 թթ. սովորել է Գանձակի Ա. Միկոյանի անվան թիվ 10 միջնակարգ դպրոցում: 1960-ին ընդունվել և 1965-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Նույն թվականին ընդունվել է ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի հաստատության ասպիրանտուրա: 1969 թ. եղել է լեզվի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, բանասիրական գիտությունների դոկտոր է 1988 թ.: 1972-76 թթ. և 78-82թթ. ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի երաշխավորությամբ գործուղվել է Կիպրոս, ուր աշխատել է որպես Մելքոնյան հաստատության հայագիտական բաժնի վարիչ: 1976 թ. շարունակել է աշխատանքը լեզվի ինստիտուտի կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժնում որպես կրտսեր, ավագ գիտաշխատակից, ապա բաժնի վարիչի տեղակալ: 1983 թ. նշանակվել է ինստիտուտի եզրաբանության և խոսքի մշակույթի բաժնի վարիչ, 1991-ին՝ աշխարհաբարի գոյաձևերի ուսումնասիրության խմբի ղեկավար, 2008 թ.՝ Հայերենի բարբառագիտական ատլաս բաժնի, 2013-ին՝ արևմտահայերենի բաժնի վարիչ:

1985 թ. Ա. Սարգսյանն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի՝ «Մեր լեզուն, մեր խոսքը» հեղինակային հաղորդաշարի համար:

Ա. Սարգսյանը «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի (Ֆրանսիա) թղթակից անդամ է (2007 թ.):

– Կանադայի միջազգային տեղեկատվական ակադեմիայի իսկական անդամ (2007 թ.):

– Արևմտյան Եվրոպայի գիտության և մշակույթի ակադեմիայի իսկական անդամ (2007 թ.):

– Իտալիայի հանրային հետազոտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս (2008 թ.):

– Վատիկանի Բոնիֆացիանա ակադեմիայի պատվավոր անդամ:

2006 թ. Ա. Սարգսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1992-96 թթ. աշխատել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում որպես փոխտեսուչ և ապա տեսուչ:

Ա. Սարգսյանն արժանացել է Հայրենիքին մատուցած ծառայությունների համար I-ին աստիճանի շքանշանի, պարգևատրվել է Մովսես Խորենացի մեդալով, «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» բարձրագույն շքանշանով: Արժանացել է Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան», «Papa Giovanni Paolo II» 2-րդ միջազգային (Հռոմ) մրցանակների, «Ոսկե աստղ» (Հանովեր), Բնական և հասարակական գիտությունների եվրոպական ակադեմիայի Ֆ. Շիլլերի, «Ալեքսանդր I», «Ալեքսանդր II» շքանշանների, «Գիտության և մշակույթի ասպետ» պատվոնշանի, «Հայոց լեզվի բարբառային ատլաս» աշխատությունը արժանացել է տարվա լավագույն լեզվաբանական հետազոտություն ճանաչելու ՀՀ ԿԳՆ հավաստագրի, պարգևատրվել է Դավիթ

Անհաղթի, գեներալ Սիլիկյանի, Սարգսրապատի, Երևանի քաղաքապետի ոսկե, Գյոթեի (Գերմանիա), Շիլլերի, Յոզեֆ Սովինսկու, Պուշկինի, Լերմոնտովի մեդալներով, Կրթության և գիտության նախարարության և Երևան քաղաքի ոսկե հուշամեդալներով:

Ա. Սարգսյանը հեղինակ է տասնյակ մենագրությունների («Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը», «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ», «Արևմտահայերենի հնչաբանություն», «Հանրալեզվաբանություն», «Լեզվաբանական աշխարհագրություն», «Արևմտահայերենի բառարան» և այլն): Իր թարգմանությամբ հրատարակվել են համաշխարհային քնարերգության եռահատորյակը, Օմար Խայամի քառյակները և այլն: Անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով 2012-13 թթ. հրատարակվել է Ա. Սարգսյանի «Փրկության բանալին» վեպը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը.....	3
Ներածություն.....	3
2. Արևմտահայերենի հնչաբանություն.....	157
3. Հայագիտության մեծագույն երախտավորը.....	244
4. Մ.Աբեղյանը արդի հայերենի գիտական քերականության հիմնադիր.....	250
5. Հրաչյա Աճառյանի բարբառագիտական հայացքները.....	267
6. Պուրպուր գունանվան հայերեն ծագման հարցի շուրջ.....	277
7. Study cycles of the Armenian dialects.....	286
8. Մանուկ Աբեղյանը եվ հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմը.....	294
9. Արտեմ Եղիշեի Սարգսյան.....	301